

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՇԻՐԱԿԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր Ի Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Ւ

ՏԱՅՔԸ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԱԶՈՒՂԻՆԵՐՈՒՄ

SHIRAK CENTRE FOR ARMENOLOGICAL STUDIES
NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA

COLLECTION OF ARTICLES

TAYK AT THE CROSSROADS OF HISTORY

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

S 199

**Հոդվածների ժողովածուն հրատարակության է երաշխավորվել
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի
գիտական խորհրդի 15. 10. 2024թ. նիստի որոշմամբ:**

Հրատարակվում է Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի դրամաշնորհային ծրագրով:

Խմբագրական հանձնախումբ՝

գլխ. խմբագիր՝ պ.գ.թ. **Արկաղի Ակոպով**

պ.գ.թ. **Արմեն Հայրապետյան**

ն.թ. **Դավիթ Նահատակյան**

բ.գ.թ. **Հասմիկ Մատիկյան**

S 199 «Տայքը պատմության խաչուղիներում»: Հոդվածների ժողովածու: Գյումրի: ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2024 – 286 էջ:

Ժողովածուն ընդգրկում է 2024թ. սեպտեմբերի 28-30-ին Գյումրիում «Պատմական Տայքը պատմության խաչուղիներում (պատմամշակութային համադրություններ)» խորագրով միջազգային գիտաժողովին ներկայացված զեկուցումները գիտական հոդվածների տեսքով: Դրանք վերաբերում են Պատմական Տայքի պատմության, հնագիտության, ազգագրության, ճարտարապետության և արվեստի տարբեր կնճռոտ հիմնահարցերին: Ժողովածուում ներկայացված բոլոր հոդվածները գրախոսված են: Ժողովածուն նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-1-1996-0

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2024

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մարզիս Պետրոսյան

Դայաննի երկրի արքայանունների շուրջ.....7

Ինգա Ավագյան

Պատմական Տայքն ուրարտական սկզնաղբյուրներում.....22

Չարուհի Հակոբյան, Արիհինե Ասրյան

Տայքի Իշխան տաճարի դրվագազարդ հատակը և եկեղեցիների հատակների ձևավորման արևելաքրիստոնեական ավանդույթը.....33

Պետրոս Ղազարյան

Երուսաղեմի Թովմաս պատրիարքի և Թեոդորոս Աբու Բուռահի՝ Հայաստան ուղարկված Թուղթը.....53

Մամվել Պողոսյան

Դավիթ Կուրապաղատի արտաքին քաղաքական գործունեությունը.....67

Լիանա Նազարյան

Ռազմաքաղաքական իրավիճակը Տայքում XI դ. Կեսերին82

Աշոտ Հայկազուն Գրիգորյան, Դավիթ Նահատակյան, Անի Գրիգորյան

Պատմական Տայքի Արեսացիոր և Ոքաղե գավառների ավանդական բնակելի տների և համալիրների ճարտարապետական առանձնահատկությունները և զուգահեռները93

Արկաղի Ակոպով, Դավիթ Նահատակյան, Արմեն Հայրապետյան

Խոտորջուրի պատմաճարտարապետական հուշարձանների տեղագրության և արդի վիճակի շուրջ.....102

Դավիթ Նահատակյան, Արկաղի Ակոպով

Բնակավայրաշինական հիմնական սկզբունքները Տայքում.....114

Մուսաննա Աղանյան, Դավիթ Նահատակյան, Արկաղի Ակոպով

Պատմական Տայք նահանգի Արսյացիոր գավառի նորահայտ վիմագրական նյութի վերլուծությունը.....128

Կարինե Բազեյան

Տայքի հայերի զբաղմունքների շուրջ.....143

Ֆեյիքս Մովսիսյան

Արևելահայ մամուլը Պատմական Տայք նահանգում 1877-1878 թթ.
ռուս-թուրքական պատերազմի գործողությունների մասին.....158

Կարինե Ալեքսանյան

Թուրք-հայկական պատերազմի առաջին փուլը
1920թ. հունիս-հոկտեմբեր 174

Հայկանուշ Մեսրոպյան, Սասուն Համբարձումյան

Տայքի հայերի տեղաշարժերի և լեզվատարածքային
առանձնահատկությունների մասին.....192

Հասմիկ Մատիկյան

Պատմական օրորը որպես վերարտադրվող ժանր
(Տայքի և Ծիրակի օրորների քննություն).....205

Լևոն Մկրտչյան

Արևմտյան Ծիրակի ամրաշինական համակարգը 2-1 հազարամյակում.
Քարտեզագրում և թվայնացում.....212

Արման Մադոյան

Տրապիզոն քաղաքն ըստ օտար և հայ աղբյուրների
(XVIII դարի վերջին քառորդ – XIX դարի սկիզբ).....221

Հասմիկ Ամիրջանյան

Ազնվականական հողատիրությունը Լոռիում XIX դարի երկրորդ կեսին.....233

Նարինե Մովսեսյան

Կարսի անկման (1920 թ. հոկտեմբեր) գնահատականը
սփյուռքահայ պատմագիտության մեջ.....247

Կարինե Մահակյան, Ռոզա Հովհաննիսյան

Ծիրակյան ուտեստը՝ ավանդական կենցաղի կարևոր բաղկացուցիչ.....256

Անժեղա Սարգսյան

Վերջին տարիներին թուրքական արշավախմբերի իրականացրած
աշխատանքները Անիում.....271

Contents

Sargis Petrosyan

About the Throne Names of the Kings of the Dayaeni Country.....7

Inga Avagyan

Historical Tayk in Urartian Primary Sources.....22

Zaruhi Hakobyan, Arpine Asryan

The Inlaid Floor of Ishkhan Cathedral in Tayk and the Eastern Christian Tradition of Decorative Inlays.....33

Gevorg Kazaryan

The Epistle of Patriarch Thomas of Jerusalem and Theodore Abu Qurrah Sent to Armenia.....53

Samvel Poghosyan

Foreign Policy Activities of David Kouropalates.....67

Liana Nazaryan

The Military-Political Situation in Tayk in The Mid-11th Century.....82

Ashot Haykazun Grigiryan, Davit Nahatakyan, Ani Grigoryan

Architectural Features and Parallels of Traditional Residential Buildings and Complexes of Arseatspor and Vokage Districts in Historical Tayk.....93

Arkadi Akopov, David Nahatakyan, Armen Hayrapetyan

On the Location and Current Condition of the Historical and Architectural Monuments of Khotorjur.....102

David Nahatakyan, Arkadi Akopov

The Main Principles of Building A Habitat in the Tayk.....114

Susanna Adamyan, David Nahatakyan, Arkadi Akopov

Analysis of Newly Discovered Epigraphic Material of Arsyatspor Province of Historical Tayk Region.....128

Karine Bazeyan

On the Occupations of the Armenians of Tayk.....143

Felix Movsisyan

The Eastern-Armenian Press on the Russian -Turkish War Actions
in the Historical Province of Tayk In 1877-1878.....158

Karine Aleksanyan

The First Phase of the Turkish-Armenian War /1920 June-October/.....174

Haykanush Mesropyan, Sasoun Hambarzumyan

On Migrations and Linguistic-Territorial Features of the Tayk Armenians.....192

Hasmik Matikyan

The Historical Lullaby as a Reproductive Genre
(With Special Reference to Tayk and Shirak)205

Levon Mkrtchyan

Western Shirak Fortification System in BC 2-1 Millennium.
Mapping and Digitization.....212

Arman Maloyan

The Citie of Trebizond According to Data of Foreign and Armenian Sources
(the Last Quarter of the 18th Century - the Beginning of the 19th Century)221

Hasmik Amirjanyan

The Noble Landowning System in Lori In The 2nd Half of the 19th C.233

Narine Movsesyan

The Fall of Kars (1920, October) Estimation in the
Armenian Diaspora Historiography247

Karine Sahakyan, Roza Hovhannisyan

Shirakian Food, An Important Component of Traditional Lifestyle.....256

Anzhela Sargsyan

The Works Carried Out by the Turkish Expeditions in Ani in Recent Years.....271

ԳԱՅԱԿԱՆ ԵՐԿՐԻ ԱՐՔԱՅԱՆՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Սարգիս Պետրոսյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոն, Հայաստան
vaha1996@mail.ru

Ամփոփում. Ատորեստանյան սեպագրերում Հայկական լեռնաշխարհի Դայանի երկիրը երկիցս հիշատակված է իր թագավորների հետ միասին: Հնդեվրոպական-հայկական ծագում ունեն թե՛ *Դայանի* (ուրարտական արձանագրություններում՝ Դիաուխի) երկրանունը, թե՛ *Սինի* և *Ասիա* արքայանունները: Հոդվածում կիրառված է հետազոտման պատմահամեմատական մեթոդը, օգտագործվել են սեպագիր աղբյուրներում, հայագիր մատյաններում և բառարաններում, «Աշխարհացույց»-ում առկա նյութերը, տարբեր պատմաբանների և լեզվաբանների աշխատությունները: Հազարամյակներ շարունակ ծառերի՝ մանավանդ Կենաց ծառի, պաշտամունքը հատուկ է եղել մեր նախնիներին: Մեր լեռնաշխարհի որոշ բարձր և սաղարթախիտ ծառեր առասպելաբանորեն համադրվել են Կենաց ծառի հետ և իրենց անուններով արտացոլվել տարբեր արքայանուններում, որովհետև մեր հեռավոր նախնի ցեղապետ-արքաներն ու նրանց հաջորդած թագավորները իրենց համարել են նույնացված առասպելաբանական Կենաց ծառի հետ: Sieni գահանունն արտացոլում է կաղամախի (*Populus alba*), իսկ Asia գահանունը՝ հացի/հացենի (*Fraxinus excelsior*) ծառի պաշտամունքը, որովհետև սրանք ըմբռնվել են «ծառ» - «Կենաց ծառ» - «թագավոր» առասպելաբանական կապի կենդանի, առարկայական դրսևորումներ:

Բանալի բառեր՝ *Դայանի, Դիաուխի, «Տիք և տայք», կաղամախի, հացի, ցեղապետ-արքա, թագավոր, Սինի, Ասիա, սեպագիր, արձանագրություն:*

**ABOUT THE THRONE NAMES OF THE KINGS OF THE
DAYAENI COUNTRY.**

Sargis Petrosyan

Shirak Center for Armenological Studies of NAS, Armenia
vahe1996@mail.ru

Abstract: In Assyrian cuneiform sources, the country Dayaeni (Diaukhi) of the Armenian Highland is referenced on two occasions, accompanied by the names of its kings. The country's name and the throne names of its kings (Sieni and Asia) are of Indo-European-Armenian origin. This paper employs a historical-comparative methodology, drawing upon a range of sources, including cuneiform texts, lexicographic works, medieval Armenian authors, the 7th-century Armenian Geography text known as "Ashkharatsuyts," and the writings of various historians and linguists. For millennia, the veneration of arboreal entities, particularly the Tree of Life, was a distinctive practice among our forebears. Some of the tall and thick-leaved trees of the Armenian highlands were mythologically linked to the Tree of Life, and their cult is reflected in the names of various royal persons. These individuals, who were the leaders of our distant ancestors and later their successors, were regarded as identifying with the mythical Tree of Life. The throne name of the Dayaenian king Sieni reflects the worship of the aspen tree (*Populus alba*), while the throne name of the king Asia reflects the worship of the ash tree (*Fraxinus excelsior*). This is evidenced by the fact that these trees were perceived as living, material manifestations of the mythological connection between trees and the Tree of Life, which in turn reflected the kings themselves.

Key words: Dayaeni, Diaukhi, Tayk/Tik, aspen, ash, chief, king, Sieni, Asia, cuneiform, inscription.

Նախաբան. Արևելագետների, ուրարտագետների և հայագետների բանավեճը Դայաենի երկրի տեղադրության, նրա և ուրարտական

սեպագիր արձանագրությունների Դիաուխի երկրի, Մեծ Հայքի Տայք աշխարհի հետ նրանց նույնացման վերաբերյալ տևել է տասնամյակներ: Այնինչ միջնադարյան «Բառզիրք հայոց»-ը (Երեմիա Մեղրեցու բառարան) վաղուց տվել էր վիճահարույց հարցերի լուծման բանալին. «Տիր եւ տայք-խորխոր կոչին»[9, էջ 314]: Առաջին հայացքից առեղծվածային թվացող բառակապակցությունը համարվել է անստույգ, իսկ ծագումն անհայտ[19, էջ 730]: Բայց բերված բառերից *տայք*-ը, տպագիր օրինակում թեպետև փոքրատառով է գրված, որպես հարազատ երկրի մի տեղանուն հայտնի էր դեռևս մեր առաջին պատմիչներին: «Աշխարհացույց»-ում այն համարվում է Մեծ Հայքի 14-րդ նահանգը [10, էջ 110]: «Բառզիրք հայոց»-ում նրանից առաջ դրված *Տիր*-ը *Տայք*-ի տարբերակն է՝ *-ի/-այ-* համարժեքությամբ. հմմտ. նույն համարժեքությունը պարունակող գույգերից *խիր/խայթ, ծիր/ծայր, վիրթել/վայթել, վիրագ/վայրագ, Գորիս/Գորայք, Կումիրի/Կումայրի* (վերջինից ըստ Հ. Աճառյանի և Գ. Չահուկյանի՝ Գյումրի) բառային և տեղանվանական գույգերը: «Բառզիրք հայոց»-ում բերված քննարկվող բառահոդվածի հեղինակն ուզեցել է ասել, որ *Տիր*-ը և *Տայք*-ը նույն երկրի բուն անվան տարբերակներն են՝ հայտնի նաև կողային *Խորխոր* անունով: Տայքին տրված այս մակդիրը հայերեն *խոր* արմատի կրկնությամբ կազմված սաստկական իմաստով բառ է, որին *-ատ* տեղ գույց տվող վերջածանցի կրկնությամբ ունենք *խորխորատ*. հմմտ. նաև *խորխորանք, խորխորիկ* բառերը[4, էջ 404]: Այս առթիվ հիշենք նաև Ս. Երեմյանի գրած տողերը. «Տայքը կոչվել է նաև «Խորագույն Հայք» (Armenia Profunda) և մինչև VIII դար Մամիկոնյանների կալվածքն էր: IX դարից Բագրատունիների Տայքի ճյուղին էր պատկանում» [10, էջ 84]:

1. Հնագույն Տայքի տեղանվանական միջավայրը

Հնագույն Տայքը ասորեստանյան արձանագրությունների *Daiaeni*-ն և ուրարտական արձանագրությունների *Diauhî*-ն [29, N 10. 25, c. 13, pp. 1. c. 118, pp. 85. c. 414, pp. 35] և Քսենոփոնի *Ταοχοί*-ն [24, էջ 94-122]: Մեպագիր այս անվանումների մեջ դժվար չէ տեսնել գուտ հայերենին (ոչ վրացերենին) բնորոշ *-ai/-i-* համարժեքությունը (հմմտ *Տայք / Տիր*): *Daia-eni* բաղադրիչները պարունակող երկրանվան *-eni* վերջածանցի մեջ

տեսնել կարելի է Ասորեստանի թագավոր Թիզլաթիալասար I-ի (մ.թ.ա. 1115-1077 թթ.) նույն արձանագրության մեջ հիշատակված ևս երկու նախրյան երկրանունների՝ Abaeni-ի և Adaeni-ի –eni վերջածանցները [29, N 10]: Ըստ երևույթին, այս -eni-ները սեպագիր գրանցումներն են հ.-ե. * -eno վերջածանցի, որից է հայ. –ին վերջածանցը. հմմտ *դարբ-ին, դեղ-ին, լուս-ին* <*louk- eno [3, էջ 109]: Daiāeni և Diauhi երկրների նույնության մասին են խոսում ոչ միայն նրանց սեպագիր Daiā-/Dia- և դրանց հայերեն *Տայ-ք /Տի-ք* համարժեք զույգերը, այլև այստեղ հայերենին բնորոշ հ.-ե. d- > հայ. *տ* անցումը, որը ևս բնորոշ չէ վրացերենին: Ի դեպ, վրաց. Tao-ն ևս ծագումով հայկական է՝ *Տայք*-ի հին սեռ. հոլովի * *Տայռ*-(g) ձևից: Չէ՞ որ վրացերենը կիսաձայն *յ* հնչյուն ևս չունի:

Ինչ վերաբերում է Daiāeni/ Diauhi/*Տայք/Տիք* երկրանվան բուն արմատին, ապա այն արմատակիցն է լինելու հայ. *տի/տիւ* «օր, ցերեկ, օրվա լույս մասը» բառի՝ ծագած հ.-ե. *dei-«փայլել, լույսավորել» արմատից (առկա է նաև հին հնդկ. Divyati «լուսավորել», լատին. dies, կիմր. diw, ռուս. день՝ բոլորը «օր» և ազգակից լեզուների ուրիշ մի շարք բառերում) [6, հ. IV, էջեր 403, 410]: Daiāeni/Diauhi սեպագիր անունների «լուսավոր» ստուգաբանությունները հաստատվում են այդ երկրից արևմուտք՝ աշխարհի «մթին» կողմում, գտնված երկրներ Tumana-ի [16, էջ 253] և Dankuua/Tankuua-ի անունների «խավար» ստուգաբանությամբ [23, էջեր 95-96]: Պատճառը մեր հեռավոր նախնիներին բնորոշ առասպելաբանական, երկհակադրամիասնական մտածելակերպն էր: Նույնպիսի մոտեցմամբ են անվանվել հակառակ ուղղություններով հոսող տեղի Ճորոխ և Գայլ գետերը, բայց այս անգամ գործ ունենք «խտտակեր կենդանի»/«գիշատիչ գազան» հակադրության հետ: *Գայլ* գետանունն ինքնին հասկանալի է (հունարենում ևս այն «գայլ» / Λύκος էր կոչվում), իսկ *Ճորոխ* նշանակում է «այծի ակունք/ջուր» [16, էջ 243, ծան. 45, էջ 253-254]: Ճորոխի արևմտյան մեծ վտակը սկիզբ է առնում խեթական արձանագրություններում Eluria լեռից, որի անվան թեթևակի ձևափոխման հետևանք է վտակի ներկայիս Լոռի/Լորի անունը: El-ur-ia բաղադրիչներով այս լեռնանվան իմաստը «եղնիկի ջրի (լեռ)» է [16, էջ 242]: Այս տեսանկյունից այժմ կարելի է ստուգաբանել ինչպես Ստրաբոնի (XI, 12, 4: XI, 14, 1) բե-

րած Արևելապոնտական լեռնաշղթայի հունական Μοσχικα ծրղ *Մոսքիկան լեռներ* [20, էջեր 43, 69] անունը (հուն. Μόσχος «հորթ, ցիկ») հմմտ. հայ. *մոզի* արմատակից բառը), այնպես էլ նրա *Պարխար* հայկական անունը: Վերջինիս հիմքում հայ. *պահարայ/պահարէ* բառն է հայ. *-ար* վերջածանցով և դրափոխությամբ [16, էջ 245]: Հմմտ. *արդ-ար, կերպ-ար, պալ-ար* և այլն: Ըստ այսմ, *Պարխար* < **Պահար-ար* (հմմտ. ավելի հարավ գտնված *Պահար/Պահարա* լեռան անունը) [10, էջ 76]:

Պակաս ուշագրավ չեն նաև պատմական Տայքի հետ սերտորեն կապված, իրեն հյուսիսից հարևան գավառների *Կդարջք* և *Արոտահան* անունները [10, էջեր 40, 59]: Սրանք «գիշատիչ գազան»/«խոտակեր եղջերավոր» հակադրամիասնության արդյունք տեղանուններ են: Ցեղանվանական ծագումով *Կդարջք* տեղանվան մեջ առկա են *կուլ*/**կուղ* (հմմտ. *կուլ տալ, կրանել, կուղիս* «շատակեր»), *արջ* արմատները (հմմտ. *Արջոյ առին* լեռնանունը) և հայերենի *-ք* հոգնակիակերտը: Եթե միմյանց նկատմամբ արևմտյան և արևելյան համապատասխան դիրքեր ունեցած գավառներից առաջինը կրում էր «կլանող արջ, շատակեր արջ» ստուգաբանությամբ անուն, ապա երկրորդը հարկ է, որ ունենար եղջերավոր խոտակեր որևէ կենդանի նշանակող անուն: Այդպես էլ կա: *Արոտահան* տեղանվան **Արոտ-* բաղադրիչը մենք նույնական ենք համարում գրաբարյան *արտի/արտիկ* «վայրի ոչխար» նշանակող բառի արմատի հետ [10, էջ 92]: Հմմտ. *Արտին* լեռնանունը [10, էջ 41]: Եթե *Արոտ-ահ-ան* բաղադրիչներ պարունակող տեղանվան երկրորդ բաղադրիչը նույնն է *ահիլ* «հավաքվել» [19, էջ 32] բայի **ահ* արմատի հետ, ապա երրորդ բաղադրիչ *-ան*-ը անվարան կերպով կարելի է նույնացնել հայ. *-ան* վերջածանցի հետ, իսկ *Արոտահան* տեղանվանը վերագրել «վայրի ոչխարների հավաքատեղի» իմաստը (*ան*-ը որպես տեղանվանակերտ վերջածանց առկա է նաև *Ալեան, Բաքան, Երեան, Կապան, Նկան, Սեան* և հայկական այլ տեղանուններում):

2. Գրախտային Տայքը

Ճորոխ գետի («Այծի ակունք/ջուր») *Ճոր-ոխ* անունը «գայլ»/«այծ» երկհակադրության դրական անդամն է, իսկ *Գայլ* գետանունը՝ բացասական: Այդպես է նաև Աստվածաշնչից հայտնի այդ գետերի ավելի հին

անունների դեպքում: Աստվածաշնչում Ճորոխը կոչվում է *Գեհոն*: Մեր կարծիքով ակնհայտ է *Գեհոն* գետանվան կապը հայերեն *գեհ* բառի հետ, որի բուն իմաստը «ոչխար» է [16, էջեր 242-244] և որից են նրա «ոչխարի հոտ» իմաստը և նրանից ածանցյալ *գհուկ* (<*գիհ-ուկ) «փարախ» բառը: Մեր *գեհ*-ը օրինաչափորեն ծագում է հ.-ե. **ues*- նախաձևից, որից են նաև հ.-ե. *-*ter*- վերջածանցով կազմված խեթերեն *uestara* և ավեստյան *vastar* «հովիվ» բառերը [30, cc. 7, 30. 26, c. 781]: Իմաստի տեսանկյունից հմմտ. հայ. *հուլի* «հովիվ» < հ.-ե. **owi-pa*` բառացի «ոչխար պահող» [19, էջ 466]: Ինչ վերաբերում է *Փիսոն* գետանվանը, ապա այն կարելի է ծագած համարել հ.-ե. այն միևնույնն արմատից, ինչ սլավ. լեզուներում «շուն» (<«գայ») նշանակող բառերը. հմմտ. *ռուս пец*. Բայց ոչ թե այդ, այլ կատու իմաստն է մատնացույց անում հայ. մանկական թոթովանքի **փիս* արմատը, որից ունենք *փիս-փիս*, *փիս-իկ*, *փիս-ո* բառերը: Նկատենք, որ կատուն ի տարբերություն շան, իր վարքագծով (մանավանդ մուկ կամ թռչուն բռնելիս) ավելի շուտ իր կատվագգի վայրի նախնուն է հիշեցնում, քան թե ընտանի կենդանու: Ուրեմն, **փիս*-ը նախապես կարող էր ունենալ «ձեռնասուն գազան» իմաստը:

Գրախոսի Փիսոն և Գեհոն գետերի հետ սերտ կապի մեջ էր *Ելիլատ* կոչված երկիրը՝ անվան հունական տառադարձությամբ մտած հայերեն Աստվածաշունչ: Սրա երրայական անունը *Xavilā* էր: Առաջին իսկ հայացքից պարզ է դառնում այս երկրանվան և հայերեն «*Խաւիղ-դրախտ* կամ բուրաստան» [9, էջ 142] բառի միջև առկա լեզվաբանական և իմաստաբանական կապը: Սրանց երրորդ տարբերակն այս նույն կողմերում որպես *Haviliā* տեղանուն հիշատակված է խեթական սեպագիր արձանագրություններից մեկում [33, cc. 72-75]: Սրանք հնդեվրոպական բաղադրիչներով բառակազմություններ են: Բայց հայերեն *խաւիղ* բառն է, որ պահել է «դրախտ, բուրաստան» [8, I, 935] իմաստների հետ միասին նաև իր նախնական «պարտեզ, բանջարանոց» իմաստները [8, I, 646]: *Խաւիղ*-ը բաղկացած է *խաւ* արմատից և *-իղ* վերջածանցից (հմմտ. *բաւ-իղ*, *կայթ-իլ*, *տես-իլ*, *տորմ-իղ* [19, էջ 806] բառերի վերջածանցները): *Խաւ* արմատը ծագում է հ.-ե. *(s)keu-/*khaəu «ծածկել, փաթաթել» նախաձևից, [19, էջ 323] որի դրախտային երևույթներին (հմմտ. *Եղեւ*-ի «փափկություն»

մեկնությունը), առնչվելու տեսանկյունից ուշադրության են արժանի հետևյալ բառերը.

Խաւ նշանակում է «աղվամագ, պտուղի վրայի բարակ աղվամագը» [4, էջեր 350-352]: Այն որպես առաջին բաղադրիչ առկա է *խաւարծի* «(խաղողի) որթի փափուկ, կակուղ և մատղաշ ծիլ», *խաւարծիլ* «գարծիլ, խաշնդեղ, որթի մատղաշ ծիլ», «վայրի վարունգ», *խաւարտ* «կանաչեղեն, ուտելի բանջար», «վարունգ, կաղամբ» բառերում [4, էջեր 350-352]: Հնդեվրոպական ծագումով *-il-/-ih* վերջածանցով **hauil-*ին խեթերենում հավելվել է *h-*ե. ծագումով *-ija* վերջածանցը, որն (ինչպես և հայերենում նրա արմատակից *-hi* վերջածանցը), [3, էջ 108: 19, էջ 806] նաև տեղանվանակերտ է (հմմտ. հայ. *Լոռի, Կարթի, Հաղի, Փարսի* տեղանունների համապատասխան վերջածանցները):

Աստվածաշնչում ասված է նաև, որ Աստված Կենաց ծառը գետեղել էր Դրախտի արևելքում [7, Ծննդոց, Բ. 11-15]: Մեր կարծիքով, դա հետագա Դայաննիի տարածքում է եղել: Մեր աղբյուրների համաձայն, Դայաննիի ժառանգորդ Տայքի *Պարտիզաց փոք* գավառի անունը՝ իր *Պարտեզ* կենտրոնով և նույնանուն գետով (Ճորոխի վտակն է) հիշեցնում է Դրախտի պարտեզը [2, էջ 10]: Իրանական փոխառություն համարվող մեր *պարտեզ* բառը բազմիմաստ է: Նրա նախնական իմաստներն են «ծառանոց», [9, էջ 273] «այգի, բանջարանոց, ծաղկանոց, մրգաստան» [6, էջ 69], բայց նշանակում էր նաև «Ադամի պարտեզը, Դրախտ» [6, էջ 69]: Այս բառը նույնպիսի իմաստներով առկա է նաև ուրիշ մի շարք լեզուներում: հմմտ. լատին. *paradisus* «պարտեզ, երկրային կամ երկնային դրախտ», հուն. *Παράδεισος* «որսի արգելանոց, գվարճանքի պարտեզ», «դրախտ», ֆր. *paradis*, իտալ. *paradiso* «դրախտ», արաբ. *firdaus* «ծառաստան, պարտեզ, դրախտ» [6, էջ 69: 19, էջ 634: 28, c. 1237]: Տայքի *Պարտեզ* և *Պարտիզաց փոք* տեղանունները լինելով իմաստային կրկրնորդները *խաւիղ* բառի, *Haviliia* և *Xavilā* տեղանունների, կարող են լինել նաև սրանց հետին, իմաստային փոխադրում-թարգմանությունները:

Աստվածաշնչում ակնարկվում է նաև Իսավիլայում «ագնիվ» ոսկու մասին [7, Ծնն. Բ. 11-15]: Իսկ այդպիսի ոսկեհանքեր ուներ հենց Տայքը: Դիաուլիսին նվաճած Ուրարտուի թագավոր Արգիշտի I-ը (մ.թ.ա. 784-

764թթ.) այստեղ բռնագրավել էր 41 մին ոսկի (նաև 37 մին արծաթ և 10000 մին պղինձ) [25, cc. 186-187]: Տեղական ոսկու համբավը հասել էր նաև Ալեքսանդր Մակեդոնացուն: Ըստ Ստրաբոնի, նա գործով Հայաստանի Միսպիրիտիս նահանգ էր ուղարկել Մենոն գորավարին, բայց տեղի՝ Կարալայի, ոսկու հանքին տիրելու սրա փորձը ձախողվել էր. սա պարտություն էր կրել, գերի ընկել և խեղդամահ արվել [20, XI, 14, 9, էջ 61]: Ըստ Հ. Աճառյանի, խոսքը Ճորոխի ավազանում գտնված Սպերի (լայն առումով) [20, էջ 121] մասին է, ոչ թե հայկական Տավրոսում (ըստ Հ. Մանանդյանի [15, I, էջեր 26, 43], Ադոնցի [1, էջ 279] և ուրիշների) գտնված Շուպրիայի (Subria): Դրա վկան ոսկեհանքի Κάβαλλα անունն է՝ իր հիմքով նույնական Դայաենի/Դիաուլիսի երկրի Qabilu(h)i ցեղանվան հետ [31, N 128, B 1]: Ճորոխի ավազանում գտնված, Փառանգիոնի և Բողբերդի ոսկեհանքերը Հայաստանի հարևան երկրներում ևս քաջ հայտնի էին [18, էջեր 61-62], իսկ նրանից հյուսիս-արևմուտք գտնված Արգիրոկաստրոնը (հետագա Գյումուշխանեն) ուներ միայն ոսկու երակներ պարունակող արծաթահանքեր [22, էջեր 340-341]:

3. Տայեցիները Խեթիայում

Մենք իսթական սուղ աղբյուրներից որոշ տեղեկություններ կարող ենք քաղել հնագույն Դայաենիի տնտեսության մեկ այլ ճյուղի և ռազմական գործի վերաբերյալ: Հայկական լեռնաշխարհի բնակիչ որոշ ցեղեր՝ որպես կառավարողներ ծառայում էին իսթական բանակում: Մի արձանագրության մեջ նշվում է, որ նրանք զրկվում են երկու տեսակի հարկ չմուծելու արտոնությունից: Ուրեմն, նախկինում դրանք չմուծելու արտոնություն են ունեցել: Հանվանե հիշատակված են Manda, Sala, Halara, Tamalkija, Himmua ցեղերը [23, էջ 125]: Քանի որ Տամալկիա/Դամալկիա ցեղը հիշատակված է ցեղային այս հնգյակի մեջ, ուրեմն, մյուս կառավարողի ցեղերի նման նրա հայրենիքը ևս գտնվել է Հայկական լեռնաշխարհում: Կարծում ենք, որ այն գտնվել է Դայաենե/Տայքում: Եթե այդպես է, ապա նրան է առնչվում *Դամալք/Տամալք* ձմեռանոցի անունը հետագա Խտորջրում (21, էջ 15): Մեր տեղանունից իսթերենում ստեղծվել է Tamalkija ցեղանունը՝ ծագումով հնդեվրոպական*-ija վերջածանցի հավելումով: Նրա հիմք տեղանունը բաղկացած է հ.-ե. *dam- և

*alk- արմատներից: Մրանցից առաջինն ունեն հին հնդկ. *damya* «ցլիկ, որին պետք է հնազանդեցնել», հուն. *δαμάλη*՝ նույնը, *δαμάλη* «երինջ», հին իռլ. *dam* «ցուլ», արբան. *dem* «ցլիկ» [26, II, 575] բառերը:

Դամալք/Տամալք տեղանվան երկրորդ բաղադրիչը՝ *-alk-ը ևս «եղջերավոր կենդանի» նշանակող հնդեվրոպական ծագումով բառ է. հմմտ. հուն. *ἄλεκ* «իշայծյամ, որմզդեղն», լատին. *alce*՝ նույնը, հին բարձր գերմ. *elho*, *elaho*՝ նույնը, իսկ *alk-ից նրա բուն արմատով կամ k-ի փոխարեն այլ ածականներով կազմված բառերից են. հայ. *եղն* «եղնիկ, էգ եղնիկ», հուն. *Ελλος* «եղնիկ, եղնաձագ», *ἔλλφος* «եղջերու», հին իսլ. *elit* «ուլ, այծիկ», լիտվ. *élnis*, *élnė*, *álnė* «եղնիկ», ռուս. *елень*, *олень* «եղջերու» և այլն [26, II, cc. 518-519. 4, էջեր 21-22]: *Tam-alk-ija* ցեղանվան –alk բաղադրիչի հետ նույնն է ուրարտական արձանագրությունների, *Alqania* (<*Alq-an-ia վերջին երկուսը վերջածանցներ են) տեղանվան առաջին բաղադրիչը: Այն գտնվում էր Իգանի և Էրիախի երկրների միջև [31, N 155 F], այսինքն՝ հետագա Կարսի շրջակայքում: Հիշենք նաև Մեծ Հայքի հարավային Տնորիք գավառում գտնված, մեր մատենագիրներից հիշատակված *Ալկի/Ալկեքար* ամրոցի [10, էջ 32] անունը:

Տայքում ձիաբուծության զարգացած լինելու մասին է խոսում Ժամանակին Մամիկոնյան նախարարության բուն կալվածքը հանդիսացած Մեծ Հայքի Ճակք գավառի [10, էջեր 54, 64, 110] անունը, որը *ճակ* «էգ, էգ ձի» բառն է հոգնակի թվով [5, III, էջ 175. 14, III, էջ 191]: Անշուշտ հեռավոր անցյալում Ճակքը եղել է եղջերավոր վայրի կենդանիների, ապա՝ ընտանի կենդանիների (այստեղից էլ *Դամալք/Տամալք* անունը), իսկ մ.թ.ա. II հազարամյակի առաջին դարերում ձիաբուծության բուռն զարգացման հետևանքով՝ նախ խառն, ապա միայն ձիերի համար նախատեսված ձմեռանոց (այստեղից էլ **Tamalk*>*Tamalkija* և *Ճակք* անունները): Արդյո՞ք խառը տիպի ձմեռանոցներում չէ, որ եղջերավորների և ձիերի միջև բախումներից խուսափելով, կամ ձիերին էլ եղջերավոր խոտակերների դասն ընդգրկելու մտադրությամբ ձիերի ականջներին կոնաձև սարքեր էին հագցնում: Այդ ավանդաբար երբեմն կիրառվում է հեծյալների մրցումներ կազմակերպող եվրոպական ձիարշավաբաններ-

րում: Կարծում ենք այս առթիվ արժե հիշել նաև Ալեքսանդր Մակեդոնացու ձիու Βουκεφάλα(-ας) «Ցլագլուխ» անունը [28, I, c. 302]:

4. Դայանեիի թագավոր Սիենին և իր գահանունը

Մ.թ.ա. 1112թ. Նաիրյան երկրների դեմ արշավանքի ելած Ասորեստանի Թիգլաթփալասար I թագավորը իր արձանագրության մեջ խոսում է հաղթանակի, դրա ժամանակ իբրև թե գերի վերցրած, բայց տեղում ազատ արձակած նաիրյան 22 թագավորների (իմա՝ ցեղապետ-արքաների) և Դայանեիի թագավոր Սիենիի մասին: Ի տարբերություն նախորդների, վերջինիս՝ հավանաբար, Նաիրի ցեղամիության նորահռչակ թագավորին, նա իր հետ տարել էր Ասորեստան: Նա գրում է. «Դայանեիի թագավոր Սենիին, որ չէր հնազանդվել իմ տիրոջը՝ Աշշուրին, գերեվարված և կալանավորված Աշշուր՝ իմ քաղաքը բերի, (բայց) ներում շնորհեցի, և իմ Աշշուր քաղաքից նրան կենդանի (բաց) թողեցի՝ մեծ աստվածների փառքը փառաբանելու համար: Ընդարձակ Նաիրի երկրին իր ամբողջ սահմանով ես տիրեցի (և) նրանց բոլոր թագավորներին իմ ոտքերին խոնարհեցրի» [29, N 10: 11, I, էջ 21]: Եթե Դայանեի երկրի ցեղապետ արքային, որը Նաիրյան ցեղամիության ղեկավարն էր, Թիգլաթփալասար I-ը կալանավորել և իր մայրաքաղաք էր տարել, ապա դա արած կլիներ մի նպատակով՝ նրան գոհաբերելու էր իր «մեծ աստվածներին»: Բայց եթե Ասորեստանի թագավորը նրան ներել էր և ազատ արձակել, ապա դա արել միայն այն բանից հետո, երբ Սիենին երկրպագել էր նրա աստվածներին, հպատակվել էր նրան և հրաժարվել էր իրեն Նաիրիի թագավոր հռչակելու մտքից:

Ասորեստանցի դպիրները Դայանեիի թագավորի օտարահունչ անունը կարող էին կարդալ ոչ թե *Seni*, հետևելով ասորեստանյան արքադերենի ժամանակակից կանոններին, այլ *Sieni*, այսինքն՝ այնպես, ինչպես գրել են: Չի բացառվում նաև գահանվան *Seni* տեղական արտասանության հանգամանքը, երբ նկատի ենք առնում նրան արմատակից գրաբարյան *սեննակ* (<* սենի-ակ. «սենյակ») բառի գոյությունը: Զննարկենք երկու դեպքն էլ: Եթե Դայանեիի թագավորի անունն ընթերցվել է *Si-eni* երկար ձևով, ապա այս դեպքում սրա *-eni* մասը պետք է համարել վերջածանց՝ առկա նաև *Aba-eni*, *Ada-eni*, *Daia-eni* ցեղանուն-երկրա-

նուններում: Դրա օգտին կարող է վկայել նաև շատ ավելի ուշ, նույնպես ասորեստանցի դպիրների կողմից ավանդված Ուրարտուի *Մարդուրի* արքայանվան գրության վաղ ձևը՝ Sieduri (ոմանք Seduri<*Se-duri են կարդում) [29, N 28: 1, էջեր 194-196]:

Ուրարտական այս արքայանվան առաջին բաղադրիչին հաջորդած –duri-ի հիմքում մենք տեսնում ենք հ.-ե. *dor- «ծառ» բառը, երբ առաջինը նույնն է լինելու Դայանեի թագավորի գահանվան առաջին՝ Sie-բաղադրիչի հետ: Ըստ երևույթին, սա ծառի/Կենաց ծառի բնույթը նշող ինչ-որ արմատ է [17, էջեր 281-282, 285]: Ի տարբերություն Sie-duri անվան երկրորդ բաղադրիչի, որը գոյական է, Sie-ni անվան երկրորդ բաղադրիչը անականակերտ վերջածանց է՝ ծագած հ.-ե. *-eniio-/-ā բաղադրյալ անանցից կամ սրա *-niio-/-ā - կրճատ տարբերակից [19, 809]: Հմմտ. նաև վերևում հիշված Aba-eni, Ada-eni, Daiā-eni ցեղանուն-երկրանունների և հայերեն *հայրենի, մայրենի, այծենի*, նաև *թթենի, նռնենի, տսնձենի* բառերի համապատասխան վերջածանցները:

Իսկ ինչ ծագում ունեն Կենաց ծառի պաշտամունքի արդյունք մեր գահանունների *Sie-/*Si- բաղադրիչները: Հ.-ե. նախալեզուն ուներ *(s)kai «առկայծել» արմատի *kai-/*kai-/*ki- տարբերակներ [27, с. 142], որոնցից մեկն է Գ. Ջահուկյանը տեսնում մեր *սենեսկ* («սենյակ») բառի հիմքում, գրելով. «Թերևս կապ ունի հ.-ե. *ski- «թույլ փայլել, ստվեր» արմատի հետ». հմմտ. հուն. σκιον «վրան, բեմ, սրահ», ռուս. сень «հովանի», сени «սրահ, նախասենյակ» [19, էջեր 675-676]: Հիշենք սրանց արմատակից բառերից հուն. σκιά «ստվեր», հին հնդկ. chāyá «փայլ, արտացոլանք, ստվեր», գոթ. skeinan «փայլել, շողալ», «լույս տալ», պարս. sāya «ստվեր, հովանի», ռուս. сиять «շողալ» [32, III, сс. 602-629]: Հնդեվրոպական ժառանգ լեզուների բերված բառերը արմատակիցներ լինելով հանդերձ, կազմում են տարանջատ իմաստային զույգեր, կարծես, հուշելու համար, որ դրանք ի սկզբանե վերաբերել են հսկա և սաղարթախիտ սպիտակ կաղամախիին (*Populus alba*):

Ինչու՞ է նա որակվել *սպիտակ* բառով: Բանն այն է, որ իր «տերևների տակը սպիտակ մազմզուկներ կան, որ փայլում են արծաթի պես» և «բունն է սպիտակ» [13, II, էջ 370]: Այս սպիտակ և սաղարթախիտ հսկան,

անշուշտ, հովանու դեր է կատարել ամառվա տապին ստվեր փնտրող մարդկանց և խոտաճարակ (հատկապես՝ ընտանի) կենդանիների համար: Մեր Գեղամա լեռների ուշագրավ ժայռապատկերներից մեկը հենց այդպիսի մի Կենաց ծառ է պատկերում: Փարթամ սաղարթով այդ ծառը ժայռապատկերների մեծ մասն է զբաղեցնում, նրանից վերև՝ երկինքը խորհրդանշող թևաբաց թռչնապատկերն է, իսկ ամենավերևում՝ իր ցերեկային շրջապտույտի բարձրակետին հասած Արեգակի սկավառակաձև պատկերը [17, էջ 278]:

5. Դայաննիի թագավոր Ասիան և իր գահանունը

Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ը (մ.թ.ա. 858-824թթ.) Ուրարտուի արևմտյան շրջանները՝ մինչև Եփրատ գետի ակունքներ, ավերելուց հետո ներխուժել էր Դայաննի: Այստեղ նա դիմադրության չէր հանդիպել, որովհետև, ինչպես ինքն է իր արձանագրության մեջ գրում. «Դայաննի երկրի թագավոր Ասիան իմ ոտքերը զրկեց, հարկն ու տուրքը, (ինչպես և) ձիերը վերցրի, իմ թագավորական կոթողը կառուցեցի, նրա քաղաքի մեջտեղը կանգնեցրի» [29, N 31. 24, c. 118]: Արձանագրության այս հատվածից պարզ է դառնում, որ Դայաննին՝ որպես անկախ թագավորություն, շարունակում էր գոյություն ունենալ, որ նրա թագավորը Ուրարտուից անկախ քաղաքականություն էր որդեգրել և որ նա կոչվում էր Ասիա (Asia): Ըստ Ն. Ադոնցի, սրա կրած անունը *Միեննի* անվան տարբերակն է, «ավելի շուտ դինաստիական անուն է», Sie-ni, դա Sie-ի կամ Ասիեի ուրարտական ձևն է (ինչպես Գուսի և Ագուսի, Սաու և Ասաու) [1, էջ 89 և ծան. 1]:

Անվանի պատմաբանի դիտողություններից ընդունելի է Sieni-ն և Asia-ն Դայաննիի արքայատան դինաստիական անունները լինելու հանգամանքը, բայց դրանք նախաձայն a-ով (կամ առանց դրա) տարբերակված լինել չէին կարող, թեպետև իմաստակիցներ էին: Դայաննիի թագավորի Asia (<*as-ia) անվան մեջ *as-ը արմատն է՝ կցորդված –ia-ի (<h.-ե.*iia) վերջածանցով: Սա հետագա հայերենում –ի տեսքն ստացած վերջածանցն է՝ կիրառված նաև բուսանուններ կերտելիս. հմմտ. *այգի, բարդի/բարտի, գիհի եղեւնի* և այլն:

Այստեղ անսպասելի կերպով օգնության է գալիս առաջին հայացքից զարմանք հարուցող, միջնադարյան «Բառգիրք հայոց»-ի «*Ասեղ-ստուեղ*» [9, էջ 33] բառը: Բայց սրա *աս* արմատը նույնն է, ինչ *հացի* ծառանվան արմատը՝ հ.-ե. *askhio- <*ōsi- կամ *oskiā <*ōs- հմմտ. ազգակից լեզուների նույնարմատ բառերից. հուն. ὄϊς «բարդի», կիմր. onnen (<osn) «հացի» լատին. ornus (<*osinus) «վայրի լեռնային հացի», այլ. ah (<*aska), «փիհի, համար», հ.բ. գերմ. ase, անգլ. ash, ռուս. ясеи «հացի» [5, III, էջ 65: 19, էջ 453] և այլն:

Ասեղ (<* *աս-եղ*) բառում **աս* արմատին հավելվել է *-եղ* վերջածանցը՝ առկա *աչեղ*, *թիկնեղ*, *համեղ*, *հիլթեղ*, [19, էջ 804] ինչպես նաև *գունեղ*, *խնդեղ*, *մարմնեղ* և այլ բառերում: Բերված գուգահեռ արմատակից բառերը հիմք են տալիս ենթադրելու նախապես ընդհանրական իմաստ ունեցած **աս* բառով նշված են եղել թե՛ «սպիտակ կաղամախի», «բարդի» [12, էջ 351], «հացի» [14, էջ 78] կոչված ծառերը, թե՛ նրանց ցեղակիցները: Հացիի համար նշենք, որ նա «մինչև 30մ բարձրությամբ, մոխրագույն-գորշ՝ ողորկ տերևով» ծառ է, որի «սպիտակ փայտը շատ հարմար է ճախարակագործության և իրրև վառելիք»:

Եզրահանգում.

1. Ծառապաշտությունը՝ մանավանդ Կենաց ծառի պաշտամունքը, հազարամյակներ շարունակ կարևոր դեր է ունեցել հայոց հավատալիքներում: Բարձր տեսակի առանձին ծառեր համադրված լինելով առասպելաբանական Կենաց ծառի հետ, իրենց հնագույն անուններն են տվել Հայկական լեռնաշխարհի որոշ ցեղապետ-արքաներին, սպա նաև՝ թագավորներին: Դրանք դարձել են նրանց գահանունները:

2. Դրանցից են ասորեստանյան աղբյուրներում հիշատակված Դայանի (հետագայում՝ Տայք) երկրի Sienu և Asia թագավորները, որոնց անուններում առկա են կաղամախիի (*Populus alba*) և հացիի (*Fraxinus excelsior*) հնդեվրոպական-հայկական ծագումով հնագույն անունները:

3. Այդ գահանունները լինելով վկայությունները Դայանիի վերնախավի հնդեվրոպական-հայկական (ո՛չ վրացական կամ «խուռիական») ծագման մասին, հաստատում են նաև տեղանվանական հնա-

գույն, հին և հետագա տվյալներից բխող եզրակացությունը Դայասենի-Տայրի բնիկ բնակչության հնդեվրոպական-հայկական բնույթի մասին:

References

1. **Adonts N.** History of Armenia. The sources. X-VI centuries BC [*Hayast'ani patmut'yun. Akunk'neri. XVI dd. m.t'.a.*]. Yerevan. "Hayastan" pub. 1972. 430p. (In Armenian).
2. **Alishan Gh.** Armenia before Armenia [*Hayastan yarrak k'an zlineIn Hayastan*] Pub. St. Lazar. Venice. 1904. (In Armenian).
3. **Acharyan H.** Complete grammar of the Armenian language [*Liakatar k'erakanut'yun hayots' lezvi*]. Yerevan. AS of the ArmSSR. 1957. (In Armenian).
4. **Acharyan H.** Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YU pub. Vol. II. 1973. (in Armenian).
5. **Acharyan H.** Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YU pub. Vol. III. 1977. 635 p. (in Armenian).
6. **Acharyan H.** Root dictionary of Armenian language [*Hayeren armatakan barraran*]. Yerevan. YU pub. Vol. IV. 1979. (In Armenian).
7. Bible. Old and New Testament. [Astuatsashunch' matean hin yev nor Ktakaranats'] Constantinople. 1835. (In Armenian).
8. **Avetik'e an G., Siwrmelean Kh., Agerean M.** New dictionary of the haykazeen (armenian) language. [*Nor barrgirk' haykazeen lezui*]. Pub. St. Lazar. Venice. I. 1836 (Yerevan. 1979). (In Armenian).
9. "Vocabulary of Armenian language" [Barrgirk' hayots']. Yer. "Matenadaran" pub. 1975. (In Armenian).
10. **Yeremyan S.** "Ashkharatsuyts" (Armenian Geography of the 7-th century) [Hayastany yst «Ashkharhats'uyts'»-i]. Yerevan. AS of the ArmSSR. 1963. (In Armenian).
11. "A Reading book of History of the Armenian People" [Hay zhoghovrdi patmut'yan k'restomatia]. Vol. I Yerevan. YU pub. 1981. (In Armenian).
12. **Malkhasyants St.** Armenian defining dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. Vol. I. Yerevan. State pub. 1944. (In Armenian).
13. **Malkhasyants St.** Armenian defining dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. Vol. II. Yerevan. State pub. 1944. 512 p. (In Armenian).
14. **Malkhasyants St.** Armenian defining dictionary [*Hayeren bats'atrankan barraran*]. Vol. III. Yerevan. State pub. 1944. (In Armenian).
15. **Manandyan H.** Research theory of the history of the Armenians. [*K'nnakan tesut'yun hay zhoghovrdi patmut'yan*]. Vol. I. Yerevan. AS of the ArmSSR. 1945. (In Armenian).
16. **Petrosyan S.** About the location of the rivers of Paradise and the countries of Khavila, Kush [*Drakhti geteri yev Khavila, K'ush yerkrneri teghadrut'yan shurj*]//Historical-philological journal. N 2. Yervan. 2006. 237-255 pp. (In Armenian).

17. **Petrosyan S.** The worship of the "Tree-Sun" and its manifestations in the throne names of Urartian kings" [*Tsarr-arev pashtamunk'y yev dra drsevorumnern urartakan ark'ayanunnerum*]/"Handes amsoreai". Mkhitarian publishing house. Vienna - Yerevan. 2018 No. 1-12. 275-294 pp. (In Armenian).
18. **Procopius.** AS of the ArmSSR. Yerevan. 1967. 361 p. (In Armenian).
19. **Jahukyan G.** Armenian etymological dictionary [*Hayeren stugabanakan barraran*]. Yerevan. "Asoghik" pub. 2010. (In Armenian).
20. **Strabo.** Trans. by H. Acharyan. Yerevan. YU pub. 1940. (In Armenian).
21. **Hakobyan T., Melik-Bakhshyan St., Barseghyan H.** Dictionary of toponymy of Armenia and adjacent territories. Vol. II: YSU pub. Yerevan. 1988. (In Armenian).
22. **Srvandztyants G.** Works [*Yerker*]. AS of the ArmSSR. Vol. II. Yerevan. 1982. (In Armenian).
23. **Qosyan A.** Toponyms of the Armenian Highland (according to Hittite cuneiform sources) [*Haykakan lerrnashkharhi teghanunnery (yst khet'akan sepagir aghbyurneri)*]. Yerevan. "Zangak 97". 2004. (In Armenian).
24. **Xenophon.** Anabasis. AS of the ArmSSR. Transl. by S. Krkyasharyan. Yerevan. 1970.
25. **Arutyunyan N.** Biainili (Urartu) [*Biaynili (Urartu)*]. Yerevan. AS of the ArmSSR. 1970. (In Russian).
26. **Gamkrelidze T. Ivanov V.** Indo-European language and Indo-Europeans [*Indoyevropeyskiy yazyk i indoyevropeytsy*]. Pub. Tbilisi University. Vol. I-II. Tbilisi. 1984. (In Russian).
27. **Jaukyan G.** The relationship between Indo-European, Hurrian-Urartian and Caucasian languages [*Vzaimootnosheniye indoyevropeyskikh, khurritsko-urartskikh i kavkazskikh yazykov*]. Yerevan, AS of the ArmSSR. 1967. (In Russian).
28. Ancient Greek-Russian Dictionary ["Drevnegrechesko-russkiy slovar"]. State Pub. of Foreign and National Dictionaries. Vol. I-II. Moscow. (In Russian).
29. **Dyakonov I.** Assyro-Babylonian sources on the history of Urartu [*Assiro-vavilonnskiye istochniki po istorii Urartu*]. "Vestnik drovney istorii". Moscow. 1951. N 2-4. 257-356. 204-252 pp. (In Russian).
30. **Ivanov V. Toporov V.** Researches in the field of Slavonic antiquities [*Issledovaniya v oblasti slavyanskikh drevnostey*]. "Science". AS of the USSR. Moscow. 1974. (In Russian).
31. **Melikishvili G.** The Uruartian cuneiform inscriptions [*Uruartskkiye klinopisnyye nadpisi*]. N 1. Moscow. AS of USSR. 1960. (In Russian).
32. **Fasmer M.** Etymological dictionary of the Russian language [*Etimologicheskii slovar' russkogo yazyka*]. "Progress". Vol. III. Moscow. 1971. (In Russian).
33. **Khachatryan V.** Eastern Provinces of the Hittite Empire [*Vostochnyye provintsii Khettskoy imperii*]. Pub. of the AS of ArmSSR. Yerevan. 1971. (In Russian).

ՀՏԳ 902.03

**ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՅՔԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ
ՄԿՉԲՆԱԳՂՔՅՈՒՐՆԵՐՈՒՄ**

Ինգա Ավագյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
«Կուժայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան, Հայաստան
inga.avagyan.76@mail.ru

Ամփոփում: Հոդվածում ներկայացնում ենք ուրարտական այն սկզբնաղբյուրները, որոնք վերաբերում են ուրարտական դարաշրջանի պատմական Տայքին: Այս արձանագրությունները հիմնականում հատել են ուրարտական արքաներ Իշպուինին, Մենուան և Արգիշտի I-ը, որի կառավարումից հետո այլևս Դիաուխի երկիրն ուրարտական սկզբնաղբյուրներում չի հիշատակվում: Հոդվածը գրելիս օգտագործել ենք պատմահամեմատական, պատմահետազոտական, պատմաքննական, գուգորդման, վերլուծության, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները: Հոդվածը խարսխված է ուրարտական սկզբնաղբյուրների և գրականության մեջ առկա նմանօրինակ նյութերի վերլուծության վրա: Գիտականորեն ներկայացվել և նշված մեթոդներով համակողմանի վերլուծվել են ուրարտական ինը սկզբնաղբյուրներ, ինչպես նաև այս սկզբնաղբյուրները համեմատվել են միմյանց հետ և գիտական գրականության մեջ հայտնի այլ ուսումնասիրողների կարծիքների հետ՝ Մելիքիշվիլի, Դյակոնով, Հարությունյան, Սավվինի: Այս սկզբնաղբյուրներն ունեն պատմամշակութային և գիտական բացառիկ արժեք: Վերջերս այս արձանագրությունները համարվել են Հանակից՝ Օրթաքենդ, հայտնի մի ուրարտական սկզբնաղբյուրով, որը նոր լույս է սփռում Դիաուխի երկրի պատմության ուսումնասիրության վրա: Հոդվածի վերջնարդյունքում ներկայացվել են բոլոր հայտնի ուրարտական սկզբնաղբյուրները Դիաուխի երկրի մասին, Դիաուխիի համադաշնության մեջ մտած երկրները և երկրների քաղաքները, Դիաուխիի արքաների անունները և այն ավարը, որը այստեղից տարել են ուրարտական արքաները: Ուսումնասիրությունը կարելի է օգտագործել գիտական ուսումնասիրություններում՝ հոդվածներ, ատենա-

խոսություններ, մագիստրոսական և ավարտական թեզեր, նաև զանազան տուրիստական փաթեթների մշակելիս՝ հովելկների հոսքը դեպի պատմական Տայք ուղղելու համար՝ նահանգի պատմությունն ըստ պատշաճի ներկայացնելու նպատակով:

Քանալի բառեր՝ Պատմական Տայք, Դիաուխի, համադաշնություն, ուրարտական արձանագրություններ, Մենուա, Խորոբյան տարեգրություն, Արգիշտի I:

HISTORICAL TAYK IN URARTIAN PRIMARY SOURCES

Inga Avagyan

Shirak Center for Armenological Studies of NAS RA, "Kumayri" Historical-Cultural Preserve-Museum, Armenia
inga.avagyan.76@mail.ru

Abstract: The article presents Urartian primary sources pertaining to the historical Tayk of the Urartian era. The cuneiform inscriptions were primarily created by Urartian kings Ishpuini, Menua, and Argishti I. Following the latter's reign, the country of Diaukhi is no longer referenced in Urartian primary sources. The article employs a range of methodological approaches, including historical-comparative, historical-research, historical-analytical, historical comparison and analysis, and methods of induction and deduction. The article is based on an analysis of materials from Urartian primary sources and analogous sources from the scientific literature. The nine Urartian primary sources were subjected to comprehensive study using the aforementioned methods. Furthermore, a comparison was made between the sources themselves and the opinions of other researchers cited in the scientific literature, namely Melikishvili, Dyakonov, Harutyunyan and Salvini. These primary sources are of exceptional historical, cultural and scientific value. Recently, these primary sources have been supplemented with another cuneiform text from Khanak-Ortakend, which has the potential to provide new insights into the field of research into the history of the Diaukhi country. The article presents a comprehensive account of all known Urartian primary

sources pertaining to the Diaukhi country, the countries and cities of the Diaukhi confederacy, the names of the Diaukhi kings, and the booty that the Urartian kings took from this region. The findings of this study can be used for scientific purposes, including in articles, dissertations, research papers at both the master's and bachelor's levels, as well as during the compilation of tourist routes to direct tourist flows to historical Tayk. This will guarantee that the history of the province is presented in an accurate and comprehensive manner, should this be required.

Keywords: Historic Tayk, Diaykhi, confederacy, Urarian cuneiforms, Ishpuni, Menua, Khorhorhor Chronicle, Argishti I.

Էթիունի համադաշնության կազմը ուրարտական դարաշրջանում

Ք.ա. IX դ. վերջին քառորդում Հայկական լեռնաշխարհում ձևավորվել էին երեք խոշոր քաղաքական միավորումներ՝ հարավայինը, արևմտյանը և հյուսիսայինը: Հարավայինը Ուրարտուն էր՝ Վանի թագավորությունը, որի կազմում էին ընդգրկված պատմական Հայաստանի հինգ նահանգները՝ Սոկք, Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Տուրուբերան: Հարավային միությունը գրավում էր մոտ 94000 քառ. կմ տարածք: Հյուսիսայինը Էթիունին էր. այս միության կազմում էին ընդգրկված պատմական Հայաստանի վեց նահանգները՝ Սյունիք, Ուտիք, Արցախ, Այրարատ, Տայք, Գուգարք: Այն գրավում էր մոտ 98000 քառ. կմ տարածք¹: Հայկական լեռնաշխարհի արևմտյան տարածքները կողմնորոշված էին դեպի երրորդ քաղաքական միավորումը՝ Խալթեն:

Իշպունի և Մենուա արքաների արձանագրությունները պատմական Տայքի մասին

Տայքի՝ Դիաուխիի (տեղադրվում է Եփրատի վերին և Ճորոխի միջին հոսանքներում²) ուղղությամբ ուրարտական արքաների արշա-

¹ Հմայակյան Ս., Ծիրակր Լուշա-Կաստարգա-Վիտերուխե դաշնակցության կազմում, ԾԳՄԺ I, Գյումրի, 1994, էջ 21-23:

² Երևնյան Ս., Հայաստանը ըստ Աշխարհացոյցի, Եր., 1963, էջ 110; Арутюнян Н., Топономика Урарту, Ереван, 1985, с. 73. Եղիազարյան Ա., Մեծ Հայքի Տայք աշխարհն ըստ «Աշխարհացոյցի», ՎԷՄ համահայկական հանդես, 2 (ԺԲ), 2 (46) սպրիլ-հունիս, 2014, էջ 43:

վանքները սկսվում են դեռ Իշպուհինի արքայի և նրա որդի Մենուայի օրոք:

Կարևոր արձանագրություն կարելի է համարել նրանց թողած Վանի Սբ. Պողոս եկեղեցու պատի շարվածքի մեջ դրված սյունը, որի երկու մասերում հատված արձանագրությունը վկայում է Իշպուհինի և Մենուայի դեպի հյուսիս կատարած արշավանքների մասին¹: Արձանագրության դարձերեսին նրանք պատմում են, որ հետ են շարտել Լուշա, Կաթարգա, Վիտերուխի ցեղերին և հասել են Անաշե և Մեծ Մակուրու քաղաքներ: Այա արքաները պատմում են, որ ճանապարհ են հարթել դեպի Լուշա, Կաթարգա, Վիտերուխի ցեղերի երկրները: Այս ցեղերին օգնության են գալիս Էթիուխի երկրի արքաները: Իշպուհինին և Մենուան հետ են շարտում նրանց: Հաղթանակի առթիվ, ըստ Վանի արձանագրության, արքաները Անաշեում հատում են հաղթական մի արձանագրություն: Նույն արձանագրությանը բովանդակությամբ մոտ են Գյուսնենցի Սբ. Հովհաննես, Վանի Սբ. Պողոս եկեղեցիներում գտնված արձանագրությունները և Թոփրակ-Կալեից հայտնի արձանագրության հատվածը²: Վանից հյուսիս տեղակայված Գյուսնենց գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցում է գտնվել այն քարը, որի արձանագրությունը գրեթե ամբողջությամբ կրկնում է Վանի արձանագրությունը, բացի Լուշա ցեղի երկիր կատարած արշավանքի մասին տեղեկությունից, երբ արքաները պատմում են դաշնակիցների գորքի և սպառազինության մասին: Կարծում ենք, որ գլխավոր ճակատամարտը հենց այս երկրում էլ եղել է, երբ օգնության են հասել Էթիուխիի արքաները: Դաշնակիցներն ունեին 66 ռազմակառք, հազարավոր հեծյալներ, 15760 զինվորից բաղկացած հետևակ:

Մենուա արքայի արձանագրությունը պատմական Տայքի մասին

Հաջորդ խոշոր արշավանքը Դիաուխիի դեմ կազմակերպում է Մենուան: Այդ մասին խոսվում է Յագիթաշի արձանագրությունում, որի գլխավոր հռչակագրում Դիաուխի ցեղը անվանում է հզորագույն երկիր³:

¹ *YKH 20; KYKH, 31; CTU A3-5Ro, A3-4.*

² *KYKH 32, 33; CTU A3-5Ro, A3-5Vo.*

³ *YKH 36; KYKH 53; CTU A5-3.*

Մենուան պատմում է, որ նվաճել է Դիաուխի ցեղի երկիրը, որի Շաշիու արքայական քաղաքը նա նվաճել էր գրոհով¹: Երկիրը և ամրոցները այրելով հասել էր մինչև Շեշե լեռը, Չուանի քաղաքը, Ուտուխա քաղաքի շրջանը: Արքան պատմում է, որ Դիաուխի ցեղի արքա Ուտուբուրշին հպատակվել է նրան, գրկել նրա ոտքերը, դեմքով խոնարհվելով: Արքան ներել էր Ուտուբուրշիին և հարկ սահմանել: Որպես հարկ Ուտուբուրշին տվել էր ոսկի և արծաթ: Հավանաբար նաև տեղի է ունեցել զերինների փոխանակում: Այա Մենուան հեռացրել էր գահից երկու արքաների՝ Բալթուխի ցեղի երկրի և Խաղդիրիուլի քաղաքի երկրի: Շաշիու քաղաքի գրավումից հետո Մենուան նաև հատում է Չիվինի արձանագրությունը, ըստ որի՝ հուշասյուն է դրել՝ այն նվիրելով Խաղդ աստծուն: Մենուան Դիաուխիի դեմ կազմակերպված արշավանքներով ամրապնդում էր իր դիրքերը հյուսիսում և հիմքեր ստեղծում դեպի հարավ և հարավ-արևմուտք հետազայում արշավելու համար²:

Արգիշտի I-ի արշավանքները պատմական Տայքի մասին

Ուշագրավ է այն, որ Դիաուխիի դեմ արշավանքները շարունակում է Արգիշտի I-ը: Արքան Խորխորյան տարեգրության առաջին սյունակի գլխավոր հռչակագրում պատմում է, որ այդ նույն տարում արշավել է Դիաուխի ցեղի երկիրը: Գ. Մելիքիշվիլին արշավանքը թվագրում է Ք.ա. 785 թ.: «Դիաուխի ցեղի արքային ես արքա հռչակեցի, նվաճեցի Շերիազի երկիրը, քաղաքներն այրեցի, ամրոցներն ավերեցի, հասա մինչև Պուտի քաղաքը, որը Բիանի և Խուշանի երկրների հարևանությամբ է, հետո նվաճեցի Թարիունի երկիրը»³: Այա արքան նշում է այն ցեղերը և երկրները, որոնք նվաճել է. «Արշավեցի Չաբախա երկիրը և նվաճեցի զաբախացիների երկիրը, հասա մինչև Ուզինաբիտարնա քաղաքը, մինչև Սիրիմուֆարա լեռը, ապա նվաճեցի Իգանի երկրի Մաքալթունի քաղաքը, հասա Էրիախի ցեղի երկիրը: Արշավեցի Աբունի երկիրը, նվաճեցի

¹ Меликишвили Г., *Диаухи (Из истории Южного Закавказья в древневосточную эпоху)*, *Вестник Древней истории*, 1950, 4 (34), с. 37.

² Арутюнян Н., *Биаинили (Урарту), военно-политическая история и вопросы топонимики*, Ереван, 1970, с. 160.

³ УКН 127 I; КУКН 173-I; СТUA8-3 I.

Ուրեխունի քաղաքը, Վիտերուխի երկրի արքայական քաղաքը»: Հավանաբար այս երկրներն արշավանքի պահին Դիաուխիի համադաշնության մեջ են մտել կամ համարվել են Դիաուխի երկրի դաշնակիցներ: Արշավանքի նկարագրության վերջում Արգիշտին նշում է գերեվարվածների քանակը. «19225 պատանի, 10140 զինվոր, 23280 կին, ընդամենը 52675 մարդ մեկ տարում»: Ոմանց արքան սպանել էր, ոմանց ողջ գերեվարել: Արքայի ավարը բաղկացած էր 1104 ձիուց, 35015 խոշոր եղջերավոր և 101829 մանր եղջերավոր անասունից: Մինչդեռ հաջորդ տարի Ք.ա. 774թ. Արգիշտին աշխուզիի համար արշավում է Էթիունի համադաշնության դեմ, որի կազմում Խորիսոյյան տարեգրության հինգերորդ պունյակում արքան նշում է նույն Էրիախի, Կաթարգա ցեղերի երկրները և Վիտերուխի երկիրը: Հաջորդ արձանագրությունը, որն ավելի մանրամասն է պատմում Դիաուխիի արշավանքի մասին, գտնվել է Վանի Սբ. Սահակ եկեղեցու մեջ գտնվող սյան վրա¹: Այս արձանագրության մեջ արքան հիշում է Դիաուխիի Ուտուբուրշի և Փանուլուա արքաների անունները, որոնց նա հպատակեցրել էր: Հավանաբար Իշպուինի և Մենուա արքաների արշավանքներից հետո Դիաուխի ցեղը կրկին ապստամբել էր Վանի թագավորության դեմ: Արգիշտին հիշատակում է Դիաուխիի նույն Ուտուբուրշի արքային: Վանի արքայի դեմ Դիաուխիում դուրս էր եկել Իգարաբ-դաշտավայրի՝ գորքը Ուարդա-Վարդա քաղաքի առջև: Այստեղ արձանագրությունը թերի է, բայց բովանդակությունից պարզ է դառնում, որ Արգիշտին հաղթանակ տանելով արշավել էր Դիաուխի ցեղի խորքերը՝ հասնելով Բիանի, Խուշանի, Ուլդինի երկրները և Չուանի արքայանիստ քաղաք: Վերջինս Արգիշտին այրել էր, որի մասին այստեղ նա թողել է արձանագրություն: Ապա արքան արշավել էր Նարբհե և Աշկալաշի երկրներ, ավերել 105 ամրոց, այրել 453 քաղաք: Երեք երկիր նա անջատել էր և ազգաբնակչության հետ միացրել իր պետությանը: Արքան նաև թվում է այդ երեք երկրները՝ Կադա, Աշկալաշի երկրները, քաղաքը Շաշիու երկրի: Արգիշտիի ավարը բաղկացած էր 15181 պատանուց, 2734 տղամարդուց, 10604 կնոջից, 4426 ձիուց, 10478 խոշոր

¹ YKH 128 A1, B1; KYKH 174-A1,B1; CTU A 8-1; CTU A 8-2 Vo

եղջերավոր և 73770 մանր եղջերավոր անասունից: Ինչպես Մենուայի Յագիլթաշի արձանագրությունում, այնպես էլ այստեղ Արգիշտին նշում է արքաների հանդեպ իր վերաբերմունքի մասին: Արքան ամորձատել էր ըմբոստ չորս արքաների, սակայն արքաների անունները նա չի թվում, փոխարենը նշում է նրանց ցեղանունները՝ Շաշքիեխի, Արդարաքիխի, Բալլթուլխի, Կարիլուխի և այն մասին, որ գահընկեց արված արքաների փոխարեն նա նշանակել էր մարզերի կառավարիչներ: Դիաուխի ցեղի արքային նա ստրկացրել էր և ստիպել հարկ վճարել: Դիաուխիի հարուստ պաշարների մասին կարելի է կռահել՝ իմանալով դիաուխցու հարկի որակի և քանակի մասին: Բնականաբար Արգիշտին հպարտությամբ է այս մասին պատմում արձանագրության մեջ. 41 մինա¹ մաքուր ոսկի, 37 մինա արծաթ, 10000 մինա պղինձ, 1000 հեծկան ձի, 300 խոշոր եղջերավոր և 10000 փոքր եղջերավոր անասուն: Արքան, սույն հարկը ստանալով, Դիաուխիի արքային հարկել էր տարեկան հարկով՝ ... մինա մաքուր ոսկի, 10000 մինա պղինձ, ... ցուլ, 105 կով, 500 ոչխար, 300 հեծկան ձի և զինվորներ: Հավանաբար Դիաուխին պարտավորվում էր նաև Արգիշտիին տրամադրել մարտունակ բանակ:

Հաջորդ հարվածը Արգիշտին պիտի տար Էթիունի համադաշնությանը, որի մասը կազմում էր Դիաուխին և վերը նշված նրա դաշնակիցները: Հյուսիսային համադաշնության դեմ Ուրարտուի պայքարը տևել էր երեք տարի անընդմեջ², այս մասին նույն արձանագրության մեջ պատմում է Արգիշտի I-ը: Արքաները, որոնք երեք տարի անընդմեջ օգնության էին եկել Դիաուխիի արքային, պարտվել էին Ուրարտուին և Արգիշտին գրավել էր Լուշա, Կաթարգա երկրները, Էրիախի ցեղի երկիրը, Գուլութախի երկիրը, Վիտերուխի ցեղի երկիրը՝ հասնելով մինչև Արունի երկիրը: Արգիշտին ամորձատել էր Լուշա երկրի արքային, Իգա երկրի արքային ստրկացրել, թողել տեղում: Վերջինս հարկ էր տվել արքային: Արձանագրության վերջին հատվածից պարզ է դառնում, որ Արգիշտին կրկին ապստամբած Դիաուխին հպատակեցրել էր երեք տարում՝ պար-

¹ 1 արքայական մինր հախասար է մոտ 1000 գրամի:

² VKH 128 A1, B1; KYKH 174 A1, B1; CTU A 8-1; CTU A 8-2 Vo.

տության մատնելով երեք տարի անընդմեջ Դիաուխիին օգնության եկած դաշնակիցներին:

Հաջորդ արձանագրությունը, որը թողնում է Արգիշտին, Հանակի՝ Օրթաքենդի թերի տեքստով արձանագրությունն է, որը պահպանվում է Ստամբուլի հնագիտական թանգարանում¹: Այս եզակի արձանագրությունը հայտնաբերվել է 1985թ. ներկայիս Կարսի նահանգի Հանակ բնակավայրից ոչ հեռու՝ Օրթաքենդ գյուղից 2 կմ հեռավորության վրա², Չլդր լճից հյուսիս արևմուտք և Արդահանից՝ հյուսիս-արևելք: Արշավանքը, որ կազմակերպել էր Արգիշտին, ուղղված էր Թարիունի երկրի դեմ, որը նվաճվել էր նրա կողմից: Թարիունցիների երկիրը նվաճելով՝ արքան այդ ճանապարհով հասել էր խուշանացիների երկիրը, բիայցիների երկիրը և Աշկալաշի երկիրը: Ախուրիանի քաղաքի մարզում նրա դեմ էր դուրս եկել Դիաուխի ցեղի արքան: Արքան թշնամու գորքը հետ էր շարտել, ոչնչացրել էր Կաունի մարզի քաղաքները: Արքան թվում է վերցրած ավարը՝ 72080 պատանի, 7000 տղամարդ, 11000 հավանաբար կին (?): Ոմանց արքան սպանել էր, ոմանց ողջ գերեվարել, ավերել էր 6 ամրոց, այրել 50 քաղաք:

Հուժկու արշավանքի անեծքի բանաձևը տարբերվում է ստանդարտ բանաձևերից. այստեղ Խալդ աստծո կողքին, Թեյշեբայի փոխարեն հիշատակվում է Կուեռա աստվածը: Նման արձանագրություններ, որտեղ հիշատակվում է Կուեռան, սակավ են ուրարտական արձանագրությունների մեջ: Այս աստծո պաշտամունքը այնքան ամուր է եղել Վանանդ և Շիրակ գավառների բնակչության մեջ, որ Արգիշտին Թեյշեբայի փոխարեն հիշատակել է Կուեռին³: Որոշ ոսումնասիրողներ Կուեռ-Կուեռային համարում են Թեյշեբայի որդին: Արգիշտին Կուեռայի անունը կրող Կուեռլինի դաշտավայրում է կառուցում Թեյշեբաինի ամրոցը, որ այսպես է անվանակոչում ի պատիվ Կուեռայի հոր՝ Թեյշեբա

¹ KYKH, 174 C; CTUA 8-7

² CTU I, A8-7

³ Ավագյան Բ., Պատմական Շիրակը սկզբնաղբյուրներում, Գյումրի, 2015, էջ 10-12:

աստծո¹: Կուեռային նաև հիշատակում է Մենուան՝ Արգիշտիի հայրը, Մեծոփա վանքի թերի արձանագրությունում, որտեղ Մենուան պատմում է, որ կոթող է կառուցել Կուեռա աստծուն նվիրված²: Հովհան Մամիկոնյանը նշում է, որ «Կուռառն կառուցվել է Վիշապ քաղաքի տեղում»³: Կուեռան հնդեվրոպական ծագում ունեցող աստվածություն է, նա Միերի դռան արձանագրությունում հիշատակված տասնչորսերորդ աստվածությունն է, որին վերագրվում է նաև վիշապային էություն⁴: Հետևաբար ճիշտ է Կուռառ աստվածության անվան հետ Կուռառ քաղաքի անվանումը կապելը:

Դիաուխի Արգիշտի I-ի հաջորդների օրոք

Դիաուխի երկիրը, որն իր վրա վերցրեց Ուրարտուի հզորագույն արքա Մենուայի և Արգիշտիի անկոտրում հարվածները, այլևս նրանց հաջորդների օրոք չի հիշատակվում, իսկ նրա կազմի մեջ մտած որոշ ցեղեր և երկրներ Սարդուրի II-ի արշավանքների ժամանակ հիշատակվում են այլ ցեղամիությունների և դաշինքների կազմում: Այսպիսի երկրներից է Խուշանի երկիրը, որը Խուշակիսի ձևով հիշատակվում է Կուլխա երկրի կազմում:

Եզրահանգում. Այսպիսով, Դիաուխի երկիրը ուրարտական սկզբնաղբյուրներում հիշատակվում է ինը անգամ (Քարտեզ 1): Առաջին արշավանքները դեպի Դիաուխի կազմակերպել էին ուրարտական արքաներ Իշպուիհին և Մենուան: Սակայն նրանցից հետո երկիրը կրկին ապստամբել էր, և Արգիշտի I-ը երեք արշավանք էր կազմակերպել ու երեք տարում կարողացել հպատակեցնել այս երկիրը և պարտության մատնել Դիաուխի երկրին երեք տարի անընդմեջ օգնության եկած դաշնակիցներին, այսինքն խոսքը գնում է Արգիշտիի երեք արշավանքների

¹ Հմայակյան Ս., Կուեռա-Կուռա աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում, ՊԲՀ, 1/152/ Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1990, 153-167 էջեր, էջ 160: Հմայակյան Ս., Կանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 19:

² ՎԿԻ 106; ԿՎԿԻ, 131; СТУ А 5-83

³ Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Աշխատասիրությանը՝ Վ.Հ. Վարդանյանի, Հայ մատենագիրներ, Եր., 1989, էջ 47:

⁴ Հմայակյան Ս., Կուեռա-Կուռա աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում, էջ 160:

մասին: Դիաուլիսի համադաշնության մեջ մտած ոչ մի երկիր, բացի Խուշանի երկրից, Արգիշտիի հաջորդների օրոք ուրարտական սկզբնադրյուններում չի հիշատակվում: Սարդուրյան տարեգրության C¹ հատվածում Դիաուլիսի երկրի մեջ մտնող Խուշանի երկիրը հիշատակվում է Խուշալիսի ձևով, իսկ երկրի արքան՝ Խախասնիին և Խուշալիսիի բնակչությունը Սարդուրին գերեվարել էր և վերաբնակեցրել Բիայնիլի երկրում: Սարդուրյան տարեգրությունում Խուշալիսին սակայն հիշատակվում էր Կուլխա երկրի կազմում: Դիաուլիսի երկրի հզորության և հարստության մասին են վկայում հարկերը, որոնք Վանի արքաներին վճարում էին դիաուլիցիները և գերի տարված մարդկանց և անասունների քանակը: Բնական հարստությունը և օգտակար հանածոները ուրարտացիներին ստիպում էին էլ ավելի հուժկու հարձակումներ գործել երկիրը նվաճելու համար, իսկ Դիաուլիսի ռեսուրսները օգտագործել հյուսիսային շրջաններ արշավելու համար:


References

1. Avagyan I. *Historical Shirak in the sources* [Patmakan Shiraky skzbnaghbyurnerum, Gyumri]. Gyumri: «Eldorado» publ. 2015. (in Armenian).
2. Yeghiazaryan A. *The Taik world of Great Armenia according to "Ashkharatsoyts"* [Mets Hayk'i Tayk' ashkharhn yst «Ashkharhats'voys't'i]. VEM Academic Journal, 6 (GB), 2 (46) April-June, 2014, p. 35-61. (in Armenian).
3. Yeremyan S. *Armenia according to "Ashkharatsots"* [Hayastany yst Ashkharhats'uyts'i]. Yerevan: publicatsion of Academy of Sciences of Armenia SSR. 1963. (in Armenian).
4. Harutyunyan N. *Biainili (Urartu), Political and military history and toponymic issues* [Biaynili Urartu, Voyenno-politicheskaya istoriya i voprosy toponomiki]. Yerevan: Publicatsion of Academy of Sciences of Armenia SSR. 1970. (in Russian).
5. Harutyunyan N. *Toponomics of Urartu* [Toponomika Urartu]. Yerevan: Publicatsion of Academy of Sciences of Armenia SSR. 1985. (in Russian).
6. Harutyunyan N. *Corpus of Urartian wedge-shaped inscriptions* [Korpus urartskikh klinoobraznykh nadpisey (KYKH)]. Yerevan: publ. «Gitutyun of Sciences of Republic of Armenia». 2001. (in Russian).

¹ VKH 155 C; KYKH, 241 C; CTU A 9-3 II.

7. Hmayakyan S. *The Cult of Kuera-Kuar Deity in the Armenian Highlands* [Kuyerra-Kuarr astvatsut'yan pashtamunk'y Haykakan lernnashkharhum] Historical and philological Journal. Yerevan: Publication of Academy of Sciences of Armenia SSR, 1990, p. 153-167. (in Armenian).
8. Hmayakyan S. *State religion of the Kingdom of Van* [Vani t'agavorut'yan petakan krony]. Erevan: Publication of Academy of Sciences of Armenia. 1990. 160 p. (in Armenian).
9. Hmayakyan S. Shirak as part of the Lusha-Katarza-Viteruhe alliance [Shiraky Lusha-Katarza-Viterukhe dashnakts'ut'yan kazmum] Shirak hisorical and cultural heritage, Gyumri, 1994, pp. 21-23. (in Armenian).
10. Hovhan Mamikonyan, *Taron's story. with diligence by V. H. Vardanyan. Armenian chroniclers* [Hovhan Mamikonyan, Taroni patmut'yun, Ashkhatasirut'yamb' V.H.Vardanyani, Hay matenagirner]. Yerevan: Publication of Soviet writer. 1989. (in Armenian).
11. Melikishvili G. *Diaukhi (From the history of the Southern Transcaucasia in the ancient Eastern era)* [Diaukhi (Iz istorii Yuzhnogo Zakavkaz'ya v drevnevostochnuyu epokhu)]. Journal of Ancient History. Moscow, 1950. N 4 (34), pp. 26-42. (in Russian).
12. Melikishvili G. *Urartian wedge-shaped inscriptions* [Urartskiye klinoobraznyye nadpisi]. Moscow: Publicatsion of Academy of Sciences USSR. 1960. (in Russian).
13. Salvini M. *Corpus dei testi Urartei* (CTU). v. I. Le iscrizioni su Pietra e Roccia I testi. Documenta Asiana. VIII. Volume primo. CNR. Istituto di studi Sulle civiltà dell' Egeo e del vicino Oriene. Roma: 2008.

Քարտեզ



ՀՏԳ՝ 726.5.04, 7.033

**ՏԱՅՔԻ ԻՇԽԱՆ ՏԱՃԱՐԻ ԴՐՎԱԳԱԶԱՐԴ ՀԱՏԱԿԸ
ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՏԱԿՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ
ԱՐԵՎԵԼԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ**

Չարուհի Հակոբյան

Երևանի պետական համալսարան,
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա, Հայաստան
hakobyanzaruhy@ysu.am

Արիհինե Ասոյան

Մ. Մաշտոցի անվ. Հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտ, Հայաստան
arpineas@gmail.com

Ամփոփում. Հոդվածում քննության է առնվում 2013 թվականին հնագիտական աշխատանքների ընթացքում հայտնաբերված Իշխան տաճարի դրվագազարդ հատակը: Չնայած այն բանին, որ նմանատիպ հատակների առանձին փոքր դրվագներ արդեն հայտնի էին Վրաստանի մի շարք եկեղեցիներում, սակայն Իշխանի տաճարի օրինակն առանձնահատուկ է, քանի որ բացվել է գրեթե ամբողջական և ի տարբերություն բյուզանդական մարմարե հատակների՝ պատրաստված է կրաքարի ավազի հիմքի վրա պատրաստված զանգվածից, որը ներկվել և լցվել է հատուկ կաղապարների մեջ: Այս խառնուրդը կարծրանալուց հետո ձևավորում է ամուր մակերես, որը հիշեցնում էր բազմերանգ քարերի, մասնավորապես տուֆի դրվագազարդում: Իշխանի տաճարի հատակը, հավանաբար, պետք է թվագրել XI դարի առաջին կեսով՝ եկեղեցու վերջին վերանորոգման շրջանով:

Դեռ անտիկ ժամանակներից հայտնի հատակների հարդարման հմտությունները զարգացում են ապրել բյուզանդական շրջանում և լայն օգտագործվել են ամենակարևոր՝ մայր տաճարները հարդարելու նպա-

տակով, իսկ մեզ հասած նմանատիպ բյուզանդական լավագույն օրինակները թվագրվում են XI-XIII դդ. Բյուզանդական դեկորատիվ հատակների հիմնական մոտիվը, այսպես կոչված, օմֆալիան/օմֆալոսն է՝ բաղկացած է մեծ և փոքր շրջանակների համադրությունից, որն էլ ելակետային է հանդիսացել Իշխանի տաճարի դրվագագարդ հատակի ձևավորման համար և իրենից ներկայացնում է դեկորատիվ վարդյակների համադրությամբ ընդարձակ կոմպոզիցիա:

Քանակի բառեր՝ Իշխանի տաճար, Տայք, դրվագագարդ հատակ, օմֆալիա/օմֆալոս, խճանկար, մարմար, դեկորատիվ հատակ:

THE INLAID FLOOR OF ISHKHAN CATHEDRAL IN TAYK AND THE EASTERN CHRISTIAN TRADITION OF DECORATIVE INLAYS

Zaruhi Hakobyan

Yerevan State University,
Armenian State Academy of Fine Arts, Armenia
hakobyanzaruhi@ysu.am

Arpine Asryan

Research Institute of Old Manuscripts after M. Mashtots, Armenia
arpineas@gmail.com

Abstract: The article presents the inlaid floor of the Ishkhan Cathedral, discovered in 2013 during an archaeological excavation. Despite the fact that some small fragments of the similar decorative inlays were already known in a number of churches in Georgia, in the Ishkhan Cathedral there is almost a complete and intact flooring, which, unlike Byzantine marble inlays, has been made of a blend of lime mortar, colored and poured into special forms. After hardening, the mixture formed a hard surface and was very reminiscent of inlays of multi-colored stones, in particular, tuff. The inlaid floor of the Ishkhan Cathedral most likely dates back to the first half of the 11th century,

to the last restoration period of the church. The technique of incrustation, known since the ancient times, was developed in the Byzantine period and was widely used especially for decorating the most important monuments or cathedral churches. The best Byzantine examples of such inlaid floors that have reached to us are dating back to the 11th-13th centuries. The main motif of Byzantine inlaid floors, the so-called *omphalos*, known as a combination of large and small circles. It became the starting point for the design of the decorative layout of the Ishkhan Cathedral, which appears to us through the combination of decorative rosettes.

Key words: Ishkhan cathedral, Tayk', inlaid floor, omphalos, mosaic, marble, decorative layout.

Նախարան. Տայքը միջնադարյան Հայաստանի նահանգներից 14-րդն էր, որը թե՛ քաղաքական, թե՛ մշակութային առումով նշանակալից դեր է ունեցել Հայաստանի և տարածաշրջանի պատմության համար: Տայքից մեզ է հասել հարուստ մշակութային ժառանգություն, որն իր մեջ է ընդգրկում ճարտարապետության, քանդակի և որմնանկարչության բացառիկ հուշարձաններ: Նահանգի պատմության մեջ առանցքային դեր է ունեցել վաղմիջնադարյան շրջանը (IV-VIII դդ.)՝ որպես Մամիկոնյան իշխանական տան բնօրրան, ինչպես նաև հայկական ճարտարապետության «ոսկեդարի» կենտրոններից մեկը, քանի որ նաև այստեղ է ծավալել իր շինարարական գործունեությունը Ներսես Տայեցի, կամ Ներսես Ծինարար կաթողիկոսը (641-661)¹ կառուցելով առնվազն երեք առանցքային հուշարձան՝ Իշխանի և Բանակի մայր տաճարները, ինչպես նաև Օլթիի/Ուխտյացի փոքր եկեղեցին՝ իր անունից արված հունարեն արձանագրությամբ²: Դեռևս Մամիկոնյանների շրջանում ձևավորված Տայքի գեղարվեստական ավանդույթները, որոնց մեջ խտացած

¹ *Акопян З., Казарян О. Каталикос Нерсес III Строитель: исторический портрет // Graphosphaera, 2023, т. 3, № 2, сс. 108-126.*

² *Казарян А., Архитектура стран Закавказья VII в.: формирование и развитие традиции, т. 1-4, Москва: Locus Standi, 2012, т. 2, сс. 422-471, 554-570; Edwards R. Medieval architecture in the Oltu-Penek valley // Dumbarton Oaks Papers, 1985, vol. 39, p. 15, 18.*

Էին ինչպես ուշ անտիկ, վաղքրիստոնեական և բյուզանդական մայրաքաղաքային, այնպես էլ արդեն ինքնուրույն նկարագիր ունեցող հայկական միջնադարյան արվեստը, ժառանգվում և հետարաբական շրջանում իր շարունակությունն է ունենում Բագրատունիների կրտսեր ճյուղի ներկայացուցիչների կողմից¹ որոշիչ դեր խաղալով նահանգի պատմական նոր շրջափուլի արվեստի կայացման գործընթացում: Հիրավի դրա համար ստեղծվել էին բոլոր անհրաժեշտ պայմանները և այդ իմաստով աննախադեպ էին Դավիթ կուրապատի բեղմնավոր կառավարման տարիները (960-1001 թթ.)՝ հայ-բյուզանդական քաղաքական և մշակութային ակտիվ համագործակցության ֆոնին՝ Տայքի մշակութային նոր փայլուն վերելքի ժամանակաշրջանում:

1. Տայքի X-XI դդ. հուշարձանների ընդհանուր նկարագիրը

Տայքի X-XI դդ. մշակութային բազմաշերտ միջավայրին բնորոշ էր գեղարվեստական տարբեր ավանդույթների փոխառնչությունն ու փոխազդեցությունը: Դա ակնհայտ երևում է նախևառաջ եկեղեցական ճարտարապետության մեջ², ինչպես նաև վերջինիս բաղկացուցիչ մասը հանդիսացող քանդակային հարդարանքի օրինակներում³: Տայք աշխարհի Xդ. հոյակերտ և կոթողային եկեղեցական կառույցները (Իշխան, Օշկվանք, Պարխար, Խսախու, Չորդվանք և այլն), որոնք հանդիսանալով ներսեսյան տաճարաշինության տրամաբանական շարունակությունը, ի ցույց դրեցին դարաշրջանի գեղարվեստական առաջատար միտումները

¹ Toumanoff C., *The Bagratids of Iberia from the Eight to the Eleventh Century // Le Museon* 74, 1961, pp. 5-42; **Եղիազարյան Ա.**, *Վրաց Բագրատունիների թագավորության ձևավորման գործընթացը, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, էջ 8-14; 24-28:*

² **Казарян А.**, Триконховые крестово-купольные церкви в зодчестве Закавказья и Византии // *Византийский мир: искусство Константинополя и национальные традиции. К 2000-летию христианства, Москва: «Северный пологник», 2005, сс. 13-30;* **Казарян А.**, *Архитектура стран Закавказья...*, т. 2, сс. 426-434.

³ **Ասրյան Ա.**, *Տայքի եկեղեցիների արտաքին հարդարանքի տարրերը մշակութային փոխառնչությունների լույսի ներքո // «Անտառ Ծննդոց». Հորվածների ժողովածու նվիրված Ֆ. Տեր-Սարտիրոսովի հիշատակին (հայբազ.՝ Չ. Հակոբյան, Լ. Միրալեյան), Երևան, ԵՊՀ հրատ., էջեր 326- 333;* **Акопян З.**, *Скульптурное убранство южного входа главной церкви мтаастыра Хаху. Символика изображений // Պատմական Տայք. Պատմություն, մշակույթ, դավանանք, հորվածների ժողովածու (հայբազ.՝ Չ. Հակոբյան, Կ. Ղարիբյան, Ա. Ասրյան), Ս. Էջմիածին, 2019, сс. 335-365:*

և կատարման բարձր որակը¹, որը թեև շատ խոսու՛ն էր, բայց արդեն XIդ., նոր քաղաքական և պատմական իրավիճակում՝ աստիճանաբար մարում է: Այդ տաճարներին հատուկ էին մոնումենտալությունը, ճարտարապետական և քանդակային մասերի փոխկապակցվածությունն ու ներդաշնակությունը, ինչպես նաև ճարտարապետական առանձին տարրերի կիրառման առաջնայնությունն ու նորարարությունը՝ պայմանավորված բյուզանդական մշակութային աշխարհի հետ սերտ կապերով (մույթերի փոխարեն կլոր կամ բազմանիստ հզոր սյուների կիրառում, կողմնային ավանդատների գմբեթային ծածկեր, առագաստա-տրոմապային միացյալ անցումների գեղարվեստական նոր լուծումներ և այլն²):

Տայքի միջնադարյան տաճարներն ունեցել են նաև ինքնատիպ և ճարտարապետական կերպարին համահունչ արտաքին և ներքին հարդարանք: Դա զարդատարրերով և պատկերներով հարուստ քանդակն է³, ինչպես նաև որմնանկարչությունը, որից, ցավոք, քիչ բան է մեզ հասել⁴: Մոնումենտալ գեղանկարչությունը մեծապես կարևորվել է Տայքի արվեստում, որմնանկարները հարդարել են եկեղեցիների ներսույթն ամբողջությամբ (հաշվի առնելով Տայքի կառույցների մասշտաբը), սակայն մեզ են հասել առանձին դրվագներ միայն: Բայց, իհարկե, քանդակն ու որմնանկարը եկեղեցիների հարդարման միակ ձևերը չէին:

¹ **Казарян А.**, Зодчие Давида Куропалата: поиск нового образа соборной церкви в Тайке (Тао) второй половины X века // *Вопросы всеобщей истории архитектуры*, 2012, вып. 4, сс. 51-71.

² **Казарян А.**, Искусство армян-халкидонитов // *Православная энциклопедия*, т. 3, Москва: Церковно-научный центр «Православная энциклопедия», сс. 314-316.

³ **Dadiani T., Khundadze T., Kvachiatadze E.**, *Medieval Georgian sculpture*, Tbilisi, Cezanne printing house, 2017, pp. 120-123, 125-127, 197; **Winfield D.**, *Some early medieval figure sculpture from North-East Turkey* // *Journal of Warburg and Courtauld Institutes*, XXXI, London, 1968, pp. 38-57, **Eastmond A.**, *Royal Imagery of Medieval Georgia*, The Pennsylvania State University Press, 1998; **Djobadze W.**, *Early medieval Georgian monasteries in historic Tao, Klarjet'i and Šavšet'i*, Stuttgart, 1992.

⁴ *Tao-Klarjeti murals; Interaction of Cultural Traditions*, in: *Synergies in visual culture*, Festschrift für Gerhard Wolf, München, 2013, pp. 215-228.

2. Իշխանի տաճարը և նրա դրվագագարդ հատակը

Համեմատաբար վերջերս մասնագիտական շրջանակներին ծանոթ դարձավ Տայքի Իշխան տաճարի դրվագագարդ հատակը, որը բացվել էր 2013 թվականին՝ թուրք-վրացական համատեղ հնագիտական աշխատանքների արդյունքում¹: Այն եկեղեցու գրեթե ողջ մակերեսն ընդգրկող ծածկույթ է, որտեղ տեսնում ենք ոչ թե դասական քարե սալահատակ, այլ դրվագագարդման եղանակով արված բազմազույն տարբերակ: Չարմանալի է այն փաստը, որ այս տարիների ընթացքում հատակը չի ուսումնասիրվել և չի ներկայացվել գիտական հրատարակումով: Կարելի է նաև ասել, որ մեծ հաշվով ուսումնասիրված չեն նմանատիպ հատակների այլ դրվագները՝ արձանագրված թե՛ Տայքում, թե՛ վրացական մի քանի այլ միջնադարյան եկեղեցիներում:

Իշխանի տաճարը բազմաշերտ կառույց է: Ինչպես հայտնի է, այն ունի շինարարական երեք շրջան. կառուցվել է VII դ. Ներսես Գ Ծինարար կաթողիկոսի կողմից՝ Մամիկոնյանների նստավայրում, որի մասին կան տեղեկություններ ինչպես հայկական, այնպես էլ վրացական աղբյուրներում (դա նշում է նաև Գեորգի Մերչուրը): Ներսեսյան կառույցից ենթադրաբար մնացել է միայն արևմտյան խաչաթևի հյուսիսային երկայնակի հատվածը (նավը)², որը, սակայն, թուրքական կառավարության կողմից իրականացված վերջին վերանորոգման աշխատանքների արդյունքում գրեթե անհայտացել է:

Իշխանի տաճարը, ինչպես ցույց են տալիս վերջին ուսումնասիրությունները, կառուցվում է որպես խաչաձև, կենտրոնագմբեթ և եռախորան եկեղեցի (ոչ գվարթնոցատիպ, ինչպես ենթադրվում էր նախկին-

¹ *Վերականգնողական աշխատանքների մասին յուր մեծ արձագանք է ստացել սոցիալական մեդիայում, ինչպես նաև լայնորեն շրջանառվել վրացական և թուրքական լրատվականներում. Տե՛ս <https://georgianjournal.ge/culture/23137-ishkhani-process-in-progress.html> .*

² **Տունայեռյան Պ.**, Տայք (Տան). Նոր էջ միջնադարյան նարտարակետության պատմության մեջ // Պատմական Տայք. Պատմություն, մշակույթ, դավանանք, հողիսմների ժողովածու (խմբագ.՝ Չ. Հակոբյան, Ն. Ղարիբյան, Ա. Ասրյան), Ս. Էջմիածին, 2019, էջ 216; **Казарян А.**, Средневековые храмы Таика ..., 2019, էջեր 273-374:

նում¹), որն իր ճարտարապետական ձևով հարում է Դվինի Մայր տաճարի նույն Ներսես Ծինարարի կողմից վերակառուցված տարբերակին (VII դ. կես)², իսկ նախագաղափարի առումով սերում Բեթղեհեմի Ծննդյան տաճարի հորինվածքից³: VIII դ. 70-ական թվականների արաբների պատժիչ արշավանքներից հետո Տայքի վանական համալիրները խիստ վնասվում են, այդ թվում նաև Իշխանի տաճարը, և հարկադրաբար լքվում: Ինչպես տեղեկանում ենք աղբյուրներից, լքված և խիստ վնասված Իշխանի տաճարը վերաշինվում է IX դ. վերջում՝ վրաց հոգևորական Սաբանի կողմից⁴: Տաճարի հաջորդ վերակառուցման աշխատանքները իրականացվում են 1027 և 1032 թթ.⁵: Սրանից ելնելով, հավանաբար, Իշխանի դրվագագարդ հատակը պետք է վերագրել վերակառուցման այս վերջին շրջանին, քանի որ բարդ հորինվածք ունեցող և համեմատաբար փխրուն այդ ծածկույթը անպայման կվնասվեր վերակառուցման ժամանակ:

Իշխանի տաճարի դրվագագարդ գորգ հիշեցնող հատակը ուղղանկյուն է՝ ձգված արևմուտք-արևելք առանցքով: Այն բաղկացած է եզրավորող մի քանի շարք գոտիներից և կենտրոնական հատվածում խոշոր բազմաթերթ ծաղիկներ հիշեցնող վարդյակներից, որոնք իրար են միանում վարդյակի եզրագոտիներն իրար կապող փոքր շրջանակ-հանգույցների միջոցով: Խոշոր մեդալիոնների միջև գետեղված են դեպի դուրս ուղղված զույգ կիսարմավներ, ինչը նույնպես Տայքի և հատկապես Իշխանի տաճարի հարդարանքի հիմնական զարդամոտիվներից է: Նույն ժամանակաշրջանին շատ բնորոշ են նաև բազմաթերթ ծաղիկներ հիշեցնող վարդյակները, որոնք լայն կիրառում են ստացել ինչպես Տայքի նույն ժամանակաշրջանի եկեղեցիների հարդարանքում, այնպես էլ Անիի եկեղեցիների և, մասնավորապես, Մայր տաճարի ճարտարապետական

¹ *Токарский Н., Из истории средневекового строительства в Тайкском княжестве (ред. М.Асратян, предис. А.Якобсон, Л.Гюзальян), Ереван: «Айастан», 1988, сс. 130-132.*

² *Казарян А., Средневековые храмы Тайка ..., էջեր 268-296.*

³ *Казарян А., Архитектура стран Закавказья..., т. 2, сс. 426-428.*

⁴ *Март Н., Георгий Мерчуль, Житие св. Григория Хандзтійского, СПб: Туп. Императорской Академии наук, 1911, с. 87.*

⁵ *Djobadze W., Early medieval Georgian..., pp. 191-197.*

հարդարանքում: Վարդյակներից բացի հորինվածքի մաս են կազմում երիզող զարդագոտիները, որոնք ներկայացնում են երկու շարք սև և սպիտակ, միմյանց հակառակ դասավորությամբ շեղանկյունների և փոքր շրջանակների շարքեր՝ նույնպես բազմաթերթ ծաղիկներով հավելված: Այս վերջին եզրագոտին ամենամաշվածն ու քայքայվածն է: Այս դեկորատիվ բնույթի հատակը պատրաստված է չափազանց մանրացված կամ կրաքարի փոշու հիմքի վրա պատրաստված շաղախից, որը ներկվում էր և լցվում էր համապատասխան ձև ունեցող կադրապարների մեջ, իսկ չորանալուց հետո ձևավորում կարծր մակերեսով և գեղարվեստական հորինվածքով ամուր հատակի ծածկույթ: Կատարման այս եղանակը հիշեցնում է նույն ժամանակահատվածում Բյուզանդիայում լայն տարածում գտած էմալի տեխնիկան, որը պատահական չէր, քանի որ հենց դրանց ազդեցությամբ են ստեղծվում Տայքի հայտնի էմալե եկեղեցական իրերը (Խախուի Տիրամոր սրբապատկերի էմալապատ մետաղե դրվագը¹): Տեսնելով այս հատակի գունազարդ հորինվածքը՝ ստեղծվում է ընդհանուր տպավորություն, որ այն բազմագույն տուֆերի դրվագազարդում է: Իշխանի հատակի հորինվածքի համար օգտագործվել է երեք գույն՝ սև, սպիտակ և շիկակարմիր՝ մոտ աղյուսի կամ կարմիր տուֆի երանգներին:

3. Իշխանի տաճարի դրվագազարդ հատակը և հարավկովկասյան նմանատիպ օրինակները

Դեռևս 1879 թվականին իր ճամփորդությունների ընթացքում Բանակի տաճար այցելած Ե. Վեյդենբաումը տաճարի հատակը նկարագրում է որպես «սպակու պես հարթ»², ինչը թույլ է տալիս ենթադրել, որ այն պետք է պատրաստված լիներ քարացած կրաքարի հիմքով շաղախից³: Մեզ չի հասել որևէ տեղեկություն Բանակի տաճարի հատակի

¹ Средневековые ерегородчатые эмали из собрания Государственного музея искусств Грузии (сост. Л. Хускивадзе). Альбом. Тбилиси: «Хеловнеба», 1984, сс. 18-22.

² Такашвили Е., Христианские памятники. Экскурсия 1902 года, Материалы по археологии Кавказа, вып. XII, Москва, 1909, с. 92.

³ Ծոմճարոս զ., Ժյեմանոճջոլո զ., մժեղեղջոլո օնճաճեղջո թշա խաշշեղջոլոս խաշարօշեղջոլո, օճջոլոս, 2012, թճ. 170.

բազմագույն լինելու մասին, սակայն այս հիշատակության հիման վրա կարելի է ենթադրել նման դրվագագարդ հատակի առկայությունը Բանակի տաճարում¹ նման Իշխանի ծածկույթին:

Ջրակայուն կրաշաղախի շերտով է պատված եղել Մծիխեթում կառուցված Սվետիսցիսովելի տաճարի (1010-1029 թթ.) հատակը: Սվետիսցիսովելիի կապակցությամբ վրացի մասնագետները նշում են, որ այստեղ շաղախի մեջ ավելացվել է աղյուսի ջարդոն (դա երբեմն կիրառվում էր), որը ամրություն է հաղորդել հատակի ծածկույթին, նաև մեր կողմից ավելացնենք, որ նման հավելման շնորհիվ պետք է որ էլ ավելի ընգծված լիներ հատակի գեղարվեստական մշակվածքը: Նման խառնուրդը մասնագետներն անվանում են opus signinum:

Եկեղեցական հատակների ձևավորման տեսանկյունից հետաքրքիր օրինակ է Բագրատ Գ-ի պատվերով կառուցված Քուլթախի մայր տաճարի (շինարարությունն ավարտվել է 1003 թ.) ներսի դրվագը՝ բացված 2006 թ.-ին: Այս հատակի ձևավորման մասին մայր տաճարում թողել են արձանագրություն՝ նշելով 1003 թ.: Բագրատի տաճարի այս դրվագը մեծ և փոքր շրջանակներից բաղկացած հորինվածք է՝ «հավաքված» մարմարից և խեցեղենի կտորներից, իսկ հորինվածքային առումով այն շատ մոտ է դիտարկվում Կոստանդնուպոլսի Մուրբ Սոֆիայի մարմարյա հատակին² (մանրամասները ստորև):

Այս շարքին է պատկանում նաև XIII դարի կեսով թվագրվող Մղվիմեվի վանքի (Իմերեթի) Տիրամոր ծննդյանը նվիրված կիսաժայռափոր եկեղեցու հատակը³, որտեղ կա «սալերի» իրար հաջորդող շրջանաձև շարվածք՝ մակերեսին հազիվ նշմարվող կրաքարի շաղախից մնացած բազմագույն շերտով: Մղվիմեվիի օրինակը մեզ հետաքրքրում է այն առումով, որ հատակի շարվածքի եղանակը հիշեցնում է VII դ. երկրորդ

¹ Բանակի տաճարը կառուցվել է Ներսես Շինարարի կողմից VII դ. երկրորդ կեսին և վերակառուցվել արդեն սլափական արշավանքներից հետո՝ Տայքի և Կղարջքի կառավարիչ Ատրներսեսի IV իշխանի (մահացել է 923 թ.) կողմից:

² Steppan Th. Opus sectile // Realexikon zur byzantinischen Kunst, Bd. VII, Lf. 52, A. Hiersemann publ, 2013, S. 500.

³ Խոժժարոս զ., ԹղմանոՄցոլո զ., մթնեղծելո ռեժաժեղո ..., թ. 174, Եջր. 146.

կեսին կառուցված Թալինի կաթողիկեի գմբեթատակ հատվածը¹՝ նմանատիպ շրջանաձև շարվածքով (շարվածքի շառավիղը կազմում է 438 սմ)²: Թալինի եկեղեցու հատակի նշված ծածկույթն ունի քարին ոչ հատուկ քայքայման ձև՝ տրոհված մանր ճաքեր հիշեցնող հատվածների, որը կարող է ակնարկել հատակի շարվածքի հենց այս եղանակով արված տարբերակը և, անշուշտ, հետազոտության կարիք ունի³:

Մեկ այլ հիշատակության արժանի օրինակ է Բուխսի տաճարի հյուսիսային փոքր եկեղեցու հատակը (1030-ական թթ.)՝ վերը նկարագրված բազմաթերթ մեծ վարդյակի տեսքով: Այստեղ կրաքարի շաղախի փոխարեն օգտագործված են բնական քարեր՝ մուգ կանաչ, կարմիր և դեղնավուն: Եկեղեցու փոքր չափերի շնորհիվ է միայն, որ հնարավոր է եղել իրականացնել այդ բազմագույն քարի շարվածքը: Հատակի ձևավորումը թվագրվում է 1030-ականներով և կապվում Մարիամ թագուհու մեկենասության հետ, ով այդ շրջանում վերադարձել էր Կոստանդնուպոլիսից՝ բերելով իր հետ նման գունագարդ հատակի գաղափարը⁴:

Վերը բերված բազմագույն հատակների զուգահեռների մեջ, ինչպես տեսանք, գերակշռում են վրացական օրինակները, որը կարծում ենք ունի իր բացատրությունը: Հաշվի առնելով Տայքի դրվագագարդ հատակի օրինակը, ինչպես նաև վրացական մի քանի եկեղեցիներում և, ենթադրաբար, Թալինի մեծ եկեղեցում առկա հետքերը, կարելի է նախապես արտահայտել այն կարծիքը, որ Հարավային Կովկասում, վաղ միջնադար-

¹ *Казарян А., Архитектура стран Закавказья...*, т. 3, с. 150, ил. 1485.

² Ա. Ղազարյանը նշում է, որ այդ հատվածն իր չափերով համընկնում է եկեղեցու թմբուկի շառավիղի հետ, որը պատահական չի թվում և, հնարավոր է, որ այստեղ դրվել է փոքր ճարտարապետական ինչ-որ կառույց (օրինակ՝ ամբիոն կամ սուրբ սեղան): Այս իմաստով հատկանշական է, որ այդ շարվածքի կենտրոնական հատվածում 167 սմ տրամագծով սալահատակը բացակայում է փոս է, որն իր չափերով մոտ է վաղմիջնադարում կիրառվող կլոր սուրբ սեղաններին (հմմ. Չվարթնցի օրինակը): Տե՛ս **Казарян А., Алтарная преграда и литургическое пространство храма Звартноц // Иконостас: Происхождение, развитие, символика** (ред. А. Лидов), Сборник статей, Москва: Пресс-Традиция, 2000, сс. 93-95.

³ Ցալոք, Թալինի մեծ եկեղեցում սկսված ծախարային վերակառուցման աշխատանքների արդյունքում հատակի ծածկույթի այդ հատվածը գրեթե անհետացել է:

⁴ **Եռնիսթան ճա, Երմենոսթան ճա**, նշվ. աշխ., էջ 173.

րից սկսած, եղել է եկեղեցիների հատակների ձևավորման նման ավանդույթ, որը վերախմաստավորված և փոփոխված ձևով կրկնում է բյուզանդական եկեղեցիների մարմարե դրվագագարդ հատակները: Միևնույն ժամանակ կարելի է փաստել, որ միջնադարյան Հայաստանում մենք հաճախ ենք հանդիպում եկեղեցիների վերանորոգման և միջամտության աշխատանքների, որոնց արդյունքում, օրինակ, վաղմիջնադարյան կղմինդրե ծածկերը փոխարինվել են հետագայում քարե ծածկերով, վաղ շրջանի ցածր բեմերը բարձրացվել են՝ համաձայն նոր կանոնների¹, և ահա այս տեսանկյունից հասկանալի է, որ նման միջամտությունների արդյունքում, հավանաբար, վերաշարվել են նաև եկեղեցիների հատակները (կրաշաղախից պատրաստված դրվագագարդ հատակները, այնուամենայնիվ, խոցելի էին և ժամանակի ընթացքում կարող էին փոխարինվել, մանավանդ վերաշինությունների ժամանակ): Պետք է փաստել նաև, որ բյուզանդական մեզ հասած օրինակներն էլ վաղ չեն. վաղ դրվագագարդ հատակները նույնպես չեն պահպանվել: Ահա այս իրողությունից ելնելով կարելի է նաև ելթադրել, որ հայկական եկեղեցիների պարագայում նման դրվագագարդ հատակների հետքերը չեն մնացել: Ինչ վերաբերում Տայքի եկեղեցիներին, ապա պայմանավորված քաղաքական իրավիճակով, Դավիթ կուրապաղատի մահից հետո նահանգի մասնատմամբ և մշակութային անկմամբ, տեղի հուշարձանները շատ դեպքերում ակտիվորեն չեն օգտագործվել, հետևաբար չեն կրել փոփոխություններ, որը չի կարելի ասել Ծիրակի Բագրատունիների առնչությամբ, քանի որ Անի մայրաքաղաքն ունեցել է իր երկրորդ ծաղկումը Չաքարյանների օրոք (XIII դ.), երբ ընթացել են ակտիվ եկեղեցաշինական և վերակառուցման աշխատանքներ²: Միևնույն ժամանակ

¹ *Hakobyan Z. The Chancel-Barrier Fragments and Certain Elements of the Sanctuary Design // Early Medieval Armenian. Liturgical Furnishings Between East and West (5th – 15th centuries). Fragments, Objects, and Contexts (ed. Fabio Coden), University of Verona, 2022, pp. 100-115; Հակոբյան Չ., Միրթայեղյան Լ., Ասրյան Ա., Ավետիսյան Թ. Հայաստանի 12-14-րդ դդ. խոնարհված և քիչ ուսումնասիրված եկեղեցական կառույցների քանդակային հարդարանքը, Երևան, 2023, էջեր 88-901:*

² *Անիում կարելի է մատնանշել X-XI դդ. մի շարք եկեղեցիների վերաշինումների և նոր հաստատվածների հավելման մասին, ինչպես, օրինակ, Ամենափրկիչ եկեղեցու և, ամենայն հավանա-*

մեզ համար պարզ է, որ նման գեղարվեստական դրվագագարդված հատակներ բնորոշ էին և պետք է փնտրել մայրաքաղաքային միջավայրում, ինչպես նաև նշանակալից և բարձր կարգավիճակ ունեցող եկեղեցիներում, քանի որ հենց այդ միտումն ենք տեսնում Տայքում և վերը բերված գուգահեռներում¹:

4. Եկեղեցիների հատակների հարդարման արևելաքրիստոնեական ավանդույթը

Արևելաքրիստոնեական արվեստում ձևավորվել է եկեղեցիների հատակների հարդարման ինքնատիպ ավանդույթ, որը թեև շատ առումներով կիրառել և շարունակել է անտիկ ձևերն ու կատարման տեխնիկան, բայց և այնպես վերաիմաստավորելով դրանք համաձայն միջնադարյան խորհրդանշական պատկերացումների: Նշենք նախևառաջ այն կարևոր փաստը, որ քրիստոնեական եկեղեցին և, հատկապես, վերջինիս ներքին տարածքը ժամանակակիցների կողմից ընկալվում էր որպես փոքր Տիեզերք (Տիեզերքի մոդել) և Աստծո ներկայության վայր, որը գուցորդվում էր Երկնային Երուսաղեմի և Եդեմական այգու պատկերացումների հետ²: Եվ որպես այս մտածելակերպի արտահայտություն, արդեն վաղ միջնադարում V-VII դդ. ժամանակահատվածում Պաղեստինի եկեղեցական կառույցներում, և ոչ միայն, լայն տարածում են ստանում նկարագարող հատակները՝ խճանկար գորգերը իրենց բնորոշ պատկերագրական ծրագրով (լայն զարդագոտիները, որ խորհրդանշում էին

կանությունը, Աբուդյանրենց եկեղեցու թմբուկները: Աբուդյանրենցի թմբուկի հնարավոր վերակառուցման մասին մասնավոր գրույցի ժամանակ մեզ է հայտնել Ա. Ղազարյանը:

¹ Այս խնատույն տեղին է համեմատություններ տանել եկեղեցիների ներսային խճանկար հարդարման հետ (հիմնականում պատի), որն իր ծախսատարության, ինչպես նաև հատուկ հնարություններ պահանջող արվեստի տեսակ լինելով տեղ է գտել միայն ամենաբարձր կարգավիճակ ունեցող եկեղեցիներում, օրինակ, Էջմիածնի և Դվինի մայր տաճարներում և Չվարթնոցում: Անիում գտնված խճաքարերի մասին է վկայում Ն. Մաշր: Տե՛ս **Акопян З.,** *Монументальная живопись Армении VII столетия в контексте восточнохристианской традиции // Актуальные проблемы теории и истории искусства (под. ред. А. Захаровой, С. Мальцевой, Е. Станюкович-Денисовой), Сакт-Петербург: НИ-Принт, 2016, с. 146.*

² **Вагнер Г.,** *Византийский храм как образ мира // Византийский Временник, т. 47, 1986, с. 163-181.*

դրախտային գետերը կամ հրե գետը) և խորհրդանշական բնույթի պատկերներով (դրախտային այգու ծառեր, հասուն պտուղներ, թռչուններ), որոնք պայմանականորեն վերարտադրում էին իդեալական աշխարհն ու դրախտային այգին¹: Ավետյաց երկրում հայկական գրություններով նման խճանկարներ մեզ նույնպես հայտնի են²:

Բյուզանդական աշխարհում, սակայն, հայտնի էր եկեղեցական հատակների հարդարման մեկ այլ տարբերակ՝ իրականացված բազմագույն մարմարի համադրության եղանակով (opus sectile): Նման հատակները, որ առանձնահատուկ շքեղություն էին հաղորդում եկեղեցիներին, լայն տարածում ունեին միջերկրածովյան տարածաշրջանում, հատկապես բնորոշ էին մայրաքաղաքային մեծ տաճարներին (Հռոմ, Ռավեննա, Կոստանդնուպոլիս և այլն)՝ կառուցված բարձր հովանավորությամբ³: Որպես կանոն՝ օգտագործվում էր տարբեր գույնի մարմար, սակայն երբեմն նաև այլ նյութերի (կավե սալիկներ կամ այլ քարեր) համադրությամբ: Սրա հետ մեկտեղ կիրառվում էր փորագրման սկզբունքը, երբ մարմարե սալիկի վրա նախապես գծանշվում և փորագրվում էին զարդաձևեր, որի մեջ հետո լցնում էին կա՛մ շատ մանրացված մարմարի կտորներ, կա՛մ քարից ստացված ավազի հիմքի վրա պատրաստված շաղախ, որն էլ չորանալուց հետո կարծրանում և քարի հատակի մշակում էր հիշեցնում⁴: Ինկրուստացիայի այս եղանակը, որն իր զարգացումն է ապրում միջնադարում, համարում էին խճանկարի տարատեսակ:

¹ **Piccirillo M.**, *The Mosaics of Jordan, Amman: American Center of Oriental Research edition, 1993*; **Hachlili R.**, *Ancient Mosaic Pavements: Themes, Issues and Trends, Brill: Leiden-Boston, 2009*.

² **Tchekhanovets Y.**, *The Caucasian Archaeology of the Holy Land: Armenian, Georgian and Albanian Communities between the Fourth and Eleventh Centuries CE. Brill, 2018, pp. 57-73*.

³ **Казарян А.**, *Византийская империя. Часть III. Архитектура // Православная энциклопедия, т. 8, Москва: Церковно-научный центр «Православная энциклопедия», 2004, сс. 277-303: <https://www.pravenc.ru/text/383977.html>.*

⁴ **Guidobaldi F., Guiglia-Guidobaldi A.**, *Pavimenti marmorei di Roma dal IV al IX secolo // Studi di Antichità Cristiana, 36, Città del Vaticano, 1983, pp. 13-14, 17, 59, 262.*

Բյուզանդական մայրաքաղաքային մարմարե դրվագագարդ հատակի հիմքում դրված էր օմֆալիոն/օմֆալոս կոչված հորինվածքը¹: Այն երկրաչափական պատկեր է բաղկացած իրար կցված կամ միահյուսված շրջանակներից՝ ընդգրկված ավելի մեծ շրջանակի մեջ: Դրանց առանձին տեսակները, ելնելով հորինվածքի շրջանակների քանակից, անվանում էին պետաօմֆալիոն՝ հնգաշրջանակ (quincontx): Մի քանի օմֆալիոններից բաղկացած ավելի մեծ հորինվածքը գրադեցնում է եկեղեցու աղոթասրահի կենտրոնական հատվածը՝ կենտրոնական նավը կամ գմբեթատակ տարածքը: Միջնադարյան աղբյուրներում նշվում է, որ պատարագի ժամանակ եպիսկոպոսը կանգնում է հենց այս հատվածում, ինչպես նաև այս հատվածում էր տեղի ունենում կայսրերի թագադրումը²: Արևելաքրիստոնեական արվեստում ամենահայտնի օմֆալիոնը համարվում է Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի օրինակը (16 շրջանակներ)՝ ամբողջովին «հավաքված» մարմարից, որը թվագրվում է XI դարով³:

Օմֆալիոնի/օմֆալոսի հորինվածքի վաղ միջնադարյան օրինակների մասին վկայում են մի շարք փաստեր, այդ մասին են խոսում նաև դրվագագարդ հատակներն ուսումնասիրող գիտնականները, հատկապես նշելով, որ XI-XIII դդ. բյուզանդական գեղարվեստական հատակները հիմնականում կրկնում էին վաղ օրինակները⁴:

Այս եզրակացությունները կարևոր են կրկին անդրադառնալու վաղ միջնադարում նման հատակների գոյության հարցին՝ ի դեմս Թալինի Մայր տաճարի, բայց նաև ի նկատի ունենալով Ավանի տաճարի ճարտարապետական հորինվածքը: Ինչպես ցույց է տվել իր ուսումնասիրության մեջ Ա. Ղազարյանը, Ավանի տաճարն ունի եզակի և շատ ինքնա-

¹ *Օմֆալոսը, կամ օմֆալիան որ հունարեն նշանակում է պորտ, Հունաստանի Գելֆիում գտնվող հնագույն պաշտամունքային մոնոլիտ քար է՝ նվիրված Ապոլլոնին և համարվում էր աշխարհի կենտրոնը: Միջնադարյան օմֆալոսը այս խորհրդանշանի վերախնամատարված տարբերակն է:*

² **Liakos D.**, *The Byzantine opus sectile floor in the Katholikon of Iveron monastery on Mount Athos* // *Zograf*, 2008, t. 32, p. 42.

³ **Majeska G.** *Notes on the Archeology of St. Sophia at Constantinople: the Green Marble bands on the Floor* // *Dumbarton Oaks Papers*, vol. 32, pp. 299-308.

⁴ *Տն՝ս 36-րդ և 37-րդ հղումները:*

տիպ հիրինվածք և սկիզբ է դնում Հարավային Կովկասում կենտրոնագնբեթ, քառախորան և անկյունային խորշերով եկեղեցիների կառուցմանը, որոնք հայտնի են որպես Հռիփսիմե-Չվարի խումբ, և միակն է, որ ունեն տեղական ծագում¹: Ավանի հատակագծի յուրահատկությունն ի հայտ է գալիս և՛ անկյունային չորս սենյակ-ավանդատների կյոր կառուցվածքում, և՛ ընդհանուր ծավալների ընդգծված գեղարվեստական լուծման մեջ, ինչը հուշում է, որ այս հորինվածքի գաղափարի հիմքում զարդաձևի՝ օմֆալոսի պատկերագրությունն է՝ իրականացված ճարտարապետական ձևերի մեջ: Այն, որ օմֆալիայի/օմֆալոսի մոտիվը քաջ հայտնի էր և կիրառվում էր վաղմիջնադարյան շրջանում, վկայում է Բրդաձորի մեծ կոթողը, որի մի երեսին քանդակված են միանգամից երեք օմֆալոս:

Եզրահանգում. Եվ այսպես, Իշխանի տաճարի դրվագագարդ հատակը մեզ է ներկայացնում եկեղեցու հատակի շատ ինքնատիպ և լավ պահպանված մի օրինակ, որը շատ առումներով լրացնում է մեր պատկերացումները միջնադարյան հայկական մայր տաճարների հարուստ հարդարանքի մասին: Բացի այդ, այն նոր և կարևոր մասնագիտական քննարկման թեմա է բացում թե՛ եկեղեցիների ներքին հարդարման ավանդույթների, թե՛, հատկապես, այս ավանդույթի սկզբնավորման ժամանակի և հնարավոր վաղ օրինակների առկայության մասին: Հայկական և հարավկովկասյան միջնադարյան եկեղեցիների հատակների հարդարման ավանդույթը մեծապես պայմանավորված էր բյուզանդական մայրաքաղաքային հուշարձանների ազդեցությամբ: Այն նոր թափ է ստանում Բագրատունիների միջավայրում՝ Բյուզանդիայի հետ քաղաքական և մշակութային սերտ հարաբերությունների պայմաններում և հատկապես Սբ. Սոֆիայի XI դարով թվագրվող հատակի ստեղծմամբ, ինչի մասին վկայում են նաև վերը թվարկված հուշարձաններում հատակների ստեղծման ժամանակաշրջանը:

Հայաստանում և հարևան Վրաստանում հատակների հարդարման համար, որպես կանոն, չէին օգտագործում մարմար և փոխարինում էին այն քարով կամ դրանից ստացված նյութերով, ինչպես տեսանք Իշ-

¹ Казарян А., Архитектура стран Закавказья..., т.1, сс. 183-188.

խանի դեպքում: Մա սպասելի էր Տայքի դեպքում, բայց նաև չի բացառվում նման ավանդույթի առկայությունը նաև վաղ միջնադարում, քանի որ բյուզանդական զգալի ազդեցություն կար նաև նախարարական շրջանում, օրինակ, Ներսես Շինարարի ժամանակ: Մենք գիտենք, որ Դվինի մայր տաճարում եղել է խճանկար՝ հատակի և պատի, սակայն չգիտենք, թե ինչպիսին էր Չվարթնոցի և այլ մայր տաճարների հատակները: Այս թեմայի հետագա ուսումնասիրությունը խստումնալից է նոր և հետաքրքիր արդյունքներով:

References

1. Asryan A., *The elements of exterior decoration of Tayk churches in the light of cultural exchanges* [Tayk'i yekeghets'ineri artak'in hardarank'i tarrery mshakut'ayin p'vokharnch'ut'yunneri luysi nerk'vo]. "Antar Janndocs". A collection of articles, Yerevan, YSU publ., p. 326-333. (in Armenian).
2. Yeghiazaryan A., *The process of formation of the kingdom of Bagratunis of Georgia* [Vrats' Bagratunineri t'agavorut'yan dzevavorman gortsynt'ats'y]. Yerevan, YSU publ., 2018. (in Armenian).
3. Hakobyan Z., Mikayelyan L., Asryan A., Avetisyan T., *Sculptural decoration of bowed and little-studied church structures of Armenia from the 12th-14th centuries* [Hayastani 12-14-rd dd. khonarhvats yev k'ich' usumnasirvats yekeghets'akan karruyts'neri k'andakayin hardarank'y]. Yerevan, 2023. (in Armenian).
4. Tonapetyan P., *Tayk (Tao). A new page in the history of medieval architecture* [Tayk' (Tao). Nor ej mijnadaryan chartarapetut'yan patmut'yan mej]. Patmakan Tayk'. Patmut'yun, mshakuyt', davanank' (Collection of papers). S. Ejmiatsin, 2019. (in Armenian).
5. Akopyan Z., *Sculptural decoration of the southern entrance of the main church of the Khahu monastery. Symbolism of the images* [Skul'pturnoe ubranstvo ūžnogo vhoda glavnoj cerkvi monastyra' Hahu. Simvolika izobraženij]. Patmakan Tayk'. Patmut'yun, mšakuyt', davanank' (Collection of papers). S. Ejmiacin, 2019, p. 335-365. (in Russian).
6. Akopyan Z., Kazaryan O. *Catholicos Nerses III the Builder: Historical Portrait* [Katalikos Nerses III Stroitel': istoričeskij portret]. Graphosphaera, 2023, vol. 3, № 2, p. 95-133. (in Russian).
7. Akopyan Z., *Monumental painting of Armenia of the 7th century in the context of the Eastern Christian tradition* [Monumental'naâ živopis' Armenii VII stoletia v kontekste vostočnohristianskoj tradicii]. Aktual'nye problemy teorii i istorii, Saint-Peterburg: NP-Print, 2016, p. 133-142. (in Russian).

8. Vagner G., *The Byzantine Temple as an Image of the World* [Vizantijskij hram kak obraz mira]. Vizantijskij Vremennik, vol. 47, 1986, p. 163-181. (in Russian).
9. Kazaryan A., *The altar barrier and liturgical space of the Zvartnots temple* [Altarnaâ pregrada i liturgiĉeskoe prostranstvo hrama Zvartnoc]. Ikonostas: ProišhoŹdenie, razvitie, simbolika (Collection of papers). Moscow: Press-Tradicia, 2000, p. 85-104. (in Russian).
10. Kazaryan A., *Triconch cross-domed churches in the architecture of Transcaucasia and Byzantium* [Trikonhovye krestovo-kupol'nye cerkvi v zoďĉestve Zakavkaz'â i Vizantii]. Vizantijskij mir: iskusstvo Konstantinopolâ i nacional'nye tradicii. K 2000-letiu khristianstva. Moscow: «Severnij polomnik», 2005, p. 13-30. (in Russian).
11. Kazaryan A., *Architects of David Kuropalates: the search for a new image of the cathedral church in Tayk (Tao) of the second half of the 10th century* [Zoďĉie Davida Kuropalata: poisk novogo obraza sobornoj cerkvi v Tajke (Tao) vtoroj poloviny 10 veka]. Voprosy vseobshej istorii arhitektury, 2012, vol. 4, p. 51-71. (in Russian).
12. Kazaryan A., *Art of the Armenian Chalcedonians* [Iskusstvo armân-halkidonitov]. Pravoslavnaâ énciklopediâ, t. 3. Moscow: Cerkovno-nauĉnyj centr «Pravoslavnaâ énciklopediâ», 2003, p. 314-316.
13. Kazaryan A., *Byzantine Empire. Part III. Architecture* [Vizantijskaâ imperiâ. Part III. Arhitektura]. Pravoslavnaâ énciklopediâ, t. 8, Moskva: Cerkovno-nauĉnyj centr «Pravoslavnaâ énciklopediâ», 2004, p. 277-303. (in Russian).
14. Kazaryan A., *Architecture of the Transcaucasian countries in the 7th century: formation and development of tradition* [Arhitektura stran Zakavkaz'â VII v.: formirovanie i razvitie tradicii, t. 1-4]. Moscow: Locus Standi, 2012. (in Russian).
15. Kazaryan A., *Medieval Temples of Tayk and their Place in the Architectural Traditions of Armenia and Georgia* [Srednevekoveye hramy Tajka i ih mesto v arhitekturnyh tradiciâh Armenii i Gruzii]. Patmakan Tayk'. Patmut'yun, mšakuyt', davanank' (Collection of papers). S. Ejmiacin, 2019, 2019, p. 268-296. (in Russian).
16. Marr N., *George Merchule, Life of St. Gregory of Khandzta* [Georgij Merĉul', Źitie sv. Grigoriâ Handztijskogo]. Saint Peterburg: Tip. Imperatorskoj Akademii nauk, 1911. (in Russian).
17. *Medieval cloisonné enamels from the collection of the State Museum of Art of Georgia (compiled by L. Khuskivadze)*. Album. Tbilisi: «Khelovneba», 1984. (in Russian).
18. Takaishvili E., *Christian Monuments. Excursion of 1902* [Hristânskie pamâtniki. Ékskursiâ 1902 goda]. Materialy po arheologii Kavkaza, vol. XII, Moscow, 1909. (in Russian).
19. Tokarski N., *From the history of medieval construction in the Tayk principality* [Iz istorii srednevekovogo stroitel'stva v Tajkskom knâŹestve]. Yerevan: «Hayastan», 1988. (in Russian).
20. Dadiani T., Khundadze T., Kvachatadze E., *Medieval Georgian sculpture*. Tbilisi, Cezanne printing house, 2017.

21. Djobadze W., *Early medieval Georgian monasteries in historic Tao, Klarjet 'i and Šavšet 'i*. Stuttgart, 1992.
22. Guidobaldi F., Guiglia-Guidobaldi A., *Pavimenti marmorei di Roma dal IV al IX secolo*. Studi di Antichità Cristiana, 36, Città del Vaticano, 1983.
23. Edwards R. *Medieval architecture in the Oltu-Penek valley*. Dumbarton Oaks Papers, 1985, vol. 39, p 15-37.
24. Eastmond A., *Royal Imagery of Medieval Georgia*. The Pennsylvania State University Press, 1998.
25. Hachlili R., *Ancient Mosaic Pavements: Themes, Issues and Trends*. Brill: Leiden-Boston, 2009.
26. Hakobyan Z. *The Chancel-Barrier Fragments and Certain Elements of the Sanctuary Design*. Early Medieval Armenian. Liturgical Furnishings Between East and West (5th – 15th Centuries). Fragments, Objects, and Contexts (ed. Fabio Coden), University of Verona, 2022, p.100-115.
27. Piccirillo M., *The Mosaics of Jordan*. Amman: American Center of Oriental Research edition, 1993.
28. Liakos D., *The Byzantine opus sectile floor in the Katholikon of Iveron monastery on Mount Athos*. Zograf, 2008, t. 32, p. 37-41.
29. Majeska G. *Notes on the Archeology of St. Sophia at Constantinople: the Green Marble bands on the Floor*. Dumbarton Oaks Papers, vol 32, p. 299-308.
30. Winfield D., *Some early medieval figure sculpture from North-East Turkey*. Journal of Warburg and Courtauld Institutes, XXXI, London, 1968, p. 38-57.
31. Steppan Th. *Opus sectile*. Realexikon zur byzantinischen Kunst, Bd. VII, Lf. 52, A. Hiersemann publ, 2013.
32. *Tao-Klarjeti murals; Interaction of Cultural Traditions, in: Synergies in visual culture* (eds. M. Bacci, Th. Kaffenberger, M. Studer-Karlen). Festschrift für Gerhard Wolf, München, 2013
33. Tchekhanovets Y., *The Caucasian Archaeology of the Holy Land: Armenian, Georgian and Albanian Communities between the Fourth and Eleventh Centuries CE*. Brill, 2018.
34. Toumanoff C., *The Bagratids of Iberia from the Eight to the Eleventh Century*. Le Museon 74, 1961, p. 5-42.
35. Khoshtaria D., *Tumanishvili D., Master builders in medieval Georgia* [Master builders in medieval Georgia]. Tbilisi, 2012. (in Georgian).



Իշխանի տաճարի ընդհանուր տեսքը



Իշխանի տաճարի դրվագազարդ հատակի դրվագ, վարդյակ



Իշխանի տանարի դրվագագարդ հատակը, տեսքն արևելքից



Սան Լորենցո եկեղեցու օմֆալոսներով «հավարված» մարմարե հատակ



Բրդանորի կոթողի քանդակագարդ օմֆալոս

УДК 93.94

**ПОСЛАНИЕ ИЕРУСАЛИМСКОГО ПАТРИАРХА
ФОМЫ И ФЕОДОРА АБУ КУРРЫ, ОТПРАВЛЕННОЕ В
АРМЕНИЮ¹**

Геворг Казарян

Богословский факультет Афинского
национального университета, Греция,
dngevorg@gmail.com

Аннотация. Статья посвящена ценному памятнику армяно-византийских церковно-политических отношений – Посланию иерусалимского патриарха Фомы и выдающегося богослова христианского Востока Феодора Абу Курры. Выявляются лица, связанные с памятником – иерусалимский первосвятитель Фома, харранский епископ Абу Курра, Михаил Синкелл – переводчик Послания с арабского на греческий и вероятный посланец патриарха в Армению, а также возможный адресат – влиятельный князь Ашот Мсакер Багратид. Кроме исторического контекста, в статье кратко анализируется христологическое содержание памятника.
Ключевые слова: *патриарх Фома, Феодор Абу Курра, Михаил Синкелл, Ашот Мсакер, Халкидонский собор, армяне-халкидониты, христология.*

**THE EPISTLE OF PATRIARCH THOMAS
OF JERUSALEM AND THEODORE ABU QURRAH
SENT TO ARMENIA**

Gevorg Kazaryan

School of Theology of National and Kapodistrian
University of Athens, Greece,
dngevorg@gmail.com

¹ Автор выражает благодарность священнику Александру Трейгеру (университет Дальхауси, Канада), исследователю средневековой арабоязычной православной (мелькитской) литературы

Abstract. The article is dedicated to a valuable monument of Armeno-Byzantine ecclesiastical and political relations - the Epistle of patriarch Thomas and the outstanding theologian of the Christian East Theodore Abu Qurrah. The article identifies the persons connected with the monument - the patriarch of Jerusalem Thomas, the bishop of Harran Abu Qurrah, Michael Synkellos - the translator of the Epistle from Arabic into Greek and the likely envoy of the patriarch to Armenia, as well as the possible addressee of the Epistle - the influential prince Ashot Msaker Bagratid. In addition to the historical context, the article briefly analyses the Christological content of the Epistle.

Key words: *patriarch Thomas, Theodore Abu Qurrah, Michael Synkellos, Ashot Msaker, The Council of Chalcedon, Chalcedonian Armenians, Christology.*

Введение: В рамках многовековых армяно-византийских церковных отношений была создана богатая богословская литература, в которой особое место занимает официальная эпистолография церковных и государственных деятелей. Множество памятников этого наследия до сих пор практически не исследовано специалистами. Одним из таких произведений является Послание Феодора Абу Курры, епископа Харранского, написанное по велению иерусалимского патриарха Фомы (807-821). Историческое значение данного памятника неосценимо уже потому, что после святителей Макария I¹ (314-333) и Модеста² (632-634), - это третье послание иерусалимского первоиерарха, отправленное в Армению.

¹ *Послание Макария, отправленное Католикосу Вртанесу (333-341), посвящено литургическим вопросам и сохранилось в армянском переводе (см. Չիրթ Թոմյոց (հրատ. Երուսաղիմի Երմիսիմի, տպ. Ս. Յակոբյանից, (2)1994, с. 1-9). Англ. перевод с обширным исследованием памятника см. Terian A., Macarius of Jerusalem, Letter to the Armenians, AD 335, Published by St. Vladimir's Seminary, Crestwood NY, 2008.*

² *Послание, в котором местоблюститель иерусалимской кафедры Модест выражает свою радость относительно возобновления папмочинства армян в Св. Землю, адресовано Католикосу Комитасу (615-628) и сохранилось у Себеоса вместе с ответным посланием Католикоса: см. Սերբէն, Պատմութիւն (հրատ. Շ. Բարսեղյանի), ՄՀ, հ. Գ, Է դ, с. 512-516; англ. перевод см. The Armenian History attributed to Sebeos, Translated, with*

Исторический контекст

Послание снабжено чуть поздним¹, но ценным заголовком, выясняющим исторический контекст исследуемого памятника: “Послание, заключающее в себе правую и непорочную веру, отправленное блаженным папой Фомой, патриархом иерусалимским к еретичеству-ющим в Армении; продиктовано на арабском Феодором, по прозвищу *Авукара*, бывшим епископом Харранским, переведено же Михаилом, - пресвитером и синкеллом Апостольского престола, с которым и отправлено...”².

Итак, Послание изначально было составлено на арабском, однако до нас дошел лишь современный написанию памятника греческий перевод, изданный в Патрологии Миня и оснащенный параллельным латинским переводом издателей³. Как видно из заглавия, три исторических лица связаны с Посланием. Рассмотрим их по отдельности.

Иерусалимский патриарх Фома I: Сведения об этом первоиерархе содержатся в нескольких агиологических памятниках, среди которых – мартиролог отцов-Савваитов. Он дошел до нас в двух версиях. Согласно одной из них, сохранившейся на греческом, но к сожалению, имеющей лакуны, в 797 г., когда арабы атаковали Лавру Саввы Освящен-

notes, by R. W. Thomson, Historical commentary by J. Howard-Johnston, Assistance from T. Greenwood, Liverpool 1999, pp. 70-76.

¹ В изначальном подлиннике, безусловно, вместо данного заглавия, стояло официальное обращение патриарха к адресату. Впрочем, автором данного заглавия является сам Михаил Синкелл: в рукописи ГИМ рядом с *Μιχαήλ* стоит *ἐμοῦ τοῦ ἐλαχίστου, τ. ε. “мною – наималейшим”* (см. *Theodore Abū Qurrah. Translated by John C. Lamoreux. Brigham Young University Press. Provo, Utah, 2005, p. 83*).

² “*Ἐπιστολὴ περιέχουσα τὴν ὀρθὴν καὶ ἀμώμητον πίστιν, πεμφθεῖσα παρὰ τοῦ μακαρίου πάππα Θεωμᾶ πατριάρχου Ἱεροσολύμων, πρὸς τοὺς κατὰ τὴν Ἀρμενίαν αἰρετίζοντας, Ἀραβιστὶ μὲν ὑπὸ Θεοδώρου τοῦ τὸ ἐπίκλην Ἀβουκαρᾶ, τοῦ Καρῶν ἐπισκόπου γεγονότος, ὑπαγορευθεῖσα, διὰ δὲ Μιχαήλ πρεσβυτέρου, καὶ συγγέλου ἀποστολικοῦ θρόνου μεταφρασθεῖσα, μεθ’ οὗ καὶ ἀπέσταλται...*” (PG 97, 1503).

³ См. PG 97, 1503-1521. Ж. Ламоро - один из основных исследователей наследия Абу Курры, перевел на английский текст Послания, основанный на двух рукописях: ГИМ, gr 231, 932 CE (M) и Охридский Национальный музей, gr. 86 (Inv. 86) (см. *Theodore Abū Qurrah, p. xxxviii-xxix, 83-95*).

ного, “превосходнейший и благочестивейший врач авва Фома, после сего поставленный во игумена старой лавры” ухаживал за монахами, ранеными арабами¹. Автор мартиролога - Стефан Савваит, который был очевидцем этого страшного нападения, в другом отрывке своего труда сообщает, что арабы особенно искали врача Фому, но храбрые монахи, несмотря на ужасные пытки, отказались выдавать его личность и место пребывания². Грузинский перевод мартиролога, в котором сохранился полный текст, добавляет две интересные детали: во-первых, в нем упоминается другая форма имени патриарха - сирийская *T'omeyrik*, что, возможно, свидетельствует об этническом происхождении Фомы; во-вторых, упоминается, что авва Фома впоследствии стал патриархом иерусалимским³. Таким образом, нет никаких сомнений, что монах-врач Фома и патриарх иерусалимский Фома I - одно и то же лицо.

На патриарший престол Св. Града Фома взошел в 807 г. и занимал его вплоть до своей кончины в 821 г. Одним из важных предприятий Фомы было восстановление купола Храма Гроба Господня⁴. Важные сведения о периоде правления Фомы содержатся в другом агиологическом памятнике – в Житии Михаила Синкелла.

Михаил Синкелл: В отличие от других лиц, связанных с Посланием, сведения о Михаиле Синкелле сохранились наиболее полно благодаря его пространному Житию⁵. Михаил родился в 761 г. в Св. Граде, вероятно, в семье богатых персов. Способный мальчик рано посвятил себя наукам, а после смерти родителей, в возрасте 25 лет, принял монашество в Лавре Саввы Освященного. Последующие годы Михаил провел

¹ Православный Палестинский сборник, т. XIX, вып. 3 (СПб, 1907), с. 15, 36.

² Там же, с. 27.

³ См. Blake. Robert P. “Deux lacunes comlées dans la Passio XX Monachorum Sabaitorum”, *Analecta Bollandiana* 68 (1950), pp. 42-43.

⁴ См. Παλαδόπουλος Χρυσόστομος, *Αρχιεπίσκοπος Αθηνών και πάσης Ελλάδος, Ιστορία της Εκκλησίας των Ιεροσολύμων, Αθήνα*, (2)1970, с. 349-350.

⁵ См. Cunningham, *The Life of Michael Synkellos (Text, Translation, Commentary)*, Belfast, 1991. Основную библиографию см. Афиногенов Д. Е., Прокопенко Л. В., “Михаил Синкелл”, *Православная энциклопедия*, т. 46, с. 19-20.

в строгой аскезе, а в 798 г. патриарх Фома рукоположил его в пресвитера. В 811 г., когда Михаилу было уже 50 лет, Фома назначил его своим синкеллом¹, в связи с чем Михаил переселился в иерусалимский монастырь Спудеев.

В этот период франкские монахи, подвизавшиеся на Св. Земле, стали прибавлять к Символу веры *Filioque*, что вызвало смущение палестинских христиан. Проблема *Filioque* была насущной и в Риме, т. к. папа попросил патриарха Фому прислать к нему сведущих богословов, с целью противостоять франкскому нововведению. Кроме того, сама Иерусалимская Церковь переживала острый кризис из-за непомерно высокого налогообложения со стороны арабов, и патриарх Фома решил отправить посланцев в Рим и Константинополь для получения финансовой поддержки. По поручению Иерусалимского собора, в 813 г. Михаил Синкелл и трое его спутников прибыли в столицу империи, но по неизвестным причинам они так и не отправились в Рим, как первоначально намеревались. В 815 г. император Лев V Армянин (813-820) возобновил иконоборчество, и Михаил со своими учениками был заточен в тюрьму. Михаила освободили из заключения в 820 г., но он вторично был задержан в 834 г. В темнице он провел еще 8 лет и был освобожден в 843 г., когда в империи было восстановлено иконопочитание. Константинопольский патриарх Мефодий I (843-847), испытывая огромное уважение к Михаилу, назначил его своим синкеллом, а также игуменом монастыря Хора. Здесь Михаил Сингелл и скончался 4 января 846 г.

Феодор Абу Курра: является первым арабоязычным христианским писателем и основателем мелькитской богословской традиции, одним из самых творческих и ярких богословов раннего Средневековья². На основе разрозненных источников биография Абу Курры можно вос-

¹ Синкелл: ближайший помощник и советник патриарха, а также его вероятный преемник.

² См. *Theodore Abū Qurrah*, p. xii. Основную библиографию про Феодора и анализ основных трудов см. Давыденков Олег, прот., *Богословие Феодора Абу Курры, епископа Харранского*, М.: Изд-во ПСТГУ, 2020, с. 6-13.

становить следующим образом: Феодор родился между 735 и 760 гг., по всей видимости, в знаменитом месопотамском городе Эдесса, и какое-то время был монахом в Лавре Саввы Освященного. Точно неизвестно, когда, но являлся епископом г. Харран, однако затем - не позднее 794 г., - был смещен с кафедры, вероятно по каким-то каноническим причинам. После этого Феодор путешествовал в Александрию и далее в Армению. Не исключено, что после своей миссии Абу Курра вновь был возвращен на харранскую кафедру. Умер после 829 г. в возрасте не менее 70 лет¹.

Итак, после краткого ознакомления с лицами, непосредственно связанными с Посланием, можно приступить к его атрибуции. Исследователи жизни как Михаила Синкелла, так и Феодора Абу Курры, похоже, не обратили должного внимания на заглавие Послания, где переводчик сообщает, что оно было отправлено (в Армению) через него самого. Но насколько точна данная информация? Ведь анонимный автор Жития Михаила Синкелла ничего не сообщает о его путешествии в Армению. Последнее обстоятельство может иметь свое объяснение: во-первых, автор, написавший Житие немного спустя после смерти святого, в основном использовал устные рассказы, воспоминания людей из окружения Михаила, кое-где допуская неточности; во-вторых, целью агиолога было создать образ Синкелла как героя в борьбе против иконоборческой ереси, и армянская тематика была бы для него излишней деталью на этом идеологическом фоне.

М. Каннинггам, основываясь на Житиях Михаила и его учеников – братьев Феодора и Феофана Начертанных, датирует прибытие иерусалимских делегатов в Константинополь 813, а их арест - 815 гг². Получается, что они около двух лет оставались в столице империи, по неизвестным причинам, так и не отправившись в Рим. Можно предположить, что именно в этот период Михаил Синкелл доставил послание патриарха

¹Анализ скудных биографических данных Феодора на основе источников и мнений исследователей см. Арабские сочинения Феодора Абу Курры, епископа Харранского/ Сост., комм., предисл., пер. с араб. прот О. Давыденкова, М.: Изд-во ПСТГУ, 2020, с. 5-19.

² См. Cunningham, указ. соч., p. xiv.

Фомы в Армению и, таким образом, именно это помешало делегации отправиться в Рим до самого момента, когда они были арестованы Львом Армянином. Впрочем, согласно И. Панайотопулосу, Иерусалимский собор и прибытие его делегации во главе с Михаилом Синкеллом в Константинополь следует датировать не 813 г., а весной 817 г¹. При таком раскладе, кажется, нет никакой возможности говорить о путешествии Михаила Синкелла, хотя это и противоречит заглавию Послания. В таком случае следует считать, что патриаршее Послание было доставлено в Армению Феодором Абу Куррой.

Датировка Послания позволяет нам выявить и его возможного адресата – правителя Армении в данный период Ашота Мсакера Багратуни (правил с 790 по прибол. 826 гг.), который в условиях арабского владычества, благодаря осторожной и продуманной стратегии, добился большого влияния. Не выступая открыто против Халифата, Ашот без шума утвердил свою власть над многими областями Армении. Среди них – древний домен Мамиконянов – провинция Тарон, а также области Ширак и Аршаруник, которые Ашот выкупил у ослабшего нахарарского рода Камсаракан. Ашот и его брат Шапух совместными усилиями взяли Тайк² и Ашоцк³. Таким образом, Ашот Багратуни стал самым богатым землевладельцем-нахараром Армении и был утвержден халифом в должности Армянского Князя⁴.

В армянских источниках сохранились любопытные свидетельства о миссии харранского епископа в Армению, в ходе которой он постарал-

¹ См. *Παναγιωτόπουλος Ι. Α., Ο Οικουμενικός Πατριάρχης Μεθόδιος Α' ο Ομολογητής (843-847) και το έργο του, Αθήνα, 2003, с. 101-107, 165-166.*

² Интересно отметить, что остатки княжеского рода Гнуни, проживавшие в области Агиовит (севернее о. Ван), обратились к Ашоту Мсакеру, чтоб он их избавил от утвердившихся в тех краях арабов. Ашот прибыл к ним вместе с тысячным войском и переселил весь род Гнуни в Тайк (см. *Ter-Ghewondyan, The Arab Emirates in Bagratid Armenia, transl. by N. G. Garsoian, Lisbon, 1976, p. 33.*)

³ См. *Գրիգորյան Գ., Տարրնի Բագրատունիների ֆետիալական իշխանությունը IX-X դարերում, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Եր., 1983, с. 53.*

⁴ См. *Ter-Ghewondyan, указ. соч., с. 35.*

ся обратить Ашота Мсакера в Православие¹. И кажется это ему удалось, пока его противники не вызвали на помощь архидиакона Нонна (Нану), богослова Сиро-Яковитской Церкви. Последнему удалось победить Феодора в диспутах, после чего Абу Курра покинул Армению². Что касается хронологии, то исследователи датируют прибытие и пребывание Феодора в Армении между 813-817 гг., скорее – ближе к концу этого промежутка³.

Таким образом, перед нами две вероятные сценарии развития исторических событий:

1. Сначала прибытие в Армению в 812-815 гг. Михаила Синкелла с патриаршим Посланием и затем прибытие Абу Курры ок. 817 г. во двор Ашота Мсакера.
2. Прибытие ок. 817 г. харранского епископа в Армению с Посланием, переведенным Михаилом Синкеллом между 811-813 гг.

И, наконец, остается рассмотреть вопрос, какие факторы стояли за этой миссией. Н. Я. Марр, одним из первых обративший внимание на пассажи о миссии Абу Курры в Армению, считает, что его пригласили армяне-халкидониты. Последние пытались, обратив Ашота в свою сторону, добиться таким образом, доминирующего положения в стране⁴.

Греч. исследователь К. Такиртакоглу считает, что Феодора направили в Армению византийцы, пытаясь таким образом привлечь к

¹ Среди сохранившихся трудов Феодора на арабском есть еще одно Послание к армянам, где затрагивается тема Евхаристии и проблема жертвоприношений (см. Lagorceaux J., "An unedited tract against the Armenians by Theodore Abū Qurrah", *Le Muséon*, 1992, p. 334-340; Давыденков, *Арабские сочинения*, с. 330-334).

² См. *Марр Н. Я.*, "Аркауи, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкидонитах", *Византийский Временник*, т. XII, вып. 1-4, 1906, с. 8-15; Ալիկնեան Ներսէս, վրդ., «Թէոդորոս Ապիկլոնոս եւ Նաննա Ասորի Հայաստանի մէջ եւ Նաննայի Յովհաննէս Մակնոբեանի Հայերէն թարգմանութիւնը», *Մատենադարանի հետազոտութիւններ. քննութիւն եւ քննադր., հատ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան*, 1922, էջ 115-163; Dorfmann-Lazarev I., *Arméniens Et Byzantins à l'époque de Photius: deux débats théologiques après Le Triomphe de l'Orthodoxie*, Lovanii, in *Aedibus Peeters*, 2004, pp. 69-71.

³ См. *Theodore Abū Qurrah*, p. xv; Давыденков, *Арабские*, с. 6-7.

⁴ См. *Марр*, указ. соч. с. 6.

себе усиливающийся дом Багратуни. По мнению исследователя, Феодор имел определенный успех, раз уж армянскому клиру пришлось вызвать на помощь диакона Нонна¹.

На наш взгляд, изначальной причиной обращения патриарха Фомы к влиятельному Ашоту Багратуни могла быть нужда Иерусалимской Церкви в финансовой поддержке, а богословские переговоры развернулись уже потом.

Содержание: Авторы Послания начинают свою речь с евангельского пассажа о том, как Христос в ответ на исповедание апостола Петра объявил его камнем, положенным в основание Церкви. Христианин должен твердо держаться этого исповедания и даже отвергнуть своих предков, если унаследовал от них неправую веру. Далее патриарх переходит к апологии православной христологии².

Христос есть Бог и человек, но Ипостась у него одна – это предвечный Сын Божий, равный и единосущный Отцу. В последние дни Он воплотился и вочеловечился, непреложно и неизменно став человеком, но без греха. Он воспринял человеческую природу, сохранив Божественную. Восприятие одной из Ипостасей Троицы человеческой природы не внесло прибавление в Божественную Сущность Троицы³.

Далее подвергается критике мысль о том, что если во Христе одна Ипостась, то, следовательно, и природа Его одна. Логически из этого утверждения вытекают четыре вероятных варианта: 1) одна природа только Божественная 2) одна природа только человеческая 3) одна природа вместе и божественная, и человеческая 4) одна природа ни божественная, ни человеческая. Автор отвергает эти варианты, утверждая, что единственный правильный выход - это Петрово исповедание во Христе двух естеств. В качестве наглядного примера патриарх приводит уникальную аналогию трех золотых монет, одна из которых, будучи

¹ См. *Τακνιτάκογλου Κ. Α., Η Αρμενία μεταξὺ Βυζαντίου και Χαλιφάτου (885-929), εκδ. «Ηρόδοτος», Αθήνα, 2018, σ. 370-372.*

² См. *PG 97, 1504-1505.*

³ См. *PG 97, 1505.*

положена в горящие угли и не теряя своей собственной природы золота, вбирает в себя природу огня. Она не вбирает в себя уголь, а лишь огонь: так и Христос не воспринял в себе человеческой ипостаси, но лишь человеческую природу. И подобно тому, как остальные две монеты остаются непричастными огню, так и Троица не потерпела субстанциональных изменений вследствие воплощения Сына¹.

Послание отвергает базисное для дохалкидонской христологии утверждение о том, что природа и ипостась – понятия параллельные. Ведь в таком случае или придется в Троице признать три естества – аналогично трем Ипостасям (арианство), или же исповедовать в Ней одну Ипостась (савеллианство)². Кроме того, Послание подвергает критике принятую среди антихалкидонитских богословов концепцию о том, что единая богочеловеческая природа Спасителя не общая, где много ипостасей, а частная, т. е. в ней представлена лишь одна Ипостась Слова³.

Для Послания безусловной истиной является и то, что две природы Христа – Божественная и человеческая – имеют соответственно каждая свою природную энергию (воздействие) и природную волю, которые принадлежат одной Ипостаси предвечного Сына. Автор снова прибегает к наглядному примеру: Павел видит, слышит, говорит и мыслит. Все четыре воздействия (энергии) совершаются согласно природе, через специальные органы – глаза, уши, язык и мозг. Однако субъект у них один: ипостась Павла стоит над всеми четырьмя действиями и управляет ими⁴.

В Послании оговаривается также, что душа и тело Спасителя являются собственными Безначального Сына, принадлежат Его Божест-

¹ См. PG 97, 1508-1509.

² См. PG 97, 1509.

³ См. PG 97, 1509, 1511. Относительно данной тематики см: Мкртчян Р. А., “Понятие «бестелесное» и концепции общей и частной природ в античной философии и христианской патристике V-VI вв.”, *Философия и культура*, 2014, № 11, с. 1562-1572; Мкртчян Р. А., “Концепции общей и частной природ в христологии халкидонитов и дохалкидонитов в контексте богословского диалога между Православной Церковью и Древними Восточными Церквями”, *Церковь и время*, 2013, № 2 (63). URL: <https://church-and-time.ru/1449>.

⁴ См. PG 97, 1512-1513.

венной Ипостаси. Следовательно, все то, что испытывает Его душа и тело, в том числе и Его смерть (разлучение души от тела), непосредственно относятся к Нему Самому¹.

Особого внимания достойна завершающая часть Послания, где затрагивается сложная тема безукоризненных страстей Христа. Согласно авторам, Христос был подвержен им не в силу необходимости, а добровольно (ἐκούσιῳ θελήματι), т. е. то, что у нас – простых людей, случается естественным и неизбежным образом, во Христе случилось по Его желанию. В качестве примера приводится голод: когда Христос изволял алкать, то позволял Своей плоти принять воздух, который, проникнув в организм через кожу, возбуждал печень для опорожнения желудка и принятия пищи. Таким образом, Христос алкал не по природной необходимости, а Своей свободной волей (αὐτεξουσιῳ βουλήσει)². И это относится к проявлениям всех остальных естественных страстей.

Тело первозданного Адама было чуждо всякой нечистоты и господства естественных страстей. После грехопадения, происшедшего по воле Адама, первозданный человек заразился и подпал под рабство естественных безукоризненных страстей и смерти, так что в силу необходимости стал алкать, жаждать, умер и подвергся разложению. Безначальный же Сын Божий, восприняв от беспорочных кровей Девы адамово тело, соделал его совершенно чистым от всякого бесчестия греха и неподверженным безукоризненным страстям³. Подводя итог, авторы

¹ См. PG 97, 1516-1517.

² Явное доказательство сказанного, согласно Посланию, является то, что в пустыне Христос сорок дней оставался без еды, в конце же взалкал (Матф. 4:2), очевидно по Своей воле.

³ Позицию св. Отцов по поводу вопроса о безукоризненных страстях Христовых резюмировал Иоанн Дамаскин (см. Преподобный Иоанн Дамаскин, Точное изложение православной веры, М., изд-во Сретенского м-ря, 2003, с. 119), однако его краткие высказывания являются предметом разнотолков среди современных богословов (см. Βολουδάκης Βασίλειος, πρεσβ., *Ὁ Χριστός «Ἀνθρώπων ἐπέκεινα»*, εκδ. Ὑπακοή, Αθήνα, 1990). В этом смысле Послание имеет исключительное значение, т. к. с одной стороны, помогает наиболее аутентично интерпретировать Дамаскина, а с другой, дока-

Послания, заключают: “...Тело Безначального Сына, с самого начала своего формирования и в силу ипостасного и несмешанного единения с Безначальным Сыном, обожилось совершеннейшим обожением, и стало непреложным, как и Помазавший и, дерзну сказать, купно Богом (ὁμόθεον)”¹.

Тем не менее, Христос благоволил принять страсти и смерть, чтобы скрыться от дьявола и подтвердить истинное вочеловечение. После Воскресения Своего Господь явно показал скрытую в плоти славу Божества. Не надо думать, она приобретена после Воскресения: божественная слава была присуща Спасителю в силу несмешанного единения двух естеств в девической утробе, но до Воскресения Господь ее скрывал: “Явным свидетельство сего [является] то, что перед спасительным страданием перед тремя Своими учениками на горе Фавор Он показал [сокрытую] в Своей плоти божественную славу, которую и обнаружил после воскресения из мертвых. Ибо, как мы уже сказали, тело Безначального [Сына] обожилось совершеннейшим обожением с самого начала своего формирования. Однако Безначальный Сын по упомянутой [выше] причине оставлял его вести себя согласно поведению наших тел”².

Заключение

Итак, Послание патриарха Фомы и Феодора Абу Курры является важным историческим и вероучительным памятником. Исторический контекст Послания отсылает нас к значимым фигурам церковно-политических реалий Палестины, Византии и Армении конца VIII-начала IX вв. Что касается богословского содержания Послания, то его внимательное изучение показывает, что оно имеет исключительную ценность не только среди трудов Абу Курры, и в целом, среди христологических трактатов

зывает, что в данном вопросе – вопреки распространенному мнению, позиции Православной и Армянской Апостольской Церквей пожалуй совпадают.

¹ Цитата из 45 Слова Григория Богослова, см. PG 36, 641; Свяtitель Григорий Богослов, архиепископ Константинопольский, Творения в 2-х т. Т. 1, М., изд. “Сибирская благовонница”, 2007, с. 565.

² PG 97, 1521.

Отцов византийской традиции. Оно является важнейшим ключом для понимания позиции как Православной, так и Армянской Апостольской Церкви относительно безукоризненных и естественных страстей Воплотившегося и Вочеловечившегося Сына Божия.

References

1. Akinyan Nerses, vardapet, “Theodore Apikura and Nana the Syrian in Armenia and the Armenian Translation of Nana’s Commentary on the Gospel of John”, *Bibliographic Investigations. Research and Original Text* [«T’ēodoros Apikowra ew Nana Asori Hayastani mēj ew Nanayi Yovhannow Meknowt’ean Hayerēn t’argmanowt’iwnē», *Matenagrakan hetazòtowt’iwnner. k’nnowt’iwn ew bnagir*], vol. 1. Vienna, typ. of Mekhitarists, 1922, pp. 113-163. (in Armenian).
2. Afinogenov D. E., Prokopenko L. V., “Michael Synkellos”, *The Orthodox Encyclopedia* [“Mihail Sinkell”, *Pravoslavnaâ ènciklopediâ*]. vol. 46, pp. 19-20. (in Russian).
3. *An Epistle on the undefiled orthodox faith, sent by the blessed Thomas, the patriarch of Jerusalem... [Epistolē periēchoysa tēn órthēn kai âmómhton pístin, pemthfeīsa parà toū makaríoy páppa THwmā patriárchoy Ierosolómwn...]*. PG 97, 1504-1521. (in Greek).
4. Blake. Robert P. “Deux lacunes comlées dans la Passio XX Monachorum Sabaitorum”, *Analecta Bollandiana* 68 (1950), pp. 27-43.
5. Cunningham, *The Life of Michael Synkellos* (Text, Translation, Commentary), Belfast, 1991.
6. Davidenkov Oleg, Archpriest, *The Theology of Theodore Anu Qurrah, Bishop of Harran* [*Bogoslovie Feodora Abu Kurry, episkopa Harranskogo*]. Moscow, publ. of Saint Tikhon’s Orthodox University of the Humanities, 2020. (in Russian).
7. Dorfmann-Lazarev I., *Arméniens Et Byzantins à l’époque de Photius: deux débats théologiques après Le Triomphe de l’Orthodoxie*, Lovanii, in Aedibus Peeters, 2004.
8. *Gregory the Theologian, A Homily on the Holy Easter* [Grhgoríoy Theológoy, Lógos ME’, Eič tò ŷgion Páscha]. PG 36, 623-664. (in Greek).
9. Grigoryan G., *The feudal principality of Bagratids of Taron in the 9th-10th centuries* [*Taroni Bagratowneri feodalakan išxanowt’ yownē IX-X darerum*]. Yerevan, publ. of Academy of Sciences of Armenian, 1983. (in Armenian).
10. John of Damascus, *An Exact Exposition of the Orthodox Faith* [То́чное изло́жение православно́й веры]. Moscow, publ. of Sretensky Monastery, 2003. (in Russian).
11. Lamoreaux J., “An unedited tract against the Armenians by Theodore Abū Qurrah”, *Le Muséon*, 105, 1992, p. 334-340.
12. Marr N. *Arkaun: the Mongolian Name of the Christians, in Connection with the Question About the Chalcedonian Armenians* [Arkaun: mongol’skoe nazvanie hristian, v svāzi s voprosom ob armānah-halkedonitah’]. *Vizantijskij Vremennik*, vol. 12, 1906, pp. 1-68. (in Russian).

13. Mkrtchyan R. A., “The Term of the “Immaterial” and the Conceptions of Common and Private Natures in Ancient Philosophy and Christian Patristics of the 5th-6th centuries”, *Philosophy and Culture* [Ponátie «bestelesnoe» i koncepcii obšej i častnoj prirod v antičnoj filosofii i hristianskoj patristike V-VI vv., *Filosofia i kul'tura*]. 2014, № 11, pp. 1562-1572. (in Russian).
14. Mkrtchyan R. A., “The Conceptions of Common and Private Natures in the Christology of Chalcedonians and pre-Chalcedonians in the Context of Theological Dialogue Between the Orthodox and Ancient Oriental Churches”, *Church and Time* [“Konceptii obšej i častnoj prirod v hristologii halkidonitov i dohalkidonitov v kontekste bogoslovskogo dialoga meždú Pravoslavnoj Cerkov'ú i Drevnimi Vostočnymi Cerkvami”, *Cerkov' i vremâ*]. 2013, № 2 (63). URL: <https://church-and-time.ru/1449> (in Russian).
15. Panagiotopoulos I. A., *Ecumenical Patriarch Methodius I the Confessor (843-847) and his Work* [O Oikoymenikós Patriárchhç Methódios A' o Omologitíç (843-847) kai to érgo toy]. Athens, 2003. (in Greek).
16. Papadopoulos Chrysostomos, Archbishop of Athens and all Greece, *History of the Church of Jerusalem* [Istoría thç Ekkhlhsíac twñ Ierosolúmwn]. Athens, ⁽²⁾1970. (in Greek).
17. Saint Gregory The Theologian, Archbishop of Constantinople, Works in two volumes [Svátitel' Grigorij Bogoslov, arhiepiskop Konstantinopol'skij, Tvoreniâ v 2-h tomah]. Vol. 1, Moscow, Publ. “Sibirskaa blagozvonnica”, 2007. (in Russian).
18. Sebeos, *History*, ed. K. Yuzbashyan [Sebēos, Patmowt' iwn]. *Armenian Classical Authors*, vol. 4, 7th cent., pp. 543-565. (in Armenian).
19. Takirtakoglu K. *Armenia between Byzantium and Chaliphate (885-929)* [H Armenía metaksú Vyzantíoy kai CHalifátoy (885-929)]. Athens, publ. “Irodotos”, 2018. (in Greek).
20. Ter-Ghewondyan, *The Arab Emirates in Bagratid Armenia*, transl. by N. G. Garsoian, Lisbon, 1976.
21. Terian A., *Macarius of Jerusalem, Letter to the Armenians, AD 335*, Published by St. Vladimir's Seminary, Crestwood NY, 2008.
22. *The Arabic Works of Theodore Abu Qurrah, Bishop of Harran, Edition, Commentaries, Preface and Transl. from Arabic by Archpriest O. Davidov* [Arabskie sočineniâ Feodora Abu Kurry, episkopa Harranskogo, Sostavlenie, kommentarii, predislovie, perevod s arabskogo protoiereâ O. Davydenkova]. Moscow, publ. of Saint Tikhon's Orthodox University of the Humanities, 2020. (in Russian).
23. *The Armenian History attributed to Sebeos, Translated, with notes*, by R. W. Thomson, Historical commentary by J. Howard-Johnston, Assistance from T. Greenwood, Liverpool, 1999.
24. *The Book of Letters* [Girk Tghtoc], ed. Archb. Norayr Pogharyan, Jerusalem, Typography of St. James, ⁽²⁾1994. (in Armenian).
25. *Theodore Abū Qurrah*. Translated by John C. Lamoreux. Brigham Young University Press. Provo, Utah, 2005.

26. Voludakis V. Priest, *Christ "Beyond of Humans"* [Ο Χριστός “Anthrṓpwn epékeina”]. Athens, 1990 (in Greek).
27. “A Tale, i.e. Martyrology of the Holy Fathers Killed by Barbarians, i.e. Saracens in the Great Lavra of our Holy Father Sava” [Εκσήμεσις ἡτοι Μαρτύριον τῶν Ἁγίων Πατέρων τῶν ἀναιρεθέντων ὑπὸ τῶν Βαρβάρων, ἡγογν Σαρακηνῶν, ἐν τῇ Μεγίστῃ Λαύρᾳ τοῦ Ὁσίου πατρὸς ἡμῶν Σάβα]. *Pravoslavnyj Palestinskij sbornik*, Vol. 19, Issue 3, 1907, pp. 1-41. (in Greek).
28. “A Tale, i.e. Martyrology of the Holy Fathers Killed by Barbarians, i.e. Saracens in the Great Lavra of our Holy Father Sava” [Skazanie o mučeničestve Svâtyh Otcov, izbiennyh varvarami saracinami v velikoj lavre prepodobnago otca našego Savy], *Pravoslavnyj Palestinskij sbornik*. Vol. 19, Issue 3, 1907, pp. 1-41. (in Russian).

ՀՏԴ 930.1

**ԴԱՎԻԹ ԿՈՒՐԱՊՊԱՂԱՏԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Սամվել Գողոսյան

Հայկական պետական մանկավարժական համալսարան, Հայաստան,
poghosyansavel@yahoo.com

Ամփոփում. Ուսումնասիրության մեջ պատմիչների վկայությունների և արդի հետազոտությունների հենքի վրա նորովի է ներկայացվել, լուսաբանվել ու վերլուծության ենթարկվել Դավիթ կուրապաղատի արտաքին քաղաքական գործունեության հիմնական ուղղությունները, դրանց հասնելու համար նրա գործադրած ջանքերը և արդյունքները:

Դավիթը բավական ակտիվորեն ներգրավված էր Բյուզանդիայի, Հայաստանի ու վրացադավան երկրամասերի ներքին գործերում: Մասնակցում էր Բյուզանդիայում տեղի ունեցող գահակալական կռիվներին: Հանախ միջնորդի դեր էր ստանձնում Հայաստանի տարբեր իշխանությունների միջև երկպառակյական բախումների, ինչպես նաև Հայոց արքայի դեմ ապստամբած իշխաններին հաշտեցնելու ժամանակ: Դավիթ

կուրապաղատը, ինչպես նաև Հայաստանի մյուս ենթակա թագավորներն ու իշխանները, ամեն կերպ փորձում էր թուլացնել կենտրոնական իշխանության հիմքերը, որպեսզի ավելի անկախ լիներ: Այդ հարցում նա համագործակցում էր և՛ հայ ու վրաց իշխանների, և՛ հարևան պետությունների հետ: Դա բնականաբար թուլացնում էր հայկական միասնական պետությանը: Փորձում էր հավասարապես օգտվել Բյուզանդիայի և Հայաստանի միջև եղած հակասություններից և հնարավորինս անկախ լինել երկուսից էլ:

Դավիթը խնդիր էր դրել վրացադավանների համար ստեղծելու միասնական վրացական պետությունը: Այդ ուղղությամբ նույնպես լուրջ ջանքեր է գործադրում:

Բանալի բառեր՝ *Դավիթ կուրապաղատ, Տայքի իշխանություն, Բյուզանդիա, Հայաստան, Վրաստան, Հայոց և վրաց շահնշահ, Վասիլ Բ:*

FOREIGN POLICY ACTIVITIES OF DAVID KOUROPALATES

Samvel Poghosyan,

ASPU, Armenia

poghosyansavel@yahoo.com

Abstract: The study, based on the evidence of historians and modern research, presents, explains and analyzes the main directions of David Kouropalates' foreign policy, the efforts he made to achieve them and the results.

David was quite actively involved in the internal affairs of Byzantium, Armenia and the Georgian regions. He participated in the struggle for the throne in Byzantium. He often took on the role of mediator during schismatic conflicts between various principalities of Armenia, as well as during the reconciliation of princes who rebelled against the Armenian king. David Kouropalates, like other princes of Armenia, tried in every possible way to weaken the foundations of the central government in order to be more independent. In this matter, he cooperated with both the Armenian and

Georgian princes, and with neighboring states. This, naturally, weakened the united Armenian kingdom. He tried to equally take advantage of the contradictions between Byzantium and Armenia and to be as independent as possible from both. David set himself the task of creating a unified Georgian state for the Chalcedonians of Transcaucasia. He made serious efforts in this direction.

Key words: *David Kouropalates, Principality of Tayk, Byzantium, Armenia, Georgia, Shahenshah of Armenia and Georgia, Basil II*

Բյուզանդիայի հետ հարաբերությունները

X դ. երկրորդ կեսին Տայքում Դավիթ կուրապաղատ Բագրատունու գլխավորությամբ առաջացավ մի հզոր իշխանություն (961-1000 թթ.): Նրա կենտրոնները Օլթի և Նամրվան քաղաքներն էին¹: Միջնադարի պատմիչները Դավթին ներկայացնում են որպես աստվածասեր, արդարասեր, աղքատասեր և խաղաղասեր²: Նրա կառավարման առաջին 15 տարիների մասին պատմիչների մոտ տեղեկությունները գրեթե բացակայում են: Նա չի հիշատակվում Հայաստանում, Վրաստանում կամ բյուզանդական կայսրությունում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների համատեքստում:

Տայքի իշխանության վերելքի գործում կարևոր գործոն է հանդիսանում Բյուզանդիայի կայսր Վասիլ Բ-ին (976-1025 թթ.) աջակցելն ընդդեմ Վարդ Սկլերոսի: Այդ իրադարձության ժամանակ նա արդեն հանդես է գալիս որպես բավական հզոր իշխան, որը կայսրին է տրամադրում խոշոր բանակ:

Բյուզանդիայում 976-979 թթ. Վարդ Սկլերոսի ապստամբության ժամանակ Վասիլ Բ կայսրը օգնություն խնդրեց Դավիթ կուրապաղա-

¹ Ադոնց Ն., Դավիթ Կյուրոպաղատ, ՊԲՀ, 2002, թիվ 3, էջ 21:

² Արխատսկես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971, էջ 2: Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2000, էջ 337: Մատթեոս Ուռշայեցի, Ժամանակագրություն, Եր., 1973, էջ 23: Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ-Ս.Ղազար, 1956, էջ 17: Քարթլիի մատյան, Լրաբեր հասարակական գիտությունների, 1989, թիվ 9, էջ 71:

տից, որի դիմաց խոստացավ Խաղտո Առինը՝ Կղեսուրի հետ միասին, Չորմայրին, Կարինը, Բասենը, Մարդաղիի Սևուկ բերդը, Հարքը և Ապահունիքը¹: Կայսրը Սկլերուսի դեմ պայքարի գործը հանձնարարել էր Վարդ Փոկասին, որը լավ հարաբերություններ էր հաստատել Տայքի իշխանի հետ, երբ Խաղտոիքի բյուզանդական կառավարիչն էր եղել²: Հավանաբար անձնական այդ մտերիմ հարաբերություններով էր պայմանավորված, որ Դավիթը 12.000-ոց օգնական զորք տրամադրեց: Այդ օգնությունը վճարող դեր ունեցավ և ապահովեց Վասիլի հաղթանակը: Կայսրը Դավիթին է հանձնում խոստացված բոլոր տարածքները ցմահ կառավարման: Նաև Դավիթին անցավ հակառակորդներից խլած ամբողջ ավարը³:

Ստեղծված նոր իրավիճակում Դավիթ կուրապաղատի միջազգային հեղինակությունը բարձրացավ, տարածքները ընդլայնվեցին, ֆինանսական զգալի միջոցներ հայտնվեցին նրա ձեռքում: Միաժամանակ նա թիկունքում երախտապարտ կայսեր հովանավորությունն ուներ: Դրա շնորհիվ նա վերածվեց տարածաշրջանի կարևոր դերակատարի և հանախ էր միջամտում տարբեր քաղաքական գործընթացների մեջ:

987-989 թթ. Դավիթը ևս մեկ անգամ միջամտեց Բյուզանդիայի գահակալական կռիվներին⁴: Այս անգամ Վասիլի դեմ ապստամբել էր Վարդ Փոկասը: Վերջինս կրկին օգնություն խնդրեց Տայքի տիրակալից, այս անգամ Վասիլի դեմ: Փոկասը Դավիթի մոտ ուղարկել էր որդուն՝ Նիկեփոր Ծովիզին: Դավիթը 1.000 հեծյալ տրամադրեց: Եվս 1.000 հեծյալ տրամադրեցին Խաղտոիքի իշխաններ Բագրատը և Չորսովանելը: Այդ զորաբանակը բավարար եղավ Տրապիզոնում ավիհանում կատարած Գրիգոր Տարոնացուն հաղթելու համար⁵:

¹ Ստեփանոս Ասողկ Տարոնեցի, *Տիեզերական պատմություն*, էջ 245-246:

² Հովհաննես Սկլիցեցու, *Եր.*, 1979, էջ 64-65:

³ Բարթոլի մատյան, էջ 71:

⁴ Bromige T., *Armenians in the Byzantine Empire: Identity, Assimilation and Alienation from 867 to 1098*, I.B.TAURIS, 2023, p. 51.

⁵ Ադոնց Ն., *Երկեր*, հ. Ե, Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ, Եր., 2012, էջ 293-294: Forsyth J., *The Byzantine-Arab chronicle (938-1034) of Yahya ibn Said al-Antaki*, Michigan, 1977, p. 435-439.

Ինչպես տեսնում ենք, այս անգամ Դավիթը միայն 1.000 հեծյալ էր տրամադրել: Հավանաբար նա այնքան էլ վստահ չէր Փոկասի հաղթանակում, սակայն մերժել նույնպես չէր կարող, որովհետև Փոկասի գահ բարձրանալուց հետո կհայտնվեր բավական ծանր իրավիճակում: Իսկ Վասիլը նրան չէր դիմել, հետևաբար կարող էր որևէ պատճառաբանությամբ արդարանալ:

Վարդ Փոկասի պարտությունից հետո, Վասիլը 990 թ. պատժիչ զորաբանակ է ուղարկում Տայքի իշխանի դեմ: Դավիթ կուրապաղատը շտապեց պատվիրակություն ուղարկել կայսեր մոտ, պատանդներ տվեց: Իշխանը ստիպված ներում խնդրեց կայսրից, խոստացավ հավատարիմ լինել, իսկ իր տիրությունները մահվանից հետո կտակեց Բյուզանդիային¹:

Այսպիսով, Դավիթ կուրապաղատը կարողացավ խուսափել կայսեր վրեժխնդրությունից, պահպանեց իր տարածքները և, ինչպես կտեսնենք, նույնիսկ Բյուզանդիայի հետ համաձայնեցված նոր նվաճումների գնաց: Փաստորեն, դիվանագիտական բարդ խուսանավումների արդյունքում Դավիթը կրկին շահած դուրս եկավ ստեղծված իրավիճակից: Ինչ վերաբերում է իր տիրությունները Բյուզանդիային կտակելուն, ապա Դավթի համար դա խնդիր չէր, քանի որ ժառանգ չունեի, իսկ արխագաց թագավոր Բագրատին, ինչպես կտեսնենք, երկու տարի առաջ զրկել էր իր գահաժառանգը լինելու իրավունքից:

Մահմեդական պետությունների հետ հարաբերությունները

Վասիլ Բ-ի հետ հաշտություն կնքելուց անմիջապես հետո Դավթի համար նոր հնարավորություն ստեղծվեց տարածքներն ընդլայնելու համար: Չի բացառվում, որ այդ հարցը քննարկված և նախապատրաստված լինի Վասիլի հետ բանակցությունների ընթացքում:

Աստղիկի վկայությամբ Հարթը և Ապահունիքը տրվել էին Դավթին դեռևս 979 թ.: Սակայն այդ ժամանակ դրանք գտնվում էին Բատի (Բադալ Բուրդի) ձեռքում: Վերջինս ընդունել էր կայսեր գերիշխանությունը, իսկ կայսրությունը նրան ենթարկում էր Դավթի սյուզերենությանը:

¹ Forsyth J., *The Byzantine-Arab chronicle (938-1034) of Yahya ibn Said al-Antaki*, Michigan, 1977, p. 465-466.

Բատը հետզհետե բավական մեծ հզորության էր հասել, 983 թ. նվաճել էր Մուֆարկինը (Սիվան), Մծբինը, Դիարբեքիրը: Փորձում էր նվաճել Մոսուլը, նույնիսկ Բաղդադը: Նման հզորության հասած ամիրայից դժվար էր վասալական հնազանդություն պահանջել, նույնիսկ բյուզանդական կայսեր համար գրեթե անհնար էր նրան պատժելը: Սակայն 990 թ. Բատը զոհվում է Մոսուլի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, նրա տիրություններն անցան քրոջ որդուն՝ Աբու Ալի Հասան իբն Մրվանին: Դավիթը, որպես այդ տիրությունների իրավատեր, կարող էր միջամտել նրա ներքին գործերին: Դավիթ կուրասպաղատը Մրվանից գրավեց Ապահունիքը ու Մանազկերտ քաղաքը, քչեց արաբ բնակիչներին և այնտեղ բնակեցրեց լուսավորչական ու վրացադավան հայերի¹: Մրվանյանները ստիպված էին բավարարվելու Ադանիքում ունեցած տիրություններով:

Դա ձեռնառու էր նաև Բյուզանդիային, քանի որ Դավիթի բոլոր տիրությունները իշխանի մահից հետո անցնելու էին այդ պետությանը: Իբն Ասիրը տեղեկացնում է, որ Մրվանի դեմ արշավանքը իբր Վասիլ Բ կայսրն է իրականացրել²: Իրականում այստեղ արտացոլված է այն փաստը, որ Դավիթը դիտարկվում էր որպես Բյուզանդիայի ենթական: Փաստորեն, Դավիթը Բյուզանդիայի հետ համաձայնությամբ էր գնացել այդ քայլին:

Դավիթը միշտ հանդես էր գալիս որպես ավատական սովորույթային իրավունքի և ընդունված կարգերի պաշտպան: Դժվար թե նա գնար մի քայլի, որը դեմ էր նրա արդարասիրության ոգուն: Միաժամանակ, հետագա իրադարձությունների ժամանակ չի քննարկվում այդ տարածքները Դավիթից վերցնելու հարցը: Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ ամիրա Բատը 979 թ. վասալական կախման մեջ էր դրվել Տայքի իշխանից, իսկ նրա մահից հետո այուզերեն Դավիթը չի ցանկանում այդ տարածքները կառավարման հանձնել Մրվանին:

Բացի նոր նվաճումից, ինչպես նշվեց, Դավիթը վտարեց բոլոր արաբներին այդ տարածքներից: Դա բնականաբար մահմեդական աշխարհի դժգոհությունը պետք է առաջացներ և մեծ պատերազմի առիթ դառնար:

¹ Մտեփանոս Ասողկ Տարոնեցի, *Տիեզերական պատմություն*, էջ 326-327:

² Իբն ալ-Ասիր: *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, հ. 11: *Արաբական աղբյուրներ*, հ. Բ, Եր., 1981, էջ 205-206:

Դժվար թե Դավիթը գնար այդ քայլին, առանց թիկունքում կայսրության և Հայոց արքայի աջակցությունն ունենալու:

Դավթին պատժելու համար 990 թ. Ատրպատականի Ռավադյան ամիրա Մամլանը (988-1000 թթ.) ներխուժեց Հայաստան և բանակեց Ծաղկոտն գավառում: Դավիթը օգնություն խնդրեց Հայոց և վրաց շահնշահ Գագիկ Ա-ից (990-1020 թթ.): Շահնշահ Գագիկին, բացի Տայքի կուրապաղատության գորքերից, միացել էին Կարսի Աբաս և վրաց Բագրատ Բ արքաները: Հայկական բանակը կանգ առավ Վաղարշակերտ (Ալաշկերտ) բերդաքաղաքի մոտ: Մամլանը, տեսնելով հայկական բանակի հզորությունը, առանց նակատամարտ տալու, գիշերով փախուստի դիմեց¹:

998թ. Դավիթ կուրապաղատը վրացական զորք է ուղարկում Խլաթը նվաճելու: Պաշարման ժամանակ վրացիները թալանում, ավերում, անասնագոմի են վերածում պարիսպներից դուրս գտնվող հայկական եկեղեցիները: Երբ արաբները նրանց ամոթանք են տալիս քրիստոնեական սրբարանների հետ այդպես վարվելու համար, վրացիները պատասխանում են. «Մենք Հայոց եկեղեցիներն ու ձեր մզկիթները հավասար ենք համարում»²: Ի վերջո վրացական զորքերը ջախջախիչ պարտություն են կրում և փախուստի են դիմում: Այստեղ երևում է քաղկեդոնականների ատելությունը Հայ առաքելական եկեղեցու և նրա հետևորդների նկատմամբ: Չնայած Դավիթ կուրապաղատի հանդուրժողական ու հարգալից վերաբերմունքին, որոշ վրացի հոգևորականներ և նրանց ազդեցության տակ գտնվող մոլեռանդ ազնվականներ գնում էին սրբապղծության, իսկ Դավթի կեցվածքը նրանց դուր չէր գալիս:

998 թ. Մամլանը երկրորդ անգամ հարձակվեց Տայքի կուրապաղատության վրա: Ըստ Ուռնիայեցու՝ նա ուներ 200.000 զինվոր³, ըստ Աստղիկի՝ 100.000-ից ավելի⁴: Հավանաբար, Ատրպատականի ամիրային Դավթի վրա կրկին արշավելու համարձակություն էր տվել Խլաթի մոտ

¹ Ստեփանոս Աստղիկ Տարննեցի, Տիեզերական պատմություն, էջ 326-327:

² Նույն տեղում, էջ 329:

³ Մատթեոս Ուռնիայեցի, Ժամանակագրություն, Եր., 1973, էջ 24:

⁴ Ստեփանոս Աստղիկ Տարննեցի, Տիեզերական պատմություն, էջ 333:

Տայքի գորաբանակի պարտությունը: Մյուս կողմից վրացադավանների անհարգալից վերաբերմունքը հայկական եկեղեցիների նկատմամբ, գուցե, հույս էր տվել Մամյանին, որ հայոց թագավորը չի աջակցի Դավթին:

Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ Մամյանը հասնում է Ապահունիք գավառը, «*վրաց իշխան Դավիթ կուրապաղատի երկիրը և ասածո սուրբ մարդուն՝ աստվածասեր Դավիթ կուրապաղատին*»¹ սուկալի սպառնալիքներով նամակ է ուղարկում՝ պահանջելով 10 տարվա հարկ և պատանդներ:

Դավիթ իշխանը կարողացավ դուրս բերել միայն 5.500 մարտիկ²: Նա կրկին օգնություն խնդրեց Հայոց շահնշահ Գագիկ Ա-ից և վրաց թագավոր Գուրգենից: Գագիկ Ա և Կարսի Աբաս թագավորները 6.000 զինվոր ուղարկեցին օգնության: Նրանց միացան վրաց Գուրգեն թագավորի 6.000 զինվորները: Այսպիսով՝ 17.500 ռազմիկ ուղարկվեց մահմեդական ամիրայի մեծաքանակ բանակի դեմ: Դավիթ կուրապաղատը արդեն բավական ծեր էր և ի վիճակի չէր գորքերի հետ պատերազմի մեկնելու: Հայ-վրացական միացյալ զորքերը հայոց իշխանաց իշխան Վահրամ Պահլավունու գլխավորությամբ Ապահունիք գավառի Ծումբ գյուղի մոտ 998 թ. հոկտեմբերի 18-ին տեղի ունեցած ճակատամարտում գլխովին ջախջախեցին թշնամուն և հետապնդեցին մինչև Արճեշ³: Այսպիսով՝ Ատրպատականի ամիրայի հսկայական բանակը վտարվեց երկրից: Այս անգամ նույնպես Դավիթը օգնություն էր խնդրել ոչ թե Բյուզանդիայից, որին կտակել էր իր տիրությունները, այլ Հայոց արքայից, որի սյուզերենության տակ էր գտնվում պաշտոնապես:

**Հայոց թագավորների և իշխանների հետ
փոխհարաբերությունները**

Զարգացած ֆեոդալիզմի բնորոշ հատկանիշներից են իշխանների կենտրոնախույս ձգտումները և արքաների կողմից երկրի միասնականությունն ամրապնդելու ուղղությամբ իրականացվող քայլերը: Միջավատական ընդհարումներն ու արտաքին հարձակումները հաճախ կապ-

¹ Մատթեոս Ուռհայեցի, *Շամանակագրություն*, էջ 23:

² Նույն տեղում, էջ 24:

³ Ստեփանոս Աստղիկ Տարոնեցի, *Տիեզերական պատմություն*, էջ 330-335:

ված էին իրար հետ: Դավիթ կուրապաղատը երբեմն միջամտում էր նաև Հայաստանի ներքաղաքական կյանքին: Հաճախ պաշտպանում էր ենթակա թագավորներին Հայոց և վրաց շահնշահի ճնշումներից: Որպես իշխան նա փորձում էր թուլացնել արքայական կենտրոնաձիգ ճնշումները, հանդես էր գալիս ավատական ընդունված իրավունքների ու կարգերի պաշտպանությամբ:

982 թ. Ատրպատականի Սալարյան ամիրա Աբուլ Հայջան ներխուժեց Հայաստան և Հայոց և վրաց շահնշահ Սմբատ Բ-ը (977-990 թթ.) մեծ դժվարությամբ կարողացավ թշնամուն հաղթել: Այդ հարձակման հետևում թաքնված էր Կարսի Մուշեղ թագավորը, ով փորձում էր անընդհատ հակադրվել Սմբատ Բ-ին: Արքայից արքան նման պայմաններում Կարսի թագավորությունից գրավեց Ճակատ գավառի Ճատիկ բերդը: Մուշեղը օգնություն է խնդրում Դավիթ կուրապաղատից: Վերջինս և Մուշեղը բանակ են դնում Ծիրակի Բավաց ձոր գյուղում: Սմբատը, արյունահեղությունից խուսափելու համար, բերդը վերադարձնում է Մուշեղին¹:

Այսպիսով Դավիթ կուրապաղատի միջամտությամբ և միջնորդությամբ խաղաղությամբ ավարտվեց Հայոց արքայի և Կարսի ենթակա թագավորի հակամարտությունը: Խնդիրը լուծվեց գործող իրավունքի նորմերին համապատասխան:

Օգտվելով Սմբատի համար ստեղծված բարդ իրադրությունից՝ 982թ. Փառիսոսում թագավոր հռչակվեց Սենեքերիմը, ով նույն թվին թագ ստացավ արաբներից ու բյուզանդացիներից: Մեծ է հավանականությունը, որ Բյուզանդիայից թագ ստանալու հարցում նրան աջակցել էր Դավիթ կուրապաղատը, ով ընդարձակ կապեր ուներ Վասիլի արքունիքում: Ինչպես տեսնում ենք, 982 թ. Մուշեղի, Դավթի և Սենեքերիմի համաժամանակյա գործողությունները համաձայնեցված էին: Եվ Հայոց շահնշահը չի կարողանում պատժել անհնազանդ ու կենտրոնախույս իշխաններին:

¹ Նույն տեղում, էջ 240-241:

Ենթակա թագավորներն ու իշխանները ամեն կերպ փորձում էին թուլացնել կենտրոնական իշխանության հիմքերը, որպեսզի ավելի անկախ լինեին: Այդ հարցում իշխանները համագործակցում էին և՛ հայ իշխանների, և՛ հարևան պետությունների հետ: Դա բնականաբար թուլացնում էր հայկական միասնական պետությանը:

Վրացադավան հողերի միավորման ջատագովը

Տայքի տիրակալը հստակ գործողություններ էր իրականացնում վրացադավան բոլոր երկրամասերը միասնական պետության մեջ միավորելու ուղղությամբ: Անժառանգ Դավիթ կուրապաղատը որդեգրել էր վրաց թագավոր Բագրատ Խևի (958-994 թթ.) և Աբխազաց Գեորգի Բ (916-960 թթ.) թագավորի թոռին՝ Բագրատին: Փաստորեն, Բագրատը դարձավ վրաց, արխազաց և Տայքի գահերի ժառանգորդ: «Քարթլիի մատյանի» վկայությամբ Դավիթը վրաց իշխաններին հրամայել է հպատակվել Բագրատին. «Սա Տայքի, Քարթլիի և Աբխազաց երկրի գահաժառանգն է, իմ որդին և սանը, և ես եմ սրա խնամակալն ու սատարը, սրան հպատակվեք բոլորդ»¹: Այսպիսով՝ Դավիթը փորձում էր պայմաններ ստեղծել միավորելու վրացադավան երկրամասերը մեկ միասնական վրացական թագավորության մեջ: Նա փորձում էր ժամանակի իրավանորմերին համապատասխան, լեզվտիմ հիմքի վրա իրականություն դարձնել այդ ծրագիրը:

Երբ Կախեթի գորքերը գրավում են Քարթլին և ձերբակալում են Բագրատին և ծնողներին՝ Գուրգենին ու Գուրանդուխտին, ապա անմիջապես միջամտում է Դավիթը: Նա մեծ բանակով շարժվում է Կախեթի դեմ: Թռեղքում կայացած բանակցությունների արդյունքում Գուրգենը, Բագրատը և Գուրանդուխտը ազատ են արձակվում, իսկ կախեթցիների բանակը հեռանում է Քարթլից²:

978 թ. Հայոց և վրաց շահնշահ Սմբատ Բ-ի համաձայնությունը և աջակցությունը ստանալով՝ Դավիթ կուրապաղատը կարողացավ Աբխազիայի գահին բազմեցնել իր որդեգրին՝ Բագրատ Գ Բագրատունին:

¹ Քարթլիի մատյան, էջ 71:

² Նույն տեղում, էջ 71-72:

Այսպիսով Դավիթ կուրապաղատի ջանքերով Արխագիայի գահը արդեն պատկանում էր Բագրատին, մնում էր վրացական գահը և Տայքի իշխանությունը, որպեսզի ստեղծվեր վրացադավանների միասնական թագավորություն: Բոլոր նախադրյալները ստեղծված էին այդ գործընթացը ավարտին հասցնելու համար, պետք էր միայն ժամանակ: Սակայն այդ փայլուն մտածված ծրագրի իրականացմանը խանգարեց հենց որդեգիր Բագրատը:

988թ. Բագրատ Գ-ը հանդես եկավ Դավիթ կուրապաղատի և պապի՝ վրաց Բագրատ թագավորի դեմ: Դա կարող էր պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ Դավիթը օգնական զորք էր տրամադրել Վասիլ Բ-ի դեմ ապստամբած Վարդ Փոկասին: Բյուզանդական դիվանագիտությունը կարող էր Բագրատին դուրս բերել իր խնամակալների դեմ: Արխագիայի արքան Կովկասի լեռնականներից հավաքում է հսկայական բանակ և արշավում է նրանց դեմ: Տայքի իշխանը և վրաց թագավորը օգնության համար դիմեցին Հայոց և վրաց շահնշահ Սմբատ Բ-ին: Վերջինիս բանակին էին միացել Կարսի, Վասպուրականի, Սյունիքի թագավորությունների, Տարոնի ու Խաչենի իշխանությունների զորքերը: Սմբատ Բ-ի, Դավիթ կուրապաղատի, վրաց Բագրատ Խև թագավորի միացյալ զորքերին հանդիպելով Ջավախքում՝ արխագաց թագավորը անձնատուր եղավ, իսկ Տաշիրի Սակուրեթ ամրոցը զիջեց Հայոց արքային¹: Բագրատը, իր այդ չնտածված ու ավերախտ քայլով, գրկվեց Դավիթ կուրապաղատի ժառանգությունից և հետագա աշակցությունից:

Սպանության արտաքին ու ներքին դրդապատճառները

Դավիթ կուրապաղատը, երբ Բագրատին գրկեց իր ժառանգությունից, վրացադավան հողերի միավորման առաջամարտիկից վերածվեց այդ գործընթացին խանգարող հիմնական գործոնի: Չպետք է մոռանալ, որ Դավիթը կրում էր բյուզանդական կուրապաղատ տիտղոսը, որը ամենաբարձր էր վրացադավան երկրամասերի տիրակալների մեջ:

Չարգացած միջնադարի միջազգային հարաբերություններում Բյուզանդիան կարողացել էր տարբեր մեթոդներով հարևան փոքր քրիս-

¹ Մտեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, էջ 311-312:

տոնյա պետություններին պարտադրել խաղի իր կանոնները: Կայսրերը տարբեր տիտղոսներ և գումարներ էին տալիս հարևան երկրների իշխաններին, որի շնորհիվ նրանց պահում էին իրենց ազդեցության ոլորտում, միաժամանակ այդ տիտղոսների և իշխանների անձնական փառասիրության վրա խաղալով, հաճախ ոչ բացահայտ, միջամտում էին այդ երկրների գործերին:

Վրաց կամ արխազաց տիրակալները գուցե իրենց երկրում թագավոր էին կոչվում, սակայն բյուզանդական իրավունքի ու քաղաքականության տեսանկյունից նրանք ուղղակի իշխաններ էին, որոնք ստորադասվում էին Տայքի կուրապաղատին: Մի կողմից միջազգային հեղինակության ու ճանաչման, մյուս կողմից իր ռազմական ուժի ու դիվանագիտական կարողության շնորհիվ Դավիթը հասել էր նրան, որ վրացական ու արխազական գահերին նստում էին նրա համաձայնությամբ ու աջակցությամբ: Իզուր չէ, որ վրացական և բյուզանդական աղբյուրներում Դավիթին որոշ դեպքերում կոչում են թագավոր:

Սակայն Դավիթը թագավոր չէր, քանի որ Հայոց և վրաց շահնշահի կողմից չէր ճանաչվել այդպիսին: Ինչքան էլ Դավիթը հզոր և հեղինակավոր լիներ, գործող իրավունքի տեսանկյունից նա թագավորական տիտղոս կարող էր ստանալ Հայոց շահնշահից:

Պրոֆեսոր Արման Եղիազարյանը բավական դիպուկ նկատում է, որ Դավիթ կուրապաղատը արխազաց թագավոր Բագրատի համար դարձել էր վրացադավան հողերի միավորման գլխավոր խոչընդոտ: «Ակնհայտ է, որ Դավիթ կուրապաղատը, որը սկզբնապես մեծ դեր խաղաց Այսրկովկասի քաղկեդոնականների միավորման գործընթացում, այնուհետև, դեպքերի բերումով, դարձավ այդ գործընթացի հիմնական հակառակորդներից մեկը: Այդ պատճառով Բագրատ Գ-ն սկսեց մտածել նրանից ազատվելու մասին»¹:

1000 թ. մարտի 31-ին, հավանաբար արխազաց Բագրատ Գ արքայի դրդմամբ, տեղի իշխանները համոզեցին Վրաստանի արքեպիսկոպոս

¹ Եղիազարյան Ա., Վրաց Բագրատունիների թագավորության ձևավորման գործընթացը, Եր., 2018, էջ 98:

Իլարիոնին՝ խեղդամահ անել Դավիթ կուրապաղատին: Իլարիոնը հաղորդության հացի հետ թույն տվեց, բայց Դավիթը չմահացավ: Ապա Իլարիոնը մտնում է իշխանի ննջասենյակը, երբ նա քնած էր և բարձով խեղդում է: Վասիլ Բ-ն այդ ժամանակ գտնվում էր Կիլիկիայի Տարսոն քաղաքում: Տեղեկանալով Դավիթ իշխանի մահվան մասին՝ նա շտապեց Տայր՝ տիրելու իրեն կտակված երկրամասին: Վասիլը Իլարիոնի վզից քար կապել տվեց ու նետեց ծովը՝ պատժելով Դավիթի մահվան համար:¹ Տայրի ազատանու ներկայացուցիչների և Վասիլի բանակում գտնվող ռուս վարձկանների միջև աննշան առիթով բախում տեղի ունեցավ և բազմաթիվ ազնվականներ սպանվեցին²: Հայ պատմիչները դա բացատրում են, իրենց այուզերեն Դավիթ կուրապաղատի սպանությանը այդ ազատների մեղսակցությամբ:

Պատմագիտության մեջ շրջանառվում է տեսակետ, որ Վասիլն էր կանգնած Դավթի սպանության հետևում: Սակայն դա հիմնավորված չէ և ավելի հավանական է այն տեսակետը, որ Բագրատի կոմնակիցներն են կանգնած այդ ոճիրի կազմակերպման հետևում: Չպետք է մոռանալ, որ Վասիլի հրամանով են պատժվում սպանության մեղսակիցները: Իրականում կային սպանության ավելի խորքային պատճառներ: Դրա թիկունքում կանգնած էր արխագաց թագավար Բագրատը, վրացադավան իշխանները և վրաց հոգևորականությունը:

Վրաց հոգևորականները և վրացադավան իշխանները դժգոհ էին Դավթի հանդուրժողական քաղաքականությունից հայ առաքելական եկեղեցու հետևորդների նկատմամբ: Դավիթը արդեն ծեր էր և վրացադավանները ցանկանում էին համախմբվել Բագրատ Գ-ի շուրջը, քանի որ Դավիթը ժամանակին այդ ուղղությամբ քարոզչական աշխատանքներ էր տարել: Հետևաբար, մերձավոր շրջապատը նույնպես կուրապաղատին դիտում էր որպես խոչընդոտ:

¹ Մատթեոս Ուռնայեցի, Ժամանակագրություն, էջ 25: Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, էջ 3: Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, էջ 18:

² Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, էջ 2: Մոտեփանոս Ատողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, էջ 338-339:

Մեր կարծիքով, հենց վրացադավան հողերի միավորման գործընթացը, որի գլխավոր ջատագովն էր հանդիսանում Դավիթ կուրապաղատը, ի վերջո, հանգեցրեց նրա սպանությանը: Սակայն սպանության կազմակերպիչները, մասնակիցներն ու ոգեշնչողները չկարողացան հասնել գլխավոր նպատակին: Վասիլը նվաճեց Տայքը, կառավարիչներ նշանակեց իր հավատարիմ մարդկանց, իսկ տեղի իշխաններից շատերին տեղահանեց դեպի կայսրության խորքերը՝ տալով տարբեր տիտղոսներ ու պաշտոններ¹: Տայքում ստեղծվեց բյուզանդական Իբերիա բանակաթեմը՝ Օլթի կենտրոնով: Իսկ 1045 թ. բյուզանդացիների կողմից Անիի գրավումից հետո ստեղծվեց Հայաստանի ու Իբերիայի միացյալ բանակաթեմ՝ Անի կենտրոնով:

Եզրահանգում. Դավիթ կուրապաղատը կարողանում էր Բյուզանդիայի, Հայաստանի և մահմեդական պետությունների միջև խուսանավել, հենվելով այս կամ այն ուժի վրա: Հայաստանի ու Բյուզանդիայի ներքաղաքական պայքարին միջամտելուց նա ցանկացած պարագայում կարողանում էր շահած դուրս գալ: Դա խոսում է նրա դիվանագիտական բարձր ունակությունների մասին: Նա, լինելով քաղկեդոնական, հարգանքով էր վերաբերվում Հայ առաքելական եկեղեցու հետևորդների նկատմամբ: Դրա շնորհիվ կարողանում էր խուսափել ընդհարումից Հայոց և վրաց շահնշահի և վերջինիս ենթակա մյուս հայկական պետությունների հետ բախումից: Սակայն հանդուրժողականությունը առաքելականների հանդեպ չէր ողջունվում ծայրահեղական տրամադրված որոշ վրացադավան հոգևորականների և իշխանների կողմից: Դավիթը հանդես էր գալիս որպես վրացադավան հողերը մեկ պետության մեջ միավորելու ջատագով և առաջամարտիկ: Սակայն հետագա իրադարձությունները նրան դարձրին այդ գործընթացի գլխավոր ախոյան և խոչընդոտ: Դա դարձավ Դավթի սպանության գլխավոր պատճառը: Այսպիսով, Դավիթ կուրապաղատը տաղանդավոր դիվանագետ էր, հեռատես պետական գործիչ, ով կարողանում էր իր ռազմական ուժը և միջազ-

¹ Մտեփանոս Ասողկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, էջ 340: Հուլիաննես Սկլիդգես, էջ 75:

գային հարաբերությունները ճիշտ օգտագործել իր իշխանությունը ամրապնդելու, հզորացնելու և ինքնիշխանությունը պահպանելու համար:

References

1. Adonts' N., *David Kouropalates* [Davit kyuropaghat], Historical-Philological Journal, Yerevan, 2002, N 3, pp. 3-37. (In Armenian).
2. Adonts' N., *Works* [Yerker], vol. 5, Armenian-Byzantine Studies, Yerevan, YSU Publishing House, 2012. (In Armenian).
3. Aristakes Lastiverts'i, *History* [Patmutyun], Yerevan, "Hayastan" Publishing House, 1971. (In Armenian).
4. Bromige T., *Armenians in the Byzantine Empire: Identity, Assimilation and Alienation from 867 to 1098*, I.B.TAURIS, 2023.
5. *Chronicle of Smbat Sparapet* [Smbatay Sparapeti Taregirk'], Venice-S.Lazzaro, Publishing of AGBU Khoren vard. Lazarian Foundation, 1956. (In Armenian).
6. Forsyth J., *The Byzantine-Arab chronicle (938-1034) of Yahya ibn Said al-Antaki*, Ph.D. dissertation, University of Michigan, 1977.
7. *Georgian Chronicles* [K'art'lii matyan], Bulletin of Social Sciences, 1989, N 9, pp. 60-80. (In Armenian).
8. Hovhannes Skilits'es, *Foreign sources about Armenia and Armenians* [Otar aghbyurnerë Hayastani ev hayeri masin], vol. 10, *Byzantine sources* [Byuzandakan aghbyurner], vol. 3, Yerevan, NAS Publishing House, 1979. (In Armenian).
9. Ibn al-Athir, *Foreign sources about Armenia and Armenians* [Otar aghbyurnerë Hayastani ev hayeri masin], vol. 11: *Arabic sources* [Arabakan aghbyurner], vol. 2, Yerevan, NAS Publishing House, 1981. (In Armenian).
10. Matteos Yedesatsi, *Chronicle* [Zhamanakagrutyun], Yerevan, "Hayastan" Publishing House, 1973. (In Armenian).
11. Stepanos Asoghik Taronetsi, *Universal History* [Tiezerakan patmut'yun], Yerevan, YSU Publishing House, 2000. (In Armenian).
12. Yeghiazaryan A., *The process of forming the kingdom of Bagratunis of Georgia* [Vrats' Bagratunineri t'agavorut'yan dzevavorman gortsënt'atsë], Yerevan, YSU Publishing House, 2018. (In Armenian).

ՀՏԴ 93.94

**ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՏԱՅՔՈՒՄ
XI Դ. ԿԵՍԵՐԻՆ**

Լիանա Նազարյան

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հայաստան
Lian_nazaryan@mail.ru

Ամփոփում. Բյուզանդական կայսրությունը 1001թ. տիրեց Տայքին և այն դարձրեց ռազմավարչական միավոր կամ բանակաթեմ՝ Իբերիա անվամբ: Տայքը Բյուզանդիայի համար կարևոր հենակետ էր Արևելքում կայսրության դիրքերի ամրապնդման ճանապարհին: Բացի այդ, XI դ. այնտեղ բավականին արմատացած էր քաղկեդոնադավան բնակչություն: Կայսրությունն անհրաժեշտության դեպքում կարող էր հենվել Տայքի այդ բնակչության ու ազնվականության վրա: Բյուզանդիայի գլխավոր նպատակն Անիի Բագրատունյաց թագավորության գրավումն էր: Իսկ Տայքը՝ աշխարհագրական դիրքով, նպաստավոր էր դեպի Շիրակ ու Անի շարժվելու համար: Այն, կարծես, Անիի Բագրատունյաց թագավորության «թիկունքում» էր, ուստի կայսրությունը Տայքից կարող էր հարվածել Շիրակին:

Տայքի գրավումից հետո, բյուզանդական կայսրերը կատարել էին կարևոր մի քանի քայլեր. նախ՝ տարհանվել էր տեղի ազնվականությունը (ամենայն հավանականությամբ հայ առաքելական եկեղեցու հետևորդ): Տայքում նշանակվել էին բյուզանդական կառավարիչներ, որոնց մեջ կային քաղկեդոնիկ հայեր: 1045 թ. Անիի գրավումից և Շիրակի թագավորության անկումից հետո Իբերիա բանակաթեմը միացավ «Արմենիա» բանակաթեմին և կոչվեց՝ «Արմենիայի և Իբերիայի» բանակաթեմ, որի կենտրոնը դարձավ Անին: Այնտեղ ևս կառավարում էին կայսրությանը ենթակա, երբեմն հայ, կառավարիչներ: Այդ կառավարիչները կոչվում էին կատապան կամ նահանգապետ: Տայքում նշանակվում էին նաև դատավորներ, որոնք իրավասու էին տվյալ բանակաթեմի տարածքում դատ ու

դատավարություններ կատարել: Բյուզանդիան նվաճված Տայքում և այլ տարածքներում հատկապես XI դ. կեսերին վարում էր նաև տնտեսական ու ռազմական ծանր քաղաքականություն:

Բանալի բառեր՝ *Տայք, Բյուզանդական կայսրություն, բանակաթեմ, Իբերիա, կառավարիչ, կառուպան, դատավոր, քաղկեդոնադավան, «Արմենիայի և Իբերիայի» բնակաթեմ:*

THE MILITARY-POLITICAL SITUATION IN TAYK IN THE MID-11TH CENTURY

Liana Nazaryan

Institute of History NAS RA, Armenia

Lian_nazaryan@mail.ru

Summary: In 1001, in accordance with the testament of the kouropalates David, the governor of Tayk, the Byzantine Empire assumed control of the region, incorporating it as a military-administrative province, or themata, designated as Iberia, with Ughtik (modern Oltu) as its centre. Consequently, Tayk became a crucial strategic position for the Byzantines as they sought to extend their influence in the East. Moreover, the region was of considerable importance due to the significant Chalcedonian Christian population, which had become well-established in the area by the 11th century. This population, in conjunction with the local nobility, constituted a dependable foundation from which the empire could call upon support if required in pursuit of its ambitions. The primary objective of the Byzantine Empire was the conquest of the Bagratid Kingdom of Ani. Due to its strategic location, Tayk served as an ideal base from which to advance into Shirak and Ani, thereby placing the empire in a position to strike directly at Shirak from the "rear" of the Bagratid kingdom. Consequently, Emperor Basil II (976–1025) promptly and resolutely took action following the acquisition of Tayk. One of his initial actions was to evacuate a significant portion of the local nobility, who were likely adherents

of the Armenian Apostolic Church. Subsequently, Byzantine governors, including some of Armenian origin but Chalcedonian in faith, were appointed to oversee the district.

Subsequent to the fall of Ani and the Bagratid Kingdom of Shirak in 1045, the Iberian themata was incorporated into the Armenia themata, thereby forming the themata of Armenia and Iberia with Ani designated as its capital. This novel administrative entity was overseen by a class of rulers designated as katepanoi or governors, who frequently included individuals of Armenian descent. Furthermore, Byzantine-appointed judges were installed in Tayk, with the authority to conduct legal proceedings within the jurisdiction of the themata. In addition to administrative changes, the Byzantine Empire pursued a rigorous economic and military policy in Tayk and other conquered territories, particularly intensifying these efforts in the mid-11th century.

Key words: *Tayk, Byzantine Empire, themata, Iberia, ruler, katapan, judge, Chalcedonian, “themata of Armenia and Iberia”.*

Նախաբան. Տայքի կառավարիչ Դավիթ կյուրապաղասի թողած կտակի համաձայն՝ Բյուզանդական կայսրությունը 1001 թ. տիրեց երկրամասը և այն դարձրեց բյուզանդական ռազմավարչական միավոր կամ բանակաթեմ՝ Իբերիա անվամբ, որի կենտրոնը Ուղթիքն էր (Օլթին)¹: Մինչև XI դ. 20-ական թթ. կայսրությունը հիմնականում զբաղված էր Արևմուտքում՝ բուլղարների դեմ պատերազմներով, կարծես դեռ ամբողջովին ուշադրությունը չէր կենտրոնացրել Արևելքի տարածքների ամրապնդման վրա: Մակայն իրադրությունը կտրուկ փոխվեց նույն դարի 20-ական թթ.: Նախ՝ ավարտվեց բուլղարների դեմ կռիվները, և հաղթանակած կայսր Վասիլ II-ը (976-1025 թթ.) կրկին շարժվեց Արևելք: Բացի այդ, 1021 թ. Վասպուրականը, դարձյալ կտակի համաձայն, անցավ

¹ *Sk'u Stepanenko B., Михаил Катафлор, императорский куратор Манцикерта и “Внутренней Иверии”, „Античная древность и средние века”, Екатеринбург, 1998 (26), էջ 186: Ըստ Ն. Ադունցի՝ Իբերիա միավորն ընդգրկել է «Բասանը, Կարինը, Դերջանն ու Տայքը» (տե՛ս Ադունց Ն., Երկեր, հ. Ե, Եր., 2012, էջ 479):*

կայսրությանը¹, իսկ Վրաց թագավորությունը, որը սկզբում որոշ տարածքներ կարողացել էր ստանալ Կյուրապատի տիրույթներից², այժմ առավել ակտիվ էր Տայքի գրավման համար պայքարում: Կայսրությունը պատերազմ սկսեց Վրաց թագավոր Գեորգի I-ի (1014-1027 թթ.) դեմ՝ հետ ստանալու Դավիթ կյուրապատի տիրույթներն ամբողջությամբ: Բյուզանդիայի արևելյան քաղաքականության համար մեկ այլ նպաստավոր պահ և ստեղծվեց: Հայտնի է, որ 1020 թ. Բագրատունյաց Հայոց թագավոր Գագիկ I-ի (990-1020 թթ.) մահից հետո նրա երկու որդիները՝ Հովհաննես-Սմբատն ու Աշոտը, պայքարում էին Անիի Բագրատունյաց թագավորության գահի համար³: Երկրում ներքին երկպառակություններ էին տիրում, ինչը հարմար պահ էր՝ կայսրության դիրքերի ամրապնդման և Անիի Բագրատունյաց թագավորության գրավման համար: Իսկ ի՞նչ դեր ունեւր այդ ամենում Տայքը:

Կառավարման կարգը

Ինչպես վերը նշվեց, Տայքում ձևավորվել էր բյուզանդական ռազմավարչական միավոր՝ Իբերիա բանակաթեմը: Վերջինի նշանակությունն առավել մեծացավ հենց XI դ. 20-ական թթ. սկսած: Տայքը Բյուզանդիայի համար կարևոր հենակետ էր Արևելքում կայսրության դիրքերի ամրապնդման ճանապարհին: Երկրամասը կարևոր էր նաև նրանով, որ XI դ. այնտեղ բավականին արմատացած էր քաղկեդոնադավան բնակչությունը: Կայսրությունն իր ձեռնարկումներում, անհրաժեշտության դեպքում, կարող էր հենվել Տայքի նշյալ բնակչության ու ազնվականության վրա: Բացի այդ, Բյուզանդիայի գլխավոր նպատակն Անիի Բագրատունյաց թագավորության գրավումն էր: Իսկ Տայքը՝ աշխարհագրական դիրքով, նպաստավոր էր դեպի Շիրակ ու Անի տարածվելու համար:

¹ Վասպուրականի տեր Սենեքերիմ Արծրունին 1021 թ. կոտկել էր իր տիրույթների կայսրությանը, փոխարենը ստացել Սեբաստիա քաղաքն ու շրջակայքը (մանրամասն տե՛ս Հարությունյան Բ., Արծրունյաց իշխանական ընտանիքը Հայոց պատմության մեջ, Եր., 2016, էջ 209-228):

² Տե՛ս *Картели Цховреба, История Грузии, Тбилиси, 2008, с. 228-229.*

³ Հայոց պատմություն, հտ. երկրորդ, գիրք երկրորդ, Եր., 2014, էջ 158-160:

Այն Անիի Բագրատունյաց թագավորության «թիկունքում» էր կարծես, ուստի կայսրությունը Տայքից կարող էր հարվածել Շիրակին:

Այս ամենով հանդերձ՝ Վասիլ II-ը Տայքի գրավումից հետո, կատարել էր կարևոր մի քանի քայլեր. նախ՝ տեղի ազնվականությանը տարհանել էր երկրամասից, ինչի մասին վկայում է Ատողիկը. «Իսկ թագաւորն Վասիլ չու արարեալ գնաց ի քաղաքն Ուխթեաց, և զամենայն բերդս և զամրոցս Տայոց նուանեաց ընդ ձեռամբ իւրով, զհաւատարիմս կարգեալ ի նոսա, և զմնացեալ ազատսն Տայոց առեալ տարաւ ընդ ինքեան՝ բնակեցուցանել յաշխարհին Յունաց [Բյուզանդական կայսրություն-Լ.Ն.]»¹: Բացառված չէ, որ տարհանվել է հիմնականում հայ առաքելական եկեղեցու հետևորդ ազնվականությունը, թեև, ինչպես վկայում են տեղի կառավարիչ նշանակված Եվստաթիոս Բոյիլասի կտակի (1059 թ.) տեղեկությունները, միևնույն է, այդ տարածքներում իրենց գոյությունն էին պահպանում հայ առաքելականները²:

Բյուզանդական կայսր Վասիլ II-ը և նրա հետևորդները Տայքում նշանակում են կառավարիչներ, որոնց մեջ կային նաև հայեր, որոնք քաղկեդոնադավան էին: Նրանց անունները մեզ են հասել ինչպես պատմիչների տեղեկություններից, այնպես էլ հայտնաբերված կնիքների վրա պահպանված մակագրություններից և արձանագրություններից: Այդ կառավարիչներն էին՝ 1. Ռոմանոս Դալասենոսը, ով Կարինի «Վրացական» կոչվող դարպասներին թողած վիմագիր արձանագրությունում իրեն անվանում է «Իբերիայի կատապան»³, 2. Նիկիտաս Պիսիդացին, որի մասին հիշատակում են Արիստակես Լաստիվերոսին և Հովհաննես

¹ Մտեփանոսի Տարօնեցոյ Ատողկան, Պատմություն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885 (այսուհետ՝ Ատողիկ), էջ 278:

² Տե՛ս Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.) որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր, Բարթիկյան Հ., Բանբեր Մատենադարանի, N 5, Երևան, 1960, էջ 393-430:

³ Տե՛ս Սարգիսեան Ն., Տեղագրությունք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Ի տպարանի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1864, էջ 74: Ն. Ադոնցը կարծում է, որ Ռոմանոս Դալասենոսը Իբերիայի կատապան է եղել 1023-1026 թթ., սակայն Հ. Բարթիկյանը համաձայն չէ այդ տեսակետին (տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 479-480, հմնտ.՝ Бартикан Р., О феме Иверия, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1974, N 12, էջ 69):

Սկիլիցեսը¹, 3. Թեոփիլակոսու Դավասենոս, որի մասին տեղեկանում ենք Էրմիտաժի բյուզանդական արճճէ կնիքների հավաքածուից², 4. Իսահակ Կոմնենոս՝ Իբերիայի պատրիկ և կատապան³, 5. Միքայել Իասիտեսը⁴, որը հետագայում դարձավ «Արմենիայի և Իբերիայի» բանակաթեմի կատապան: Արիստակես Լաստիվերոցին վերջինիս անվանում է Ասիտ. «իսկ իշխան ոմն Ասիտ անուն, որ յառաջ կալեալ էր գտերութիւնն արևելից, և զնա առաքէ թագաւորն [կայսր Կոստանդին Մոնոմախ (1042-1055 թթ.)-Լ.Ն.] տեղակալ քաղաքին Անույ»⁵:

Իբերիա բանակաթեմի կառավարման կարգը փոխվեց 1045 թ. Անիի գրավումից և Շիրակի Բագրատունյաց թագավորության անկումից հետո: Իբերա բանակաթեմը միացավ գրաված տարածքներին և կոչվեց՝ «Արմենիայի (Հայաստանի) և Իբերիայի բանակաթեմ», որի կենտրոնը դարձավ Անին⁶: Պատահական չէր Անիի Բագրատունյաց թագավորության տիրույթներին հենց Իբերիա (Տայքի) բանակաթեմի միացումը: Այս փաստը վկայում է վերջինի կարևոր դերն ու նշանակությունը Բյուզանդական կայսրության համար, ինչպես վերը նշվեց:

Նորաստեղծ բանակաթեմում ևս կառավարում էին կայսրությանը ենթակա կառավարիչներ, որոնք երբեմն հայկական ծագում ունեին, սակայն քաղկեդոնադավան էին:

«Արմենիայի (Հայաստանի) և Իբերիայի» բանակաթեմի կառավարիչներն են. 1. Միքայել Իասիտեսը (Ասիտ) (1045-1046 թթ.)⁷, 2. Կատա-

¹ Տե՛ս Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցիոյ, աշխատ.՝ Կ. Յուզրաշյանի, Եր., 1963 (այսուհետ՝ Արիստակես Լաստիվերցի), էջ 41, Հովհաննես Սկիլիցես, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Եր., 1979 (այսուհետ՝ Հովհաննես Սկիլիցես), էջ 96:

² Տե՛ս Шандоровская В., Неизвестный правитель византийской фемы Иверия, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1976, N 9, էջ 79-81, 84-86.

³ Տե՛ս Шандоровская В., Исаак Комнин-правитель Иверии, «ՊԲՀ», Եր., 1983, թիվ 4, էջ 110-117.

⁴ Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 121, 147:

⁵ Արիստակես Լաստիվերոցի, էջ 63:

⁶ Տե՛ս Бартикян Р., О феме Иверия, с. 75.

⁷ Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 149:

կայուն Կեկավմենուր¹, 3. Լևոն Թոռնիկը², 4. Ահարոն Բուլդարը³, 5. Հովհաննես Մոնաստիրիոտեսը⁴, 6. Բագարատ Վիկլացին և 7. Գրիգոր Բակուրյանը⁵: Ընդ որում՝ այդ կառավարիչներն աղբյուրներում հիշվում են բավականին բարձր դիրք ունեցողներ՝ բյուզանդական այլ վարչական տարածքների կառավարիչների համեմատ: Օրինակ՝ Արիստակես Լաստիվերտցին անդրադառնալով «Արմենիայի և Իբերիայի» բանակաթեմի կառավարչին, վկայում է. «իշխանին, որ նստեր յԱնի և ուներ զպատիվ մագիստրոսութեան»⁶: Այսինքն՝ այդ բանակաթեմի կառավարիչները նման բարձր պատիվ կամ տիտղոս էին կրում: Թեև հիմնականում կառավարիչները կոչվում էին կատապան կամ նահանգապետ:

Դատական և տնտեսական կարգը

Բացի կատապաններից, XI դ. կեսերին կային նաև այլ պաշտոնյաներ: Դրանք բյուզանդական դատավորներն էին, որոնց իրավասության մեջ էին մտնում տվյալ բանակաթեմի տարածքում դատավարությունները: Ինչպես վկայում է Արիստակես Լաստիվերցին, Վասիլ II կայսրը. «կացուցանե ի վերայ նոցա գործակալս և դատաւորս և վերակացուս»⁷: Դատավորները շատ ընդարձակ իրավունքներ ունեին, բացի դատականից, նաև ֆինանսական ու քաղաքական հարցերով էին զբաղվում: Արիստակես Լաստիվերցին տեղեկություններ է հաղորդում 1057թ.

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ *Տե՛ս Շանդրովսկայա Վ., Неизвестные печати Аарона, магистра и дуки Иверии и Великой Армении и проедра и дуки, Сообщения Государственного Эрмитажа, СПб., 1973, т. 37, с. 60-64.*

⁴ Անիում հայտնաբերվել է 1059 թ. մի հունարեն արձանագրություն, որում նշված էր «Արմենիայի և Իբերիայի» կատապան Հովհաննես Մոնաստիրիոտեսի մասին (տե՛ս Бенешевич В., Три анийские надписи XI в. Из эпохи византийского владычества, С.Петербург, 1921, с. 19):

⁵ Բագարատ Վիկլացին և Գրիգոր Բակուրյանը հիշվում են Մատթեոս Ուտիպեցու երկում. «իսկ անօրէն իշխանքն Հոռոմոց՝ զորս կացուցեալ էր թագաւորն [Կոստանդին X Դուկաս (1059-1067 թթ.)-Լ.Ն.] պահապանս տանն Հայոց, Բագարատ հայրն Սմբատս և Գրիգոր Բակուրյանին որդին» (Մատթեոս Ուտիպեցի, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Եր., 1991, էջ 160):

⁶ Արիստակես Լաստիվերտցի, էջ 106:

⁷ Նույն տեղում, էջ 24:

«Արմենիայի և Իբերիայի» բանակաթեմի մի դատավորի մասին, որը նույնիսկ վրաց արքունիքում ազդեցիկ Լիպարիտ գորավարի որդի Իվանեին ձերբակալելու հրաման էր տվել, և բռնագրավել նրա ունեցվածքը. «եւ առեալ ի նմանէ գանձ անչափ, և ձիս և ջորիս և զամենայն գորինչ և նա յարևելից ժողովեալ էր»¹: Այսինքն՝ այդ դատավորն ազդեցություն է ունեցել նույնիսկ հարևան տարածքների վրա:

Բյուզանդիան նվաճած Տայքում և այլ տարածքներում հատկապես XI դ. երկրորդ կեսին վարում է նաև տնտեսական ծանր քաղաքականություն: Բյուզանդացի հեղինակ Կեկավմենոսը վկայում է, որ Կոստանդին Մոնոմախի կայսրն Իբերիա և Միջագետք ուղարկեց իր պաշտոնյա Սերվիլիասին՝ տեղում գույքի հաշվառում կատարելու և հարկեր նշանակելու համար, պատմիչի նկարագրելով «այնպիսի հարկեր, որ այդ մարդիկ իրենց օրում չէին տեսել: Հարկերի ծանրությունը պատճառ դարձան, որ այդ մարդիկ տնով տեղով անցնեն պարսից (սելջուկ-թուրքերի) թագավորի կողմը»²: Հովհաննես Սկիլիցեսը ևս վկայում է, որ Կոստանդին Մոնոմախը «բազմաթիվ այլ ստոր ու անօրեն հարկապահանջներ հորինեց, որոնց մասին պատմելն անգամ ամոթաբեր է»³: Բյուզանդիան բացի մարդահարկից, հարկ էր գանձում նաև Հայաստանի տարբեր քաղաքների առևտրականներից ու արհեստավորներից: Այդ մասին վկայություններ են պահպանվել Անիի Մայր տաճարի պատերին փորագրված արձանագրություններում: Դրանցից մեկը թողել է «Արմենիայի և Իբերիայի» բանակաթեմի կատապան Ահարոն Բուլղարը՝ շուրջ 1056 թ., իսկ մյուսը՝ Բագարատ Վիկացին 1060 թ.⁴:

Ռազմական կարգը

Կարևոր էր նաև Տայքում և շրջակա հայկական տարածքներում Բյուզանդիայի վարած ռազմական քաղաքականությունը: Ինչպես վկա-

¹ Նույն տեղում, էջ 106: Բյուզանդական պաշտոնյաների ու տիտղոսների մասին առավել մանրամասն ներկայացնում է Հ. Բարթիլյանը (տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ L-LII):

² Кекавмен, „Советы и рассказы“, Подготовка текста, введение, перевод с греческого и комментарий Г. Литаврина, СПб., 2003, с. 168-171.

³ Հովհաննես Սկիլիցես, էջ 180:

⁴ Տե՛ս Նույն տեղում, էջ LIV-LV:

յում է Հովհաննես Սկիլիցեսը, Կոստանդին Մոնոմախի հրամանով «Լևոն Սերվլիասի միջոցով լուծարքի ենթարկվեց շուրջ հիսուն հազարի հասնող իբերական գորքը, և զինվորների փոխարեն այդ վայրերից բազում հարկեր էր հավաքում»¹: Այսինքն, շուտով լուծարվեցին շուրջ 50 հազարի հասնող հայկական զինված ուժերը, քանի որ խոսքը, հավանաբար, ոչ միայն իբերական կամ Տայքի, այլ «Արմենիայի ու Իբերիայի» բանակաթեմի մասին է: Դա մեծ հարված էր ինչպես «Արմենիայի և Իբերիայի» բանակաթեմի, այնպես էլ Բյուզանդական կայսրության արևելյան սահմանների պաշտպանությանը, քանի որ հայկական զինուժի փոխարեն տեղերում հաստատվում էին բյուզանդական կայազորներ: Մա պատճառներից մեկը դարձավ, որ Բյուզանդիան չկարողացավ դիմակայել սելջուկներին, քանզի տեղի հայությունն այլևս ի գորու չէր դիմադրել, իսկ կայսերական կայազորներն առանձնապես շահագրգռված չէին տարածքների պաշտպանության համար: Այդ տեսակետին կարելի է հանդիպել նաև Հովհաննես Սկիլիցեսի ոչ ուղղակի տեղեկություններից: Բյուզանդացի հեղինակը, Կոստանդին Մոնոմախի ձեռնարկումներից դժգոհելով, նշում է հետևյալը. «Բայց մի բան պետք է ասել, որ այս կայսրից սկսած, նրա շվայտության ու պոռոտախոսության պատճառով, հռոմեացիների գործերը սկսեցին վատանալ և այդ օրից ...կատարյալ անգորության հասան»²: Պատահական չէր, որ ի վերջո սելջուկ-թյուրքերը հաջողությամբ գրավեցին Հայաստանի մեծ մասը, իսկ 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում Բյուզանդիան, պարտություն կրելով, ամբողջովին հրաժարվեց հայկական տարածքներից: «Արմենիայի և Իբերիայի» բանակաթեմն անցավ սելջուկյան պետությանը: Այսպիսով, Տայքն ընկավ սելջուկների տիրապետության տակ:

Եզրահանգում. Բյուզանդիան, տիրելով Տայքին, XI դ. ստեղծեց վարչական միավոր՝ բանակաթեմ, որի կառավարումը վստահվեց այն կառավարիչներին, որոնք հավատարիմ էին կայսրությանը: Նրանց մեջ կային նաև քաղկեդոնադավան հայեր, իսկ հայ առաքելական եկեղեցու

¹ Նույն տեղում, էջ 180:

² Նույն տեղում:

հետևորդ ազնվականները հեռացվեցին երկրից: Տայքը XI դ. կեսերին կարևոր հենակետ էր Բյուզանդիայի համար Անիի կամ Շիրակի Բագրատունյաց թագավորության նվաճման ճանապարհին, ուստի պատահական չէր, որ 1045 թ. Անիի գրավումից և Հայոց թագավորության անկումից հետո ստեղծվեց նոր վարչական միավոր՝ «Արմենիայի (Հայաստանի) և Իբերիայի» բանակաթեմը: Վերջինի կառավարիչներից առաջինը՝ Միքայել Իսախտեը (Ասիտ), նախ Իբերիայի կառավարիչն էր, ապա նշանակվեց միացյալ բանակաթեմի կատապան: Տայքի քաղկեդոնադավան բնակչությունը ևս նպաստավոր էր Հայաստանում կայսրության դիրքերի ամրապնդման գործում: Հետևաբար Շիրակի Բագրատունյաց թագավորությանը միացվեց հենց Տայքի կամ Իբերիայի բանակաթեմը:

Տայքում XI դ. կեսերին, հատկապես «Արմենիայի ու Իբերիայի» բանակաթեմի կազմավորումից հետո, կատարվեցին մի շարք փոփոխություններ տնտեսության, ռազմական, դատական ոլորտներում: Այդ ամենը հանգեցրեց Հայաստանի, ինչպես նաև Բյուզանդական կայսրության արևելյան սահմանների թուլացմանն ու սելջուկ-թյուրքերի նվաճումներին:

References

1. Adonts N. *Yerker* [Yerker]. Vol. E, YSU publ., Yerevan, 2012. (in Armenian).
2. *Armenian history* [Hayoc patmutyun]. Vol. Second, book two, "Zangak" publ., Yerevan, 2014. (in Armenian).
3. Bartikyan R. *About the theme of Iveria* [O feme Iveria]. "Herald of Social sciences", 1974, No. 12, pp. 68-79. (in Russian).
4. Bartikyan H. *The testament of Eustatios Boilas (1059) as an important source of the history of Armenia and Georgia*, [Evsstateos Boyilasi ktaky (1059 t.) vorpes Hayastani ev Vrastani patmutyan karevor skzbnaxbyur]. Banber Matenadaran, N 5, 1960, pp. 393-430. (in Armenian).
5. Beneshevich V. *Three Ani inscriptions of the 11th century. From the era of Byzantine rule* [Tri anickie nadpisi XI v., Iz epoxy vizantiskogo vladichestva]. St. Petersburg, 1921. (in Russian).

6. Harutyunyan B. *Artsrunyats princely family in Armenian history* [Arcrunyac ishxnakan yntaniqy Hayoc patmutyan meg]. "Meknark" publ., Yerevan, 2016. (in Armenian).
7. *History of Aristakis Lastivertzi* [Patmutyun Aristakesi Lastivertcvo]. Work. K. Yuzbashyan, Yerevan, 1963. (in Armenian).
8. Hovhannes Skilitzes. Foreign sources about Armenia and Armenians, 10, Byzantine sources, C, translation from the original, preface and notes by Hrach Bartikyan, Yerevan, 1979. (in Armenian).
9. *Kartlis Tskhovreba, Creations of Georgia* [Kartlis Cxovreba, Istoria Gruzii]. Tbilisi, published by "Artanuzhdi", 2008. (in Russian).
10. *Kekaumenos "Advice and Stories"* [Kekavmenos "Sovet I rasskazi"]. Preparation of the text, introduction, translation from Greek and commentary by G. Litavrin. St. Petersburg, published by "Aletheia", 2003. (in Russian).
11. *Matteos Urhayetsi Chronology* [Matteos Urhayecu Jamanakagrutyun]. Translation and annotations by Hrach Bartikyan. Yerevan, Yerevan University Press, 1991. (in Armenian).
12. Sargisian N. *Topographies in Little and Great Armenia* [Texagrutyunq I Poqr ev I Mec Hays]. Venice, Saint Lazarus Printing House, 1864. (in Armenian).
13. Stepanos Taronetsvoi *Asoghkan Space History* [Asoxik Patmutyun Tiezerakan]. S. Petersburg, 1885. (in Armenian).
14. Stepanenko V. *Mikhail Kataflor, imperial curator of Manzikert and "Inner Iberia"* [Mixail Kataflor, imperatorski curator Mancikerta I "Vnutrennei Iverii"]. "Ancient Antiquity and the Middle Ages", Ekaterinburg, 1998 (26), pp. 176-192. (in Russian).
15. Shandrovsckaya B. *Isaac Komnin-ruler of Iveria* [Isaak Komnin-pravitel Iverii]. Yerevan, "PBUH", 1983, No. 4, pp. 110-117. (in Russian).
16. Shandrovsckaya B. *Unknown ruler of the Byzantine Empire, Iveria* [Neizvestni pravitel vizantiskoy femi Iveria]. "Herald of Social sciences", Yerevan, 1976, N 9, pp. 79-86. (in Russian).
17. Shandrovsckaya V. *Unknown seals of Aaron, magister and doux of Iberia and Great Armenia and proedra and doux* [Neizvestnie pečhati Aarona, magstra I duki Iverii I Belikoy Armenii I proedra I duka]. Communications of the State Hermitage, St. Petersburg, 1973, v. 37, pp. 60-64. (in Russian).

ՀԳՏ 73.02, 726. 5

**ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՅՔԻ ԱՐՄԵԱՅՓՈՐ ԵՎ ՈՔԱՂԵ
ԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ
ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՉՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ¹**

Աշոտ Հայկազուն Գրիգորյան

ԿԳՄՄՆ, ՃՇՀԱՀ, Հայաստան,
ashothaykazun@gmail.com

Դավիթ Նահատակյան

ԿԳՄՄՆ, ՃՇՀԱՀ, ՃՏՊԺ ամբիոն, ԳԱԱ ԾՀՀԿ, Հայաստան
nahatakyan@gmail.com

Անի Գրիգորյան

ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Հայաստան
ahaykazun@gmail.com

Ամփոփում. Մեծ Հայքի Տայք նահանգը պատմական Հայաստանի կարևոր արեալներից մեկն է: Այստեղից հետևում է, որ Տայքի կենսամիջավայրի և մասնավորապես նրա գավառների, ավանդական բնակելի տների և համալիրների ճարտարապետական առանձնահատկությունների ուսումնասիրությունը հարկավոր է կատարել հարակից տարածաշրջանների նմանատիպ կառույցների հետ զուգահեռաբար: Սակայն, համեմատական վերլուծություններ կատարելուց առաջ ցանկալի է նախ ուսումնասիրել տվյալ շրջանին վերաբերվող խնդրո առարկան:

Մեծ Հայքի Տայք նահանգում պահպանվել են հայկական բնակելի ճարտարապետության բազմաթիվ նմուշներ, որոնք հետազոտողների

¹Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

կողմից առանձնապես ուշադրության չեն արժանացել:¹ Մեր արշավախմբի կողմից, 2014 թ., 2016., 2022-2024 թթ. իրականացված դաշտային հետազոտական աշխատանքների² ընթացքում հավաքված նյութերի հիման վրա, հնարավորություն ընձեռվեց լրացնել այս բացը:

Աշխատությունում ներկայացվում են Արսյացփոր և Ոքաղե գավառների բնակելի տների տիպերն ըստ իրենց հատակագծային և ծավալատարածական, ինչպես նաև գեղագիտական առանձնահատկություններով: Կիրառվել են պատմահամեմատական, ինչպես նաև դաշտային աշխատանքների ժամանակ լուսանկարված, չափագրված նյութերը, սկզբնաղբյուրների համադրության և վերլուծության մեթոդները: Չուգահեռներ են տարվել Տայքի և պատմական Հայաստանի տարբեր շրջանների բնակելի տների ճարտարապետական հորինվածքային ձևերի հետ՝ ցույց տալով դրանց ընդհանրականությունը հայկական լեռնաշխարհի մյուս բնակավայրերի բնակելի տների ճարտարապետության հետ:

Բանալի բառեր` *Տայք, Արսյացփոր, Ոքաղե, բնակելի տուն, տիպաբանություն, գլխատուն, հատակագիծ, հարդարանք:*

ARCHITECTURAL FEATURES AND PARALLELS OF TRADITIONAL RESIDENTIAL BUILDINGS AND COMPLEXES OF ARSEATSPOR AND VOKAGE DISTRICTS IN HISTORICAL TAYK

Ashot Haykazun Grigiryan

MESCS NUACA, Armenia,
ashothaykazun@gmail.com

¹ Այս հարցին որոշակիորեն անդրադարձ կա նշված աշխատությունում Ալուայով Ա., Նսահատսկյան Դ., Հակոբյան Ս., Հայրապետյան Ա., Տայք. պատմաճարտարապետական ուսումնասիրություն, մաս Ա (Ազդրդացփոր և Ծակք): Գյումրի, 2023:

² 2022-2024 դաշտային հետազոտական աշխատանքներին աջակցել է «Երկիր և Աշակուղծ համազգային կազմակերպությունը»:

Davit Nahatkyan

Shirak Center of Armenological Studies NAS RA, MESCS NUACA, Armenia
nahatkyan@gmail.com

Ani Grigoryan

Shirak Center of Armenological Studies NAS RA, Armenia
ahaykazun@gmail.com

Abstract: The Tayk province of Greater Armenia constitutes a substantial region of historical Armenia. It thus follows that an investigation into the habitat of the province of Tayk, and in particular the architectural characteristics of its districts, traditional residential buildings and complexes, should be conducted in conjunction with a similar examination of analogous structures in neighbouring regions. Nevertheless, prior to undertaking a comparative analysis, it would be prudent to first undertake a detailed examination of the subject matter pertaining to this region.

A significant number of examples of Armenian residential architecture have been preserved in the Tayk province of Greater Armenia. However, these have not been the subject of much research. The materials gathered during the field research conducted by our expedition in 2014, 2016, 2022-2024 provided a valuable opportunity to address this gap in the existing literature.

This article presents an analysis of the residential buildings in the Arsyatspor and Vokaghe districts, examining their architectural characteristics in terms of both plan and spatial arrangement, as well as aesthetic features. The study employed a combination of historical, comparative, and photographic methods, along with fieldwork, to analyse the materials collected. These included the application of measurement techniques, the use of comparative analysis, and the examination of primary sources. The comparative analysis revealed similarities between the architectural compositional forms of residential buildings in Tayk and various provinces of historical Armenia, which demonstrated their commonality with the architecture of residential buildings in other settlements of the Armenian Highlands.

Keywords: *Taik, Arsyatspor, Vokaghe, residential building, Glhatun, typology, plan, decoration.*

Նախաբան. Հետաքրքիր դիտարկում է այն հանգամանքը, որ Մեծ Հայքի Տայք նահանգի Արսյացփոր և Ոքաղե գավառների գրեթե բոլոր բնակավայրերի տեղանունները պահպանել են հայերեն անվանումները, որոնք ցայսօր կիրառություն ունեն տեղացիների կողմից: Գավառներում առկա են տարաբնույթ պատմամշակութային և ճարտարապետական հուշարձաններ, բերդեր և ամրոցներ, կամուրջներ, աղբյուրներ, ինչպես նաև բնակելի տներ և համալիրներ: 2022-2024 թվականների դաշտային հետազոտական աշխատանքների ժամանակ կատարվեցին ուսումնասիրություններ ըստ գավառների և գավառներում գտնվող բնակավայրերի: Տայքի տարբեր գավառներում բնակելի ճարտարապետության պահպանվածության մակարդակը տարբեր է: Բնակավայրեր կան, որտեղ հնից ոչինչ չի մնացել՝ օրինակ Օլորը, և ընդհակառակը, այնպիսիներ, որտեղ հին բնակավայրաշինության հիմնական համակարգերը պահպանվել են՝ օրինակ Նեագոմ:¹

Արսյացփոր գավառ: Արսյացփոր գավառի *Խուսկ*² գյուղի կառուցապատումը ինչքան էլ որ փոխվել է վերջին տարիներին, այնուամենայնիվ պահպանել է բնակավայրի քաղաքաշինական նախնական հենքը՝ լանջն ի վեր բնական հորիզոնի գծերի պահպանումով փողոցային ցանցը, ինչպես նաև գետահունային ճարտարապետությանը բնորոշ հայկական լեռնաշխարհի այլ բնակավայրերում կիրառված մոտեցման առանձնահատկությունները:

Խոտորջուրը բազմազյուղ և բազմաթաղ գյուղախումբ է՝ կառուցված ութ, իրարից տարբեր հեռավորությունների վրա, հիմնական գյուղերից (Գեղուտ-Ցուցուլա, Խանդաձոր, Կաղմխուտ, Կրման, Ճիճապաղ,

¹ Ակոպով Ա., Նահատակյան Դ., Հակոբյան Ս., Հայրապետյան Ա., Տայք. պատմաճարտարապետական ուսումնասիրություն, մաս Ա (Ազորդացփոր և Ճակք): Գյումրի, 2023, էջ 109-114, 154:

² Ակոպով Ա., Տայք. Վարչաժողովրդավարական պատկեր XVI-XIX դարի I երեսնամյակ, ՀՀ ԳԱԱ Պատմության Բնասխտուտ, Եր., 2013, էջ 82-83, 140:

Միջին թաղ, Մունենց, Վահան):¹ Խոտորչրին բնորոշ են քարե ամուր, մեկ և ավել հարկանի տների առկայությունը, որոնցից շատերի վրա պահպանվել են հայատառ արձանագրություններ՝ հիմնականում տան տերերի անվանումով, քարի վրա փորագրված՝ հաճախ միայն անվան գլխատառերը, ինչպես նաև կառուցման տարեթվերը: Մի շարք տների պատերին պահպանվել են վարպետի նշաններ կամ այլ գեղարվեստական ձևավորման գծագիր պատկերներ: Այս բնակավայրին բնորոշ են քարի մշակման մի քանի մոտեցումներ, տների հորինվածքային և կառուցողական մի շարք առանձնահատկություններ, շարվածքի բծախնդիր և բարձրորակ կատարումներ, դռների և պատուհանների կամարների կառուցման ընթացքում սրբատաշ քարերի օգտագործման օրինակներ, ինչպես նաև՝ վերին հարկերը որպես ամառային օգտագործման համար նախատեսված կիսաբաց տարածքների կառուցումներ: Շենքերը տեղադրված են թեք լանջերի վրա, որտեղ առաջին հարկը կիսագետնափոր է՝ մխրճված ռելիեֆի մեջ, ինչպես ավանդաբար շատ գլխատների կառուցման դեպքերում էր արվում:² Տներից շատերն ունեցել են և դեռ ունեն պահպանված կամ հետագայում վերակառուցված, ավելացված փայտյա պատշգամբներ: Մի շարք գյուղերի (Խանդաձոր, Միջին թաղ) տներից շատերի պատերի շարվածքը ձևով և հարդարանքով հար և նման է Մյունյաց աշխարհի, Արցախի տների պատերի հորինվածքներին: *Ճիճնապաղ* թաղում պահպանվել է հայկական գերեզմանատունը՝ կամարակապ և հայատառ արձանագրությամբ մուտքով:

Գավառի *Կարմիրիկ կամ Կարմիրք* գյուղում պահպանվել են գետնահարկը ռելիեֆի մեջ ընկղմված քարե և երկրորդ հարկը փայտից կառուցված բնակելի տների տիպեր: *Կիսկիմ* գյուղի կառուցապատումը նման է Կարմիրք գյուղի կառուցապատմանը:

Ոքաղե գավառ. Ոքաղե գավառի *Այգեկ* գյուղում պահպանվել են մի շարք գլխատներ, որոնք իրենց ճարտարապետատիպաբանական և

¹ Հ. Յարոյթյան, Վ. Հուսունեան, Հ. Մատթեոս Վ. Հանեան, Յուշամատեան Խոտորչուրի, *Վիեննա*, 1964, էջ 554:

² Նահատակյան Դ., Ակոպով Ա., Գրիգորյան Ա., Ասիակի վանական համալիրը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», 1(26), Գյումրի, 2023, էջ 165-176:

կերպարային նկարագրով պատկանում են հայկական լեռնաշխարհում լայն տարածում գտած ավանդական գլխատների տիպերին: Ուսումնասիրված տների հարկայնությունը և ծավալատարածական հորինվածքները, դրանց քաղաքաշինական տեղակայումը բնական միջավայրում, շինանյութի և շինտեխնիկայի, գեղարվեստական հարդարանքի տարրերի փաստերն ասվածի լավագույն ապացույցներն են:

Գավառի *Ազենկ գյուղում* պահպանվել է նաև բնակավայրի պայմանական կենտրոնում ավանդաբար կառուցված աղբյուրը: Հատկանշական է նաև այն փաստը, որ նկատվում է գլխատուն տիպի տան վերանման օրինակը՝ երկհարկ, քարաշեն բնակելի կառույցի: *Ասրնեսում* նույն մոտեցումն է նկատվում, բայց հատկապես կարևոր է, որ պահպանված են լանջն ի վեր կառուցապատման օրինակները, ինչը նույնպես բնութագրական է պատմական Հայաստանի այլ շրջանների գյուղական կառուցապատման համար: *Մասրուրում* մեկ հարկանի քարաշեն բնակելի տների ճարտարապետական հորինվածքներում շեշտակի երևում են դրանց երկրորդ հարկում ավելի «թեթև» (փայտից) ամառային օգտագործման համար նախատեսված տարածքների կառուցման օրինակները, ինչպես նաև գեղարվեստական հարդարանքում՝ զարդանախշերի կիրառումը: *Նորշենում* նկատելի են միաբջիջ գլխատան տարբերակից բնակելի համալիրի անցման օրինակները, ինչպես նաև՝ անվանդական հազարաշեն ծածկի պահպանված լավագույն օրինակները (մաքրատաշ տախտակներով երեսպատված հազարաշեն ծածկի տեսակ, բուխարի, գլխատան համալիրում վերին (բարձր) տարածքի առկայություն, ավանդական խոյակներ և այլն): Չնայած այն բանին, որ այս բնակավայրի պահպանված գլխատների մեծ մասը հետագա բնակիչների կողմից ձևափոխվել է, այնուամենայնիվ, դրանցում պահպանված են հայկական ավանդական հազարաշեն ծածկով կառուցված տներին բնորոշ լուծումներ: Օրինակ, Ջավախքի Կումբորդո գյուղում կարելի է տեսնել գլխատներ, որոնց հազարաշեն ծածկերը նույն ոճային և կառուցողական տեսքերն ունեն, ինչ որ Մասրուր, Նորշեն, Չարնես կամ Աղջրիկ բնակավայրերում ենք տեսնում: Նույնիսկ խոյակների, գերանների երևացող մասերի հարդարանքը, բուխարիների ոճերն ու տարրերն են իրար նման: Ան-

շուշտ նույնը կարելի է ասել պատերի շարվածքի ձևերի և քաղաքաշինական մոտեցումների և լուծումների վերաբերյալ: *Չարնես կամ Աղջրիկ* բնակավայրում գրեթե նույն պատկերն է: Գյուղի կառուցապատման տրամաբանությունը՝ գետի հունին զուգահեռ, լանջն ի վեր պահպանված փողոցների և կառույցների համախումբն է (հիմնականում գլխատներով կառուցված): Դրանք շարված են անտաշ քարերով, սակայն, ինչպես հատուկ է ուսումնասիրված գավառների բոլոր բնակավայրերի շինարարական ձեռքբերումներին, այստեղ էլ կառույցների անկյունային քարերի շարվածքի չափերը մեծ են, սրբատաշ, ընտրովի և իրականացված բարձր վարպետությամբ: Այստեղ նկատելի է նաև երկու հարկանի քարե բնակելի տների կառուցման օրինակ, ինչը նույնպես բնորոշ է ուսումնասիրված գավառների բնակելի ճարտարապետությանը: *Սուրբօհան* գյուղի բնակելի կառուցապատումը կրկնում է գավառի մյուս գյուղերի արդեն ծանոթ մոտեցումները: Սակայն, այստեղ պահպանվել է մեկ մեծ, մի քանի երդիկներ ունեցող կառույց, որն իր հորինվածքով հիշեցնում է և փաստում միաբջիջից դեպի բազմաբջիջ տեսակի անցման տրամաբանությամբ իրականացված կառույց, ինչն իր հերթին հուշում է եռասրահ կառույցի հորինվածքային նախատիպով այլ կառույցներ: Այսինքն, չորս սյուների վրա հենված մեկ բջիջը՝ կրկնվելով ըստ կառույցի հատակագծի, երկայնական ուղղությամբ վեր է աճում եռասրահ հորինվածքի, որտեղ թե՛ գլխատան (հազարաշեն ծածկով), և թե՛ եռասրահ հորինվածքի առկայությունն ակնհայտ է:¹

Եզրահանգում. Այսպիսով՝ պատմական Հայաստանի Մեծ Հայքի Տայք նահանգի Արսյացփոր և Ոքաղե գավառների բնակելի տների և համալիրների հետազոտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Տայքի ավանդական բնակելի տների և համալիրների ճարտարապետությունը զարգացել է հիմնականում հայկական լեռնաշխարհի մյուս տարածաշրջանների նման: Համեմատական վերլուծությունները ցույց են տալիս զարգացման հիմնական երեք փուլերը.

¹ Գրիգորյան Ա., *Խորհրդանշանային մտածողությունը հայ ճարտարապետությունում*, Եր., 2005, էջ 42-44, 106:

- Միահարկ՝ քարե կամ փայտե որմերով և փայտե սյունահեծանային ծածկով հազարաշեն կամ հարթ ձեղունքով տներ: Օրինակ, Ռքաղե գավառի՝ Սուրբօհան, Այգեկ, Ապրնես և այլն:
- Երկհարկ՝ փայտե կոնստրուկցիաներով (կլոր գերաններ կամ չորսուներ) երկրորդ հարկի ավելացմամբ (հանախ պատշգամբով): Օրինակ, Ագորդացփոր գավառի՝ Խախու, Խարս, Ծիխիկ, Օշկիձոր և այլն:
- Բազմահարկ: Վերը նշված զարգացման տրամաբանական շարունակությամբ, ինչպես նաև հաջորդիվ, կառուցվել են արդեն երեք և չորս հարկանի (նաև ձեղնահարկով) նոր տիպի տներ: Օրինակ, Արսյացփոր գավառի Խոտորջրի թաղամասերում՝ Ճիճապաղ, Սունենց, Գեղուտ, Ցուցուլա, Կրման և այլն:

Հետազոտվող գավառների բնակելի տներն ու համալիրներն իրենց հատակագծային, ծավալատարածական, քաղաքաշինական և գեղարվեստական լուծումներով նման են պատմական Հայաստանի այլ աշխարհների, գավառների և բնակավայրերի (Էրզրում, Մուշ, Սասուն, Ջավախք, Վան և այլն) բնակելի տների հորինվածքներին:

References

1. Akopov A., Nahatakyan D., Hakobyan S., Hayrapetyan A., *Tayk, Historical and Architectural research, part 1 (Azordatspor and Chakq)*, SCAS NAS RA publ., Gyumri, 2023, 200 p. (in Armenian, Russian, English)
2. Akopov A., Tayk: Historical and demographic picture of the 1st thirtieth anniversary of the XVI-XIX century [*Tayk, Varchajogovrtakan patkery XVI-XIX dari 1-in eresnamyakin*] Yerevan, IH NAS RA, publ. 2013, 213 p (in Armenian)
3. Grigoryan A., *Symbolism in Armenian Architecture* [Khorhrdانشanayin mtats'oghut'yun' hay chartarapetut'yunum]: Yerevan: "ALAS" publ., 2005. p.178, il.106 (in Armenian)
4. Haroutiun H. Husunian V., Matthew H. Hadjian V., *Memorial book of Khotorjur* [Yushamatean Khotorjuri], Vienna, «Printing house of Mkhitarayan Congregation»1964.(in Armenian).
5. Nahatakyan D., Akopov A., Grigoryan A., *The monastique complexe of Aspak*, [Aspak'i vanakan hamaliry'] // « Scientific works » of SCAS NAS RA, Gyumri, 2023, v. 1(26), pp. 165-176. (in Armenian)

Հավելված

Օրինակներ՝ հայկական ավանդական բնակելի ճարտարապետությունից



Նկ 1, 2: Արյացգիոր գավառ. Խոտորչի Կաղմխուտ, Ոքաղե գավառի Մուրբոհան:



Նկ 3, 4: Արյացգիոր գավառ. Խոտորչի Միջին թաղ, Ոքաղե գավառի Չարնես



Նկ. 5,6,7: Ոքաղե գավառի Մուրբոհան գյուղի գլխատների հագարաշեն ծածկերը:

ՀՏԴ 93.94, 726

**ԽՈՏՈՐՉՈՒՐԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՉ¹**

Արկադի Ակոպով

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Հայաստան,
arkadone1@gmail.com

Դավիթ Նահատական

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, ՃՇՀԱՀ,
Հայաստան,
davit.nahatakan@gmail.com

Արմեն Հայրապետյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Հայաստան,
armenani@mail.ru

Ամփոփում. Հոդվածը վերաբերում է պատմական Տայքի Խոտորչուրի գյուղախմբի պատմաճարտարապետական հուշարձաններին, նրանց տեղագրությանը և պահպանվածությանը: Խոտորչուրի տարածքը մինչև VIII դարը պատկանել է Մամիկոնյաններին, այնուհետև՝ Բագրատունիներին, իսկ XIII-XVIդդ. ընդգրկված է եղել Սամցխեի աթաբեկության կազմի մեջ: XVII դարից խոտորչուրցիներն ընդունում են կաթոլիկություն:

Խոտորչուրի գյուղախումբը (այժմ՝ Sirakonaklar) բաղկացած էր ինը հիմնական գյուղերից (թաղերից)՝ Ճինապաղ, Կրման, Կիսակ, Միջինթաղ, Խանդաձոր, Սունինց, Կաղմիսուտ, Վահնա, Քեղուտ-Ցուցուլա և երկու փոքր թաղամասերից՝ Արեգի և Մասրուտ: Գյուղախմբին էին պատկանում նաև 33 բարեշեն ամառանոցները և 10 ձմեռանոցները:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ՝ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Ցայսօր պահպանվում են գյուղախմբի բոլոր գյուղերը, որոնց ներկայիս բնակիչները քաջատեղյակ են բնակավայրերի ոչ միայն հին հայկական անվանումներին, այլև առօրյայում կիրառում են դրանք: Չնայած որ գանձագողերն անխնա ոչնչացնում են հայկական ժառանգությունը, այսուհանդերձ այսօր էլ այս կամ այն չափով պահպանվում են մի շարք հուշարձաններ:

Բանալի բառեր` *Տայք, Ճորոխ, Խոտորջուր, թաղամաս, գյուղ, եկեղեցի, բնակչություն:*

ON THE LOCATION AND CURRENT CONDITION OF THE HISTORICAL AND ARCHITECTURAL MONUMENTS OF KHOTORJUR

Arkadi Akopov

Shirak Center of Armenological Studies NAS RA, Armenia
arkadone1@gmail.com

David Nahatakyan

Shirak Center of Armenological Studies NAS RA, NUACA, Armenia,
davit.nahatakan@gmail.com

Armen Hayrapetyan

Shirak Center of Armenological Studies NAS RA, Armenia,
armenani@mail.ru

Abstract: The article deals with historical and architectural monuments of Khotorjur, their location and measures to ensure their preservation. The territory of Khotorjur was under the rule of the Mamikonyans until the 8th century, after which it came under the rule of Bagratuni. From the XIII to XVI centuries it was included in the principedom of Samtskhe. Since XVII century the inhabitants of Khotorjur accept Catholicism.

The territory of Khotorjur, which is now known as Sirakonaklar, consisted of nine separate villages or districts. These were the villages of

Chichapag, Krman, Kisak, Michintah, Khandadzor, Suninz, Kahmukhut, Vahna, Gehut-Tsutsula, and two small districts, Aregi and Masrut. In addition, Hotorjur had summer and 10 winter settlements. Nowadays, all the villages of Hotorjur have been preserved, and the present-day residents are not only familiar with the historical Armenian names of the settlements, but also use them in their daily lives. Despite the relentless destruction of Armenian heritage by treasure hunters, a significant number of monuments have been preserved to some extent.

Key words: *Tayk, Chorokh, Khotorjur, district, village, church, population.*

Նախաբան. Խոտորջուրի տարածքը մինչև VIII դարը պատկանել է Մամիկոնյաններին, այնուհետև՝ Բագրատունիներին, իսկ XIII-XVI դդ. ընդգրկված է եղել Սամցխեի աթաբեկության կազմի մեջ: Տեղական ավանդության համաձայն՝ մի քանի տուն հայեր (Կիսադիմեան, Մելիքեան, Բագարատեան) 1239 թ. Անիից գաղթել են Խոտորջուր: Այնուհետև XV-XVI դարերում նրանց են միացել Մուշից, Վանից, ինչպես նաև Համշենից եկած մի քանի ընտանիքներ: 1660 թ. Խոտորջուրի Թաթմանյան Տեր Ղազարոսի որդին՝ Տեր Հակոբը, մեկնում է Հռոմ, որտեղ ընդունում է կաթոլիկ դավանանքը, ապա «Եվրոպացի Յիսուսեան Առաքեալների» հետ գալով Խոտորջուր, բազմաթիվ «ազգայիններ կաթողիկե կը դարձընեն»¹: 1748 թ. Կ.Պոլսի կաթոլիկ առաջնորդը Վատիկանին ուղղված իր զեկույցի մեջ հայտնում է, որ Խոտորջուրի բոլոր գյուղերում կան կաթոլիկ հայեր՝ մեկ կամ երկու հայ քահանաներով²:

Ղ. Ինճիճյանն այսպես է նկարագրում Խոտորջուրը. «Յրտուի օդոյ սրա ի լեռնային վայրս, գրեթե նման է գաւառին Էրզրոմայ. իսկ ի ձորավայրս առաւել ջերմ է քան գնորայն: Երկիրն լեռնային և ապառաժուտ, ունի և ձոր բազում և լերինս հողայինս, յորս բազում աղբերակունք գտանին քաղցր և պատուական ջուրց. այլ և խոտաւետ արօտս անաս-

¹ Հուլյունեան Հ. Յարութիւն Վ., Հանեան Հ. Մատթէոս Վ., Յուշամատեան Խոտորջուրի (այսուհետ՝ Յուշամատեան), Վիեննա, 1964, Էջ, էջ 165:

² Յուշամատեան, էջ 166:

նոց. ի տեղիս ունի և անտառ զանազան ծառոց: Բաց ի Հայոց օտար ազգ ոչ գտանի ի Խոտորջուր...»¹:

Խոտորջուրի գյուղախումբը (այժմ՝ Sirakonaklar) բաղկացած էր ինը հիմնական գյուղերից (թաղերից)՝ Ճիճնապաղ, Կրման, Կիսակ, Միջինթաղ, Խանդաձոր, Սունինց, Կաղմխուտ, Վահնա, Քեղուտ-Ցուցուլա և երկու փոքր թաղամասերից՝ Արեգի և Մասրուտ: Գյուղախմբին էին պատկանում նաև 33 բարեշեն ամառանոցները և 10 ձմեռանոցները²:

Երբ Օսմանյան կայսրությունը ձեռնամուխ եղավ իսլամացնելու Ճորոխի հովիտը, Խոտորջուրը կարողացավ դիմադրել, որով երկար տարիներ նորադարձ մահմեդականների համար դարձավ մի տեսակ փարոս, հույս և ապավեն: Տևական ժամանակ կեսկեսները հոգևոր կապը չէին խզում քրիստոնեությունից և գաղտնի գալիս էին Խոտորջուր՝ ծեսեր կատարելու: Ինչպես խոտորջուրցին էր ասում. «Նրանց մի ոտքը ժամի մեջ էր, մյուսը՝ ջամին (մզկիթ) էր մտել»³:

Խոտորջրի վարչական և հոգևոր ղեկավարները միշտ եղել են ընտրովի և անապայման խոտորջուրցի: Ճիճնապաղ գյուղի Փենդա թաղամասի մոտ մի հատուկ տեղ հատկացված էր ժողովների համար: Այդ տեղը կոչվում էր Ժողովայտ: Ընդհանուր ժողովը համարվում էր Խոտորջուրի համայնքի գերագույն մարմինը⁴: Ընդհանուր ժողովում քննության էին առնվում բուն Խոտորջուրի 9 գյուղերին վերաբերող համաժողովրդական, առավել կարևոր հարցերը: Խոտորջուրի կառավարչական գործառույթներն իրականացնելու համար Ժողովայտն ընտրում էր մի հոգևորականի, որին անվանում էին Մեծավոր, իսկ թուրքերը՝ Մուրախաս: Մեծավորն անապայման պիտի լիներ հոգևորական, քանի որ ոչ մահմեդական ազգային փոքրամասնությունները համարվում էին կրոնական համայնքներ, իսկ կրոնական առաջնորդը՝ նրանց օրինական ներկայացուցիչը: Մեծավորի աշխարհիկ իշխանությունը սահմանափակվում էր միայն

¹ Տե՛ս Ինճիճեան Դ., Աշխարհագրություն յորից մասանց աշխարհի, մաս Ա, հ. Ա, Ասիա, Վենետիկ, 1806, էջ 133:

² Տե՛ս Գևորգյան Թ., Խոտորջուր // Բանբեր Երևանի համալսարանի, 1971, № 3, էջ 205:

³ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 24, թ. 4:

⁴ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 22, թ. 1-3:

Ժողովայնով, իսկ կրոնականեղեցական հարցերում՝ Կարնո հայ կաթոլիկների առաջնորդով:

Խոտորջուրի բնակչության թվի վերաբերյալ կան տարբեր վկայություններ: XIX դ. կեսերին գյուղախմբի բնակչության թվի վերաբերյալ Ղ. Ալիշանը հայտնում է, որ այնտեղ կային «400 տունք եւ 2000 կամ ասելի ոգիք»¹: Երեք տասնամյակ անց՝ 1878 թ. Գ. Սրվանձտյանը, որն անձամբ շրջել է գավառակում և վիճակագրական տեղեկություններ հավաքել, այլ տեղեկություններ է հաղորդում: Այսպես, ըստ Սրվանձտյանի, Խոտորջրում 1878 թ. ընդհանուր առմամբ կար 642 տուն՝ 5650 բնակչով, որից գյուղախմբի կենտրոն Ճիճապաղ գյուղն ուներ 95 տուն՝ 830 բնակչով, Կրմանը՝ 60 տուն 450 բնակչով, Զեղուտը՝ 75 տուն՝ 750 բնակչով, Խանդաձորը՝ 96 տուն՝ 800 բնակչով, Սունիցը՝ 82 տուն՝ 770 բնակչով, Կախմուխուտը՝ 80 տուն՝ 770 բնակչով, Վահնան՝ 30 տուն՝ 230 բնակչով, Կիսակը՝ 41 տուն՝ 350 բնակչով, Միջինթաղը՝ 63 տուն՝ 550 բնակչով, Արեգինը՝ 20 տուն՝ 150 բնակչով²: Մեր կարծիքով Խոտորջրի վերաբերյալ Ղ. Ալիշանի տվյալներից կասկածելի է հատկապես բնակչության թվի մասին տեղեկությունը: Դժվար է պատկերացնել, որ 30 տարիների ընթացքում գյուղախմբի բնակչության թիվն ավելանար մոտ 200 %-ով: Չնայած Խոտորջուրի Մեծավոր Տեր-Կարապետ I Չախալյանին հաջողվել էր մինչև 1840 թ. շոշափելի առավելության հասնել ավազակապետեր Կիսանչու, Կրնելի, Ղարադերելի, Օնբաշու նկատմամբ և 1840-1860-ական թթ. Խոտորջուրի բնակչության համար բարենպաստ պայմաններ ապահովել³:

Իրենց կենցաղով խոտորջուրցիները շատ ավելի բարձր էին կանգնած, քան նրանց շրջապատող գյուղերի բնակիչները, չնայած այն հանգամանքին, որ Խոտորջուրի հողը գյուղական հանգիստ կյանք վարելու համար հազիվ կբավարարեր 200 տուն բնակչության համար, ուստի գրե-

¹ Ալիշան Ղ., *Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1856, էջ 39*:

² Տե՛ս Կոստանդյան Է., *Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերի վերաբերյալ Գ. Սրվանձտյանի կազմած վիճակագրություններից // «Բանբեր Հայաստանի արխիվների», 1976, № 2, էջ 85*:

³ ՀԱԱ, ֆ. 1407, ց. 2, գ. 17, թ. 2:

թե բոլոր խոտորջուրցի տղամարդիկ, պատանեկությունից սկսած մինչև ծերություն, կյանքի մեծագույն մասն անցկացնում էին պանդխտության մեջ¹:

Խոտորջուրը նշանակալի դեր է խաղացել նաև հարևան մահմեդական գյուղերի քաղաքական և մշակութային կյանքում: Տեղին է հիշել, որ Կիսկիմի գավառի միակ թուրքական դպրոցը կառուցված էր խոտորջուրցիների ծախսերով: Կիսկիմի գավառի փաստացի կենտրոն Արսիս խմելու ջուր բերելու համար էլ տեղացիները դիմել էին Խոտորջուրի նյութական օգնությանը²:

ՃԻՃԱՊԱԳ

Խոտորջուրի առաջին գյուղը կամ թաղը Ճիճնապաղն է (այժմ Cucebag): Այն գտնվում է ծովի մակարդակից 1270-1300 մ բարձրության վրա: Ճիճնապաղի դիրքը մի կողմից նպաստավոր է, քանի որ առևտրական ճանապարհներն անցնում են թաղով, մյուս կողմից՝ խոցելի է, քանի որ մշտապես ենթարկվում էր ավազակային հարձակումների:

Ճիճնապաղը շրջապատված է Երանառղ և Ազիունի բարձր լեռներով: Գյուղով է հոսում Խոտորջուրի գլխավոր՝ Մեծ գետը: Գյուղի տարածքում նրան են միանում նրա վտակները, որոնք գալիս են Խանդաձորից և Կրմանից: Ճիճնապաղը կազմված էր 9 մեծ և փոքր թաղամասերից՝ Կզենց, Խոշիկանց, Մուրթատանց, Մելիքանց, Ահեղինց, Խիզիկանց, Ֆենդա, Պալճա, Գայինցեց: 1915 թ. գյուղն ուներ 141 տուն և 987 բնակիչ³: Այսօր գյուղում կանգուն են այդ տներից 18-ը:

Գյուղի Ահեղինց թաղամասում էր գտնվում գերեզմանատունը, որի մուտքի վերևի հատվածում պահպանվել է հայատառ արձանագրություն: Գերեզմանատան դիմաց էր գտնվում Ս.Փրկիչ մայր եկեղեցին, որը այսօր վեր է անված մզկիթի: Եկեղեցին ուներ 22,5 մ երկարություն, 15 մ լայնություն և 11 մ բարձրություն: Ս.Փրկիչը կառուցվել է 20-րդ դարի սկզբին: Եկեղեցու հյուսիսից և հարավից կառուցված են կցակառույցներ, որոնք համահունչ չեն եկեղեցու ընդհանուր հորինվածքին:

¹ Տեղագրություն Խոտորջուր, Բազմավեպ հանդիսարան, Վենետիկ, 1875, հ. 19, էջ 334:

² ՀԱԱ, ֆ. 1407, ց. 1, գ. 24, թ. 3:

³ Յուզանտեսն, էջ 17-21:

Ուշագրավ բացահայտումներ կատարվեցին 2024 թ.՝ դեպի Խոտորջուր մեր հերթական այցելության ժամանակ: Ինչպես Կրման գյուղում մեզ պատմեց տեղացիներից մեկը (մոտ 65 տարեկան տղամարդ), ինքը մանուկ ժամանակ տեսել և ծանոթ է եղել Ճինապաղում ապրող հայերի հետ, անգամ հայտնեց նրանց անունները՝ Մուկուչ, Սերոբ: Նրա պատմելով՝ հայերը մինչև 1960-ական թթ. վերջերը ապրել են Ճինապաղում և հեռացել, քանի որ «թուրքերը նեղում էին նրանց»: Խոտորջուրում մնացած վերջին հայերը, ըստ թուրք տղամարդու, հաստատվել են Ստամբուլում: Հայկական աղքյուրները լռում են հետեղեռնյան շրջանի Խոտորջուրում մնացած հայերի գոյության մասին առհասարակ: Մի բան է պարզ, որ տեղահանության ժամանակ մի խումբ հայեր թաքնվել են սարերում և որոշ ժամանակ մնալով այնտեղ, վերադարձել իրենց բնակության վայրը: Այս տեսակետը հիմնավորվում է նաև այն փաստով, որ Խոտորջուրի ներկայիս բնակիչները, որոնց պապերը Ռիզեյի շրջանից Խոտորջուր են եկել 1915 թ. հայերի տեղահանությունից հետո, քաջաձանոթ են Խոտորջուրի բոլոր գյուղերի և նրանց թաղամասերի հին հայկական անվանումներին, ինչպես նաև հայերի պաշտամունքի վայրերին: Մանրամասներ, որոնց մահմեդականները հազիվ թե կարողանային տիրապետել, եթե նրանց կողքին հայեր մնացած չլինեին:

ԿՐՄԱՆ

Խոտորջուրի Կրման (այժմ՝ Yumruca) գյուղը գտնվում է Ճինապաղից 1.3 կմ հյուսիս-արևելք: Այն գտնվում է ծովի մակարդակից միջինը 1400 մ բարձրության վրա: Չնայած իր հոյակապ դիրքին՝ գյուղում հեղձուցիչ շոգեր էին լինում՝ պատճառ զանազան հիվանդությունների: Կրմանը բաժանված էր 6 թաղերի՝ Խոշորանց, Խոճիկանց դռան, Տեմուրճանց դռան, Թոմասենց դռան, Մելիքանց դռան և Գասպարանց:

Խոշորանց թաղի ստորոտում կանգնած էր Ս.Հակոբ Մծբինեցի հնաշեն մայր եկեղեցին, որը կառուցվել էր 1676 թ.: 1785 թ. եկեղեցին վերանորոգվել է «Արգրումցի պարոն Առաքել աղայի» միջոցներով: Եկեղեցին ուներ մոտ 12 մ երկարություն, 9 մ լայնություն և 4 մ բարձրություն: Այսօր եկեղեցին օգտագործվում է իբրև տնտեսական նշանակության շինություն: Եկեղեցուց արևմուտք է գտնվում Կրմանի գերեզմանատու-

նր¹: Տեղացիները ցույց տվեցին նաև մի կիսավեր կառույց, որը, նրանց հավաստմամբ, եղել է գյուղի դպրոցը:

1915 թ. Կրմանն ուներ 90² տուն, գրեթե 630 բնակիչներով³: Այսօր այդ տներից կանգուն են 38-ը:

ԿԻՍԱԿ

Կիսակ գյուղը գտնվում էր Ճիճապաղից 0.5 կմ դեպի արևմուտք, ծովի մակարդակից 1350 մ բարձրության վրա: Կիսակում ընդունված էր համարել, որ «Գիւղն Գիսակայ գօրաւարին» որ անշուշտ ամառ ժամանակ հոս բնակած ըլլալու է»⁴: Կիսակում էր գտնվում Հարություն վարդապետ Թուրշյանի Մեծավորական տունը, որը հանդիսանում էր Խոտորջուրի առաջնորդարանը: Կիսակի Ս.Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցին կառուցվել էր 1770-1780-ական թթ. և ուներ 13 մ երկարություն, 11 մ լայնություն և 7 մ բարձրություն: 1896-1898 թթ. Հարություն վարդապետ Թուրշյանի ջանքերով և ժողովրդի հանգանակությամբ կառուցվում է սպիտակ որձաքարից ընդարձակ մի եկեղեցի, որը մեկ շարքի վրա 3 խորան ուներ: Եկեղեցուց ցած վարդապետի անխոնջ ջանքերով կառուցվում է երկհարկանի վարժարան⁵: Կիսակի ժողովրդապետ Հարություն վարդապետ Թուրշյանը Մոխուրկուտի, Կարմիրքի և Խոտորջուրի Մեծավորն էր Տեր Կարապետ Բ Չախալյանի պաշտոնանկությունից հետո՝ 1896-1915 թթ.:

1915 թ. Կիսակն ուներ 62 տուն՝ 434 բնակիչներով⁶: Այսօր գյուղում կանգուն է ընդամենը 5 շինություն:

ՄԻՋԻՆ ԹԱՂ

Միջին թաղը (այժմ՝ Taşbaşı) գտնվում է Կիսակից 1 կմ արևմուտք, ծովի մակարդակից 1450 մ բարձրության վրա: Գյուղը բաժանված էր 4 թաղամասերի՝ Ավետանց, Մելիքանց, Թողոշունք և Շարկանց: Ժամանա-

¹ Յուշանատեան, էջ 22-26:

² Խոտորջուրի Կրման գյուղի ներկայիս բնակիչները պնդում են, գյուղը «հայերի ժամանակ» 130 տուն ուներ;

³ Յուշանատեան, էջ 24:

⁴ Հանեան Հ. Մատթեոս Վ., Ծրարաջուրի բերդը// Հանդես ամսօրեայ, 1909, N1, էջ 27:

⁵ Յուշանատեան, էջ 28-29:

⁶ Յուշանատեան, էջ 31:

կին գյուղը կրում էր Թուրշենց դռներ և Վարի Խանդաձոր անվանումները, սակայն 1847 թ.-ից հիշատակվում է Միջին թաղ անունով¹: Միջին թաղի կենտրոնում վեր էր խոյանում 1864 թ. կառուցված Անաղարտ Հղության Մայր եկեղեցին, որն ուներ 18 մ երկարություն, 15 մ լայնություն և մոտ 10 մ բարձրություն: Եկեղեցուց ոչ հեռու երկհարկանի վարժարանն էր:

Միջին թաղի հարավարևմտյան մասում՝ Մեծ գետի Խանդաձոր վտակի վրա, կառուցված էր Խաժարանց կամուրջը, որով ճանապարհը տանում էր դեպի Խանդաձոր: 1915 թ. Միջին թաղն ուներ 90 տուն՝ 690 բնակիչներով²: Այսօր գյուղում կանգուն են ընդամենը 14 տներ, որոնք տարվա մեծ մասը դատարկ են:

ԽԱՆԴԱՁՈՐ

Խոտորջուրի Խանդաձոր (այժմ՝ Altındas) գյուղը գտնվում է Միջին թաղից 1 կմ արևմուտք, 1600-1650 մ բարձրության վրա: Գյուղի կլիմայական պայմաններն ամենաբարենպաստ էին, ուստի, դրանից ելնելով, այն ամենամեծն էր տարածքով և ամենաբազմամարդը: Բնակավայրը բաժանված էր 8 թաղամասերի՝ Խոշորանց, Իրիցանց, Ներքին Այլինց, Քիչմիչին, Վերին Այլինց, Կողոսուն, Փանոսուն և Կլախինց³: Ներքին Այլինց թաղամասն ուներ երկհարկանի վարժարան, ընդ որում՝ մի հարկը տղաների համար, մյուսը՝ աղջիկների: Պողոս Ոսկյանի նախաձեռնությամբ վարժարանի սենյակներից մեկը վեր էր ածվել ժողովրդական ընթերցասրահի, ուր գյուղի հասարակությանը ընթերցանության համար թերթեր և գրքեր էին տրամադրվում: Խանդաձորի օրինակով նմանատիպ ընթերցասրահներ են բացվում նաև Խոտորջուրի մյուս գյուղերում⁴: Թաղամասի տարածքում կային երկու եկեղեցիներ՝ եռախորան Այլինցու Մայր Աստվածածին և հնգախորան Ս.Երրորդություն:

¹ Յուշամատենան, էջ 34:

² Յուշամատենան, էջ 35:

³ Յուշամատենան, էջ 36:

⁴ Յուշամատենան, էջ 38-40:

Խանդածորը 1915 թ. ուներ 220 տուն՝ 1540 բնակչով¹: Այսօր գյուղում կանգուն են այդ տներից 31-ը:

ՍՈՒՆԻՆՑ

Սունինց գյուղը (այժմ՝ Yonca) գտնվում է Ճինապաղից մոտ 3 կմ հյուսիս՝ ծովի մակարդակից 1400-1430 մ բարձրության վրա: Սունինցն իր դիրքով կենտրոնական տեղ է զբաղեցնում Խոտորջուրում: Ավանդույթի համաձայն՝ իր անվանումը ստացել է Սյունյաց իշխանագուններից մեկի՝ այնտեղ հաստատվելու պատճառով: Սունինցը բաժանված էր 5 թաղամասերի՝ Խաչկա, Լատվինց, Մելիքանց, Քամարինց և Կողերու: Վերջինում էր գտնվում Սունինցի նոր եկեղեցին, որն ուներ 20 մ երկարություն, 13 մ լայնություն և 8 մ բարձրություն: Եկեղեցու մարմարյա բարավորին գրված էր. «Է տանար Յարութեան կենարարին 1876»: Քառախորան այս եկեղեցին, Խոտորջուրի մյուս եկեղեցիների նման, նստարաններ չուներ, այլ յուրաքանչյուր հավատացյալ իր հատուկ տեղն ուներ²: Եկեղեցուց հարավ Սունինցի երկհարկ վարժարանն էր: Եկեղեցու և վարժարանի հարևանությամբ էր գտնվում գյուղի գերեզմանատունը: Այսօր Սունինցի եկեղեցու միայն հիմքերն են պահպանվել, այնինչ վարժարանի հիմքերը նշմարելի չեն:

1915 թ. Սունինց ուներ 180 տուն 1260 բնակիչներով³: Այսօր Սունինցում կանգուն են այդ տներից 62-ը:

ԿԱՂՄԵՈՒՏ

Խոտորջուրի Կաղմխուտ գյուղը (այժմ՝ Incili) գտնվում է Սունենցից մոտ 3 կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակարդակից 1730-1750 մ բարձրության վրա: Գյուղն ունի շատ առողջարար կլիմա: Կաղմխուտի անունը ծագում է կաղամախի ծառերից, որոնք մեծամասնություն էին կազմում գյուղի թիկունքում գտնվող անտառի մեջ: Գյուղի հին՝ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու փոխարեն 1894 թ. կառուցվում է Ս.Պողոս-Պետրոս եկեղեցին: Եկեղեցին գտնվում էր գյուղի հարավային մասում, որին մոտ էր նաև գյուղի արական վարժարանը:

¹ Յուշանաստեան, էջ 43:

² Յուշանաստեան, էջ 47-50:

³ Յուշանաստեան, էջ 51:

1915 թ. գյուղն ուներ 107 տուն՝ 749 բնակիչներով¹: Խոտորջուրի մյուս գյուղերի համեմատությամբ, Կաղմխուտը բավականին լավ է պահպանված: Այսօր գյուղում կանգուն են հայերի կառուցած 46 տներ:

ՎԱՀՆԱ

Վահնա գյուղը (այժմ՝ Songurlu) գտնվում է Կաղմխուտ գյուղից 1 կմ հյուսիս՝ ծովի մակարդակից 1800 մ բարձրության վրա: Այս գյուղը, ըստ խոտորջուրցիների, ժամանակին եղել է Վահան Մամիկոնյանի ամառանոցը: Գյուղի մայր եկեղեցին նվիրված էր Ս.Հովհաննես Մկրտչին: Եկեղեցու երկարությունը 13 մ էր, լայնությունը՝ 7,5 մ, բարձրությունը՝ մոտ 7 մ: Եկեղեցուց ոչ հեռու էին գտնվում գյուղի վարժարանն ու գերեզմանոցը:

Վահնա գյուղը 1915 թ. ուներ 33 տուն՝ 231 բնակիչներով²: Այսօր գյուղում կանգուն են այդ տներից 14-ը:

ԳԵՂՈՒՏ-ՑՈՒՑՈՒԼԱ

Խոտորջուրի Գեղուտ գյուղը (այժմ՝ Cavuslar), որը գտնվում է ծովի մակարդակից 1800 մ բարձրության վրա, Վահնայից բաժանվում է կամրջով: Գեղուտից մոտ 150 մ հյուսիս՝ լեռնալանջին վրա Ցուցուլան էր (այժմ՝ Akbas): Քանի որ այս երկու բնակատեղիներն իրար կպած էին, շատ հաճախ նրանք իբրև մեկ բնակավայր էին ներկայացվում, որն ուներ թեթև, առողջարար և փոշուց սակավ օդ:

Գեղուտի արևմտյան մասում էին գտնվում գերեզմանատունը և մայր եկեղեցին՝ Ս.Աստվածածինը, որից, ցավոք, ոչինչ չի մնացել: Դրա փոխարեն գերազանց վիճակում մեզ է հասել գյուղի արական վարժարանը: Ցուցուլայից մոտ 500 մ հյուսիս պահպանվում են մեկ այլ եկեղեցու ավերակներ:

1915 թ. Գեղուտն ուներ 55 տուն՝ 385 բնակիչներով: Այսօր գյուղում կանգուն են այդ տներից 26-ը: Բավականին լավ է պահպանված Ցուցուլան: 1915թ. առկա 12 տներից (70 բնակիչներով), այսօր կանգուն են 11-ը:

¹ Յուշամատեան, էջ 56-58:

² Յուշամատեան, էջ 59:

Եզրահանգում. Եզրափակելով՝ Խոտորջուրի պատմանարտարապետական հուշարձանները ներկայացնում են կարևորագույն ժառանգություն՝ արտացոլելով տարածաշրջանի դարավոր պատմությունը: Չնայած հայկական ժառանգության իսպառ ոչնչացման հետ կապված սպառնալիքներին, Խոտորջուրի ներկայիս բնակիչները պահպանում են իրենց կապը նախկին շրջանի պատմության հետ՝ առօրյա կյանքում ակտիվորեն օգտագործելով բնակավայրերի հին հայկական անվանումները, ընդունելով հայերի բնիկությունն ու իրենց եկվոր լինելը: Խոտորջուրի հայկական ժառանգության մնացորդների փաստագրումը և հանրայնացումը կարևորագույն միջոց է դրանց հետագա իսպառ ոչնչացումը բացառելու և հետագա սերունդներին փոխանցելու գործում:

References

1. Hulunian H., Hadjian M. *Memorial book of Khotorjur* [Hushamatean Xotorjuri]. Vienna: Printing house of Mkhitarian Congregation. 1964. (in Armenian).
2. Hadjian M. *Tsrarajur fortress* [Tsrarajuri berdy]. Handes Amsorea. 1909. № 1, p. 24-27.
3. Inchijian G. *Geography of the Forth Part of the World* [Ashxarhagrowt'yun choric masanc ashxarhi]. Part 1, vol. A, Asia. Venice: Saint Lazarus. 1806. (in Armenian).
4. Gevorgyan T. *Khotorjur* [Xotorjur]. Bulletin of Yerevan University. 1971. № 3, p. 204-216.
5. National Archive of Armenia, f. 1407, i. 1, file 24.
6. National Archive of Armenia, f. 1407, i. 1, file 22.
7. Alishan G. *Topography of Greater Armenia* [Teghagir Hayoc Metsac]. Venice, 1856. (in Armenian).
8. Kostandyan E. *From the statistics compiled by G. Srvandztyan regarding the Armenian-inhabited places in Western Armenia* [Arevmtyan Hayastani hayabnak vayreri veraberyal G.Srvandztyani kazmats vichakagrut'yunnerits]. Bulletin of Armenian Archives. 1976. № 2, p. 62-94. (in Armenian).
9. National Archive of Armenia, f. 1407, i. 2, file 17.
10. *Topography of Khotorjur* [Teghagrutyun Xotorjro]. Bazmavep. Venice: 1875. (in Armenian).

ՀԳՏ 73.02, 93.94

**ԲՆԱԿԱՎԱՅՐԱՇԻՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐԸ ՏԱՅՔՈՒՄ¹**

Դավիթ Նահատական

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
ՃՇՀԱՀ, Հայաստան, davit.nahatakan@gmail.com

Արկադի Ակոպով

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Հայաստան,
arkadone1@gmail.com

Ամփոփում. Պատմական Տայք նահանգում, չնայած պատմական յուրահատուկ զարգացման փուլերի, պահպանվել են հետաքրքիր բնակավայրեր, որոնք զարգացել են իրենց ավանդական սկզբունքներով և մեր օրեր են հասել կարևոր սկզբունքներով, որոնք իրենց հերթին հայկական ճարտարապետության մեջ քիչ են ուսումնասիրված: 2022-2024 թթ. գիտական արշավախմբի կողմից իրականացրած դաշտային հետազոտական աշխատանքների² ընթացքում ուսումնասիրվել և փաստագրվել են Տայք նահանգի գավառների մի մասը, որտեղ պահպանվել են ավանդական բնակավայրաշինական (քաղաքաշինական) հիմնական սկզբունքները: Ելնելով բնական լանդշաֆտի հմուտ օգտագործման եղանակներից՝ մի շարք բնակավայրերում հնուց ի վեր պահպանվել են դարավանդաձև մշակովի հողատարածքները, բնակելի համալիրներն իրենց փողոցային համակարգերով, ինչպես նաև պաշտպանական և պաշտամունքային կառույցներով կամ համալիրներով: Այս տեսանկյունից ուշագրավ են հատկապես Բողիս գավառի Ասփակ, Ագորդացփոր գավառի Օշկիձոր, Ճակք գավառի Փանագկերտ, Ոքաղե գավառի Նիխաղ, Բողիս

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-2A292 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Դաշտային հետազոտական աշխատանքներին աջակցել է «Երկիր և Մշակույթ համագլխի կազմակերպությունը»:

գավառի Հովակ և այլ բնակավայրերը: Համեմատական վերլուծությունները Տայքյան բնակավայրերում ի հայտ են բերում որոշակի բնակավայրաշինական ձեռագիր, սակայն, հիմնական սկզբունքները սերում են ընդհանուր հայկական մշակութային ակունքներից:

Քանալի բառեր` *Տայք, բնակավայրաշինական համակարգ, գետ, դարավանդաձև գյուղատնտեսություն, բնակավայր և բնակելի տներ, պաշտամունքային կառույցներ, անրոցներ:*

THE MAIN PRINCIPLES OF BUILDING A HABITAT IN THE TAYK

David Nahatakyan

Shirak Center of Armenological Studies NAS RA, NUACA, Armenia,
davit.nahatakan@gmail.com

Arkadi Akopov

Shirak Center of Armenological Studies NAS RA, Armenia
arkadone1@gmail.com

Abstract. In the historical province of Tayk, despite the unique stages of historical development, a number of interesting settlements have been preserved. These settlements developed in accordance with their traditional principles and have reached the present day with important principles that have been little studied in Armenian architecture. During the field research conducted by the scientific expedition between 2022 and 2024, some districts of the Tayk province were studied and documented, with a particular focus on the preservation of the fundamental principles of urban planning. The methods of skilful use of the natural landscape, including the traditional cultivation of land plots, the construction of residential complexes with their associated street systems, as well as defensive and religious buildings or complexes, have been preserved in a number of settlements since ancient times. In this regard, the settlements of Aspect in Bogkha province, Oshkidzor in Azordatspor

province, Panazkert in Chagh province, Nighkhagh in Vokhaghe province, and Ovak in Bogkha province are particularly worthy of note. A comparative analysis of settlements in Tayk reveals a discernible architectural style, which nevertheless has its roots in the shared cultural heritage of the Armenian people.

Keywords: *Tayk, habitat construction system, river, terraced (daravand in arm.) agriculture, settlements and residential buildings, sacred buildings, castles.*

Նախաբան. Պատմական Մեծ Հայքի հյուսիսարևմտյան Տայք աշխարհը, որը հայ ժողովրդի կազմավորման և Հայոց պետականության կարևոր գոյատևածքներից մեկն է, հայագիտության կողմից դեռ լիարժեք ուսումնասիրված չէ: Պատմության բոլոր փուլերն անցած երկրամասում¹, սակայն, գրեթե անխաթար կերպով պահպանվել են բազմաթիվ հետաքրքիր համակարգային լուծումներ, որոնք առանցքային դեր են խաղում հայագիտության համար: Այդպիսի կարևորագույն պահպանվածներից է տարածաչափական, բնակավայրաշինական կամ քաղաքաշինական հիմնական համակարգը, որով տայեցիներն առաջնորդվել են բնակավայրերի կառուցման մեջ: Հայկական բնակավայրաշինական համակարգերի ուսումնասիրմանը մասամբ անդրադարձել են Վ. Հարությունյանը, Արմեն Չարյանը, Աշոտ Գրիգորյանը և այլոք, սակայն, խնդրո առարկան հիմնականում մնացել է բաց, քանի որ Հայաստանի Հանրապետությունում դրանք պահպանվել են ոչ լիարժեք, ինչպես նաև հետազոտողներն առիթ չեն ունեցել հետազոտել հայկական պատմական շրջանների ժառանգությունը: Մեր ոչ լիարժեք դաշտային հետազոտությունները ցույց են տալիս, որ խնդրո առարկա համակարգային լուծումներն անգամ պատմական Մեծ Հայքի այլ նահանգներում քիչ են պահպանվել: Այս առումով բացառիկ կարևորություն է ստանում սույն հետազոտությունը, որը թույլ կտա նորովի և համակարգային ձևով ուսումնա-

¹ Երկրամասում առկա են ժայռապատկերներ, մեգալիթյան հուշարձաններ, Վանր թագավորության շրջանից հիշատակություններ, նախաքրիստոնեության և վաղ քրիստոնեության շրջաններ, հարուստ միջնադար և այլն:

սիրելի հայկական բնակավայրերը: Բնակավայրաշինության որոշ հարցերին անդրադարձել ենք¹ առանձին աշխատություններում: Սույն աշխատությունում փորձ է արվում ներկայացնել Տայք նահանգի բնակավայրաշինական հիմնական սկզբունքները, որոնք անշուշտ, հետագա ավելի խորը հետազոտությունների կարիք ունեն:

Սկսած պալեոլիթյան շրջանից, հիմնական քաղաքակրթական ձևը, որով ստեղծվել ու զարգացել են հինավուրց բնակավայրերը՝ այսպես կոչված «Գետահունային» ձևն է,² որը տրամաբանորեն ամենաշատն է կիրառվել նաև Հայկական լեռնաշխարհում: Կախված գետի կամ վտակի չափերից, ինչպես նաև գետը եզերող ափամերձ բերրի հողերի մակերեսներից՝ թելադրվել են բնակավայրի չափերը և բնակչության քանակը:

Մեր կատարած վերլուծությունները կարելի է բաժանել հետևյալ հիմնական մասերի՝ *գետ, դարավանդաձև գյուղատնտեսություն, բնակավայր և բնակելի տներ, պաշտամունքային կառույցներ, ամրաշինական կառույցներ*:

Գետ: Գետերը և նրանց վտակները՝ հնուց ի վեր Տայքի սնուցող երակներն են եղել: Հիմնական գետերի հետ մեկտեղ՝ Ճորոխ, Օլթի (Ուղտիք), Թորթում, Քուր, Պարխար, Փանազկերտ և այլն, հայտնի են ոչ պակաս կարևոր վտակները՝ Օշկ, Օղիկ, Խտտորջուր և այլն:³ Բնակավայրաշինական տեսանկյունից հիմնական ուղղությունը և նրա մասշտաբները թելադրող կարևորագույն օղակն է հանդիսանում գետը կամ վտակը: Գետերի և վտակների կարևորությունը շեշտվում է նաև համանուն բնակավայրերի, պաշտամունքային և ամրաշինական կառույցների առկայությամբ: Ձևավորված ձորակների հենց գետահունային տարածքներով են իրականացվել միջբնակավայրային, միջգավառային, միջնահանգային և միջազգային ողջ հաղորդակցությունները, որոնց մնացորդ-

¹ Տես՝ Ակոբյով Ա., Նահատակյան Դ., Հակոբյան Ս., Հայրապետյան Ա., Տայք. պատմամարտաբանական ուսումնասիրություն, մաս Ա (Ազորդագիտող և Ճակք): Գյումրի, 2023:

² Գրիգորյան Ա., Խորհրդանշանային մտածողությունը հայ նարտաբանությունում, Եր., 2005, աղ. 35:

³ Ակոբյով Ա., Տայք. Վարչաժողովրդավարական պատկերը XVI-XIX դարի I երեսնամյակ, ՀՀ ԳԱԱ Պատմության Ինստիտուտ, Եր., 2013, էջ 18-20:

ները նույնպես պահպանվել են Տայքում: Գետերը սնուցող առվակներից են օգտվել նաև բնակավայրերը:

Դարավանդաձև գյուղատնտեսություն: Գետահունային մշակույթի մյուս կարևորագույն օղակը, որը պահպանվել է Տայքում, դա գետամերձ հողակտորների դարավանդաձև հարթակների իրականացմամբ կիրառությունն է: Առավել բերրի հողակտորները բնականաբար գետի մոտակա, համեմատաբար հարթ հատվածներն են, և ինչպես երևում է Բողխա գավառի Հովակ բնակավայրից, այդ հողակտորներն ընդարձակ ծավալներ են ունեցել: Բնակատեղիի հարստության և կարևորության մասին են փաստում պահպանված 3 ամրոցները, 3 եկեղեցիները (բանավոր աղբյուրները նշում են 5), ինչպես նաև ավանդական բնակելի շինությունների բազմահարկությունը: Նմանատիպ, սակայն, ավելի համեստ պատկերներ ենք տեսնում Ճակք գավառի Փանագկերտ գյուղում, որը հետագայում բաժանվել է վերին և ներքին հատվածների: Նմանատիպ է նաև Բողխա գավառի Ասփակ բնակավայրը, ուր ընդարձակ և կարևոր վանական համալիր է պահպանվել և այլն:¹ Չնայած իրենց ընդարձակ մշակովի հողատարածքներին՝ լայն գետահունային մակերեսներ ունեցող ոչ բոլոր բնակատեղիներն են լավ պահպանվել մեր օրերում, քանի որ դրանց անհրաժեշտ էր նաև պաշտպանել: Համեմատաբար ավելի վնասված բնակավայրաշինական համակարգով բնակատեղիներ հանդիպում ենք լայն ձորակների միջնահանգային և միջազգային ուղղիների վրա, որոնք պարբերաբար վնասվել են պատմության ընթացքում:

Գետամերձ մշակովի հողերից բացի ավելի վերին հատվածների թեք հողատարածքները՝ դարավանդաձև հարթակների ձևավորմամբ, նույնպես կիրառվել են գյուղատնտեսական նպատակներով: Հավանաբար խաղողի կամ այլ մշակովի թփերի և պտղատու ծառերի մշակության համար: Այսպիսի լուծումը համատարած է ոչ միայն Տայքում, այլ նաև ողջ Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում: Տայքում լա-

¹ Նահատակյան Դ., Ալկոյով Ա., Գրիգորյան Ա., Ասփակի վանական համալիրը, << ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», 1(26), Գյումրի, 2023, էջ 165-176:

վագույն պահպանված օրինակներից կարելի է նշել Ոքաղե գավառի Նիխաղ բնակավայրը: Բնակավայրի մի կողմում Ամրոցն է, որի հակառակ լանջի ոչ միայն թեք լանջերն են դարավանդաձև մշակված, այլ նաև ոչ շատ բարձր բլուրներն ամբողջությամբ: Ենթադրաբար ժամանակին խաղողի մշակությամբ են զբաղվել նախկին բնիկները: Այսօր դրանք այլևս չեն մշակվում, սակայն, բավականին լավ են պահպանվել դարավանդները:

Բնակավայր և բնակելի տներ: Տայքի բնակավայրերը հիմնականում հետևում են վերը նշված տարածաչափական բաղադրիչներին՝ ընդգրկելով լանդշաֆտն ու աշխարհագրական հատկանիշները: Տայքում պահպանված բնակավայրերում նկատվում են նմանատիպ զարգացումներ: Ավելի հին բնակատեղին սովորաբար տեղակայված է գետից վերև՝ թեք լանջի, գյուղատնտեսական նպատակների համար ոչ պիտանի հողատարածքի վրա, որտեղ էլ իրականացվել են դարավանդաձև սկզբունքով կառուցապատված ավանդական բնակելի համալիրները կամ տները: Բնակավայրերի հին հատվածները սովորաբար կառուցվել են ամրոցների բարձունքի լանջերի վրա: Հետագայում՝ հավանաբար 18-20-րդ դդ. սկզբին, այնուհետև ավելի շատ մեր օրերում, շարունակաբար կառուցապատումն իջնում է դեպի գետափնյա հատվածները՝ ավելի դյուրին դարձնելով կառուցապատումը: Սակայն, այդպիսով խլելով հավելյալ թանկարժեք հողատարածքներ գյուղատնտեսությունից: Այս վերջին երևույթը բացատրվում է նաև նրանով, որ հավանաբար Տայքի որոշ գավառների ուշ միջնադարում իսլամացման արդյունքում բնակավայրերն այլևս ինքնապաշտպանվելու կարիք չեն ունեցել: Հետաքրքիր է և ցավալի, որ մեր օրերում ներկայիս Հայաստանյան հին բնակավայրերն էլ են նմանօրինակ զարգացում ապրում: Բնակավայրաշինության նմանատիպ հին և նոր զարգացումները համատարած են Տայքում: Վառ օրինակներից են Բողխա գավառի Հովակ և Ասփակ, Ճակք գավառի Փանագլերտ, Արայացփոր գավառի Նիխաղ և մի շարք այլ բնակավայրերը:

Բնակավայրերի փողոցները ձևավորվել են ըստ բնական ռելիեֆի թելադրանքի: Առավել թեք տեղանքի վրա տեղակայված բնակավայրերն ունեն «օձաձև» բարձրացող փողոցային ցանց, որոնք բաժանավում են

ըստ իրենց նշանակության, առկա են նաև փակուղիներ: Կարևոր նշանակության ճանապարհներն ավելի լայն են, իսկ բնակելի տների կամ համալիրների ճարտարապետական հատկանիշները (երկհարկ կամ եռահարկ համալիրներ, համեմատաբար ավելի լավ շարվածքով, լայն երկփեղկ դարպասներ, պատուհաններ և այլն) մեզ հուշում են եկամտաբեր տների առկայության փաստը: Գլխավոր փողոցը կամ փողոցները հավաքվում են բնակավայրի մեկ կամ մի քանի կենտրոններում, որոնք ձևավորվում են կարևոր աղբյուրների և/կամ պաշտամունքային կառույցների շուրջ: Բնակավայրերը բաժանված են մասերի՝ թաղերի, որոնք կարող են ինչպես անմիջական հարևանությամբ լինել, այնպես էլ իրարից բավականին մեծ հեռավորության վրա: Թաղերն առանձնանում են իրենց կենտրոններով, հաճախ պաշտամունքային կառույցներով և այլն: Այդպիսին են օրինակ Արսյացփոր գավառի Կուղբաշեն գյուղի երկու թաղամասերը՝ երկրորդ վարի թաղում՝ նախկին կենտրոնում՝ դպրոցի վերածված եկեղեցին, Չորդվանքի «Մորխաչ» (հավանաբար Տիրամորխաչ) թաղամասն իր միանավ սրահավոր փոքր եկեղեցով, Արսյացփոր գավառի Խոտորշուրի գյուղերի թաղերն իրենց կենտրոններով, եկեղեցիներով, հասարակական կառույցներով և այլն:

Առանձին հետաքրքրություն է կազմում ավանդական բնակելի համալիրների կամ տների ճարտարապետությունը, որտեղ երևում են նախկին բնիկների ավանդական բնակարանաշինության ողջ հմայքը և արհեստների զարգացվածության բարձր մակարդակը:

Տայոց աշխարհի ավանդական բնակելի համալիրների ճարտարապետությունը զարգացել է հիմնականում Հայկական լեռնաշխարհի մյուս աշխարհների նման: Համեմատական վերլուծությունները ցույց են տալիս զարգացման հիմնական երեք փուլեր.

- Մեկհարկանի: Քարե կամ փայտե որմերով և փայտե սյունահեծանային համակարգով հազարաշեն երդիկով կամ հարթ փայտագերանային ծածկով: Այս տիպի լավագույն օրինակները պահպանվել են Ոքաղե գավառի Սուրբօհան, Այգեկ, Այրնես և այլ բնակավայրերում: Հաճախ քաղաքաշինորեն խիտ են կառուցված լինում: Դարավանդաձևության շնորհիվ դիմացի բնակարանի ծածկը հաճախ ծառայում է վերին

հարևանին որպես բակ: Այս տիպը հին ժամանակներից համատարած կերպով կառուցվել է ողջ Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում¹, որտեղ բնակվել կամ բնակվում է հայկական էթնոսը:

• Երկհարկանի: Երբ պահպանելով ստորին հարկի քարե կամ փայտե որմերով կառույցը՝ փայտե կոնստրուկցիաներով (կլոր գերաններ կամ չորսուներ) ավելացվում են երկրորդ հարկերը: Այս պարագայում գերաններն իրարից որոշակի հեռավորության վրա տեղադրվելով ծայրերը 1-1,5 մ առաջ դրվելով՝ ստացվում է նաև բաց պատշգամբի լուծումը, որը հատկապես լայն տարածում է գտնում 19-20-րդ դդ. սկզբների հայկական ճարտարապետության մեջ՝ հատկապես քաղաքային միջավայր ձևավորելիս: Օրինակ՝ Ագորդացփոր գավառի Խախու, Խարս, Ծիփկ, Օշկիձոր, Արսյացփորի Խոտորջուրի գյուղախմբերը և այլն:

• Բազմահարկ: Վերը նշված երկու փուլերի զարգացման տրամաբանական շարունակությամբ հաջորդում է վերին հարկերի ավելացումը: Այս զարգացումից հետո, հաջորդիվ, բնակելի կառույցներն ի սկզբանե կառուցվում են երեք և չորս հարկերով՝ չհաշված ձեղնահարկը: Լավագույն և բացառիկ օրինակներ են պահպանվել, օրինակ՝ Արսյացփոր գավառի Խոտորջուրի գուղերում՝ Ճինապաղ, Սունենց, Գեղուտ-Ցուցուլա, Կրման և այլն: Իմանատիպ լուծումներ հանիպում ենք օրինակ Տուրուբերան նահանգի, Սասունի Մկտենք գյուղի հայկական ավանդական բնակելի տներում և այլն: Այս լուծումը նույնպես հանդիպում է հիմնականում հայկական քաղաքների (Երևան, Գյումրի, Կարս, Արտահան, Շուշի, Իջևան և այլն) 19-րդ դարի վերջին քառորդից մինչև 20-րդ դարի առաջին քառորդի ավանդական և նախագծված բնակելի համալիրներում:

Բնակելի համալիրների զարգացման այս երեք փուլերի կառույցների ստեղծման և զարգացման փուլերը, ինչպես նաև չափազանց կարևոր միջանկյալ օրինակների առկայությունը հատուկ կերպով արժևորում է տայրյան ավանդական բնակելի համալիրները, որպեսզի ճշմար-

¹ Գրիգորյան Ա., *Խորհրդանշանային մտածողությունը հայ ճարտարապետությունում*, Երևան «Այաս» հրատ., 2005, էջ 42-44:

տացիորեն վերլուծենք այս չափազանց կարևոր հայկական բնակավայրաշինական բաղադրիչը՝ առանց օտար ազդեցություններ փնտրելու:

Պաշտամունքային կառույցներ: Տայք նահանգում պահպանված պաշտամունքային կառույցներն առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում հայկական միջնադարյան մշակույթում: Հարևան Գուգարք նահանգի հետ միասին ձևավորում է Չարգացած միջնադարի հայկական կարևորագույն ճարտարապետական դպրոցներից մեկը: Այս դպրոցն առանձնանում է իր հետաքրքիր առանձնահատկություններով¹ և գրավում է նաև նորանոր ու հետաքրքիր ճարտարապետական փնտրտուքներով:²

Տայքի պաշտամունքային կառույցները՝ ըստ իրենց բնակավայրաշինական տեղաբաշխման, կարելի է բաժանել երեք հիմնական տիպերի.

- Վանական համալիրներ: Տեղակայված են կամ բնակավայրերի մեջ կամ նրանց մոտակայքում: Ամենահայտնիներն են Բանակի տաճարը, Իշխանը, Օշկվանքը, Խախուվանքը, Չորդվանքը, Պարխարը, Տայոցքարը և այլն, ինչպես նաև քիչ հայտնի, սակայն կարևոր վանական համալիրներից՝ Վաչեձորը, Ասփակը և այլ վանքերը: Գլխավոր եկեղեցիները սովորաբար կառուցված են որոշակի բարձրության վրա, իսկ համալիրների մյուս կառույցները տարբեր քաղաքաշինական ցրվածություն ունեն բնակավայրի մեջ: Ինչպես օրինակ Խախու վանքը, որն ունի բնակավայրի տարբեր հատվածներում և զետի երկու ափերին տեղակայված 11 եկեղեցիներ՝ չհաշված օժանդակ շինությունները:

- Բնակավայրերում կառուցված մեկ կամ մի քանի եկեղեցիներ: Այս տիպի եկեղեցիները հիմնականում միանավ սրահավոր տիպին են պատկանում՝ կառուցված բնակավայրի համեմատաբար բարձրադիր վայրում կամ մոտակա բլրակի վրա: Իրենց ճարտարապետությամբ բա-

¹ Նահատակյան Դ., Տայքի և Գուգարքի IX-XI դդ. հայկական ճարտարապետական դպրոցի փոխազդեցությունների հարցը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնմեկերորդ նստաշրջանի նյութեր, Եր., 2017.- էջ 216-226:

² Նահատակյան Դ., Ժ-ԺԱ դարերում հայ-քաղվեղոնական ճարտարապետական որոշ փորձերի մասին, «Շիրակի պատմամշակութային ժառանգություն. հայագիտության արդի հիմնահարցեր» 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2019.- էջ 387-389:

վականին համեստ են և հաճախ տապանաբակեր են ունեցել, որոնց մեծ մասը ոչնչացվել է: Այդպիսիք են Ազորդացփոր գավառի Օշկիձորի եկեղեցին, որտեղ արձանագիր որմնանկարների հետքեր են պահպանվել, Ճակք գավառի Փանագկերտի եկեղեցին, որը մզկիթի է վերածվել, սակայն, որմերին հայատառ վիմագրեր են պահպանվել, Բողխա գավառի Հովակի գյուղամիջի եկեղեցին և այլն:

• Ամրոցների միջի կամ մոտակայքի եկեղեցիները: Տայքյան ամրոցների հետաքրքիր դրսևորումներից են նաև ամրոցի մեջ կամ մոտակայքում կառուցվող եկեղեցիները, որոնք հիմնականում չափերով փոքր միանավ սրահավոր տիպի եկեղեցիներ են: Հետաքրքիր է, որ ամրոցի միջի եկեղեցիները կառուցվում էին այն հատվածում, որտեղից պիտի արշավեր պոտենցիալ հակառակորդը: Այս երևույթը մենք պայմանականորեն կոչում ենք «Աստված առաջ» սկզբունք: Այդպիսի ամրոցներից են Տայքի վերոնշյալ գավառներից Օշկիձորը, Ընկուզեքը, Ասփակը և այլն:

Ամրաշինական կառույցներ: Տայք նահանգի այցեքարտ կարելի է համարել ամրաշինական համալիրները, որոնց պահպանվածության համեմատաբար բարվոք վիճակը մեզ թույլ է տալիս դասակարգել ըստ գավառային (Արսիս, Բերդագարակ և այլն) և տեղական նշանակության (Նիխաղ, Որջնիաղ, Վժանգետ և այլն), ինչպես նաև վերստեղծել ոչ միայն բնակավայրի, այլ նաև գավառի ընդհանուր ամրաշինական համակարգը: Ամրոցները փակում են գետահունային բոլոր առանցքային ռազմավարական կետերը, առանձին ձորակները և այլն, սակայն, ակնհայտ է ամրաշինական համակարգված տարածաչափական մոտեցումը:

Տայքի բնակավայրաշինության համակարգում անբաժանելի մաս է կազմում նաև ամրոցը: Հետաքրքիր և յուրահատուկ երևույթ է, որ նահանգի մեծ թվով բնակավայրեր ունեն իրենց ամրոցները: Ամրոցները սովորաբար տեղակայված են բնակավայրից դեպի վեր՝ կիրճից գրեթե կղզիացած ժայռազանգվածի կամ բլրակի վրա, սակայն, ոչ կիրճի վերնամասի գագաթներին: Ամրոցից տեսանելի է մոտակա բնակավայրը, գյուղամիջի եկեղեցին, մոտեցող ճանապարհները և այլն: Տայքյան ամրոցներից շատերը գրեթե անառիկ են և մեծ տպավորություն են թողնում

դիտորդի վրա, իսկ կառուցողների հանդեպ հարգանք ու վախ են ներշնչում: Կարելի է մոտենալ միայն շրջանցելով ամրոցը, սակայն, մուտքի հատվածն ամենապաշտպանված մասն է, որտեղ վեր են խոյանում բարձրաբերձ աշտարակներն ու պարիսպները: Ամրոցի ներսում, ինչպես նշվեց, սովորաբար առկա են համեստ չափերով միանավ սրահավոր եկեղեցին, տնտեսական հորերը և այլ կառույցներ: Ամրոցների ներքին հատակագիծն ամբողջությամբ ենթարկվում է բնական լանդշաֆտին: Կան ամրոցներ, որտեղ դեպի ջրի մոտեցման համար գաղտնուղիներ են իրականացրել, սակայն, կան նաև անյայսի ամրոցներ, որտեղ ամրացված պարիսպներն իջնում են մինչև ներքև, որի միջոցով հնարավորություն է ստեղծվում պաշարվածներին ջրի պաշարի համար ամրացված և պաշտպանված կետ ունենալ: Այդպիսի ամրոցներից են Ընկուզեքը, Փառնակը և այլն:

Ամրոցների առատությամբ և բնակավայրաշինական համակարգի հետ սերտորեն կիրառման շնորհիվ՝ Տայք նահանգն առանձնանում է հայկական լեռնաշխարհի մյուս շրջաններից: Այս «Տայքյան» ամրաշինական ձևը որոշակիորեն կիրառվել է նաև հարևան Գուգարք նահանգի արևմտյան և կենտրոնական գավառներում, օրինակ Ջավախք գավառի Փարվանա և Քուր գետերի հատման մոտ կառուցված Խերթվիս ամրոցը և այլն: Ամրաշինական այսպիսի լուծումների ակունքները կարելի է տեսնել Հայկական լեռնաշխարհի վաղ շրջանի ամրոցներում, սակայն, այս առումով Տայքյան ամրաշինական համակարգը, իր առատությամբ, պահպանվածությամբ, լանդշաֆտի և բնակավայրաշինական ընդհանուր համակարգի մեջ ինտեգրված լինելով՝ առանձնահատուկ տեղ է գրավում հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ:

Եզրահանգում. Հայագիտության համար անչափ կարևոր է ուսումնասիրություններն իրականացնել համակարգային և միջգիտակարգային, քանի որ միայն այդ պարագայում կարելի է փորձել լուծումներ գտնել շատ ու շատ կնճռոտ, սակայն, չափազանց կարևոր հարցերին:

Վերլուծությունների արդյունքում ակնհայտ են դառնում Տայք նահանգում հազարամյակներ շարունակ բնիկ հանդիսացող հայ մարդու ընդհանուր մտածողությունը, նրա կապը բնության և միջավայրի հետ,

ավանդականությունը և ժառանգորդությունը, պաշտամունքի նկատմամբ հատուկ վերաբերմունքն ու հողից կառչած լինելու երևույթները: Հատկանշական է, որ նույնիսկ ցայսօր որոշ բնակավայրերում իսլամացած, բայց այդ հզոր քաղաքակրթությունն իրենց մեջ որոշակիորեն պահող բնիկների մնացորդներն առանձնանում են ընդհանուրից, և հավանաբար անգիտակցորեն ինչ-որ հին ավանդույթներ են պահպանել: Քիչ դեպքերում այս ամենը նկատվում է նախ և առաջ ավանդական բնակելի համալիրների ճիշտ պահպանության և շահագործման մեջ:

Տայքի ամրաշինական համակարգը ժամանակակիցներիս կարծես դաս է տալիս, թե ինչպես պետք է ապրել, ստեղծել, արարել և ընտանիքդ, բնակավայրդ, շրջանդ, գավառդ և երկիրդ անգիջում ձևով պաշտպանել: Եվ եթե անհրաժեշտ է, ապա նույնիսկ հրաշքներ գործել (օրինակ՝ չափազանց դժվարամատչելի տեղում ամրոցներ կառուցելով), որպեսզի հասնես այդ ամենին:

Այսպիսով, Տայոց աշխարհում պահպանվել են բնակավայրաշինական հիմնական սկզբունքները, որոնք անբակտելի կերպով կապված են հայկական ընդհանուր քաղաքակրթության հետ, որին հարուստ նյութ են տալիս ուսումնասիրելու ոչ միայն ճարտարապետությունը և նրա ակունքները, այլև ընդլայնում են մեր պատկերացումներն ընդհանուր հայկական մշակույթի ուսումնասիրման գործում:

References

1. Akopov A., Nahatkyan D., Hakobyan S., Hayrapetyan A., *Tayk, Historical and Architectural research, part 1 (Azordatspor and Chakq)*. Gyumri, SCAS NAS RA publ., 2023.
2. Grigoryan A., *Symbolism in Armenian Architecture* [Khorhrdandshanyin mtats'oghut'yun' hay chartarapetut'yunum]: Yerevan: "ALAS" publ., 2005. p.178, il.106. (in Armenian).
3. Akopov A., *Tayk: Historical and demographic picture of the 1st thirtieth anniversary of the XVI-XIX century [Tayk, Varchajogovrtakan patkery XVI-XIX dari 1-in eresnamyakin]*. Yerevan, IH NAS RA, publ. 2013. (in Armenian).
4. Nahatkyan D., Akopov A., Grigoryan A., *The monastique complexe of Aspak*, [Aspak'i vanakan hamaliry']. « Scientific works » of SCAS NAS RA, Gyumri, 2023, v. 1(26), pp. 165-176. (in Armenian).

5. Nahatkyan D., *The issue of the Interactions of Armenian architectural school of Taik and Gugark in IX-XI centuries* [Taik'i ev Gugark'i IX-XI dd. haykakan chartarapetakan dproc'i pokhazdecut'yunner'i harte'y']//Materials of the eleventh scientific session of young Armenian art critics, Yerevan:IA NAS RA "Gitutyun" publ.,2017. pp. 216-226.(in Armenian).
6. Nahatkyan D., *About some Armenian-Chalcedonian architectural experiments of the 10th-11th centuries* [tas-tasnmekerord darerum hay-q'aghq'edonakan chartarapetakan vorosh porc'eri' masin]. «The historical and cultural heritage of Shirak: modern problems of Armenological studies», Proceedings of the 10th International Conference, Yerevan: "Gitutyun" publ., 2019. pp. 387-389. (in Armenian).

Հավելված




Նկ.1: Օշկիձոր (Ագորդացվոր գավառ): Տեսքը գյուղամիջի եկեղեցուց, դիմացը՝ բնակատեղին ու ամրոցը:



Նկ.2: Նիխաղ (Ուքաղն գավառ): Եռաչափ ընդհանուր տեսքն ըստ՝ Google Earth հավելվածի:



Նկ. 3,4: Փանազներտ (Ճակք գավառ):
Գլխատնային և առևտրային տների օրինակներ



Մխ.1: Տայքի բնակավայրաշինական համակարգի ընդհանուր սխեմա

ՀԳՏ 93.94, 73.02

**ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՅՔ ՆԱՀԱՆԳԻ ԱՐՄՅԱՑՓՈՐ ԳԱՎԱՌԻ
ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

Սուսաննա Աղաճյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
susannaiae@mail.ru

Դավիթ Նահատակյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
ՃՇՀԱՀ, Հայաստան, davit.nahatakan@gmail.com

Արկադի Ակոպով

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Հայաստան,
arkadone1@gmail.com

Ամփոփում. Պատմական Տայք նահանգը՝ ելնելով իր յուրահատուկ պատմական զարգացման փուլերից, առանձնապես հարուստ չէ վիճակական նյութով: Ծանապարհորդների և հետազոտողների կողմից եզակի նուշներ են փաստվել, որոնցից ոչ բոլորն են մինչ մեր օրերը պահպանվել: Սակայն մեր արշավախմբի կողմից՝ 2022-2024 թթ. իրականացրած դաշտային հետազոտական աշխատանքների ընթացքում հատկապես Արայացփոր գավառի բնակավայրերում հայտնաբերվեցին անչափ կարևոր վիճակական նյութեր: Ուշագրավ են հատկապես Խոտորջրի թաղամասերում (Ճիճնապաղ, Սուլենց, Գեղուտ, Ցուցուլա, Վահնա, Կրման, Միջին Թաղ, Խանդաձոր) պահպանված, ինչպես նաև Արսեացփոր գավառի ուրիշ մի քանի գյուղերի (Կուղրաշեն և Կարմիրք) վիճակի նյութերը:

Վիճակի նյութը հիմնականում պահպանվել է տապանաքարերի, աղբյուրների սալաքարերին, շինությունների պատերի մեջ, սակայն մեծ թիվ են կազմում ավանդական բնակելի կառույցների որմերի վրա փորագրված արձանագրությունները: Մեր կողմից գրառվել և վերծանվել է

ավելի քան մեկ տասնյակ վիմագիր, որոնք թվագրվում են 19-20-րդ դդ. և ունեն հիշատակագրային կամ շինարարական բնույթ: Կան վիմագրեր, որոնք տեղադրվել են պատերի մեջ որպես շինաքար և ամբողջական չեն պահպանվել: Կան նաև այլալեզու վիմագրեր, որոշ վիմագրերում էլ պահպանվել են արաբական ավանդական թվերով թվագրումը, որոնք գործածության մեջ են եղել Թուրքիայում մինչև կայսրության անկումը: Ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս զավառն ուսումնասիրել համակողմանիորեն, որը հնարավորություն կտա բացահայտելու հայության դերը 20-րդ դարասկիզբին տարածաշրջանում:

Բանալի բառեր` *Արայացիոր, Տայք, բնակավայր, վիմագիր, տապանաքար, աղբյուր, Ճորոխ, եկեղեցի, արշավախումբ, տեղագիր:*

ANALYSIS OF NEWLY DISCOVERED EPIGRAPHIC MATERIAL OF ARSYATSPOR PROVINCE OF HISTORICAL TAYK REGION

Susanna Adamyán
IAE NAS RA, Armenia,
susannaiae@mail.ru.

David Nahatakyan
Shirak Center of Armenological Studies NAS RA, NUACA, Armenia,
davit.nahatakan@gmail.com

Arkadi Akopov
Shirak Center of Armenological Studies NAS RA, Armenia
arkadone1@gmail.com

Abstract: Historical Tayk province, due to its unique historical development stages, is not particularly rich in epigraphs. Travelers and researchers documented unique samples, but not all of them have survived to this day. However, our expedition found remarkable and extremely important epigraphs in 2022-2024 during the conducted field research works, especially

in the settlements of Arsyatspor province. The epigraphic materials preserved in the districts of Khotorjur (Chichapagh, Sunents, Geghut-Tsutsula, Vahna, Krman, Mijin Tagh, Khandadzor), as well as several other villages of Arsyatspor province (Kudrashen and Karmirk) are noteworthy.

The epigraphic material is mainly preserved in tombstones, on the slabs of springs, in the walls of buildings, but a large number of inscriptions on the walls of traditional residential structures. We have recorded and deciphered dozens of epigraphs dating back to the 19th-20th centuries, which are descriptive or constructional in nature. There are epigraphs that were set into the walls as building blocks and are not preserved. The epigraphs also preserve the traditional Arabic numerals that were in use in Turkey before the fall of the empire.

We hope that the epigraphic material will enable us to reveal the role of Armenians in the region till 1915.

Key words: *Arsyatspor, Tayk, settlement, inscription, tombstone, spring, Chorrok, church, expedition, topograp.*

Նախաբան. Պատմական Հայաստանի 14-րդ նահանգ Տայքը տեղակայված է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան հատվածում, Ճորոխ գետի և դրա վտակների հովտում: Այն ունեցել է 8 գավառ՝ Կող, Բերդաց փոր, Պարտիզաց փոր, Ճակք, Բողխա, Ոքաղե, Ազրդաց փոր, Արսյացփոր:

Տայքի 8-րդ գավառ Արսյացփորը տեղակայված է Ճորոխի հովտում և բաժանվում է երկու ենթաշրջանների՝ Կիսկիմ-Խոտորջուր և Բերդագրակ-Արսիս: Խոտորջուրը բաղկացած է 9 գյուղերից կամ թաղերից (Գեղուտ-Քեղուտ, Յուցուլա, Վահնա, Կիսակ, Կրման, Ճինապաղ, Սունենց, Խանդաճոր, Միջին թաղ), որոնք գտնվում են իրարից մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Այն հայաբնակ է եղել մինչև 20-րդ դարասկիզբը, այստեղ եղել են հայկական հոգևոր և աշխարհիկ հարյուրավոր հուշարձաններ, որոնցից շատ քիչ բան է պահպանվել մեր օրերում: Խոտորջուրը հայկական մյուս բնակավայրերի պես ենթարկվել է թուրքական վայրագությունների: Այստեղից հայության տեղահանությունը

սկսվել է 1915թ. հունիսից¹: Երկրամասը հայաթափվեց և ավերվեց 1915թ. ընթացքում, բնակիչների մի մասը սրի քաշվեց, իսկ չնչին մասին էլ հաջողվեց ապաստան գտնել աշխարհի տարբեր երկրներում: Խոտորջուրում թուրքերի կողմից իրականացված թալանի նյութական վնասը հաշվվում է ավելի քան 2 միլիոն թուրքական լիրա²: 1915 թ. հետո մինչ օրս բնօրրանում բնակվող հայերի վերաբերյալ տեղեկություններ չկան:

2022-2024 թթ. Արսյացփոր գավառում գիտական ուսումնասիրություններ է կատարել Տայքի արշավախումբը (անդամներ՝ Դ. Նահատակյան, Ա. Ակոպով, Ա. Հանենց, Ս. Հակոբյան), որի իրականացրած դաշտային հետազոտական աշխատանքների ընթացքում Ճիճապաղ, Մունենց, Գեղուտ-Ցուցուլա, Կրման, Կիսակ, Խանդաձոր և Կարմրիկ բնակավայրերի տարածքից հայտնաբերվել և ընդօրինակվել են ավելի քան մեկ տասնյակ վիմագիր: Հավելենք, որ մատենագիտական աղբյուրներն առանձնապես չեն անդրադառնում հուշարձանների որմերին պահպանված արձանագրերին: Այդ առումով օգնության են գալիս հիշատակարանները, որոնք վիմագրերի հետ լրացնում են բնակավայրերի պատմության հետ առնչվող տեղեկությունները: Այսպիսով տարածաշրջանի վիմագրերի համակողմանի ուսումնասիրումը կատարվում է առաջին անգամ, քանի որ տեղագիր-ճանապարհորդների, ինչպես նաև նորագույն շրջանի հետազոտողների ուսումնասիրություններում գրեթե հիշատակություններ չկան դրանց մասին:

Արսյացփոր գավառի վիմագրերը պահպանվել է հիմնականում տապանաքարերի վրա, որոնք հետագայում տարբեր նպատակներով օգտագործվել են շինությունների մեջ իբրև շինաքար: Կան վիմագրեր, որոնք պահպանվել են ավանդական բնակելի կառույցների որմերին և թվագրվում են 19-20-րդ դդ.: Թեև վիմագրերի գիտական ուսումնասիրությունը չի խրախուսում ժամանակաշրջանի վիմագրերի հավաքումն ու վերծանումը, այնուամենայնիվ մեր կողմից ուսումնասիրվել են բոլոր վիմագրերը՝ հաշվի առնելով այն, որ դրանք գրավոր եզակի աղբյուր են և

¹ Հ. Յարութին Կ. Հուսունեան, Հ. Մարթեոս Կ. Հանեան, Յուշամատեան Խոտորջուրի (այսուհետ՝ Յուշամատեան), Վիեննա, 1964, Էջ 554:

² Նշվ. աշխ., էջ 558:

եղծվում են բնական և մարդկային գործոնների հետևանքով: Վիմագրերում հաճախ ենք հանդիպում արաբական ավանդական թվեր, որոնք գործածության մեջ են եղել Օսմանյան Թուրքիայում մինչև 20-րդ դարակիզբը:

Ստորև ներկայացնում ենք հայտնաբերված և ընդօրինակված վիմագրերը՝ ըստ բնակավայրերի:

Գեղուտ-Ցուցուլյան գտնվում է Ճորոխի վտակ Խոտորջրի հովտում, սարալանջի վրա: Գյուղում հիշատակվում են մի քանի հուշարձաններ՝ Ս. Ստեփանոս կամ Ս. Աստվածածին¹, Ս. Գևորգ (որը կոչվում էր նաև «Միրոս Հիսուսի»²) եկեղեցիները, հայկական վարժարանը, քարե մի կամուրջ: 1915 թ. դրությամբ գյուղն ուներ 55 տուն՝ 385 հայ բնակչությամբ: Երբեմնի հուշարձաններից գյուղում ոչ մի հետք չի մնացել: Այստեղից գրառվել է 5 վիմագիր, որոնք պահպանվել են բնակելի տների պատերին:

Երկհարկանի բնակելի տան մուտքի վերնամասում, 1 տող., նույն տողի վրա պատկերված է կիսարև, լուսին և արաբերեն գրություն³, (նկ. 1, գրչ. 1):

1. 1905. Վ. Օ. Կ .

Հնարավոր է տանտիրոջ անզգանվան, անվան և հայրանվան սկզբնատառերն են, մի երևույթ, որ շատ է հանդիպում տարածաշրջանում:

Նույն շինության լուսամուտների վերևի սալաքարին փորագրված է տանտիրոջ և հավանաբար նրա տիկնոջ անունները, 1 տող,(նկ.2, գրչ. 2):

2. ՅՕՎԱՆԷՄ ՄԱՐԻԱՄ ԿՕՏԵԼԱ ԼՆ

Մեկ այլ երկհարկանի առանձնատան մուտքի դռան վերնամասում ուղղանկյուն սալաքարի վրա տեսանելի են Տ Փ Ո տառերը, որը հնարավոր է լինեն անզգանվան, անվան և հայրանվան սկզբնատառերը:

Մրբատաշ քարից կառուցված եռահարկ տան մուտքի կամարակապի վերնամասում ընթեռնելի է շինարարական արձանագրություն, վերջում կա թվագրում արաբական ավանդական թվերով,5 տող,(նկ.3,գրչ.3):

¹ Նշվ. աշխ., 1964, էջ 60:

² Նշվ. աշխ., էջ 66

³ Արաբագիր արձանագրություններն առանձին ուսումնասիրության թեմա են, ուստի նպատակահարմար չենք գտնում մեկնաբանել կամ թարգմանել դրանք:

3. ՋԱՆԻԲԸ ԹԱՆԴ-ԵԼԵԱՆ Է ՀԼԻՉԼԱՏԱԿԼՍ /ՏԻԼԱՆԵԱՆ
ՊԵՏՐՈՍԻՆ ԿԱՌՈՒՑ/ԱԲ ՏՈՒՆՍ Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՆՈՐԻՆ/
ՈՐԴԻՈՅՆ ՄԵԼԳՈՆԻ ԵՒ ԲԱՂՏԱ/ՍԱՐԱՅ 1902:

Գեղուտից վերև՝ Ցուցուլա թաղում բնակելի կիսաքանդ տներից մեկի պատին սրբատաշ քարի վրա կա ելնդագիր արձանագրություն, 1 տող, (նկ. 4, գրչ. 4):

4. 1903 Յ.Ս.Թ

Խանդածորը համարվում է Խոտորչուրի գյուղերից մեկը, ունի 3-5 հարկանի քարակերտ առանձնատներ: Պատմական հուշարձաններից այստեղ հիշատակվում են Ս. Աստվածածին և Ս. Երրորդություն եկեղեցիները, մատուռներ (Ս. Հովսեփ, Ս. Իսա), ինչպես նաև 2 հայկական դպրոց: 1915թ. դրությամբ բնակչությունը կազմում էր 220 տուն՝ 1540 հայ բնակչությամբ: Գյուղի բնակելի տներից մեկի մուտքերի վերնամասերում հայտնաբերվել են 2 վիմագիր՝ նույն տառերով և թվագրումով, ելնդագիր, 2 տող, (նկ. 5, 6, գրչ. 5, 6):

5. ՎԴ/ 1911

6. ԴՎ/ 1911

Ինչպես և ենթադրվում է, սրանք տանտիրոջ անվան ու ազգանվան սկզբնատառերն են: Գյուղում բնակված ազգանունների ցանկում կա Վարդիկյան տարբերակը, միգուցե այն կապ ունի տվյալ տոհմի հետ¹:

Կրմանը գտնվում է Խոտորչրի ապառաժոտ լեռան լանջերին, բաղկացած է մեծ և փոքր թաղերից: Գյուղում եղել է երկու եկեղեցի՝ Ս. Հակոբ² (նորոգվել է 1785 թ.) և Ս. Երրորդություն (հիշատակվում է 1893-1895 թթ.), քարակերտ մի կամուրջ, դպրոց, Ս. Աստվածածնի Վերափոխման մատուռ-ուխտատեղին, Ս. Գևորգ մատուռը, որը կառուցվել է ՌՃԻԳ-1694 թ.՝ ըստ շինարարական արձանագրության³ և վերակառուցվել է 1900 թ.: 1914 թ. դրությամբ գյուղում բնակվում էր 90 տուն՝ 630 հայ բնակչությամբ: Այստեղից գրառվել է 4 վիմագիր:

¹ Նշվ. աշխ., էջ 183

² Եկեղեցին ունեցել է շինարարական արձանագրություն, որը չի պահպանվել. «Յեկեղեցիս շինվեցաւ թովին ՌՃԻԵ-1676»: Նշվ. աշխ., էջ 23:

³ Նույն տեղում:

Գյուղամիջյան աղբյուրի ճակատակալ քարի փոխարեն տեղադրված է 19-րդ դարի տեղահանված տապանաքար, որի վրա կա հիշատակություն, 2 տող, (նկ. 7, գրչ. 7):

7. Ի ՍՈՅՆ ՏԱՊԼԱՅԻ ՀԼԱՅԳԼՈՒՅԵԼ ԴՆԻ ՎԼԱՂԱՍԵ/ՌԻԿ ՄԷԼՔՈՆ ՈՐԴԻ ՄԷԼԻԿԵԼԱՅ ՏԷՐ ՍԷՐՈՎԲԷԻ

Աղբյուրի կողքին տեղահանված մի տապանաքար կա, գիրը փորագիր է և նախորդին նույնառն, 2 տող, (նկ. 8, գրչ. 8):

8. Ի ՏԱՊԱՆԻ ԱՍՏ ՀԱՆՉԻ ՏԻՐ/ԱՄԱՅՐ ՏԻԿԻՆ ՄԷԼԻԳԻՆ ՏՐ ՍԷՐՈՎԲԷԻ

Գյուղի քահանաներից հիշատակվում է Մելիքյան Տեր Սերովբեն, ով նշանավոր Մելիքյան քահանայական տոհմից է եղել¹: Արձանագրությունների բովանդակությունից պարզվում է, որ առաջինը Տեր Սերովբե քահանայի որդու՝ Մելքոնի տապանաքարն է, իսկ երկրորդը տիկնոջ՝ Տիրամայրի: Հիշատակություն կա նաև այն մասին, որ այս տոհմի նախահայր Քոլոս պապը կառուցել է գյուղի Ս. Հակոբ եկեղեցին²:

Գյուղի տարածքում անմշակ քարից մի շինություն կա, ենթադրաբար եկեղեցի է կամ սրբավայր, որի պատերի մեջ կան սրբատաշ տապանաքարեր՝ արձանագրություններով:

Շինության մուտքի (մուտքը քարայցված և փակված է) աջ հատվածում ագուցված է կոտրված տապանաքար, որի վրա ընթեռնելի է 3 տող, (նկ. 9, գրչ. 9):

9.Ն/.... Կ Է ՏԻԿԻՆ ԱԲԱՉԵԱՆ/ 1825 ՄԱՐՏ 25

Մյուս կոտրված տապանաքարը գտնվում է շինության ներսում՝ պատի մեջ ագուցված, պահպանվել է վիմագրի 8 տողը միայն,(նկ.10, գրչ.10):

10. ՈՐԴԻ/ ԾՆԵԱԼ/ 1877 Ի/ ՓԵՏՐ 4/ԵԻ ՀԼԱՅՆԳԼ ԵԱԼՂ ԵԻ/ ԱՌ ՏԷՐ/ 1896/ ՕԳՈՍՂ ՏՈՍ Ղ 13

Գյուղի բնակելի տներից մեկի պատին ագուցված է սալաքար, 2 տող, (նկ. 11, գրչ. 11):

11. 1903. ԱՊՂՐԻ ՂԼ. 6/ ԹԹՕՆ

¹ Նշվ. աշխ., էջ 23-24:

² Նշվ. աշխ., էջ 23:

Հնարավոր է, որ առաջին Թ տառը վերաբերում է թվականին, սակայն տառանջատում նկատելի չէ: Անորոշ տառերի խումբը հավանաբար տան տիրոջ ազգանվան, անվան և հայրանվան սկզբնատառերն են:

Ծինապաղը գտվում է ծովի մակարդակից 1300 մ բարձրության վրա է: 1894 թ. այն հրդեհվել է, որից հետո կառուցվել են երկհարկ և եռահարկ առանձնատներ: 1914 թ. դրությամբ գյուղն ուներ 184 տուն՝ մոտ 1000 հայ բնակչությամբ: Պատմական հուշարձաններից հիշատակվում է Մայր եկեղեցին, հայկական վարժարանը, կիսակառույց Ս. Երրորդություն եկեղեցին (շինարարությունը սկսվել էր 1910 թ. և հայկական ջարդերի պատճառով ընդհատվել է)¹: Այստեղից հաջողվել է գրառել և ընդօրինակել մեկ վիմագիր, որը պահպանվել է սրբատաշ կամարի վրա, 2 տող, (նկ. 12, գրչ. 12):

12. ՈՂՈՐՄԷՑԱՐՈՒՔ ՄԵՉ Օ/ ԱՆՑԱԻՈՐ ԲԱՐԵԿԱՄՔ

Սունենցը հայաբնակ է եղել մինչև 1915 թ., ունեցել է 180 տուն՝ 1260 բնակչությամբ: Հուշարձաններից հիշատակվում են Ս. Հարություն եկեղեցին, Ս. Մարգիս մատուռը, քարաշեն կամուրջը, երկհարկանի վարժարանը, որոնցից ոչինչ չի պահպանվել: Գյուղում կան կիսաքանդ երկհարկ և եռահարկ բնակելի առանձնատներ, որոնցից մեկի մուտքի ճակատակալ քարի վրա կա վիմագիր, 2 տող (նկ. 13, գրչ. 13):

13. ...ՆԵ ՆԻՆՈՒՐԵԱՆ/ ԺԱՍՄԻԿ 1874 Յ.Պ.

Վերջին տառերն առանց տարանջատման են, ենթադրելի է, որ տանտիրոջ ազգանվան, անվան, հայրանվան սկզբնատառերի հետ կապ ունի:

Կարմրիկ կամ Կարմիրք բնակավայրի հիմնադիրներն Անեցիներն են եղել, անվանումն էլ առաջացել է գյուղի տարածքում կարմրավուն հողերի պատճառով: Գյուղում եղել է Ս. Հայր Հովսեփ եկեղեցին և հայկական մի ուսումնարան: 1914 թ. դրությամբ գյուղն ունեցել է 170 տուն՝ հայ 1190 բնակչությամբ: Գյուղում կա գործող աղբյուր, որի որմին ագուցված արձանագրությունը ելնդագիր է: Քարը վնասված է, հավանաբար՝ տեղահանված, վիմագրի բնույթը շինարարական է, բովանդակությունը՝ կիսատ, 7 տող, (նկ. 14, գրչ. 14):

¹ Նշվ. աշխ., էջ 19:

14. ՇԻՆՈՒՄՆ ՀԱ.../ՎԴՁ Է ԵՂԵԲ.../ՅԱՄԻԼՆ] 1847/ՐՕԳՈՍ ՆՏՈՍ
Ավելի մանր տառերով ԷԱ../ՌՍ../ՏԱԲ.../Թ...

Գյուղի տարածքում կա նաև տեղահանված և կոտրված մի տապա-
նաքար, որի մի հատվածը հավանաբար ջրի հոսքի պատճառով վնասվել
է, 7 տող, (նկ. 15, հողմահարված լինելու պատճառով հնարավոր չի ստա-
նալ ամբողջական գրչագիր):

15. ՏԱՊԱՆՍ Է Տ.../ՊՕՂՈՍԻ ՈՐԴԻ /ՊԵՏՐՈՍԻ ՈՏ.../ ՈՐ
ՀԱՆԳԻՍՏ/ 1895-ԻՆ/ ԱՍ--Ա--ՎԷ/ ՏԱՎԻԹ -- ՏԱ

Այսպիսով, ընդօրինակելով վիմագրերը՝ կարելի է եզրակացնել, որ
Խոտորջուրի տարածքի 6 գյուղերից մեզ հաջողվել է հավաքել թվով 15
վիմագիր: Դրանց մի մասն ունեն հիշատակագրային, մյուս մասը շինա-
րարական բովանդակություն, արձանագրություններից վաղագույնը
թվագրվում է 1847 թ., նորագույնը՝ 1911 թ.: Գրերը հիմնականում փորա-
գիր են, կան նաև ելնդագիր տարբերակով: 1915 թ. հետո հայատառ
վիմագրերն այստեղ իսպառ բացակայում են: Վիմագրերը պահպանվել
են աշխարհիկ շինությունների վրա (աղբյուր, բնակելի տներ, տապանա-
քար), բացառությամբ մի քանիսի, որոնք իբրև շինաքար օգտագործվել
են եկեղեցիները նորոգելու ընթացքում:

Եզրահանգում. Ամփոփելով՝ հավելենք, որ Արայացփոր գավառի
վիմագրական ժառանգությունը թեև փոքրածավալ է, սակայն այն հնա-
րավորություն է տալիս պատասխանելու մի քանի հարցերի. տարածա-
շրջանում հայերը բնակվել են մինչև Հայոց եղեռնի տարիները՝ 1914-1915
թթ., հայկական հուշարձանների վերաբերյալ թեև քիչ, բայց արժանահա-
վատ տեղեկություններ են պահպանվել, շրջանառվող վիմագրերը հա-
րստացնում են Պատմական Հայաստանի տարածքից հայտնաբերված և
ընդօրինակված վիմագրերի թիվը, որոշ բնակելի տների վրա պահպանվել
են ավանդական արաբական թվերով թվագրումներ, այլալեզու արձանա-
գրություններ, որոնք կարող են դառնալ առանձին ուսումնասիրության
առարկա: Տայքի արշավախմբի անդամների 2022-2024 թթ. կատարած
ուսումնասիրությունները գիտական մեկնաբանությամբ շրջանառու-
թյան մեջ են դրվում առաջին անգամ: Դրանք կարևորագույն խթան

կհանդիսանան երկրամասի պատմությունը, ժողովրդագրությունը, մշակութային հուշարձանները ուսումնասիրողների համար:

References

1. Hakopyan T., Meliq-Bakhshyan S., Barseghyan H., *Dictionary of place names of Armenia and neighboring regions, part 1*, [Hayastani ev harakic shrjanneri teghanunneri bararan], Yerevan, «USY» publ., 1986. (in Armenian).
2. Hakopyan T., Meliq-Bakhshyan S., Barseghyan H., *Dictionary of place names of Armenia and neighboring regions, part 2*, [Hayastani ev harakic shrjanneri teghanunneri bararan], Yerevan, «USY» publ., 1988. (in Armenian).
3. Hakopyan T., Meliq-Bakhshyan S., Barseghyan H., *Dictionary of place names of Armenia and neighboring regions, part 3*, [Hayastani ev harakic shrjanneri teghanunneri bararan], Yerevan, «USY» publ., 1991, (in Armenian).
4. Hakopyan T., Meliq-Bakhshyan S., Barseghyan H., *Dictionary of place names of Armenia and neighboring regions, part 4*, [Hayastani ev harakic shrjanneri teghanunneri bararan], Yerevan, «USY» publ., 1998, (in Armenian).
5. Hulunian H. Haroutiun V., Hadjian H. Matthew V., *Memorial book of Khotorjur* [Yushamatean Khotorjuri]. Vienna, «Printing house of Mkhitarian Congregation» 1964. (in Armenian).

Վիճագրերը վերձանելու պայմանական նշանները՝

┌ ┐ - եղծված կամ ջարդված տառերի վերականգնում

┌ ┐ - Փորագրիչի բաց թողած, պատվի նշանով, հապավված տառերի կամ տառակապակցությունների վերականգնում / տողանջատման գիծ

... եղծված կամ ջարդված գրեր

--եղծված մի քանի տառի փոխարեն

ԼՈՒՍԱՆԿԱՆԵՐ, ԳՐՉԱԳՐԵՐ



նկ. 1

1905 * Վ . 0 . 4 .

գրչ. 1



նկ. 2

30 Վ Ա Ն Է Ս Մ Ա Ր Ի Ա Մ Կ Օ Տ Ե Ն


գրչ. 2



նկ. 3

1903 Յ Մ Ք

գրչ. 3



նկ. 4

ԶԱՆԻԻ ՔԹԱՆ ԴՊԵՆԵԱՆԵ ԼՇՍ
ՏԻԱՆԵԱՆ ՊԵՏՐՈՍԻՆ ԿԱԹՈՒՑ
ԱԻՏՈՒՆՍԻ ԿԱՅԵԼՈՒՄԸ ՆՈՐԻՆ
ՈՐԴՈՅՆ ՄԵԼԳՈՆԻ ԵՒ ԲԱՂՏԱ
ՍԱՐԱՅ * 1902 *

գրչ. 4



նկ. 5



գրչ. 5



նկ. 6



գրչ. 6



նկ. 7

Ի ԱՌՆԿ ԼՈՒՍՎԵՆԻՏՆԻ ԳԳԼԴԵՆԻ ՎԵՂԵՆԻ
ՄԵԼԲՈՆ ՈՐԴԻ ՄԵԼԿԵՆ ԼՈՒՍՎԵՆԻ

գրչ. 7




նկ. 8

ՄԱՍՎԱՆԻ ԱՍՄԻՉԱՆԳԻՆԻ ՄԻՐ
 ԱՄԼԱՆՐ ՄԻԿԻՆ ՄԷԼԳԻՆ ՄՐԱԷՐՈՎԷ


գրչ. 8




նկ. 9



գրչ. 9




նկ. 10



գրչ. 10



նկ. 11



գրչ. 11



Նկ. 12



գրչ. 12




նկ. 13

ՆԵ ՆԻՆՈՒՐԵԱՆ
 ԹԱՍՄԻԿ 1974 Յ. Պ.

գրչ. 13



Նկ. 14



գրչ. 14



նկ. 15

ՀՏԳ-395

ՏԱՅՔԻ ՀԱՅԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ՇՈՒՐԶ

Կարինե Բազեյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Հայաստան
bazeyan60@yandex.ru

Ամփոփում. Տայքը ազգաբանորեն ամենաքիչ ուսումնասիրված պատմագագրական մարզն է: Ներկայացվող հոդվածն այդ ուղղությամբ արված մի փորձ է, որը վերաբերում է տայեցիների առաջնային արտադրության ընդհանուր և համառոտ նկարագրությանը:

Հոդվածի նպատակն է՝ ձեռքի տակ եղած նյութերի՝ մասնավորապես Ատրպետի «Ճորոխի ավազանը» տպագիր և «Ինչ ժառանգեցինք» ձեռագիր ուսումնասիրությունների, ռուսական վիճակագրական-տեղեկատվական հանդեսների ու մասնագիտական այլ գրականության համեմատական վերլուծության հիման վրա ընդհանուր գծերով ներկայացնել տարածաշրջանի հայ բնակչության զբաղմունքները: Ըստ այդմ՝ առանձնացվել են գյուղական ու քաղաքային բնակչության հիմնական և օժանդակ տնտեսական զբաղմունքները, որոնք դիտարկվել են ըստ սեռերի ու տարիքային խմբերի մասնակցության ձևերի: Տայքի գյուղական բնակչության հիմնական զբաղմունքը եղել է այգեգործությունը, բանջարաբուծությունը, խաղողագործությունն ու ծխախոտագործությունը, որոնք նաև արտահանման առարկա են եղել: Հատուկ ուշադրություն է դարձվել 19-րդ դարի երկրորդ կեսից - 20-րդ դարասկզբին Տայքի քաղաքներում գործող արհեստների տեսակներին, դրանց տարածվածությանը, դրսևորման ձևերին, առանձնահատկություններին և, հատկապես, անկման պատճառներին: Համեմատաբար մանրամասն ներկայացվել են Արդվինի արհեստները, մասնավորապես տղամարդկանց աշխատանքի ոլորտ կազմող փայտամշակությունն իր ենթանյութերով և պղնձագործությունը, իսկ կանանց արհեստներից՝ ջուլիակությունն ու ասեղնագործությունը:

Բանալի բառեր՝ *Տայք, արտադրական մշակույթ, զբաղմունք, երկրագործություն, տնայնագործություն, արհեստ:*

ON THE OCCUPATIONS OF THE ARMENIANS OF TAYK

Karine Bazeyan

Shirak Center of Armenological Studies NAS RA, Armenia
bazeyan60@yandex.ru

Tayk is ethnographically the least studied historical-ethnographic region. The presented article is an attempt in this direction, concerning the general and brief description of the primary production of the people of Tayk.

The aim of the article is to provide a general overview of the occupations of the Armenian population in the region, based on a comparative analysis of the available materials—particularly Atrepet’s printed work “*The Chorokh Basin*” and the manuscript “*What We Inherited*”—as well as Russian statistical journals and other relevant scholarly literature. Accordingly, the primary and secondary economic occupations of the rural and urban populations have been identified, which have been examined based on the forms of participation by gender and age groups. The main occupations of the rural population of Tayk have been horticulture, vegetable growing, viticulture, and tobacco farming, which have also been export commodities. Special attention has been given to the types of crafts practiced in the cities of Tayk from the second half of the 19th century to the early 20th century, their prevalence, forms of expression, characteristics, and especially the reasons for their decline. The crafts of Ardvin have been presented in relatively detailed terms, particularly the woodworking and its sub-branches, which constitute the male labor sector, as well as women’s crafts such as weaving and embroidery.

Key words: *Tayk, production culture, economic activities, agriculture, handicraft, craft.*

Ըստ Հայաստանի պատմագագազրական բաժանման՝ Տայքը Գուգարքի հետ միասին է դիտարկվում որպես առանձին միավոր՝ նկատի ունենալով դրանց նույն բնակլիմայական պայմանները, որոնք էապես ազդում են տեղական մշակութային համալիրների ձևավորման վրա:¹ Սակայն առևտրա-տնտեսական սերտ կապերը հարևանությամբ գտնվող Բարձր Հայքի, Այրարատի նահանգի Բասեն ու Վանանդ գավառների, ինչպես նաև Համշենի հետ, ավելի մեծ ազդեցություն են թողել Տայքի առաջնային արտադրության ու կենսապահովման մշակույթի վրա, քան Գուգարքի հետ հարաբերությունները:² Տայքի գյուղական բնակչության հիմնական զբաղմունքը կազմող երկրագործությունն ու անասնապահությունը ակնառու ընդհանրություններ ունեն համշենահայերի տնտեսական զբաղմունքների հետ, իսկ քաղաքային բնակչության ազգագրական նկարագիրը գրեթե նույնական է Բարձր Հայքի մշակութային համապատկերին: Խոսքը մասնավորապես վերաբերում է նյութական մշակույթին ու հագուստի համալիրին: Այսպես. Ռուսական ազգագրական թանգարանի հավաքածուում գտնվող լուսանկարները և Արդվինի, Արդահանի ու Արդանուչի կանանց հագուստի համալիրներն ու հավաքորդի հայտնած տվյալները փաստում են, որ դրանք գտնվել են Բարձր Հայքի ուղղակի ազդեցության տակ՝ ձևավորելով ընդհանուր մշակութային տարածք³:

Մշակութային ընդհանրությունների առումով հարկ է նկատի ունենալ նաև, որ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով, վարչական նոր փոփոխություններից հետո, Տայքն ամբողջությամբ ընդգրկվեց Էրզրումի նահանգի մեջ: Բացի այդ տայեցիների ազգագրական նկարագրի վրա էական ազդեցություն են թողել նաև 1830-ական թթ.

¹ Գ. Վարդույան, Հայաստանի հիմնական պատմագագազրական մարզերի ընդհանուր բնութագիրը (19-20-րդ դդ.), ՊԲՀ, 2004, № 2:

² Հ. Տաշյան, Տայք, դրացիք և Խոտորջուր (Պատմական-տեղագրական ուսումնասիրություն), հ. Գ., Վիեննա, 1981, էջ 1-3:

³ Л. Гуцян, Традиционная культура армян Ардвина и Ардануча (по материалам коллекции А. Флоренского из собрания РЭМ), Պատմական Տայք. Պատմություն, մշակույթ, դավանանք, Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, ՀՀ ԳԱԱ, Բյուզանդագիտության ազգային կոմիտե, 22-24 հունիսի, Հիմնադրույթներ, Եր. 2016, էջ 82-83:

հետո Արևմտյան Հայաստանում սկսված ներքին միգրացիոն գործընթացները, որոնց արդյունքում Տայքում հաստատվեցին Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից վերաբնակիչներ:¹

Տնտեսական գործունեության ձևերը (գյուղատնտեսություն, առևտուր, արհեստներ և այլն) ազգաբնական-մշակութաբնական դասակարգումով ընդգրկվում են առաջնային արտադրության մշակույթի մեջ: Առաջնային արտադրության մշակույթն ընդգրկում է մշակութային այն բոլոր արժեքները, որոնք մարդիկ ստեղծում են բնության վրա ազդելու և իրենց հարմարեցնելու համար կամ, այլ ձևակերպումով՝ տնտեսական կենցաղը, որի մեջ են մտնում բնակչության հիմնական և օժանդակ տընտեսական զբաղմունքները: Գյուղական բնակչության համար հիմնական տնտեսաձևեր են երկրագործությունն ու անասնապահությունը, իսկ օժանդակը՝ տնայնագործությունը², շերամապահությունն ու մեղվաբուծությունը, որսորդությունն ու ձկնորսությունը: Զաղաքում հիմնական զբաղմունքներ են արհեստներն ու առևտուրը, որոշ խավի համար նաև բանջարաբուծությունը, իսկ օժանդակը նույնն է, ինչ գյուղում:

Տայքի հայերի տնտեսական զբաղմունքերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պարունակում Ատրպետի «Ճորոխի ավազանը» տպագիր և «Ինչ ժառանգեցինք» ձեռագիր ուսումնասիրությունները: Այստեղ ներկայացված են բնակչության մեջ տարածում գտած թե՛ գյուղատնտեսական զբաղմունքները և թե՛ արհեստներն ու տնայնագործությունը, որոնց ավելի մեծ տեղ է հատկացրել հեղինակը:

Իր խոնավ կլիմայի ու բարձրադիր դիրքի պատճառով երկրագործությունն այստեղ ուներ որոշակի առանձնահատկություններ: Ինչպես գրում է Ատրպետը «Մի կողմը ցանում են ցորեն-գարի, միեւնոյն օրը մի ուրիշ տեղ կան են ծեծում: Ո՛չ միայն մշտադալար ձիթենին, դափնին, կիտրոնին, նարնջին, թեյը աճում են և առատ բերք տալիս, այլ նոյն իսկ 1000-2000 բարձրութեան վերայ, երկնամերձ լեռներն այնպես են պատսպարած խորխոր ձորերն ու տափարակները, որ Խեճորի, Խողի,

¹ Ա. Ակոպով, *Տայք. Վարչաժողովրդագրական պատկերը XIV դարից XIX դարի I երեսնամյակը*, Եր. 2023, էջ 150-158:

² С. Арутюнов, С Рыжакова, *Культурная антропология*, М. 2004, с. 78.

Ծրիայի, Որջողի, Մելոյի եւ Խաղիլայի ձորերում երբեք չեն մրսում ձիթենիները: ...Ջուրն ու ջերմութիւնը այս երկրում այնքան զօրեղ է, որ Օսմանեան իշխանութեան վերջին 300 տարուայ քաղաքակրթական անկման շրջանումն անգամ, ելեւմտական սնանկութեան օրերում Ճորոխի Աւագանը համայն Հայաստանին ձէթ ու ձէթուն, չոր միրգ, մաթ ու տնական կարասիք էր մատակարարում, փոխադարձաբար հացահատիկ, իւղ ստանում: Հնումը Կիսկիմի հովիտը, Հարշիշի դաշտերը մատակարարել են Կարնոյ շամբին, Բասենին, Կարսին այնքան բրինձ ու բամբակ, որ լիացել են Հովտիկը, Ալաշկերտը եւ Խնուար: Ճորոխի Աւագանի գինին այնքան առատ է, որ միշտ մատակարարել է շրջակայ նահանգներին: Թթենուց պատրաստած օղին միշտ այժի սկերով տարածել են իրենց շուրջը: ԺԹ-րդ դարում ծխախոտն այնպիսի ընտիր բերք արտադրեց, ինչպէս Մուլղուր, Արտանուշ, Տանձոտ, Ծաւշեւ, Կիսկիմ, Իսայիր, որ այս շուկաներում այս մթերքի պահանջը նկատուեց»¹:

Երկրագործական զբաղմունքների մասին, դարձյալ սեղմ, տվյալներ կան նաև ՏՄՄՄԻԿ-ի՝ (Сборник для описания местностей и племен Кавказа) Արդվին քաղաքին նվիրված մեծածավալ հոդվածում: Հոդվածի հեղինակ Կ. Մաչավարիանին, որն անձամբ էր եղել Արդվինում ու գավառում, հետաքրքիր տեղեկություններ է հայտնում տեղի հայերի մշակույթի, այդ թվում նաև զբաղմունքների վերաբերյալ: Երկրագործական աշխատանքների մասին նա գրում է. «Արդվինն ու իր շրջանի բնակչությունը զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ, բանջարաբուծությամբ, խաղողագործությամբ, ձկնորսությամբ ու որսորդությամբ: Միայն Արդվինի շրջանից 1893 թ. արտահանվել է 30.000 փութ խաղող, 6800 փութ ձիթապտուղ, 750 փութ փայտի յուղ, 8000 փութ թարմ միրգ և չրեր, 8470 փութ ծխախոտի տերև:»² Այնուհետև ավելացնում է՝ «Պետք է ասել, որ և՛ Արդվինի և՛ շրջանի բնակիչները կարող էին ավելի լավ զբաղվել երկրագործությամբ, քանի որ բերքը 8 և նույնիսկ 12-ի է հասնում, սակայն հողի քարքարոտությունը, ոռոգման ջրի պակասը և գլխա-

¹ Ատրպետ, Ճորոխի աւագանը, Վիեննա, 1929, էջ 41-42:

² К. Мачавариани. Город Артевинъ, СМՄՄԻԿ 1897, N 22, отдел II, с. 37.

վորը՝ նրանց ծուլությունն են հացահատիկի ցանքատարածությունների անբավարար ծավալի պատճառով»¹: Քանի որ ձեռքի տակ եղած աղբյուրներն ու գրականությունը ավելի մեծ տեղ են հատկացրել արհեստներին ու տնայնագործությանը, անդրադառնանք գրադմունքների այս ոլորտին: Ինչպես նշեցինք, դրանք զարգացած էին հատկապես քաղաքներում, ինչը նշում է նաև Մաչավարիանին, գրելով. «Արդվինի, Արդանուշի և 2 կամ 3 այլ բնակավայրերի հայերը (թերևս Օլթին, Կաղվանը -Կ.Բ.) գրադվում են բացառապես առևտրով»²: Վերջինս հաստատում է Ատրպետը՝ Օլթիի Ուղթիք ոստանի մասին գրելով. «1878 թ. ռուսներին յանձնելու ժամանակ ընդամենը 290 տուն բնակչություն կար, 195-հայ, 95 տունը իսլամացածներ, որոնք պետական ծառայող կամ կալվածատերեր էին, իսկ հայերը՝ սոսկ արհեստաւոր, 25 հոգի փերեզակ, մրգավաճառ կային մէջերը: Հայերը ջուլիակ էին, ներկարար, խաղախորդ, դերձակ, կոշկակար, դարբին, պղնձագործ, կլէկող և պայտառ»³:

Այստեղ հարկ ենք համարում պարզաբանել, որ առևտուրը դրսևորվում էր երկու ձևով. 1/ գուտ առևտրականներ, որոնք ներկրում ու արտահանում էին գյուղատնտեսական և արդյունագործական ապրանքներ, 2/ արհեստավորներ, որոնք իրենց կրպակ-արհեստանոցներում վաճառում էին սեփական արտադրանքը: Այս նկատի ունենալով է Մաչավարիանին գրել միայն առևտրի մասին:

Ըստ Ատրպետի Տայքում արհեստները զարգացած էին հնագույն ժամանակներից. «Ճորոխի Աւագանի բնական բերքերի հարստութիւնը – անտառները, պղինձը, ոսկին, արծաթը, երկաթը եւ պողպատը բնակչութեան առաջնորդել է զարգացնելու երկրագործութեան հետ զուգընթացաբար արհեստները: Այս երկրին կից Կոլա, Արդահան, Չղր (16ի շուրջը), Ջաւախք, Վանանդ, Բասեն ու Կարին գաւառների բնակչութիւնը դաժան կլիմայի պատճառով գարուն, ամառ եւ աշուն աշխատել է չարաչար, իսկ ձմեռը պառկել ու կերել է, այնինչ Տայեցին ձմեռը մտել է անտառ, սարքել է իր ճախարակը, տախտակ է ձեւել, սնդուկ է շինել. կաղ-

¹ Նույն տեղում, էջ 38:

² CMOMIK, c. 37.

³ Ատրպետ, Ճորոխի ասագանը, էջ 181:

նուց, կաղամախու կոճերից միակտուր կարասիներ է ճախարակել, քուղա, գրուան, խալխալ ու մաղ է պատրաստել, անտառը շահագործել եւ դրացիների համար գործիքներ է պատրաստել: Նոյն իսկ կաւ է կոխրճել-կուժ, կուլա, փարչ, պուտուկ, բողուղ, կարաս է թրծել եւ տարածել շրջակայ գաւառները: Ինչպէս մեղուն առատութեամբ մեղր է մատակարարել մեր երկրին, Ճորոխի Աւագանի արհեստաւորն էլ իր ձեռարհեստով ողողել է: Ճորոխի Աւագանի այգեպանը ողջ ձմեռն աշխատում է պարարտացնել իր այգիներն, ագարակները, որ գարնան գործի սկսի. Նրա համար ձմեռ չկայ»¹:

Արհեստների զարգացմանը նպաստող գործոն էր նաև թուրքական բանակի առկայությունը, որոնց սպասարկում էին հայ արհեստավորները, ինչը հատուկ ընդգծում է Ատրպետն իր աշխատություններում ոչ միայն Տայքի, այլև ողջ Արևմտյան Հայաստանի համար: «Օսմանեան իշխանութեան սկզբնական շրջանից 1300-1800 տարիներին հարիւր հազար ենիչերիների, սպայիների, պաշտոնակալների եւ ժողովրդի երկրամշակ դասի հագուստը, կապուստը, կահաւորութիւնը, ձիերի սարքը, ուտելիքը, խմելիքը, բնակարանները, տաճարները-մզկիթները, ճանապարհներն ու կամուրջները շինել են հպատակ քրիստոնեաները-բայաները: Սուլթան Սուլէմանի օրով, Իբրահիմ փաշայի (Հայ տերտերի որդի) կազմակերպած տարազների կերպասն ու ձեւը Հայ արհեստաւորի շնորքն էր, որոնք որպէս նորաձեւութիւն փոխադրուեցան Եւրոպա 1530-ին: Օսմանեան տիրապետութեան ամենագլխաւոր որմնադիրները, խալֆաները (ճարտարապետ), զինագործները Բայբուրդից էին, ամենաընտիր ենիչարական դաշույնը եւ սիփայիների շէշանաները Բայբուրդիներն էին պատրաստում:»² Իր ձեռագիր աշխատության մեջ նա հիշատակում է բայբուրդցի զինագործ վարպետ Հարթենին, որը «շինում էր շիշխանաթվանքներ, 6 և 8 անկյունանի երկաթը ծակում էր 50-60 սմ խորությամբ և պատրաստում էր հրացաններ: Առաջ չախմախ քարով էր սարքում, ապա պիստոնով»³:

¹ Նոյն տեղում, էջ 44-45:

² Նոյն տեղում, էջ 42-45:

³ Ատրպետ, *Ինչ ժառանգեցինք*, ՀՊԹ արխիւ, էջ 58:

Համադրելով ձեռքի տակ եղած նյութերը՝ կարող ենք թվարկել Տայքում տարածված արհեստները, որոնք են. շինարարությունը, դարբնությունը, զինագործությունը, պայտարությունը, աստղձագործությունը, կաշեգործությունը, խեցեգործությունը, պղնձագործությունը, կլայեկությունը, ոսկերչությունը, դերձակությունն ու կոշկակարությունը, մաշկակարությունը, ներկարարությունը, սանրագործությունը, թամբագործությունը, ջուլիակությունն իր նյութերով, գորգագործությունը և կարպետագործությունը, մազմանությունը, ասեղնագործությունը, դաջագարդությունը: Կարծում ենք, որ սա արհեստների ամբողջ շարքը չէ, քանի որ ներկայացված են այսպես կոչված մայր արհեստները, որոնք, իրենց հերթին, ունեն նեղ մասնագիտացված նյութային արհեստներ: Որպես օրինակ կարող է ծառայել փայտամշակությունը, որը Տայքի արհեստների մեջ առանձնակի տեղ էր գրավում:

Փայտամշակության հետ կապված արհեստները՝ փայտահատությունը, սղոցարարությունը, աստղձագործությունը, հյուսնությունը, երկրագործական գործիքների արտադրության արհեստը, սայլաշինությունը, զանազան դազգահների ու սարքերի շինությունը, կահույքի արտադրությունը և այլք բարձր զարգացման էին հասել: Ինչպես գրում է Ատրպետը՝ «Այս երկիրը զարգացրել է հիւսնութիւնը. Երեք վարպետ առանց մշակի մի շաբաթուան մէջ կարող են 12 սենեկից մի եռայարկ տուն շինել գերաններից եւ տախտակներից ամբողջ կազմով: Ծինութեան հիմնական գերաններն ու ցիցերը ամրացնում են, երեք յարկը իրար վերայ, նախ ամենաբարձր յարկն են շինում, ապա միջին յարկը եւ վերջը ստորին-գետնայարկը: Ինչպէս Կ. Պոլսում մեծ հռչակ ունին քարաշէն հիմնարկութիւնների համար Բայբուրդցիները, այնպէս անուանի են Ճորոխի Աւագանի հիւսները: Կ.Պոլսի եւ Մինոպի նաւաշինարարների գործերը Մել ծովի, Տրապիզոնի շրջակայքի եւ Ճորոխի Աւագանի հիւսններն են զարգացրել վերջին հինգ դարի մէջ»¹:

Իր ձեռագիր աշխատության մեջ ևս Ատրպետը մանրամասն տեղեկություններ է հայտնում փայտամշակության մասին: «Կարսի և

¹ Ատրպետ, Ճորոխի ասագանը, էջ 45:

Արգրումի աստղծագործները Ճորոխի ասիերից կաղնի, դափնի, շիմ-
շատի և այլ փայտի աստղաներ էին ստանում տեղացիների ձեռքով և
դրանք գործադրում էին տնական կարևոր կահկարասի պատրաստելիս:
Շիմշատից շինում էին գոպ, շերեփ, գրտնակ, սխտորգուղ, ընկույզի
սանդ-հավանգ և այլ մանր տնական գործիքներ: Իրենք՝ ճախարակա-
գործները ունեին Տայոց քարի, Լիվանայի, Իշխաչբուրից (Համշենի)
անտառներում, որ ճախարակով տաշում, խմորի կլոր տաշտեր էին շի-
նում մի մետրից ավելի տրամագծով, կես մետր խորությամբ կիսագնդա-
ձև և բերում, ծախում էին քաղաքների շուկաներում շատ էժան գներով:
Սրանց հետ միասին բերում էին տաշտակներ, տեփուրներ, սուփրաներ
30 սմ բարձրությամբ և 30-1-50 սմ տրամագծով, բոլորակ, որոնք գործա-
ծում էին ավաններում, քաղաքներում և գյուղերում: Տաշտ և տեփուր ոչ
միայն բերում էին մինչև Կարս, Շիրակ, Արգրում, Ալաշկերտ, Մանագ-
կերտ, Մուշ, այլև հասցնում էին Լենինական և Երևան:

Անտառներում ջրաղացի առվի տակի պտտող ճախարակներին
սղոցներ էին միացնում, տախտակ ձևում և քաղաք տանում: Չամի փայ-
տի գերաններից փարչեր էին փորում գայլիկոններով ջուր կրելու համար:
Սրանց հատկություններն էին բւեկնի համը և հոտը տալ խմելու ջրին,
որոնք պաշտպանում էին խմողին թոքախտից: Այս փարչերը քյուղա –
որպես բուժական շատ հարգի էին նույնիսկ Կ. Պոլսում, ուր կիները գայ-
րանայիս, ասում էին ամուսիններին, - Ինձ արծաթե լճակից չամի փարչով
ջու՞ր ես մատակարարել: (Արծաթե լճակը Սողանլու անտառում էր)»¹

Տայքի արհեստների մեջ առանձնակի տեղ է գրավում պղնձագոր-
ծությունը, որի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ են հայտնում
ձեռքի տակ եղած արխիվները: Մաչավարիանին գրում է, որ Արդվինում
«Միայն պղնձագործների թիվը ավելի քան քսանն է, որոնցից յուրաքանչ-
յուրն ունի իր արհեստանոցը. քաղաքում պղնձի ամանների չափից ավել
լիություն է և այս արտադրությունը տարեցտարի ընդարձակվում է:»²
Ատրպետը ևս վկայում է. «Կարսում կենտրոնացած էին Ալաշկերտից,

¹ Ատրպետ, *Ինչ ժամանակինք, էջ 41-42:*

² *СМОЛІК, с. 36.*

Արգրումից, Երզնկայից, Արդվինից պղնձագործներ, որ շուկային տիրել էին և լավ գործ ունեին: Բայց հեռավոր գավառներում, Օլթի, Կաղզվան և Արդահան էլ կային պղնձագործներ, որոնք ևս շրջանի ազգաբնակչության կարիքներին բավարարություն էին տալիս:» Ավելի հետաքրքիր է պղնձե ամանների նկարագրությունը, որը նաև ազգագրական առումով է արժեքավոր նյութ. «1864 թ. Արդահանում ներքին տունը մտա, տեսա պատերի 3 կարգ թարեքների վրա շարված մի քանի հարյուր ներսից-դրսից կլեկված սանան, լանգար, պնակ և դրանց չափ էլ բրոնզի ամաններ և ներսից կլեկված, և դրսից դեղին թողնված, զարմացա, մնացի, թե ինչի՞ էին պետք այդ ամանների շարքերը: Երբ նոր տարու իրիկունը զարդարած եզը մորթեցին և սոմարնոց սապոնի պղնձով (250 կգ) հերիսան դրին և հետևյալ առավոտ 300 տնվոր ավանի բնակչությունը վերի բակում (գավիթում) հոգուհաց տվին-ճաշ տվին, հասկացա թե ինչի համար էին այդքան աման-չաման պահպանում ներքին տան մեջ: Արդահանում կային 10-20 մեծատներ, որոնց բոլորն էլ ներքին տան մեջ այդքան ամաններ թարեքների վրա շարված ունեին և գործածվում էին տարեկան 2-3 անգամ՝ հարսանիքի, նորածին զավակի և հոգու հացի օրերին»¹: Այստեղ ոչ ուղղակի խոսք է գնում նաև ճուլագործության մասին, քանի որ բրոնզի ամանները ձուլածո էին լինում:

Ե՛վ Ատրպետը², և՛ Մաչավարիանին իրենց աշխատություններում, թեև կարճ, սակայն խոսում են նաև կոշկակարների, կաշեգործ-դաբաղների, մուշտակագործների ու դերձակների մասին. «Դերձակների ու կոշկակարների թիվը 23-ն է, որոնք աշխատում են շատ վարպետորեն և ամենաառակյալ նյութով: Արդվինում կաշեգործական, օճառի, օդու 44 գործարան կա, 10 ջրադաց, 3 աղյուսի գործարան, 3 կղմինդրի և 10 կրի գործարան, ընդհանուր՝ 70 գործարան: Բացի այդ կան նաև բամբակյա գլխաշորերի և ասիական քուղերի ֆաբրիկաներ»³:

Հաջորդ արհեստների խումբը, որն ուզում ենք ներկայացնել, ուսայնանկությունն է, որի մեջ են մտնում ջուլիակությունը, գոտեգործու-

¹ Ատրպետ, *Ինչ ժամանակցինք*, էջ 30, 31:

² Նույն տեղում, էջ 54,56:

³ *СМОЛІТ*, с. 36-37.

թյունն ու քուղագործությունը, ասեղնագործությունն ու դաջագարդությունը, որոնցով զբաղվում էին կանայք և աղջիկները, որոնք, ըստ Մաչավարիանիի, ձեռագործի մեծ վարպետներ էին: Այս զբաղմունքների մասին հետաքրքիր տեղեկություններ ենք ստանում ինչպես Ատրպետի աշխատություններից, այնպես էլ ՇՄՈՄԻԿ-ից: Մասնավորապես Ատրպետը գրում է. «Տեղական տնայնագործական բամբակի եւ բրդի գործուածները, կտաւ, շիւա, մանուսա եւ շալ, սրանց ներկուածքները իրենց դիրքը պահպանել են ամենավաղ ժամանակներից մինչեւ 1877, որից յետոյ իսպառ տեղի տուին եւրոպական մեքենական արտադրութիւններին: Սպերի, Թորդումի, Կիսկիմի, Նարիմանի, Օլթիի, Արդանուշի, Օքրորագետի, Մաթելի, Արդվիմի, Մանիխելի կտաւ, շալ եւ մետաքս գործող, շիւա ու կապոյտ ներկող, մանուսա, գեզի, գոզոց, ջեջիմ, կապերտ եւ խալի գործող, չիթ դահող, ծաղիկ բանող վարպետները իսլամ բռնակալների ամենադաժան իշխանութեան շրջանումն անգամ անդորր եւ հասոյթաբեր կեանք են ունեցել եւ տասն անգամ աւելի առատութեան մէջ էին եղել, քանի դեռ չէին տարածուած մեքենական աշխարհի արտադրած գործուածքները»¹: Այնուհետև առանձնացնում է արդվինցիներին, գրելով «Ինչպէս ճարպիկ են Արդվինցիները իրենց պատրաստած գործուածները եօթը սարից անցկացնելու, եօթը ձորեր ման ածելով-շահով ծախելու. Այնպէս էլ արագաշարժ եւ նուրբ գործելու-հիւսելու վարժ են Արդվինցի կիները – կտաւ, մանուսա, գեզի գործելու մէջ ունակ ձեռք ու մատներ ունին, լայն համբերութիւն եւ տոկուն աշխատութիւն: Մանում են բամբակ, բուրդ, քեջի (մետաքս), քաթան զանազան տեսակ ընտիր եւ հասարակ գործուածներ: Շատ վարպետ էին նոյնպէս ձերերը, որոնց ներկած շիւան (կարմիրը) եւ կապուտը երբեք չէր գունատեր մինչեւ քրքրուելը: 1873 թ. Արդվինի հագարաւոր հորափներում այդքան բանուորուհի նստած՝ անվերջ գործում էին եւ չէին կարողանում բաւարարել պահանջը: Արդվինի շալ եւ մետաքս գօտին աւելի մեծ պահանջ ունէր մեր երկրում, քան թէ Իրանի քերման եւ Շամի ծաղկուն գօտին: Արդվինում գործուած եւ դահուած նկարներով եւ դիմանկարներով վարագոյրները

¹ Ատրպետ, Ճորոխի աւագանը, էջ 43:

թանկագին զարդեր էին: Առանց արտի, ազարակի, բաղչի ու պարտեզի Արդվինցի այրին տուն է պահել, տղայ է կրթել և աղջիկ կարգել առանց մեծ նեղութեան»¹:

Արդվինի կանանց ու աղջիկների աշխատասիրության, հմտության, բարձր վարպետության մասին հիացումով է խոսում նաև Մաչավարիանին: Նկարագրելով ջուլիակուհու աշխատանքը, նա գրում է. «Ջուլիակի հաստոցը պարզ կառուցվածք ուներ, սակայն ինձ ապշեցրեց ջուլիակուհու արհեստավարժությունը, աշխատանքի արագությունն ու գործվածքի նկարների բազմազանությունը: Նրա ձեռքում մաքուրը շարժվում էր մեքենայի արագությամբ ու ճշտությամբ: Այդ դազգահների վրա գործում են սպիտակ բյազ, բազմազույն բրդյա և մետաքսյա գոգնոցներ ու գոտիներ, գլխաշորեր (տարբեր չափի ու գույնի) և մեծ քանակությամբ գործվածքներ հագուստի և սպիտակեղենի համար: Թեև ու կտորի ներկումը կատարվում էր իրենց կողմից»²:

Հեղինակն անդրադարձել է նաև ասեղնագործությանը, որի մասին ևս արտահայտվում է նույն հիացումով: Այցելելով քաղաքի հայ կաթոլիկական և լուսավորչական իզական դպրոցներ ու ծանոթանալով դրանց աշակերտուհիների ձեռագործներին, հեղինակը գրում է. «Հայ-կաթոլիկական ծխական դպրոցներում ծանոթացանք այդ դպրոցների աշակերտուհիների աշխատանքներին, որոնք կատարվել էին Կ.Պոլսում կրթություն ստացած միանձնուհիների ղեկավարությամբ: Ինչ հրաշալի աշխատանքներ՝ որակի տեսակետից և քանակապես էլ մեծաթիվ: Մեր ուսումնական հաստատությունների կառավարիչներին ու ուսուցչուհիներին հարկ է սովորել արդվինցի միանձնուհիներից: Կարևորն այն է, որ աշակերտներն այստեղ պատրաստում են այնպիսի իրեր, որոնք իրականում պետք են կամ տան, կամ եկեղեցու համար: Ինչ սքանչելի են գունավոր գարուսով ասեղնագործված բարձի երեսները: Ինձ պակաս դուր չեկան ոսկեթելով գործված գոգնոցները, ֆեսերը, սփռոցները, սրբիչները, թաշկինակները... Բոլորը կատարված են նրբագեղորեն և անթերի-

¹ Նույն տեղում, էջ 216:

² СМОИТК, с. 35.

բարեխղճորեն: Կանվայի վրա գունավոր թելերով ասեղնագործված Աստվածամայրը մանուկի հետ ինձ հասկապես ապշեցրեց: Այդ միանձնուհիները իսկական նկարիչներ են: Նրանց գունաստ դեմքը վկայում է իրենց օր ու գիշեր տքնաջան աշխատանքի մասին: Հրաժեշտ տալով սրանց, ես մտա հայ-առաքելական եկեղեցու առաջնորդի մոտ, նպատակ ունենալով տեսնել հայ-առաքելական աշակերտուհիների աշխատանքները: Ներկայացված աշխատանքներն ինձ ապշեցրին և՛ քանակով և՛ որակով, չնայած կատարման նրբագեղությամբ պետք է առաջնությունը տալ հայ-կաթոլիկների ձեռագործներին: ... Պրոֆեսիոնալ ասեղնագործուհիները, որոնք հիմնականում աղքատ ընտանիքների կանայք են, աշխատում են խանութների համար և ձեռագործի բոլոր պարագաներն ու նյութերն իրենց տրվում են առևտրականների կողմից, որոնք առանձնապես չեն գնահատում կանանց աշխատանքը»¹:

Գեղարվեստական գործվածքի հետ կապված մյուս արհեստը դաջագարդությունն է, որի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ատրպետը: Դաջումը և ծաղկագարդումը բամբակյա գործվածքների զարդանախշման հնագույն եղանակներից են: Այս եղանակով պատրաստել են *յագմա* (վարշամակ), *յափուղ* (հարսի երեսի քող), բարձի, ներքնակի երեսներ, սփռոցներ, վարագույրներ, արխալուղի, զրունի կտորներ, գոտիներ և այլն: Բացի կենցաղային իրերից ու գլխաշորերից, գեղեցիկ ծաղկանախշվում էին նաև նորահարսների շապիկները: Արհեստի տեխնոլոգիան նկարագրելուց բացի, նա անդրադարձել է նաև դաջագարդ իրերի նկատմամբ բնակչության վերաբերմունքին, գրելով. «Շալչիթի գյուղական պատավները իրենց դալամքյար շապիկները, զրունները և կուբաները տարիներով սնդուկներում ծալված պահում էին և իրենց թոռներին ու ծոռներին կտակում, որ պսակին հագնվեն, բադ-դավորվեն և երջանիկ օրերի հասնին: Ընտիր դալամքյարները, որպես թալիսման ոչ միայն հարգվում, այլ պահանջվում էին նորինոր պսակվող դեռահասներից հատուկ պատգամավորներով, որպեսզի ամուսնացող

¹ Նույն տեղում, էջ 33-34:

դեռահասները բարի բաղդ-կյանք մտնեն, ծլեն ու ծաղկեն այդ հագուստի գեղանկար բույսերի, կոկոնների և վարդերի նման»¹:

Այն, որ Տայքում հենց հայերն են պատմականորեն զբաղվել արհեստներով ու սպասարկել տեղի մահմեդական բնակչությանը, ևս հաստատում է Ատրպետը՝ անընդհատ հիշեցնելով, որ հայերի ցեղասպանությունից ու բռնազաղթից հետո դատարկված բնակավայրերում մնացած թուրքախոս և մահմեդական ժողովուրդները մնացել էին անօգնական: Թորթումի գավառում, ըստ նրա՝ «Պատերազմից առաջ 23 հայ գիւղեր կային, որոնք շատ էին օգնում սրանց: Հայ գիւղերում կային արհեստաւորներ, որոնք շատ չնչին վարձով լրացնում էին Իսլամների կարիքները. Բայց այս օր էլ պայտոդ էլ չունին, դանակ սրոդ էլ չկայ ամբողջ գաւառում: Երկրագործը շինարար ձեռքերի կարոտ է, ո՛չ թե շղթայ հիւսող, այլ ճոպան ոլորող մագման էլ չեն գտնում»²:

Տայքի քաղաքներում արհեստավորները համախմբված էին արհեստավորական միությունների՝ համքարական կազմակերպությունների մեջ: «Գետերի աշխարհի մեջ չկա մի ավան, քաղաք, որ իր արհեստավորների համքարի շարքերը չունենա և դժվար է գտնել որևէ արհեստավոր, որ իրեն արհեստանոցը տարված գործը մերժե կատարելու – չեմ գիտի պատճառաբանությամբ, կամ – չեմ կարող խոստովանությամբ»³:

Տայեցիների արհեստների մասին կարևոր սկզբնաղբյուր են նաև գերեզմանաքարերի վրայի պատկերները: Հայոց մեջ ընդունված է եղել հանգուցյալների տապանաքարերի վրա քանդակել նրա զբաղմունքը կենդանության օրոք: Նման հուշարձանների մասին ևս իմանում ենք Ատրպետից, որը, ներկայացնելով Օլթի գետի շրջակայքը, մանրամասն նկարագրել է ավերակ գերեզմանոցը. «Գերեզմանաքարերից անկուած մի ընդարձակ անտառ, որտեղ արհեստաւորները մրցել եւ քարերի վրայ զարդարել են կենդանութեան ժամանակ մեռնողների կատարած արհեստները: Գերեզմանաքարերը լեզու առած ասում են, թե այնտեղ հանգստացողն եղել է ժամանակին որսորդ...: Ամէն քարի վրայ խորհրդանիշ

¹ Ատրպետ, *ինչ ժամանակցինք*, էջ 11:

² Ատրպետ, *Ճորոխի Ավագանը*, էջ 158:

³ Ատրպետ, *Ինչ ժամանակցինք*, էջ 65:

կայ, որոնք ասում են թե, այդտեղ պառնկողն եղել է դերձակ, կամ դարբին, հիւսն կամ ջուլիակ»¹ :

Եզրահանգում. Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք ասել, որ Տայքի հայերի գրադոմունքները մեծ ընդհանրություն են ցուցաբերում Հայաստանի պատմագագազրական այլ մարզերի, մասնավորապես՝ Բարձր Հայքի բնակչության տնտեսական գործունեության ձևերի հետ: Դրանով հանդերձ, դրանք ունեն նաև որոշակի առանձնահատկություններ՝ կապված Տայքի կլիմայական պայմանների հետ: Եթե երկրագործական գրադոմունքները նմանություններ են դրսևորում համշենահայերի տնտեսական գործունեության ձևերի հետ, ապա քաղաքային մշակույթն իր զարգացած արհեստներով ու առևտրով ավելի նույնական է Բարձր Հայքի հետ, ինչը վկայում են թանգարանային հավաքածուները, ձեռագիր ու տպագիր սկզբնաղբյուրները: Հատկանշական է, որ Տայքում բարձր զարգացման էին հասել ու արտահանման առարկա էին թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց ձեռքի աշխատանքները, որոնց մասին հիացական խոսքեր են թողել ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հեղինակները:

References

1. Akopov A., *Tayk administrative and demographic picture from the XVI century till the first third of the XIX century* [Tayk'. Varch'azhoghovrdagrakan patkery XIV darits' XIX dari I yeresnamyaky]. Yerevan, Publication of Institut of History NAS, 2013. (in Armenian).
2. Arutyunov S., Ryzhakova S., *Cultural Anthropology* [Kul'turnaya antropologiya]. Moskow, Publishing house Ves Mir, 2004. (in Russian).
3. Atrpet, *What We Inherited*, [Inch' zharrangets'ink', Leninakan, 1933, Hayastani patmut'yan t'angarani arkhiv, 176 (a)]. (in Armenian).
4. Atrpet, *Chorokhi Basin*, [Chorokhi awazany]. Wien: Publication of the Mkhitaryan Congregation, 1929. (in Armenian).
5. Vardumyan D., *General characteristics of the main historical and ethnographic marzes of Armenia (19-20th centuries)* // Historical-philological Journal, Yerevan, 2004, No. 2, pp. 48-64. (in Armenian).

¹ Աղոթյալն, Ճորոխի սալազանը, էջ 176:

6. Tashyan H., *Tayk, Neighbors and Khotorjur (Historical-topographic study)*, [Tayk', drats'ik' yev Khotorjur (Patmakan-teghagrakan usumnasirut'iwñ)]. Wien: Publication of the Mkhitaryan Congregation, 1929. (in Armenian).
7. Guschyan L., *The Traditional Culture of the armenians of Ardivin and Ardanuch*
8. *Traditional culture of Armenians of Ardivin and Ardanuch* [Traditsionnaya kul'tura armyan Ardvin i Ardanucha (po materialam kollektzii A. Florenskogo iz sobraniya REM)]. By the materials of A. Florensky's collection in the RME, pp. 82-83. (in Russian).
9. Machavariani K., *City of Artvin* [Gorod Artvin]. Collection for the description of localities and tribes of the Caucasus, Tiflis, 1897, No. 22, section II, pp.1-53. (in Russian).

ՀՏԴ 94

**ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՅՔ
ՆԱՀԱՆԳՈՒՄ 1877-1878 ԹԹ. ՌՈՒՄ-ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ֆելիքս Մովսիսյան

Վանաձորի պետական համալսարան, Հայաստան
felmov52@gmail.com

Ամփոփում. 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին անդրադարձած արևելահայ պարբերականներից «Փորձ» հանդեսն այն անվանում է արևելյան պատերազմ: Հանդեսի կարծիքով՝ հակամարտության հիմնական պատճառը արևելյան հարցն է, որի լուծման համար նախկին պատերազմներից ոչ մեկն այնքան կարևոր նշանակություն չի ունեցել, որքան ներկա պատերազմը: «Փորձը» պատերազմում Ռուսաստանի հաղթանակը կարևորում է նրանով, որ հայկական հարցի ծագումը և արևմտահայերի ինքնավարություն ստանալու կենսական պահանջը դարձել է եվրոպական տերությունների դիվանագիտության քննարկումների առարկա:

«Մեղու Հայաստանի» և «Մշակ» թերթերը հանգամանորեն պատմում են Անդրկովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի գործողությունների, մարտավարության, հաղթահարած դժվարությունների և տարած բոլոր հաղթանակների մասին: Նրանք նշում են այդ հաղթանակներում հայ բաճրաստիճան զինվորականության գործուն մասնակցությունը, ռուսական զորքերին ամենուրեք հայերի բարեկամաբար ընդունելն ու աջակցությունը: Հայ պարբերականներն ընդգծում են, որ հայությունն անհամբերությամբ սպասում է Թուրքիայի պարտությանը և կարևորում են պատերազմում Ռուսաստանի հաղթանակն արևմտահայության ճակատագրի լուծման տեսանկյունից: «Մշակը» գտնում է, որ ռուսաց զենքի հաղթանակից ոգևորված հայությունը պետք է իրատես լինի, անհնարին և անիրագործելի բաներ չպահանջի և բավարարվի, եթե Հայաստանը ստանա ներքին կառավարչական ինքնավարություն:

Քանալի բառեր` *Արևելյան հարց, պատերազմ, Արդահան, Կարս, հաղթանակ, հայ զինվորականներ, արևելահայ մամուլ:*

THE EASTERN-ARMENIAN PRESS ON THE RUSSIAN - TURKISH WAR ACTIONS IN THE HISTORICAL PROVINCE OF TAYK IN 1877-1878

Felix Movsisyan

Vanadzor State University Armenia
felmov52@gmail.com

Abstract. The Eastern-Armenian periodical “Pordz” referring to the Russian-Turkish war of 1877-1878, called it the Eastern War. According to the journal, the main cause of its conflict was the eastern problematic issue, for the solution of which no previous war was as crucial as that one. The journal emphasized Russia’s victory in the war by the fact that the origin of the Armenian problem and the vital demand of the Western-Armenians to

obtain autonomy became a matter of diplomatic discussions of the European Powers.

The newspapers “Meghu” of Armenia” and “Mshak” wrote in detail about the actions, tactics, difficulties and all the victories of the Russian troops in the Transcaucasian front. The periodical also focused on the active participation of the high-ranking Armenian military personnel in those victories, the friendly reception of the Armenians everywhere, as well as on their support for the Russian troops. Periodicals mentioned that the local Armenians were eagerly waiting for Turkey’s defeat and valued Russia’s victory in the war for the solution of the Western-Armenians’ fate.

“The Mshak” believed that the local Armenians, excited by the victory of the Russian troops, should be realistic not to demand anything impossible, unrealizable and therefore be satisfied with the possibility of receiving the internal administrative autonomy of Armenia.

Key words: *eastern issue, war, Ardahan, Kars, victory, Armenian military personnel, Eastern-Armenian press.*

Նախաբան: Բալկաններում լուրջ քաղաքական շահեր հետապնդող Ռուսաստանը, օգտվելով եվրոպական երկրներում հակաթուրքական տրամադրությունների վերելքից և Բարձր դռան կողմից 1876 թ. դեկտեմբերի 11-ի Կոստանդնուպոլսի գազաթաժողովի որոշումը մերժելուց, 1877 թ. ապրիլի 12-ին Օսմանյան կայսրությանը պատերազմ հայտարարեց: Ռուս-թուրքական պատերազմը, որի մի ճակատը դարձավ Անդրկովկասը, լայն արձագանք գտավ ժամանակի արևելահայ պարբերական մամուլում: Պատերազմական գործողություններին անմիջականորեն անդրադարձան Թիֆլիսում լույս տեսնող ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող «Փորձ» հանդեսը, «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը և լիբերալ հոսանքի առաջատար «Մշակ» թերթը:

«Փորձը» ռուս-թուրքական պատերազմի բռնկումը կապում է չլուծված Արևելյան հարցի հետ: Դրան Ռուսաստանը «նայում է բոլորովին այլ տեսանկյունից, պահանջում է ազատություն տալ Թուրքիայի պավոններին», որոնք Օսմանյան պետության անկման հետևանքով «կկազմեն ա-

ռանձին իշխանություններ և կենթարկվեն ռուսաց տերության ազդեցությանը»¹: Թուրքիան «մերժեց դեսպանաժողովի խելացի առաջարկությունները», որը սաստկացրեց Արևելյան ճգնաժամը և հանգեցրեց պատերազմի: «Փորձը» ռուս-թուրքական հակամարտությունն անվանում է «արևելյան պատերազմ» և համոզմունք հայտնում, որ եվրոպական պետություններն այս պատերազմում այնքան ժամանակ չեզոքություն կպահպանեն, մինչև ռուսական զորքերը չմոտենան Կոստանդնուպոլսին ու սպառնան Օսմանյան կայսրության մասնատմանը²:

«Մեղու Հայաստանին» ընդգծում է այն իրողությունը, որ Թուրքիան մերժեց 1877 թ. մարտի 31-ին Լոնդոնում եվրոպական վեց պետությունների ստորագրած արձանագրությունը՝ համարելով այն իր ներքին գործերի միջամտություն, «որով անհետացավ խաղաղության հույսը, ամենքին տիրեց պատերազմի սարսափը»³:

«Մշակի» դիտարկմամբ՝ եվրոպական վեց պետություններ Թուրքիային խորհուրդ տվեցին զիջումներ անել արևելյան ճգնաժամը խաղաղ ճանապարհով լուծելու համար, բայց նրանց ջանքերն ապարդյուն անցան: «Երկար ժամանակ սպասված պատերազմը սկսվեց, գրում է թերթը, - և այժմ բոլոր դատողություններն ավելորդ են: Քրիստոնյաների պաշտպանության գործը ընդդեմ մահմեդական տարրի բարբարոս ճնշման և անվերջանալի արևելյան խնդիրը ռուսաց կայսրի կամքով կվճռվի ոչ թե անորոշ դիվանագիտական բանակցություններով, այլ սրով և արյունով»⁴:

«Փորձը» անդրադառնում է ռուս-թուրքական պատերազմի առաջին ամիսներին Անդրկովկասում ծավալված գործողություններին, իսկ «Մեղու Հայաստանի» և «Մշակ» թերթերը դրանք պարբերաբար լուսաբանում են ստացված հեռագրական լուրերի, ռուսական, եվրոպական ու թուրքական մամուլի հրապարակումների հիման վրա: «Մշակն» այդ լուրերը լուսաբանում է «Ներքին տեսություն» բաժնում և, ի տարբերու-

¹ «Փորձ», 1877, № 3, էջ 385-388:

² «Փորձ», 1877, № 4, էջ 407-409:

³ «Մեղու Հայաստանի», 1877, № 13:

⁴ «Մշակ», 1877, № 24, էջ 3, № 26, էջ 1:

թյուն «Մեղու Հայաստանի», յուրաքանչյուր լուր տպագրելիս անպայման նշում է իր տեղեկատվության աղբյուրը և ստացման օրը, որոնք գետեղում է նույնությամբ: Դրանց բովանդակությունը վկայում է, որ այդ լուրերը ստացվել են ռուսական կողմից, որոնցում թուրքերն անվանում են «թշնամի և հակառակորդ», իսկ ռուսական զորքերը՝ «մեր զորքերը»:

«Մշակը» տպագրում է 1877 թ. ապրիլի 12-ին Զիշինևում ռուսաց կայսր Ալեքսանդր II-ի ստորագրած հրամանագիրը՝ Թուրքիային պատերազմ հայտարարելու մասին: Նրանում շեշտվում էր, որ Ռուսաստանը հարկադրված է դիմել գենքի ուժին, որովհետև Թուրքիան, «դրսևորելով ինքնահավան կամակորոթյուն, մերժել է իրեն ներկայացված խաղաղության առաջարկությունը»:

Թերթը գետեղում է նաև Կովկասի փոխարքա, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Միխայիլ Նիկոլանիչ Ռոմանովի ուղերձը Էրզրումի նահանգի բնակիչներին, որտեղ ասվում էր, որ ռուսական զորքերը չեն եկել Թուրքիայի «խաղաղ հպատակներին կործանելու համար, այլ անմեղ տանջվողներին, հարստահարվողներին օգնության ձեռք մեկնելու համար»¹:

«Փորձը» Անդրկովկասում ռազմաճակատի բացումը պայմանավորում է Հայաստանի աշխարհագրական դիրքով, որտեղ Ռուսաստանն ու Թուրքիան մշտապես հակամարտել են «Արևելքին տիրելու համար: Այդ նշանակությունը երբեք այդքան մեծ չի եղել, ինչպես որ ներկայիս պատերազմի ժամանակ»²:

Երբ ռուսական զորքերն ապրիլի 12-ին Ախալցխայից, Ալեքսանդրապոլից և Երևանից երեք ուղղություններվ անցան սահմանը, պարզ դարձավ, որ «Թուրքիան այնքան պատրաստ չէ պատերազմի, որքան Ռուսաստանը: Ուստի արևելյան ազգերի վրա մի գորեղ տպավորություն թողնելու համար որոշվեց առաջ գնալ և օգուտ քաղել թշնամու թուլությունից»³:

¹ «Մշակ», 1877, № 17, էջ 1, № 29, էջ 1:

² «Փորձ», 1877-1878, № 3, էջ 395:

³ Նույն տեղում, էջ 399:

Հայ պարբերականները նկատում են, որ թուրքերը չկարողանալով դիմադրել, ամեն տեղից դուրս են գալիս և ամուր պահում են միայն Կարսի, Արդահանի, Էրզրումի և Չիվլինի բերդերը, որոնք ռուսական զորքերը ցանկանում են առաջնահերթ գրավել: Թուրքիայի սահմանն անցած ռուսական զորքերին ամենուրեք քրիստոնյա բնակչությունը, անգամ քրդերը, «դիմավորում են ինչպես թանկագին, անհամբերությամբ սպասված հյուրերի» ու նրանց ցույց տալիս ամեն տեսակ օգնություն: Այս տեղեկությունը հավաստի էր, որովհետև, շատ վայրերում հայ և հույն բնակչությունը հոգևորականության գլխավորությամբ ռուսական զորքերին դիմավորում էին «խաչով, խաչվառով և սրբապատկերներով, հայտնում էին իրենց հնազանդությունն ու ոգևորությունը»¹:

«Մշակի» խմբագիր Գ.Արծրունու կարծիքով պատերազմի հարցում Կ. Պոլսի և բուն Հայաստանի հայերը տարբեր դիրքորոշում ունեն: Կ. Պոլսի հարստացած, պետական նշանավոր պաշտոնների հասած հայերի «շահը պահանջում է ամեն ջանք գործ դնելու Թուրքիայի պես թույլ և անսխտեմական տերությանը պաշտպանելու» համար, մինչդեռ «գավառահայությունը, հայաստանցի հայր անհամբերությամբ սպասում են ռուսաց զորքերի իր հայրենիք մտնելը»: Նրա համոզմամբ՝ «ճնշված, հարստահարված, չարչարված, տանջված, խեղդված Հայաստանը անհամբերությամբ սպասում է Թուրքիայի, որպես պետական մարմնի, անկման և կործանման»²: Գ.Արծրունին ցավով նշում է. «Կրկին պատերազմի բեմը Հայաստանն է, հին պատմական Հայաստանն է, որի վրայով այնքան ազգեր են անցկացել, ամենքը նրա հողի վրա իրանց և հայի արյունն են թափել, ամենքը իրանց հետքը թողել»³:

Անդրադառնալով պատմական Տայք նահանգում ծավալվող պատերազմական գործողություններին, «Մշակը» գրում է, որ Կովկասյան բանակի կորպուսի հրամանատար գեներալ-ադյուտանտ Մ.Տ.Լոռիս-Մե-

¹ *Материалы для описания русско-турецкой войны 1877-1878 гг. на Кавказско-Малиазитском театре. Под ред. Генерал-лейтенанта И.С.Чернявского. Т.1, СПб, 1904, с.104.*

² «Մշակ», 1877, № 27, էջ 1-2:

³ «Մշակ», 1877, № 28, էջ 1:

լիքովը ապրիլի 18-ին Կարսից 28 վերստ հեռու բախվեց թուրքական զորքերի հրամանատար Մուխտար փաշայի զորքի հետ ու նրան ստիպեց նահանջել, որն «ավելի շատ փախուստի էր նման»¹:

«Փորձի» տեղեկություններով Ախայցխայի ջոկատի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ֆ.Դ.Դեվելը ապրիլի 20-ին հասավ Օլչեկ ու «կանգ առավ Արդահանի տակ՝ չհարձակվելով բերդի վրա»²:

«Մեղու Հայաստանին» հայտնում է, որ թուրքական զորքերը կենտրոնանում են Սողանլուղում, որպեսզի փակեն ռուսական զորքի ճանապարհը դեպի Արդահան, որտեղ ապրիլի 25-ին հասավ գեներալ Ֆ.Դ.Դեվելի ջոկատը:

«Մշակը» և «Մեղու Հայաստանին» տեղեկացնում են, որ Մ.Տ.Լոռիս-Մելիքովը ապրիլի 26-ին, առանց դիմադրության հանդիպելու, մտավ Կաղզվան: Քաղաքի բնակիչները նրան հանձնեցին թուրքական իշխանությունների կողմից իրենց բաժանած գեներալի վառոդը: Նույն օրը ռուսական զորքը Կարսի հյուսիս-արևմտյան մասում հետախուզություն իրականացնելիս՝ Բերդիքչայի մոտ, հաջողությամբ ետ մղեց Կարսից դուրս եկած թուրքական հեծելազորի և դարանակալած 4 զումարտակ հետևակի հարձակումը:³

Հայ պարբերականների տեղեկություններով՝ ապրիլի 26-28-ին ռուսական զորքերը հետախուզեցին Արդահանի ամրացված դիրքերը: Ապրիլի 27-28-ին թուրքական զորքի մի մասը դուրս եկավ բերդից և փորձեց հարձակում իրականացնել, բայց հաջողության չհասավ ու ստիպված ետ քաշվեց: Գեներալ-ադյուտանտ Մ. Տ. Լոռիս-Մելիքովը Չայմից դուրս եկավ Արդահանի ճանապարհի վրա և ապրիլի 30-ին կանգնեց Խեվլիսկեար գյուղից ոչ հեռու⁴: Ապրիլի վերջին պարզ դարձավ, որ գեներալ Ֆ.Դ.Դեվելի ջոկատը բավարար չէ Արդահանը գրավելու համար, որն ուներ 8100 կայազոր (12 զումարտակ, 3 հեծելավաշտ) և 95 հրանոթներից

¹ Նույն տեղում, էջ 2:

² «Փորձ», 1877-1878, № 1, էջ 400:

³ «Մեղու Հայաստանի», 1877, № 16, էջ 3, «Մշակ», 1877, № 30, էջ 3:

⁴ «Մեղու Հայաստանի», 1877, № 17, էջ 3, «Մշակ», 1877, № 31, էջ 1:

կազմված 16 մարտկոց¹: Նրան օգնելու նպատակով գեներալ-ադյուտանտ Մ.Տ.Լոռիս-Մելիքովը, ով Ալեքսանդր II-ի պահանջով «գործողությունների լիակատար ինքնուրույնություն և իրավասություններ էր ստացել²», առանձին զորաբաժին վերցնելով, հարավային կողմից շարժվեց դեպի Արդահան:

«Փորձի» տեղեկություններով մայիսի 4-5-ը ռուսական զորքերը հաջողությամբ գնդակոծեցին Արդահանի բերդը և թուրքական ուժերին ստիպեցին անձնատուր լինել:³

«Մեղու Հայաստանի» և «Մշակ» թերթերը Արդահանի գրավման գործում կարևորում են գեներալ-ադյուտանտ Մ. Տ. Լոռիս-Մելիքովի դերը, ով շրջապատեց Արդահանը, խզեց քաղաքի ու բերդի կապը Կարսի և Օլթիի հետ: Դրա շնորհիվ հնարավոր դարձավ մայիսի 4-ի առավոտյան ժամը 8-ին սկսել Արդահանի բերդի ոմբակոծումը 44 մեծ թնդանոթներից, որը տևեց 6 ժամ: Կեսօրից հետո սկսվեց հարձակում Գելավերդի ամուր դիրքի վրա, որը միաժամանակ իրականացրեցին գեներալներ Մ.Տ.Լոռիս-Մելիքովի զորքը՝ հարավից և Ֆ.Դ.Դեվելի զորքը՝ հյուսիսից: Թուրքերը համառորեն պաշտպանվում էին, բայց ի վերջո ստիպված եղան փախչել ռուսական հրետանու դիպուկ հարվածների տակ, որին չդիմացան անզամ անզվիացիների կառուցած բավական հզոր ամրությունները: Մայիսի 6-ին ռուսական զորքը կռվով վերցրեց Արդահան քաղաքն իր բերդով: Թուրքերը թողեցին 92 թնդանոթ, մեծ քանակությամբ զենք, զինամթերք, պարեն և սվեցին գերիներ⁴:

Հայ պարբերականները բավական հավաստի են ներկայացնում Արդահանի բերդի գրավումը, որի պարետ Հուսեյն փաշային թուրքական զորքերի հրամանատար Մուխտար փաշան հրամայել էր մինչև վերջին հնարավորությունը պաշտպանել բերդը: Մայիսի 5-ին ռուսական հրետանու հուժկու հարվածներից հետո ընկան անզվիացի ճարտարագետ-

¹ Кюшмиев С.О. Война в Турецкой Армении 1877-1878 гг. СПб, 1884, с. 67; «Военно-исторический сборник», СПб, 1914, № 3, с.192.

² Крбежян В.Г. Участие в русско-турецкой войне 1877-1878 гг., Ереван, 2004, с.24.

³ «Փորձ», 1877-1878, № 1, էջ 400:

⁴ «Մեղու Հայաստանի», 1877, № 17, էջ 4, «Մշակ», 1877, № 33, էջ 1-2, № 34, էջ 2, № 37, էջ 2:

ների կառուցած Էմիրոլլի, Սինգեր, Գազթափասի և Գելավերդի ամրությունները, որից հետո Արդահանն ընկավ: Բերդի գրոհն անձամբ գլխավորած Մ.Տ. Լոռիսի -Մելիքովը մայիսի 6-ին գորքին հղած հրամանում Արդահանի գրավումը հայտարարեց պատերազմում «առաջին կարևոր և մեծադորդ հաղթանակը»¹:

«Մշակը» թուրքական մամուլի հրապարակումներից նկատում է, որ Կ.Պոլսում չափազանց ծանր են տարել Արդահանի գրավումը: Օսմանյան խորհրդարանում այն աստիճան վստահ էին իրենց հաղթանակի վրա, գրում է թերթը, որ երբ բերդի անկման լուրը հասավ Կ.Պոլիս, պատգամավորները Արդահանի գորքի հրամանատարին դատաստանի կանչեցին՝ կասկածելով նրան կաշառվելու և քաղաքը ռուսներին հանձնելու մեջ²: Մուխտար փաշան Արդահանի կորստի համար մեղադրում էր կայազորի պետին ու նրա ենթականերին, որոնց համարում էր «եռանդից զրկված ու անհասկացող մարդիկ», իսկ բերդի անկումը՝ «դժբախտ պատահականություն»³:

Հայ պարբերականները ճիշտ են ընկալում, որ Արդահանի գրավումից հետո ռուսական զորքերի հարվածի գլխավոր ուղղությունը դարձել է Կարսը՝ ժամանակի ամենաուժեղ պաշտպանական կառույցներից մեկը: Կարսն ուներ 20 հազար կայազոր, նոր ձուլված 300 հրանոթ, մեծ քանակությամբ զենք, զինամթերք և պարեն⁴:

«Մեղու Հայաստանին» գրում է, որ 1877թ. մայիսի սկզբին Կարսի բնակիչները պահանջում են, որ բերդի կայազորը դուրս գա դաշտ և դիմադրություն ցույց տա ռուսական զորքերին: Թուրքերը փորձեցին Կարսի հյուսիսում հետախուզություն իրականացնող զեներալ-մայոր Կ.Վ. Կոմարովին մոլորեցնել ու մոտեցնել բերդին, որպեսզի այնտեղից թնդանոթներով հարվածեն,բայց հաջողության չհասան ու ետ քաշվեցին⁵:

¹ *Материалы...*, с. 144,154, 254, *Кишмишев С. О. Указ. соч.*, с. 82-93.

² «Մշակ», 1878, № 5, էջ 2-3:

³ «Военно-исторический сборник», СПб, 1915, № 2, с. 191-192.

⁴ *Осада и штурм крепости Карс в 1877 г. СПб, 1885, с. 96.*

⁵ «Մեղու Հայաստանին», 1877, № 17, էջ 4:

«Մշակի» ստացած լուրերով՝ մայիսի 1-ին Կարսի տակ թուրքերի նահանջից հետո՝ մայիսի 9-ին, գեներալ-ադյուտանտ Մ.Լոռիս-Մելիքովը 8 գումարտակով, իսկ հաջորդ օրը Ախալցխայի ջոկատի հրամանատար գեներալ- լեյտենանտ Ֆ.Գ.Դեվելը՝ 7 գումարտակով շարժվեցին դեպի Կարս: Մայիսի 13-ին Մ.Լոռիս - Մելիքովը իր հեծելագործով «նշանավոր կռիվ տվեց Կարսից դուրս եկած թուրքական զորքի դեմ»¹:

«Մեղու Հայաստանի» տեղեկություններով՝ Կարսի մատույցներում մայիսի 18-ին տեղի ունեցած կռվի ժամանակ թուրքերը մարտի դաշտը քրեցին ու փախան²: Թերթը նկատի ունի Բեգլի Ահմեդ գյուղի գիշերային նշանավոր հեծելագորային մարտը, որտեղ գեներալ-մայոր Չ.Գ. Չավչավաձեն և Կովկասյան հեծելագորային դիվիզիայի առաջին բրիգադի հրամանատար գեներալ-մայոր Ի.Ե.Լոռիս-Մելիքովը ջախջախեցին Մուսա Կուլեդուխովի գլխավորած չերքեզների 1500 հեծյալ ջոկատը³:

«Մշակը» հայտնում է, որ մայիսի 21-ին Արդահանից դուրս եկած գեներալ-մայոր Կ. Կոմարովն իր հեծելագործով, 40 ժամում հաղթահարելով 115 վերստ, փոքր կռիվ տալով մտավ Օլթի, որտեղից թուրքերը հեռացան Էրզրումի ուղղությամբ: Մայիսի 23-ին Երևանյան ջոկատի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ա.Ա.Տեր Ղուկասովի ջոկատի մի մասը մտավ Ղարաքիլիսա, որտեղից թուրքական զորքը ռուսների մոտենալուն պես փախավ:Տեղի բնակիչները ուրախությամբ ընդունեցին ռուսաց զորքին⁴:

Մայիսի 28-ին Ա. Ա.Տեր Ղուկասովը գրավեց Ալաշկերտը, հաջորդ օրը՝ Չեյդեկանը,իսկ մայիսի 31-ին Մ.Տ.Լոռիս-Մելիքովից հրաման ստացավ ակտիվանալ Սողանլուղի բարձունքներում, որը բնական վերջին արգելքն էր Կարսի ճանապարհին: Դրանով նա կիսանգարեր Մուխտար փաշային օգնության գնալ Կարսին: Հունիսի 1-ին Ա.Ա.Տեր Ղուկասովը Չայդեկանի և Դալի-Բաբայի միջև գտնվող սարերում գլխովին ջախջախեց թուրքերին, որտեղից նրանք փախան՝տալով մեծ թվով գերիներ⁵:

¹ «Մշակ», 1877, № 32, էջ 2, № 34, էջ 2, № 36, էջ 1:

² «Մեղու Հայաստանի», 1877, 20:

³ Материалы..., с. 306.

⁴ «Մշակ», 1877, № 39, էջ 1:

⁵ Крбежан В. Указ. соч., с.32-38.

Այս կատարյալ հաղթությունից հետո, գրում է «Մշակը», Ա.Ա. Տեր Ղուկասովը հունիսի 9-ին ենթարկվեց թշնամու գերակշիռ ուժերի հարձակմանը Դայար գյուղից ոչ հեռու: Կռիվը տևեց 10 ժամ, թուրքերի բոլոր գրոհները նա հաջողությամբ ետ մղեց, ում զինվորները «աննման կերպով կատարեցին իրենց գործը¹»:

Հունիսի 13-ին, տեղեկացնում է «Մշակը», գեներալ-լեյտենանտ Վ.Ա. Գեյմանը մոտեցավ Չիվինի դիրքերին, ոմբակոծեց այն, ապա երեք շարքով հարձակվեց թուրքերի վրա, բայց մեծ կորուստներ կրեց՝ տալով մոտ 800 սպանված ու վիրավոր: Թերթը չի գրում, որ ռուսները Չիվինի մոտ պարտություն կրեցին ու քաշվեցին դեպի Կարս, բայց տեղեկացնում է, որ այդ կռիվից հետո Մ.Լուռի- Մելիքովը ստիպված թողեց իր գրաված բարձունքները և Սողանլուղի սարերի երկայնքով շարժվեց դեպի Խանադերի: Հունիսի 16-ին գեներալ-մայոր Կ.Վ.Կոմարովը Արդանուչի մոտ ջախջախեց Ահմեդ էֆենդու գործին²:

«Մշակը» տևական ժամանակ պատերազմի ընթացքը լուսաբանելուց զատ, կարծիք է հայտնում, թե ինչ դիրքորոշում պետք է ունենա ռուսահայությունն այս պատերազմում: Այդ կապակցությամբ թերթը գրում է. «Ներկա ռուս-թուրքական պատերազմի մեջ մենք՝ ռուսաստանցի հայերս, ոչ թե միայն պարտական ենք պետության մնացած հպատակներին հավասար նվիրել մեր ամբողջ ուժերը պետությանը օգնելու պատերազմը հեշտացնելու համար, բայց ավելի էլ պետք է զոհենք մեր թե՛ ֆիզիկական ուժերը և թե՛ դրամական միջոցները, աչքի առջև ունենալով, որ այդ պատերազմի հաջող վերջանալուց կախված է մեր ցեղակից և կրոնակից եղբայրների, թուրքահպատակ հայերի վճռելը: Մենք գոնե այդ համոզմունքով և հույսով ենք ապրում, և իհարկե որքան մեծ է մեր համակրությունը դեպի այդ գործը, այնքան համեմատաբար լայն, առատ և անսպառ պետք է լինեն պատերազմի համար մեր արած և անելու նվիրատվությունները և զոհաբերությունները»³:

¹ «Մշակ», 1877, № 43. էջ 2, № 44, էջ 2:

² «Մշակ», 1877, № 44, էջ 4, № 45, էջ 2, № 46, էջ 1-2:

³ «Մշակ», 1877, № 46, էջ 1:

Զիվիհի պարտությունից հետո՝ հունիսի 24-ին, Մ. Լոռիս-Մելիքովը հանեց Կարսի պաշարումը և թուրքերից աննկատ քաշվեց դեպի ռուսական սահմանը, իսկ Ա. Ա. Տեր Դուկատովը 12 օրյա աննախադեպ նահանջ կատարեց Դրամ դաղից մինչև Իգդիր, որը հետագայում մտավ ռազմական գիտության դասագրքերը¹:

«Փորձն» անդրադառնալով Կարսի բերդի գրավման ձգձգմանը, դա բացատրում է պատերազմի մարտավարությամբ, որը պահանջում է «ամբողջ զորքը կիրառել բերդերը պաշարելու համար, այլ մի քանի զորաբաժինների հանձնելով այդ գործը, անցնել թշնամու սրտին տիրելու»: Հանդեսի կարծիքով այդպես էր մտածում նաև Մ. Տ. Լոռիս-Մելիքովը, որովհետև 20 հազար բերդապահ զորք ունեցող Կարսը գրավելու համար, նրան ավելի մեծ ուժեր էին հարկավոր, քան ուներ: Երկար խորհրդակցություններից ու ռազմական պլանները վերանայելուց հետո, ռուսական հրամանատարությունը որոշեց բավարարվել Կարսը շրջափակելով: Թուրքական զորքի գրադեցրած դիրքը խափանեց այս ծրագրի իրագործումը: Սողանլուխի մոտ կանգնած Մուխտար փաշայի 50-60 հազար զորքը կարող էր հեշտությամբ օգնության հասնել Կարսին և բերդը շրջափակելու մտադրությունը ի դերև հանել: Դա թույլ չտալու համար գեներալ Ա. Տեր Դուկատովը, որի զորքը վճռական հարված հասցնելու համար շատ անգոր էր, բավական հարմար դիրք գրավեց, որով Մուխտար փաշային շփոթեցրեց ու խափանեց Կարսի վրա շարժվելու նրա պլանը: Հունիսի սկզբներին Ա. Տեր Դուկատովն Ալաշկերտից շարժվեց դեպի Սողանլուխ, որպեսզի մոտենա Կարսին ու այն ռմբակոծի: Ռուսական հրամանատարությունը շուտով այս մտադրությունից հրաժարվեց, երբ մոտիկից գննեցին Կարսի ամրությունները: Բոլոր թնդանոթները միասին գործի դնելը նպատակահարմար չգտան և բավարարվեցին մի քանի թնդանոթներ կիրառելով: Հունիսին Մուխտար փաշան Տրապիզոնից օգնություն ստացավ և հասավ Կարս, որով բերդը ռմբակոծելը դարձավ անհնար: Որոշվեց զորքին հանգիստ տալ և այն օգտագործել միայն

¹ Колубакин Б.М. Эриванский отряд в кампанию 1877-1878 гг.//Военный сборник. СПб, 1888, 9, с.12; «Военно-исторический сборник», СПб, 1915, № 2, с.190.

մեծ ճակատամարտի ժամանակ, երբ հարկ լիներ թշնամուն դիմակայել բաց դաշտում: Այս ծրագիրն իրագործելու համար Մ.Տ. Լոռիս-Մելիքովը շարժվեց դեպի Բյուրուք-Դարա, որտեղ կարող էր հանգիստ դիմավորել թուրքերին, անկախ այն բանից, թե նրանք որ կողմից կհարձակվեին՝ Ալեքսանդրապոլի, թե Երևանի¹:

«Փորձն» ընդհանուր առմամբ հավաստի է ներկայացնում Կարսի շրջանում ծավալված գործողությունները: Հունիսի 2-ից Կարսի պաշարումը սկսած Մ.Տ.Լոռիս-Մելիքովը համոզվեց, որ 11 մարտկոցներից բերդի հրետակոծումն արդյունավետ չէ: Հունիսի 21-ին գեներալ-մայոր Մ.Ն. Գրաբբեի գրոհը թուրքական մարտկոցների վրա ցանկալի արդյունք չստվեց: Հունիսի 23-ին Մուխտար փաշան նպաստավոր դիրք գրավեց Վերան կալայի մոտ, Կարսից 15 վերստ հեռու²:

«Մշակի» տեղեկություններով, այդ ընթացքում՝ հունիսի 20-ին, Մ.Տ.Լոռիս-Մելիքովն իր զորքով Այխարայից հասավ Արդոստ, իսկ հաջորդ օրը գեներալ Վ.Ա.Գեյմանը Մազարջիխի շրջանում ընդհարում ունեցավ Կարսից դուրս եկած թուրքերի հետ ու նրանց ետ մղեց: Տեղեկություն ստանալով, որ Մուխտար փաշայի զորքը Սողանլուղի սարերից շարժվում է դեպի Կարս, գեներալ Մ.Տ.Լոռիս Մելիքովը ռուսական զորքի գործողությունները Կարսի մոտ հեշտացնելու նպատակով հրամայեց լրացուցիչ թնդանոթներ տեղակայել³: Հունիսի 24-ին գեներալ Կ.Վ. Կոմարովը Սաիգար և Դիլոպիր գյուղերի դժվարամատչելի դիրքերում ջախջախեց թուրքական 2 հազար զորքին ու գրավեց նրանց ամրացրած դիրքերը: Օգոստոսի 6-ին Բաշկադիկլարի շրջանում ռուսական զորքերը գրոհով թուրքերին դուրս մղեցին զբաղեցրած դիրքերից⁴:

Հավաստի ներկայացնելով այս կռիվները, «Մշակը» մանրամասն պատմում է սեպտեմբերի 20-23-ին Մուխտար փաշայի դիրքերի վրա ռուսական զորքերի հաջող հարձակման, թշնամուն պատճառած կորուստների, Մեծ Յաղնայի բարձունքի, մեծ և փոքր Դարգետ գյուղերի

¹ «Փորձ», 1877-1878, 1, էջ 400-402:

² Кушманов С.О. Указ. Соч., с. 188-194.

³ «Մշակ», 1877, № 47, էջ 2, № 48, էջ 2:

⁴ «Մշակ», 1877, № 55, էջ 1, № 58, էջ 1, № 60, էջ 1:

գրավման, Քյուրուկ-Դարայի ձորի վրա հսկողություն սահմանելու և Կարսի հետ թուրքական զորքի ուղղակի կապը կտրելու մասին: Մեծ կորուստներ տալով Մուխտար փաշան քաշվեց դեպի Ավլիարի բարձունքները, որտեղ հոկտեմբերի 2-3-ին նրա վրա հարձակվեցին գեներալ-մայոր Ի. Ե. Լազարևի և Վ. Ա. Գեյմանի գլխավորած զորքերը: Մուխտար փաշան փորձեց ճեղքել ռուսական զորքերի շղթան Կարսի ուղղությամբ, բայց հոկտեմբերի 3-ի երեկոյան Ավլիարում «կատարելապես ջախջախվեց և փախավ սարսափելի անկարգության մեջ դեպի Կարս¹»:

«Մշակի» դիտարկմամբ՝ ռուսական լրագրերը հոկտեմբերի 3-ի Ավլիարի «մեծ նակատամարտում տարած հաղթանակը վճռական» են համարում, քանի որ թուրքերը հազարավոր զոհերից բացի, տվեցին 7 հազար գերի, այդ թվում՝ 7 փաշա, 200-ից ավելի սպա, կորցրեցին 36 թնդանոթ, մեծ քանակությամբ զենք, զինամթերք ու պարեն²:

«Մշակն» իրավացի է. Մուխտար փաշան հազիվ փրկվեց գերի ընկնելուց և նահանջեց դեպի Վիզինկեվ ու Կարս, որտեղ նրա պարտության լուրը խուճապ առաջացրեց: Այդ հաղթանակից հետո Ի. Ե. Լազարևը ձեռնամուխ եղավ Կարսի պաշարմանը³:

«Մշակը» հավաստի լուրերով գրում է, որ Ավլիարի պարտությունից հետո Իսմայիլ փաշան ստիպված նահանջեց Քարվանսարայի բարձունքները ու գնում է դեպի Սողանլուղ: Այստեղ են շարժվում նաև նրան քայլ առ քայլ հետապնդող Ա. Տեր Դուկասովը և Վ. Ա. Գեյմանը: Այդ ընթացքում ռուսական զորքերը բոլոր կողմերից շրջապատեցին Կարսը, որի բնակիչները պահանջում են բերդը հանձնել ռուսներին, բայց բերդի պարետը դրան դեմ է: Հոկտեմբերի 14-ին թուրքական 4 գումարտակներ փորձեցին դուրս գալ Կարսից, բայց ռուսական զորքը նրանց ետ մղեց⁴:

«Մշակին» հասած տեղեկություններով հոկտեմբերի 23-ին ռուսական միացյալ ուժերը 10 ժամյա մարտերից հետո ջախջախեցին Մուխտար և Իսմայիլ փաշաների զորքերը Դեվե-Բոյնի դիրքերում, որտեղից թուրքերն

¹ «Մշակ», 1877, № 70, էջ 1-2, № 71, էջ 2, № 72, էջ 2, № 73, էջ 2:

² «Մշակ», 1877, № 70, էջ 1, № 75, էջ 1, № 76, էջ 3:

³ Потто В.А. Генерал-лейтенант И.Д. Лазарев. Тифлис, 1900, с.326.

⁴ «Մշակ», 1877, № 77, էջ 1:

անկանոն նահանջեցին ու փախան: Հոկտեմբերի 24-ին գեներալ Ի.Ե. Լազարևի գործը դիրքեր գրավեց Կարսի հարավ-արևելյան կողմում¹:

Հոկտեմբերի 26-ին Մ.Տ.Լոռիս-Մելիքովը Կարսի պարետ Հուսեյն փաշային առաջարկեց անձնատուր լինել, բայց պատասխան չստացավ ու հրամայեց գրոհել:

«Մշակի» հավաստի լուրերով նոյեմբերի 6-ի առավոտյան ժամը 9-ին ռուսական զորքերը, երկժամյա գրոհից հետո, գրավեցին Կարսի բերդը, որի կայագորը լքեց Տախմաս-Թարիե վերջին մարտկոցը և փախավ Օլթիի ուղղությամբ: Թերթի կարծիքով «թուրքերը թեև ցույց տվեցին պատերազմական հանճար և ուժ, որով անգամ գրավեցին հակառակորդի հարգանքը, բայց բնականապես ինչ որ լինելու էր, սկսել է իրագործվել»: Նրանց ուժերը սկսել են թուլանալ, Մուխտար փաշան, ով մի երկու ամիս առաջ պարծենում էր, որ մտնելու է Թիֆլիս, Կարսի անկումից հետո թուրքական իշխանություններից պահանջում է առանց արյունահեղության Էրզրումի բերդը հանձնել ռուսներին և «փախչում է ռուսաց հաղթող զորքի առաջ»²:

Հայ պարբերականները 1878 թ. սկզբին պատերազմի ելքը համարում են որոշված է և Ռուսաստանի հաղթանակը մոտալուտ, քանզի Արդահանը, Բայազեթը, Կարսը գտնվում են ռուսների ձեռքին, իսկ Էրզրումը շուտով անձնատուր կլինի: «Մշակի» դիտարկմամբ՝ ռուսական բանակը «հերոսական քաջություններով անցել է Բալկանյան դժվարին լեռները և հաղթության դափնիներով ծածկված՝ Ադրիանապոլսի առջև կանգնած է»: Այս պայմաններում, եզրակացնում է թերթը, Թուրքիան պետք է հասկանա իր «տկարությունը, անխոհեմություններով գուր տեղ արյունահեղության պատճառ չդառնա»³:

«Մշակը» և «Մեղու Հայաստանին» ողջունում են Ռուսաստանի հաղթանակը, որը համարում են սպասված և հայերի համար ցանկալի: Անդրադառնալով Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրին՝ «Մշակը» դատողություն է անում, թե դրանից ինչ ակնկալիքներ կարող են ունենալ

¹ «Մշակ», 1877, № 80, էջ 1, № 81, էջ 1:

² «Մշակ», 1877, № 85, էջ 3:

³ «Մշակ», 1878, № 5, էջ 3:

արևմտահայերը: Թերթը գրում է. «Մենք հավատացած ենք, որ Թուրքիայի հայերը մեզ հետ համաձայն կլինեն, որ նրանց կողմից անգոռուչություն և անհեռատեսություն կլինել պահանջել իրանց համար անհնարին և անիրագործելի բաներ: Եթե Սերբիային տրվել է անկախություն, Բուլղարիային ինքնավարություն, հայերը պետք է գոհ լինեն, եթե Հայաստանը կստանա ներքին կառավարչական ինքնավարություն¹»:

Եզրահանգում. Արևելահայ պարբերականները պատմական Տայր նահանգում 1877-1878թթ. ընթացած ռուս-թուրքական պատերազմը լուսաբանելիս հստակ հայամետ դիրքորոշում են դրսևորում՝ ցանկանալով Ռուսաստանի անվերապահ հաղթանակը, որի հետ մեծ հույսեր էին կապում: Նրանց կարծիքով պատերազմից հետո ծագած հայկական հարցը կարող է հայության համար ինքնավարություն ստանալու հեռանկարներ ընձեռնել:

References

1. Experience [Porc]. 1877-1878, №1, 3:
2. Experience [Porc]. 1877, № 3, 4:
3. Kishmishev S. O. War in Turkish Armenia in 1877-1878, [Voina v Tureckoi Armenii 1877-1878 gg.]. SPb, "Military" publ., 1884. (in Russian).
4. Kolyubakin B.M. *Yerevan Squad in Company 1877-1878/ Military Collection* [Erivanskii otryad v kompaniyu 1877-1878gg.//Voeni sbornik].SPb, "Rozena" publ., 1888.(in Russian).
5. Krbekyan V.G. *Participation in the Russian-Turkish War of 1877-1878* [Uchastie v russko-tureckoy voini 1877-1878 gg.]. Erevan, Antares, 2004. (in Russian)
6. *Materials describing the Russian-Turkish War of 1877-1878 in the Caucasian-Minor-Asian Theatre* [Materiali dlya opisaniya russko-tureckoy voini 1877-1878 gg. Na Kavkazskogo-Maliaziatskom teatre]. Ed.by General-Lieutenant I.S. Chernyavsky, v.1, SPb, "Maritime Ministry" publ., 1904. (in Russian)
7. Meghu of Armenia [Megu Hayastani], 1877, № 13, 16, 17, 20:
8. *Military-historian Collection* [Voенно-istoricheski sbornik], SPb 1915, № 2. (in Russian).
9. *Military-historian Collection* [Voенно-istoricheski sbornik], SPb, 1914, № 3. (in Russian).
10. Mshak, 1877, № 17- 85:
11. Mshak, 1878, № 5, 23:
12. Siege and attack of Fortress Kars in 1877 [Osada i shturm kreposti Kars v 1877 g.]. SPb, "Skopoxodov" publ., 1885. (in Russian).

¹ «Մշակ», 1878, № 23, 1:

ՀՏԴ 93.94

**ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ
1920Թ. ՀՈՒՆԻՍ-ՀՈԿՏԵՄԲԵՐ**

Կարինե Ալեքսանյան

ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Հայաստան
teachersunionshirak@gmail.com

Ամփոփում. Հոդվածում ներկայացվում է 1920թ. թուրք-հայկական պատերազմի առաջին փուլի՝ հունիս-հոկտեմբերի ռազմական գործողությունները և դիվանագիտական պայքարը:

Նորահայտ աղբյուրներով և փաստաթղթերով լուսաբանվել են առավել քիչ ուսումնասիրված Օլթիի կռիվները, որոնք համարվել են պատերազմի սկիզբ, բացահայտվել են հոկտեմբերի 14-ի հակահարձակման անհաջողության պատճառները և դրա հետևանքները հայոց բանակի մարտունակության անկման վրա:

Ներկայացվել է Օլթիի կռիվների քաղաքական և ռազմական կարևոր նշանակությունը: Հաղթանակն այս փուլում հնարավորություն կընձեռեր հայկական կողմին իրականություն դարձնել Սևրի պայմանագիրը, սկիզբը դնել միասնական Հայաստանի գոյությանը, մինչդեռ պարտությունը՝ թուրքերին հնարավորություն է տվել մարսել արևմտահայության եղեռնը, շարունակել արևելահայության և եղեռնից մազապուրծ արևմտահայ բեկորների ցեղասպանությունը, վերացնել հայոց պետականությունը:

Հետազոտությունը պարզել է, որ պատերազմի առաջին փուլում արդեն կանխորոշվել է պատերազմի հետագա ընթացքը:

Բանալի բառեր՝ *Օլթի ածխահանքեր, Մուղլուսի զինադադար, թուրք-հայկական պատերազմ, թուրք-բուլղարիկական դաշինք, հակահարձակում, Կարսի անկում:*

THE FIRST PHASE OF THE TURKISH-ARMENIAN WAR /1920 JUNE-OCTOBER/

Karine Aleksanyan

Shirak Center of Armenological Studies NAS RA, Armenia
teachersunionshirak@gmail.com

Abstract: he article presents an analysis of the military operations and diplomatic efforts undertaken during the initial phase of the Turkish-Armenian conflict, spanning the period from June to October 1920. By drawing on recently unearthed sources and documents, the article provides new insights into the hitherto little-known battles of Olti, which marked the beginning of the conflict. Moreover, these sources elucidate the underlying causes of the Armenian counter-offensive's failure on 14 October and the subsequent diminution of the Armenian army's combat capabilities.

The study places particular emphasis on the political and military significance of the battles of Olti. A victory for Armenia at this juncture would have enabled the implementation of the Treaty of Sèvres, which could have resulted in the formation of a unified Armenian state. Conversely, the defeat provided the Turks with an opportunity to evade punishment for the genocide of the Western Armenians, to perpetuate the genocide of Eastern Armenians and the surviving remnants of Western Armenians, and to eliminate Armenian statehood.

The findings of the research indicate that the subsequent trajectory of the war was largely shaped during this initial phase.

Key words: *Olti collieries , armistice of Mudros, Turkish-Armenian war, Turkish- Bolshevik alliance, counterattack, fall of the Kars fortress*

Նախաբան. 1920թ թուրք-հայկական պատերազմը հայոց նորագույն պատմության ամենաողբերգական էջերից է: Այն ոչ միայն վերացրեց հայոց նորանկախ պետականությունը, այլ նաև ապահովեց հայոց ցեղասպանության թուրքական քաղաքականության շարունակակա-

նությունը: Պատահական չէ, որ այդ պատերազմի հետ կապված բազմաթիվ հարցեր ավելի քան հարյուր տարի հուզել են հայ հասարակական և պատմագիտական միտքը ամբողջանալով մեկ՝ «Ինչու ընկավ Կարսը» հարցով:

Սույն հոդվածում փորձել ենք անդրադառնալ այդ հարցերից թերևս ամենակարևորներից մեկին՝ պատերազմի սկզբի և այն կանխելու հնարավորությանը:

Նախ անդրադառնանք պատերազմը կանխելու հնարավորությանը: 1918թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով Թուրքիան, հայոց ցեղասպանությունը մարսելու և իբր հայկական հարցը լուծելու իմիտացիա ստեղծելու նպատակով, ստիպված լինելով ճանաչել Հայաստանի Հանրապետությունը, իրականում երբեք չի հրաժարվել հայոց պետությունը և հայ ժողովրդին ոչնչացնելու քաղաքականությունից: Իսկ արդեն 1920թ. հունվարի 28-ին քեմալական Թուրքիայի Ազգային ժողովի կողմից ընդունված «Ազգային ուխտ» փաստաթղթում բացահայտորեն հայտարարել է, որ Հայաստանի ոչնչացումն առաջնահերթ խնդիր է համարվում իրենց համար: Ինչ վերաբերում է զինական ուժին, ապա այն չնայած Առաջին աշխարհամարտում պարտության արդյունքում Մուդրոսի զինադարարով զինթափ լինելու պահանջին, ոչ միայն չի ցրել, այլ ընդհակառակը դիմել է ամեն միջոցի թե՛ քանակապես և թե՛ որակապես այն հզորացնելու համար. «Պետք է խոստովանել ճշմարտությունը,- գրում է Մշակը, -այդ նպատակը իրագործելու ժամանակ Տաճկաստանը երևան հանեց ընդունակություններ, որ դժուար էր նրա մեջ ենթադրել:

Պատերազմի վերջին շրջանի պարտություններից կազմալուծուած զորքը ուժեղացնելու նպատակով տանկական կառավարությունը դաշնակիցների առաջ հանդես եկավ ֆարսով: Սուլթանի կառավարությունը կարգադրեց, որ զինուորական նախկին նախարար Քեմալ փաշան «ապստամբի» իր կառավարութեան դեմ, և Քեմալ փաշան «ապստամբեց»: Նա Պոլսից անցավ Փոքր Ասիա, Տաճկաստանի այդ սիրտը և այնտեղ ոչ միայն կանխեց հին զորքի ցրումը, այլև իր շուրջը հաւաքեց նոր ոյժեր: «Ապստամբ» Քեմալը հմայք էր ստանում մահմեդական աշխարհում, որպես թրքութեան և իսլամի որդիների ոտնահարուած իրաւունքների

պաշտպան անհաւատ բռնակալ դաշնակիցներից: Անգործ չը մնաց նոյն-պէս Պոլսի կառավարութիւնը»:¹

Իր հերթին Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան վարչակարգը նույն ժամանակ ձեռնամուխ էր եղել ռուսական նախկին կայսրության տարածքներն իր ազդեցության ոլորտ վերադարձնելուն:

Փաստորեն Հայաստանի թիկունքում ձևավորվել էր թուրք-բոլշևիկյան բնական դաշնակցությունը, որն անխուսափելի էր դարձրել թուրք-հայկական պատերազմը: 1920թ. ապրիլի 26-ին Մուստաֆա Բեմալը նամակով դիմել էր բոլշևիկների ղեկավար Վ. Լենինին՝ առաջարկելով դիվանագիտական հարաբերություններ հաստատել և ռազմական դաշինք կնքել ընդդէմ իմպերիալիստական Արևմուտքի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ռազմական գործողություններ ծավալել Հայաստանի դէմ: «Մենք մեզ վրա պարտավորություն ենք վերցնում, ասված էր այդ նամակում,- միավորել մեր բոլոր աշխատանքները և ռազմական մեր բոլոր գործողությունները ռուսական բոլշևիկների հետ, որոնք նպատակ ունեն պայքարել իմպերիալիստական կառավարությունների դէմ և ազատագրել բոլոր ճնշվածներին նրանց իշխանությունից»:² Այդ համագործակցության առաջին պտուղը հանդիսացավ ապրիլի 29-ի Ադրբեջանի խորհրդայնացումը, որով Ռուսաստանը ներթափանցեց Անդրկովկաս: Թուրքական կառավարությունն իր վրա էր վերցնում պատերազմական գործողությունները իմպերիալիստական Հայաստանի դէմ՝ պարտավորվելով ստիպել Ադրբեջանի հանրապետությանը մտնել խորհրդային պետությունների շրջանակի մեջ:³

Հայաստանի բոլշևիկները չկասկածելով, որ Ադրբեջանի խորհրդայնացումը ռուս-թուրքական գործարքի արդյունք է, ձգտել են Հայաստանը ևս խորհրդայնացնել: Սակայն 1920թ. մայիսյան ապստամբությունը, որով հայ բոլշևիկները փորձել են խորհրդայնացնել Հայաստանը, չհասնելով իր նպատակին, ավելի է սրել հայ-ռուսական հարաբերությունները, որից վարպետորեն օգտված թուրքերը ստացել են Հայաստանի խոր-

¹ «Մշակ», 192022 հունիսի, Թիֆլիս, թիվ 44, թ. 3:

² Չոհրաբյան Է., 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր. 1997, էջ 23:

³ Չոհրաբյան Է., 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր. 1997, էջ 27

հրդայնացման խաղաքարտը: Հայ սոցիալ-դեմոկրատների՝ Հայաստանի բանվորներին, գյուղացիներին և քաղաքացիներին ուղղված մայիսի 14-ի կոչը հետևյալ կերպ է արտահայտել այդ օրերի հասարակական տրամադրությունը. «Պատահեց այն, ինչ ամենից քիչ սպասելի էր և ամենից շատ դատապարտելի: Բաքվի քաղաքական կոմեդիան վերածվեց Ալեքսանդրապոլի ողբերգության, իսլամական խաբուսիկ կոմունիզմից նվաճվեց ստրկամտորեն հայկական բերդը՝ հայության օրրանը»:¹

Փաստորեն թուրք-բոլշևիկյան դաշինքը և Հայաստանի իշխանությունների արևմտամետ կեցվածքը անխուսափելի էր դարձրել թուրք-հայկական պատերազմը:

Ինչ վերաբերում է պատերազմի սկզբի հիմնախնդրին, ապա հայտնի է, որ պատերազմի սկզբի մասին տվյալները թե՛ հայկական և թե՛ թուրքական սկզբնաղբյուրներում տարբեր են և վերաբերում են սեպտեմբերի 21-ից մինչև սեպտեմբերի 28-ը ընկած ժամանակահատվածին:² Մինչդեռ 1920թ. ամռան ամիսներին թուրքական և հայկական կանոնավոր բանակների մեջ տեղի ունեցող «տաք» կռիվները համարվել են սահմանային բախումներ:

Եթե ինչ որ կերպ կարելի է հասկանալ թուրքերին, որոնք ամռան ամիսներին տեղի ունեցող ռազմական գործողությունները պատերազմական չէին համարում, քանի որ գտնում էին, որ Կարսը Արդահանը, Բաթումը Բրեստ-Լիտովսկով իրենց անցած տարածքներ էին, հետևաբար 1920թ. հունիսի 18-ի հարձակումը Օլթիի վրա՝ սեփական տարածքում իրականացվող ռազմական գործողություն, ապա տարօրինակ է, որ հայկական կողմը, չնայած հունիսի 18-ի թուրքական ուժերի հարձակմանը Օլթիի վրա և երկու կողմերի կանոնավոր զորքերի միջև տեղի ունեցած ռազմական գործողություններին, դրանք չի համարել պատերազմի սկիզբ: Եվ դա այն դեպքում, երբ թուրքերը, ըստ Մուղղոսի զինադադարի, պետք է լքեին նշված տարածքները մինչև 1914 թվականի սահմանը: Այսինքն ռազմական գործողությունները տեղի էին ունենում Հայաստանի

¹ ՀԱԱ, ֆ. 1022, գ. 3, գ. 261, թ. 29:

² Չոկրաբյան Է, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 160-161:

տարածքում: Մինչդեռ հայկական աղբյուրներում պատերազմի սկիզբը համարվում է սեպտեմբերի 23-ը: Մասնավորապես, Ս. Վրացյանը գրում է. «Սեպտեմբերի 23-ին, առանց պատերազմի հայտարարության թուրքական բանակը դիմեց ընդհանուր հարձակման Հայաստանի դեմ: Սկսվում էր հայ-թուրքական պատերազմը»:¹

Թուրքական հրամանատարությունը Հայաստանի տարածքում տեղի ունեցող ռազմական գործողությունները պատերազմ չհամարելու մեկ պատճառ ևս ուներ: Այն է՝ ցույց տալ, որ իրենք չեն սկսել պատերազմը, այլ ընդամենը հակահարձակվել են: Հայաստանի վրա արշավող թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը, 11-րդ կարմիր բանակի հրամանատարությանն ուղարկած 1920թ. նոյեմբերի 3-ի հեռագրում ասում է, թե իր զորքերի «հակահարձակումը» սկսվել է սեպտեմբերի 24-ին:² Այդ նույն նպատակով 1920թ. հունիսի 18-ին նախահարձակվելով Օլթիի վրա, հաջորդ օրերին իբր թե դադարեցնում են ռազմական գործողությունները, հարցը դիվանագիտական ճանապարհով լուծելու Խորհրդային Ռուսաստանի առաջարկությամբ: «Քանի որ մեր կողմից վերոհիշյալ երեք սանջակների տարածքի ցանկացած մասի գրավումը չպետք է դիտվեր որպես հարձակում Հայաստանի վրա, գրում էր Քեմալը,- մենք արգելք չէինք տեսնում ռազմական գործողություններ սկսելու, որի համար արդեն կար համապատասխան որոշում: Այդ պատճառով էլ մենք Արևելյան ճակատի հրամանատարին հրաման տվեցինք՝ ուժեղ թափով շարունակել ռազմական գործողությունները: Սակայն մի քանի օր հետո նոր պաշտոնական հաղորդագրությունից հայտնի դարձավ, որ գնացքով Կարսի վրայով մեզ մոտ է գալիս ռուսական դեսպանությունը: Այդ կապակցությամբ մենք հրամայեցինք մեր Արևելյան բանակին դադարեցնել ռազմական գործողությունները այն պայմանով, որպեսզի դրանք վերսկսենք ռուսական դեսպանության և Կարսում գտնվող մեր պատվիրակության միջև շփման հաստատումից

¹ Վրացյան Ս, Հայաստանի Հանրապետություն, Եր, 1993, էջ 493:

² Չոկրաբյան Է, 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տեղությունները, էջ 160:

հետո: Դա հունիսի 20-ին էր: Սա էր մեր Արևելյան բանակի գործողությունների դադարեցման պատճառը»¹:

Սակայն իրականում ռազմական գործողությունները շարունակվել են: Վերոհիշյալ հայտարարությունը նպատակ ուներ հայկական կողմին համարել նախահարձակ: Չորավար Հովսեփյանի զեկուցագրերից ևս երևում է, որ ռազմական գործողությունները չեն դադարել, այլ շարունակվել են: Ընդ որում հայկական կողմի առավելությամբ: «Ամսի 18-ին մեր զորքերը, գրում էր իր հաղորդագրության մեջ գեներալ Հովսեփյանը, պատասխանելով անպատկառ թշնամու յանդուզն առաջխաղացմանը, առաջ են շարժել Օլթիի ուղղությամբ՝ գրաւելու Փենեքի շրջանը, ուր գտնւած են հարուստ ածխահանքեր: Թշնամու խոշոր ուժերը՝ բաղկացած տանկաքրդական կանոնավոր զորամասերից՝ զինւած առատօրէն և գտնւելով փորձւած սպաների հրամանատարութեան տակ, ցոյց են տւել յամառ դիմադրութիւն, և սակայն վերջ ի վերջոյ, չարաչար ջախջախւելով և տալով բազմաթիւ զոհեր՝ հարկադրւած են եղել փախուստի ճամբան բռնել, անասելի խուճապի մատնւելով »:²

Միաժամանակ թուրքական կառավարությունը թուրք-թաթարական, մասնավորապես Չանգիբասարի, Բեյուք-Վեդիի խռովությունների միջոցով փորձում էր ներսից պայթեցնել հայկական պետությունը: Ամբողջ հունիս-հուլիս ամիսների ընթացքում հայկական ուժերը ստիպված էին զսպել թուրք-թաթարական ապստամբ ուժերին: Հայաստանի կառավարությունը, սպառելով խաղաղ բոլոր միջոցները, 1920թ հունիսի 18-ին վերջապես վերջնագիր է ներկայացնում Չանգիբասարում կուտակված թուրք-թաթարական ուժերին՝ կամ հնազանդվել Հայաստանի իշխանությանը, կամ հեռանալ երկրից: Բացառությամբ Ուլունիսանլու գյուղից մնացած բոլորը մերժում են և գերադասում դուրս գալ կառավարական զորքերի դեմ: Ի պատասխան կառավարության վերջնագրին՝ նրանք կատաղի դիմադրում են, ավելին՝ հունիսի 19-ին թուրք-աղբրեջանական սպաների գլխավորությամբ հարձակվում են հայկական զորքերի վրա:

¹ Վրացյան Ս. , նշվ. աշխատությունը, էջ 488:

² Յառաջ, 22 հունիսի, թիվ 129, թ. 2:

Հայկական բանակը մարտեր էր մղում մինչև ատամները զինված և թուրքական սպաների կողմից ղեկավարվող կանոնավոր զորքերի, ասել է, թե Կարաբեքիի առաջապահների դեմ: Հունիսի 20-ին է միայն Չանգիբասարը հանձնվում: «Դիմադրությունը կրում էր կազմակերպված բնույթ, - գրում է «Հառաջը» իր խմբագրականում, - ու զանգիբասարցին կուում էր իբրև պատերազմող կողմ՝ ունենալով առատ փամփուշտ, բազմաթիվ գնդացիներ ու 4 թնդանօթ»:¹

Հայկական բանակը ճնշելով թուրք-թաթարական խռովությունները 1920թ. հունիսին հասնում է մինչև Օլթի, որտեղ էլ սկսվում են ածխահանքերի համար բախումները թուրքական և հայկական կանոնավոր զորքերի միջև, որն իրավամբ կարելի է համարել պատերազմի սկիզբ:

Հետևաբար տեղին չեն այն պնդումները, թե իբր հայկական կողմը Օլթիի վրա հարձակվելով՝ առիթ է տվել պատերազմի: Օլթիի կռիվները ոչ թե առիթ էին թուրքական կողմի համար, այլ հնարավորություն առաջխաղացման համար: Իսկ Հայաստանի դեմ պատերազմ սկսելու մասին որոշումը թուրքական հրամանատարությունը ընդունել էր ավելի վաղ՝ հունիս 9-ին: «Մենք Հայաստանի վրա հարձակման մասին որոշում կայացրինք: - գրում է Քեմալը, - 1920թ. հունիսի 9-ին մենք հրամայեցինք նախնական զորահավաք սկսել արևելյան շրջաններում: Քյազիմ Կարաբեքիի փաշան՝ 15-րդ բանակային կորպուսի հրամանատարը, նշանակվեց արևելյան ճակատի հրամանատար:»² Իր հերթին 1920թ. հունիսի 10-ին ՀՀ Նախարարների խորհուրդն օրենք է ընդունում 20-25 տարեկան նեցուկ զինապարտներին բանակ զորակոչելու, իսկ նրանց ընտանիքներին պետությունից ամսական նպաստ տալու վերաբերյալ:³

Այս հանգամանքներից ելնելով է Ծիրակի նահանգապետ Կարո Սասունին իրավամբ կարծում, որ պատերազմը սկսվել է հունիսին: «Ով որ ապագային ուզենա խոսիլ հայ-թրքական պատերազմին մասին, - գրում է նա, - անտարակույս որ, պատերազմի սկզբնաւորութիւնը 1920-ի սեպտեմբեր 14-ը չպիտի նկատե, այլ Յունիս ամիսը, երբ սկսան հայկա-

¹ Նույն տեղում:

² Չորհրաբյան Է, 1920թ. թուրք-հայկական պատերազմը և նեծ տերությունները, էջ 30:

³ Մշակ, 22 հունիսի, Թիֆլիս, թիվ 44, թ. 4:

կան գործողությունները ներքին ճակատներու դեմ, որոնք Քեազիմ Գարապեթի փաշայի առաջին ամրացած դիրքերն էին»:¹

Պատահական չէ, որ չնայած երկու կառավարությունների վերջնագրերին, կոնֆլիկտը չի հարթվում, քանի որ այն ավելին էր, քան սահմանային վեճը: Եթե հայկական կողմը պահանջում էր, որ թուրքերն իրենց գորքերը հետ քաշեն 1914թ սահմանից այն կողմ, ինչպես որ նախատեսված էր Մուղրոսի զինադադարով, ապա վերջիններս իրենց հերթին վկայակոչելով Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերը, պահանջում են կողմերի միջև հարաբերությունների հիմքում դնել դրանցից բխող պայմանները: Ինչպես երևում է նաև զինվորական հաղորդագրություններից, սկսված ռազմական գործողությունները Օլթիի շրջանում, սովորական սահմանային բախումներ չէին, այլ երկու կողմից կանոնավոր զորամասերի կռիվներ:

Օլթիի կռիվներն ունեին քաղաքական և ռազմական կարևոր նշանակություն: Հաջողության դեպքում հայկական բանակը կամրապնդվեր Կարսի մարզում, հայկական զորքի առաջ կբացվեր Արևմտյան Հայաստանի ճանապարհը: Հաղթանակն այս փուլում հնարավորություն կընձեռներ հայկական կողմին իրականություն դարձնել Սևրի պայմանագիրը, սկիզբը դնել միասնական Հայաստանի գոյությանը, մինչդեռ պարտությունը՝ թուրքերին հնարավորություն կընձեռներ վերացնել հայոց պետականությունը, մարսել արևմտահայության եղեռնը, շարունակել արևելահայության և եղեռնից մազապուրծ արևմտահայ բեկորների ցեղասպանությունը:

Հունիսի 18-ից մինչև հոկտեմբերի 30-ը կարող ենք համարել թուրք-հայկական պատերազմի առաջին փուլը, որը որոշիչ եղավ պատերազմի ընթացքի վրա: Բավականին վճռորոշ ռազմական և դիվանագիտական հաղթանակները, որ ունեցան թուրքերն այս փուլում, ճակատագրական եղան պատերազմի հետագա ընթացքի վրա: Դրանք որոշակիորեն կարող են պատասխանել «Ինչու ընկավ Կարսը» հարցին: Կարսն ընկավ,

¹ «Հայրենիք» ամսագիր, փետրվար, 1926, էջ 60:

քանի որ Հայաստանը հայտնվել էր դիվանագիտական մեկուսացման մեջ թուրք-բոլշևիկյան դաշինքի և ռազմական սահմանափակ ուժերով գերակշիռ ռազմական ուժեր ունեցող թուրքական բանակի դեմ:

Ի դեպ ռազմական գործողությունների սկզբում հայկական ուժերը բավականին մարտունակ էին: Գեներալ Հովսեփյանի հունիսի 22-ի հաղորդագրության մեջ, որտեղ նա մանրամասն նկարագրում է ռազմական գործողությունները, երևում է, թե որքան մարտունակ էր մեր բանակը: «Վերջին շրջանում միանգամայն ակնյայտ էր դարձել, -գրում է նա իր հաղորդագրության մեջ,- որ քրդա-թրքական հրոսակախմբերը նպատակ են դրել յարձակուել հանրապետական զորքերի վրայ և շարժուել դեպի Հայաստանի խորքերը: Այս յանդուգն ծրագիրն իրագործելու համար Կարաբեքիրի զորքերը յունիսի 18-ին դիմում են նախայարձակման: Մեր զորքերն անմիջապես դրում են շարժման մեջ և երեք ուղղությամբ սկսում են հարուածել անպատկառ թշնամուն: Այս զորասիւնը յունիսի 18-ի երեկոյեան բռնում է ճանապարհ բաց անող դիրքերը: Դորտ Քիլիսեւում, միջին զորասիւնը նույն ժամին բռնում է նոյնպիսի դիրքեր Մերդենիկի մօտ, իսկ ձախակողմեան զորասիւնն ամրանում է Բէկկէի դիրքերում: Յունիսի 18-ի առաւօտեան յիշեալ երեք զորամասերին հրամայեցի յարձակում սկսել:

Աջակողմեան զորասիւնին հրամայեցի գրաւել Փունջուրեթի լեռնանցքը, միջինին՝ Ագունդիրը և ձախակողմեանին՝ Թիրաջի-Գեոյ-Թափան: Յունիսի 18-ի երեկոյեան ժամը 4-ին, քրդերն ու տաճիկները գրոհ տւին 1133-310 բարձունքի վրայ, Շարաֆ գիւղի մօտ, և գրաւեցին այն, բայց հակայարձակմամբ հակառակօրոյդ շարուեց Եայլա Սիգնտոից այն կողմը: Յունիսի 21-ին երեք զորասիւներն էլ յարձակում սկսեցին: Աջակողմեան զորասիւնը կէսօրին մօտ կռուվ գրաւեց Փնաջուրեթի լեռնանցքը՝ Դորտ-Քիլիսէյից հարաւ ընկնող Կուլասարի մօտ հանդիպելով դիմադրութեան:

Միջին զորասիւնը հանդիպեց լուրջ դիմադրութեան և հինգ ժամ տևող յամառ կռից յետոյ գրաւեց Ադունդիք կոչւող եայլեագն ու Ադադիր գիւղի մօտ գտնւող սարը: Սոյն զորասիւնի դէմ գործում էին երկու գու-

մարտակ մարզում քրդեր և հարիւր մարզիչներ՝ ընդամենը 1000 մարդ՝ տաճիկ սպաների հրամանատարութեամբ:

Յունիսի 20-ի կռիվները վճռական նշանակութիւն ունեցան: Հակառակորդը սկսեց անվերջ նահանջել և զորասիւնները միայն աննշան ընդհարումներ ունենալով յունիսի 21-ի միացան իրար ածխահանքերի արեւմտեան մասում: Նահանջի ճամբին հակառակորդը թողեց բազմաթիւ սպանուածներ և վիրավորներ: Մեր կորուստն է 5 սպանուած և 22 վիրաւոր:

...Այս հաղորդագրութիւնից հայ ժողովուրդը պէտք է եզրակացնէ, որ իր երիտասարդ բանակին այժմ վախ չէ ներշնչում նոյնիսկ տաճիկական կայսրութեան զորքը, միայն թէ մեր բանակը լինի կուշտ, հագնուած և ունենայ բաւականաչափ ռազմամթերք»:¹

Ինչպէս երևում է վերոհիշյալ հաղորդագրութիւնից հայկական ուժերը կռվում էին թուրքական կանոնավոր բանակի հետ, որը թե՛ իր պատրաստվածությամբ, թե՛ ռազմամթերքով և թե՛ քանակով գերազանցում էր հայկական բանակին: «Երջանիկ եմ վկայելու մեր զորքերի սիրագործութիւնը ընդդէմ թուրք գերազանց, լաւ մարզուած, կարգապահ և իսկական զորամասերի, որոնց հրամանատարն էր Խալիլ բէյը: - գրում է Հովսէփյանը,- Հակառակորդն օժտուած էր պատերազմ վարելու բոլոր տեխնիկական անհրաժեշտ միջոցներով: Նրա բոլոր դիրքերը կապուած էին միմիեանց և թիկունքի հետհեռախօսային լարերով, ունէին բազմաթիւ գնդացիներ, արագաձիգ թնդանոթներ, առատ փամփուշտ ու ռումբեր, իսկ Կօտորում ճամբարակային հարուտ պահեստներ»:² Հայկական զորքերի հմուտ գործողությունների մասին է վկայել նաև Ս Վրացյանը: «Հայկական զորքերը գորավար Հովսէփյանի ընդհանուր ղեկավարության տակ և գնդապետ Միրիմանյանի անմիջական հրամանատարությամբ,- գրում է նա,- շարժվեցին երեք ուղղությամբ.աջ զորայունը գնդապետ Մազմանյանի գլխավորությամբ Դորա Քիլիսեից, միջինը՝ գնդապետ Շահբուդաղյանի հրամանատարությամբ՝ Մերդենեկի մոտից,

¹ Մշակ, 6 հուլիսի, Թիֆլիս, թիվ 52, թ. 4

² Յառաջ, 25 հունիսի, թիվ 132:

և աջը՝ փոխգնդապետ Նեստերովսկիի գլխավորությամբ Բեկկեի դիրքերից: Հունիսի 19-ին ամբողջ ճակատը դիմեց ընդհանուր հարձակման, և երկու օրվա համառ ու հաջող կռիվներից հետո, հունիսի 21-ին, զորամասերը միացան հանքերի արևմտյան մասում: Գրեթե մինչև Օլթի, ամբողջ տարածությունը անցավ հայերի ձեռքը»: ¹

Հուլիսի 7-ին սրան հետևում է թուրքական կողմի վերջնագիրը, որին հայկական կողմը առանձնապես ուշադրություն չի դարձնում և կարևորություն չի տալիս՝ համարելով դրանք Հայաստանին պատկանող տարածքներ և վստահ լինելով դաշնակիցների աջակցությանը: Իսկ Թուրքիայի հնարավոր հարձակման մասին անգամ չէին պատկերացնում, ենթադրելով, որ թուրքերը կարող էին ընդամենը դիմադրել: «Դիւանագիտական բանակցութիւններով եւ երկրի ներքին խնդիրներով կլանուած ըլլալով, հայկական կառավարութիւնը սահմանէն այն կողմ անցած-դարձածներու մասին բնաւ չէր հետաքրքրուած: Անգարայի ազգային շարժմանն ալ պէտք եղած կարելորութիւնն չէր ընծայուած:

Յետոյ, Հայաստանի կառավարութիւնը երբեք ալ մտքով չէր անցուցած, թէ թուրքերը կը յարձակին Հայաստանի վրայ: Շատ-շատ կը մտածէին, թէ թուրքերը կրնան դիմադրութիւն ցոյց տալ, սահմանին այն կողմին վրայ, երբ հայկական զօրամասերը սահմանը անցնելու ըլլան: Որով, հայերու կողմէ պատերազմելու ուղղութեամբ որեւէ պատրաստութիւն տեսուած չէր:»²

Ինչով էր պայմանավորված հայկական ուժերի հաջողությունը պատերազմի սկզբնական շրջանում և ինչը հանգեցրեց հետագայում բանակի մարտունակության կորստին: Շատերը հակված են այն պայմանավորել բոլշևիկյան պրոպագանդայով: Կարծում ենք դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ հայկական բանակը և հրամանատարությունը և նույնիսկ կառավարությունը պատկերացում չունեին թուրքական գերակշիռ ուժերի և պատրաստվածության մասին: Բայց երբ սեպտեմբերի 29-ին թուրքերը գրավում են Սարիղամիշը, իսկ 30-ին նաև՝

¹ Կրացյան Ս, Հայաստանի Հանրապետություն, էջ 443-444:

² Միխրնենեան Գ., Տանկահայ զինվոր և զինվորականությունը: Պեյրուզ, 1967, էջ 63:

Մերդենները, և թուրքական ուժերի գերակշռությունը ու թուրք-բոլշևիկյան դաշինքը այլևս ակնհայտ են դառնում, վտանգի զգացողությունը մեծանում է: Ընդ որում՝ ոչ միայն բանակի և բնակչության, այլ նաև կառավարական շրջաններում խուճապային տրամադրություններ են առաջանում: Հոկտեմբերի 1-ին Օհանջանյանը Տիգրան Բեկզադյանին ուղղած հեռագրում, գրում է.«Մեր ուժերը կենտրոնացված են Կարսի և Բեզլի Ահմեդի շրջանում: Ողջ ազգաբնակչությունը ոտքի է կանգնած: Հայաստանը ռազմական դրության մեջ է: Հայտարարված է մինչև 35 տարեկանների մոբիլիզացիա: Դաշնակիցներից պահանջեցեք իրական օգնություն: Բացահայտվում են թուրք-բոլշևիկյան համագործակցությունը: Հայրենիքը վտանգի մեջ է»: ¹

1920թ հոկտեմբերի 8-ին Հայաստանի կառավարությունը հայ ժողովրդի անունից դիմում է ամբողջ քաղաքակիրթ մարդկությանը:² Սակայն ոչ մի իրական օգնություն Հայաստանը չի ստանում: Հոկտեմբեր ամսին վերջնականապես պարզվում է, որ դաշնակիցները Հայաստանին որևէ ռեալ օգնություն ցույց տալու մտադրություն չունեն: Հայկական զինված ուժերը փոճում են հոկտեմբերի 14-ի հակահարձակմամբ, սեփական ուժերով հարցը լուծել, սակայն այն ձախողվում է:³ Մինչև հոկտեմբերի 14-ի հակահարձակումը հայ զորահրամանատարությունը վստահ էր իր ուժերի վրա, քանի որ կարծում էին, որ նախ թուրքերը չէին կարող դիմադրել և երկրորդ՝ դաշնակիցներն իրենց մենակ չեն թողնի: Սակայն հոկտեմբերի 14-ի անհաջող հարձակումից հետո, երբ ակնհայտ դարձավ թուրքական ուժերի գերակշռությունը և թուրք բոլշևիկյան դաշինքը, հայկական բանակը հոգեբանական լուրջ տրավմա ապրեց: Հայ զորահրամանատարության արած միակ հետևությունը այն էր, որ ինքը թերագնահատել էր թշնամու ուժերը: ⁴ Դասալքությունը բանակում դարձավ անխուսափելի և զնալով ահագնացավ: Ի վերջո հայկական մարտունակ բանակն ամբողջովին բարոյալքվեց: Սովորաբար հայ պատմագի-

¹ ՀԱԱ, ֆ.200, ց.1,գ.486, մաս 4, թ.280:

² Մշակ, 10 հոկտեմբերի 1920թ:

³ Հայրենիք ամսագիր, ապրիլ, 1926, էջ 82:

⁴ Հայրենիք ամսագիր, ապրիլ, 1926, էջ 84:

տական միտքն այդ բարոյալքումը վերագրում է հայ սակավաթիվ բուլշևիկների պրոպագանդային: Մինչդեռ բանական ինքը համոզվեց թուրքական ուժերի գերազանցության մեջ: Բանակի մարտունակության վրա պակաս ազդեցություն չունեցավ նաև բնակչության գաղթը, որը զգալով վերահաս վտանգը, հեռանում էր իր բնակության վայրերից: «Այս ձախողությունը,-գրում է Տեր Հակոբյան Հակոբը,-ցնցեց հայ ժողովուրդը եւ զինուրական շարքերը: Հայերը, որ կը յուսային այդպէսով չափել թշնամիին ուժերը և ի հարկին շեշտակի հարուածով ընկրկել զայն ու ջարդել, դառն յուսախաբութիւն մը ճաշակեցին:

Այս ձախողուածը հետեւեալն ունեցաւ իբր արդիւնք և դաս.

Ա. Հայերը տեսան, թէ թշամին արհամարհելի ու կարծուածին չափ տկար չէ, թէ սխալ էր չափազանց ինքնավստահութեամբ դատել զայն թէ՛ թւի, թէ՛ որակի և թէ՛ ռազմական արուեստի մասին, որուն ապացույցները կուտային թուրքերը:

Բ. Տեսանք մեր թերի կողմերը թէ՛ մեր զօրքի տրամադրութիւնը թէև բարձր ու քաջ, սակայն անվարժ տարրեր անոր մեջ չկոթոյթիւն ու ջլատում կը մտցնէին»¹:

Նույն կերպ ձախողվում է նաև հոկտեմբերի 25-ի հակահարձակումը, որից հետո Կարսի անկումը դառնում է անխուսափելի: Ռազմական առումով այն հնարավոր չէր պահել այլևս, այլ միայն դիվանագիտական ճանապարհով՝ Հայաստանի խորհրդայնացման խաղաքարտով կարելի էր կանխել աղետը, փրկել հայ ազգաբնակչությանը կոտորածներից:

Հակահարձակումների անհաջողությունը ցույց տվեց, թե ինչքան թուր կարծիք ուներ հայ գորահրամանատարությունը թուրքական ուժերի և պատրաստվածության վերաբերյալ և ինչքան անպատրաստ էին իրենք: Ուսումնասիրողների մեծ մասը թուրք-հայկական պատերազմի պարտությունը կապում են Կարսի անկման հետ: Մինչդեռ մինչև Կարսի անկումը, թե՛ դիվանագիտական և թե՛ ռազմական առումով պարտությունը ակնհայտ էր: Հայկական բանակը կոտրվեց հոկտեմբերի 14-ի և 25-ի անհաջող հարձակումներից հետո, երբ զգաց ուժերի անհամաչա-

¹ Տեր Հակոբյան Հակոբ, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 103:

փությունը: Հետևաբար Կարսի անկումը պատահական չէր: Մինչև Կարս հայ մարդը պարտված էր թուրք-բոլշևիկյան ուժերի սարսափի տակ: Մասնավորապես այս ձախողված հակահարձակումներից հետո ակնհայտ դարձավ մի կողմից հայկական կողմի անպատրաստվածությունը, մյուս կողմից՝ թուրքական ուժերի գերակշռությունը, և թուրք-բոլշևիկյան դաշինքը: Հայկական բանակը բարոյալքվեց «Երկիրը խորտակելեց ու ջախջախեց Կարսի պատերի տակ,- գրում է Վահան Նավասարդյանը,- որովհետև մինչև Կարս հայ մարդն արդեն ջախջախւած էր ռուս-թուրքական բարեկամութեան, ռուս-թուրքական միացեալ բանակների շարժումների ահավորութեան տակ»:¹

Օլթիի կռիվներից մինչև հոկտեմբերի 30-ը պատերազմի ելքը վճռված էր: Թուրքերը թե՛ դիվանագիտական և թե՛ ռազմական հաղթանակներ էին տարել, որոնք անխուսափելի էին դարձրել հայերի պարտությունը: Դիվանագիտական կարևոր հաղթանակը Խորհրդային Ռուսաստանի համաձայնության ստացումն էր Սարիղամիշ Շահթախտի գիծը գրավելու վերաբերյալ, այսինքն՝ Հայաստանի վրա հարձակվելու համաձայնությունը, իսկ ռազմական առումով Օլթիի մարզի, Սարիղամիշի Մերդենեկի ու Կարսի գրավումն էր:

Կարսի անկումով ավարտվում է պատերազմի առաջին փուլը: Նոյեմբերի 1-ից 18-ը ընթացող երկրորդ փուլում իրենց հետագա առաջխաղացումը թուրքերը պայմանավորում են Հայաստանի խորհրդայնացմամբ: Հետևաբար առաջին փուլի ռազմական պարտություններից հետո կասեցնել պատերազմը հնարավոր էր միայն դիվանագիտական ճանապարհով, այն է՝ Թուրքիայից խլել Հայաստանի խորհրդայնացման խաղաքարտը, որ նրանց տրվել էր Խորհրդային Ռուսաստանի կողմից: Թեև ակնհայտ էր, որ Սևրի պայմանագրի իրականացումը թողնվել էր հայերի հույսին, իսկ վերջիններս համոզվել էին, որ իրենց սեփական ուժերով դա անել չէին կարող, այնուամենայնիվ, հրաժարվել Անտանտի օգնությունից և Սևրի պայմանագրից Հայաստանի իշխանություններն ի գործու չեղան:

¹ Նավասարդյան Վ., *Ինչ էր և ի՞նչ չպիտի լիներ մեր ուղին*, Գահիրե, 1923, էջ 58:

Հայաստանի իշխանությունները որոշեցին գործարկել Անկախ և Միացյալ Հայաստանի անկախության խաղաքարտն Արևմուտքի հետ: Արդյունքում կորցրեցին Հայաստանի Հանրապետությունը, իսկ երրորդ փուլում՝ 1920թ. դեկտեմբերի 2-ից մինչև 1921թ. ապրիլի 22-ը, հանդես գալով որպես խորհրդային իշխանության ամրապնդման ջատագովներ, թուրքական բանակը ոչ մի իրավական հիմք չունենալով մնալ Ալեքսանդրապոլի գավառում, վեց ամիս դուրս չեկավ այստեղից, նախ մարտելով Կարսի շրջանի գրավումը, ապա և իրականացնելով այստեղ կենտրոնացված եղեռնից մագապուրծ արևմտահայության մի սովոր գանգվածի և արևելայության ցեղասպանությունը:

Եզրահանգում. Ամփոփելով վերոհիշյալը՝ եկել ենք այն եզրակացության, որ 1920թ. թուրք-հայկական պատերազմը կարելի է բաժանել երեք փուլերի: Առաջին փուլը սկսվել է հունիսից և տևել մինչև հոկտեմբերի 30-ը, երկրորդը՝ նոյեմբերի 1-ից մինչև 18-ը, երրորդը՝ նոյեմբերի 18-ից մինչև 1921թ. ապրիլի 22-ը, երբ թուրքերը Խորհրդային Ռուսաստանի վերջնագրով հեռացել են Ալեքսանդրապոլի գավառից:

Փաստորեն պատերազմի առաջին փուլում, որ թուրքերը պատերազմ չէին անվանում, այլ Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերով հաստատված տարածքների վերադարձ, իրականացնում են Ազգային ուխտով սահմանած խնդիրները, երկրորդ փուլում, որն ի դեպ ևս չեն հայտարարում, իրականացնում են հայկական պետականության վերացման և արևելահայության բնաջնջման քաղաքականությունը: Երրորդ փուլում՝ վեց ամիս դուրս չգալով Ալեքսանդրապոլի գավառից փորձում են մարտել Կարսի մարզի գրավումը: Այս ամբողջ ընթացքում իրենց համար ստեղծում են դերեր՝ իրենց իսկական դեմքը թաքցնելու համար: Եթե առաջին փուլում հանդես են գալիս իբր Անտանտի դեմ պայքարողների, ապա երկրորդում՝ Հայաստանը խորհրդայանցնողի, իսկ արդեն Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ խորհրդային իշխանությունը ամրապնդողի դերերում: Այս անգամ փորձում են միմյանց հակադրել մինչ այդ Ալեքսանդրապոլում իրենց կողմից հռչակված հեղկոմին և Հայհեղկոմին մեղադրելով վերջինիս՝ իբր դաշնակցականների նկատմամբ մեղմ վարվելու մեջ: Ստիպելով հայհեղկոմին գնալ աննախադեպ բռնությունների,

որի արդյունքում վերջիններս ստանում են փետրվարյան ապստամբությունը, այնուհետև հանդես են գալիս դաշնակցականներին աջակցողի դերում: Հայաստանում բոլշևիկների իշխանության տապալման պայմաններում Խորհրդային Ռուսաստանի հետ 1921թ մարտի 16-ի «Եղբայրության և բարեկամության» պայմանագրով բաժանում են Հայաստանի տարածքները՝ փաստի առաջ կանգնեցնելով Խորհրդային Հայաստանի իշխանություններին: Վերոհիշյալ պայմանագրով՝ Հայաստանին անցած Ալեքսանդրապոլի գավառից դուրս են գալիս 6 ամիս անց միայն, իրենց մնալն այստեղ պայմանավորելով խորհրդային իշխանությունն ամրապնդելու հանգամանքով: Եվ միայն այն բանից հետո, երբ Անդրկովկասը խորհրդայնացնելու թուրքական ծրագիրը չի համապատասխանում Խորհրդային Ռուսաստանի շահերին, վերջինիս վերջնագրով ստիպված հեռանում են 1921 թ ապրիլի 22-ին:

Փաստորեն Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատրաստ չլինելով պատերազմի և չկարողանալով ճիշտ կողմնորոշվել ստեղծված նոր միջազգային իրադրության պայմաններում, ոչ միայն նոր տարածքներ կորցրեց, այլև հնարավորություն ընձեռեց թուրքերին՝ ցեղասպանության ենթարկել արևելահայ մի խոշոր զանգվածի:

Հայաստանի Հանրապետության վերջին վարչապետ Միմոն Վրացյանը, խոսելով անկախ Հայաստանի Հանրապետության վերջին օրերի մասին, նշում է, որ «խորհրդարանը երկիրը կամովին է հանձնել բոլշևիկներին: Մենք պետք է ավելի խոհեմ լինեինք, ավելի շրջահայաց պետք է այդ քայլը ըրրած ըլլայինք, մայիսյան ընդվզումների օրերին, Հայաստանը հանձնած ըլլայինք բոլշևիկներուն: Հայաստանի տարածքը ավելի ընդարձակ կըլլար Ղարս, Արդահան, Իգդիր... Էհ, ինչ ըսիմ, ինչպես արդարանամ»¹ և որ «վարչակարգերը ժամանակավոր են, հայրենիքը մնայուն է: Գուրգուրեցեք հայրենյաց հողը»:²

¹ Մարգարյան Ե., *Դավադիր գործարք, Երևան, 1995, էջ 187:*

² *Տես նույն տեղում:*

References

1. "Hajrenik" magazine [«Hayrenik» amsagir]. Beirut, April, 1926.
2. "Hajrenik" magazine [«Hayrenik» amsagir]. Beirut, February, 1926.
3. Mshak [Mshak], No. 44, 1920 (in Armenian).
4. Mshak,[Mshak], No. 52,,1920. (in Armenian).
5. Mshak [Mshak],October 10,Tiflis, 1920. (in Armenian).
6. National Archive of Armenia, f. 1022, i. 3, file 261.
7. National Archive of Armenia, f.200, i.1, file 486.
8. Navasardian V., What was and what should not be our path [Inch' er yev inch' chpiti liner mer ughin]. Cairo, 1923. (in Armenian).
9. Sargsyan E.,Conspiratorial transaction. Armenia-Russia-Turkey, [Davadir gortsak. Hajastan- Rusastan-Turkia]. Erevan,Hajastan, 1995. (in Armenian).
10. Siirmenian G., *The Tajik Armenian soldier and the military.*, [Tachkahaj zinvor yev zinvorakanutyn], Beirut, 1967. (in Armenian).
11. Ter Hakobyan H., *The Last Disaster of Armenia* [Hajastani verjin aghety]. K. Polis,1921. (in Armenian).
12. Vratsyan S. *Republic of Armenia, Yerevan*, [Hajastani Hanrapetyun]. Yerevan, Hajastan publishing house, 1993. (in Armenian).
13. Yarazh,[Yarraj]. June 22, Yerevan No. 129
14. Yarazh,[Yarraj]. June 25, Yerevan No. 132.
15. Zohrabyan E., *1920 Turkish-Armenian war and powers* [1920 t turk-haykakan paterazmy yev terutyunnery.] Yerevan, Voskan Yerevan publishing house, 1997. (in Armenian).

ՀՏԴ 811

**ՏԱՅՔԻ ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ԵՎ
ԼԵԶՎԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հայկանուշ Մեսրոպյան

ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, Հայաստան
mesropyanhaykanush@gmail.com

Մասուն Համբարձումյան

ԲՊՀ, Հայաստան
vetarmenia@gmail.com

Ամփոփում. Տայքը ուշագրավ է իր պատմությամբ, տայեցիների տեղաշարժերով և բարբառային նկարագրով: Էրզրումից Բաբերդով մինչև Տրապիզոն ընկած տարածքում ապրող հայերը հիմնականում հաղորդակցվում էին բարբառային երեք տարբերակներով՝ Կարնո, Համշենի և Տրապիզոնի: Գ. Ջահուկյանը նշվածները տեղակայում է տարբեր բարբառախմբերում:

- 1) Կարնո բարբառի խմբում են Կարին քաղաքի, Գյումրու, Բաբերդի և Խնդաձորի խոսվածքները:
- 2) Համշենի բարբառը ներառում է Մարթիլի, Մալայի, Չեֆանոսի խոսվածքները:
- 3) Տրապիզոնի ենթաբարբառը Պոլսի բարբառախմբի մեջ է մտնում, որի մեջ են նաև Չմյուռնիայի, Նիկոմեդիայի, Պարտիզակի, Ռոդոսյոյի, Օրդուի, Ադաբազարի բարբառներն ու խոսվածքները:

Տայքի հայերի ժողովրդագրական պատկերի, ավանդույթների ու բանահյուսության, Չավախքի, Թորթումի, Խոտորջուրի և այլ վայրերի մասին արժեքավոր վկայություններ են հաղորդում Կարնեցին, Տեկանցը, Անառայանը, Տաշանը և այլք:

Ներկայումս պատմական Տայքի տարածքում պահպանված է Համշենի բարբառը, որը, ըստ Սևան Նիշանյանի, գործածվում է Արդվիլի Հովիա և Բորչկա շրջանների 23 գյուղերում:

Մինչև 1915թ. Տայքում գործում էին Կարնո, Բաբերդի, Խոտորչուրի, Տրապիզոնի բարբառները: Կարնո բարբառը հաղորդակցության միջոց է նաև Տայոց Ջավախքում:

Հոդվածում ներկայացնում ենք Տայքում գործածված բարբառների լեզվատարածքային առանձնահատկությունները:

Բանալի բառեր` *Տայք, Համշենի բարբառ, Խոտորչուրի Միջրկթաղ, խոսվածք, լեզվատարածքային տարբերակ, լեզվական հատկանիշ, տեղաշարժ:*

ON MIGRATIONS AND LINGUISTIC-TERRITORIAL FEATURES OF THE TAYK ARMENIANS

Haykanush Mesropyan

Institute of Language NAS RA, Armenia
mesropyanhaykanush@gmail.com

Sasoun Hambarzumyan

BSU, Armenia
vetarmenia@gmail.com

Abstract: Tayk is of historical significance, as evidenced by the documented movements of its inhabitants and the detailed linguistic analysis of its dialects. The Armenian population residing in the region spanning from Erzurum to Barda and Trabzon predominantly spoke three distinct dialects: These are the dialects spoken in Karin, Hamshen and Trabzon. G. Djaukyan presents a typological classification of the aforementioned linguistic means, which is divided into different dialect groups.

1) The Karin dialect group encompasses the linguistic varieties spoken in the cities of Karin, Gyumri, Baberd and Khndadzor.

- 2) The Amshen dialect encompasses the dialects of Martil, Mala and Zephanos.
- 3) The Trabzon subdialect is part of the Constantinople dialect group, which also includes the dialects of Zmurnia, Nicomedia, Partizak, Ordu, Rodosto and Adabazar.

The works of Karnetsi, Tevkants, Acharyan, Tashyan and others provide invaluable insight into the demographic profile, traditions and folklore of the Armenians of Tayk, Javakhk, Tortum, Khotorjar and other regions.

At the present time, the Hamshen dialect is maintained in the region of historical Tayk, which, according to Sevan Nishanyan, is utilized in 23 villages within the districts of Hopa and Borchka of Ardvin.

Prior to 1915, the dialects of Karin, Baberd, Khotorjur and Trabizon were in use in Tayka. The Karin dialect is also utilised as a means of communication in the Javakhk region of Tayk.

The following article presents a detailed account of the linguistic features of the dialects used in Tayk.

Key words: *Tayk, Hamshen dialect, Khotrjur, Mijintag, language variant, language feature, shift.*

Տայքի լեզվամշակութային սահմանների ուրվագիծը

Մեծ Հայքի 14-րդ նահանգը՝ Տայքը, ուշագրավ է իր պատմությամբ, տայեցիների տեղաշարժերով և բարբառային նկարագրով: Տայքի հայերի վարչաժողովրդագրական պատկերի, ավանդույթների ու բանահյուսության, Ռորթումի, Խոտորջուրի և այլ վայրերի մասին արժեքավոր վկայություններ են հաղորդում Հակովբ Կարնեցին¹, Երեմիա Տեկանցը², Մանվել Միրախորյանը³, Հրաչյա Աճառյանը⁴, Բարունակ Թառլաքյանը⁵,

¹ Տե՛ս Կարնեցի ԅ., Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903:

² Տե՛ս Տեկանց Ե., Ճանապարհորդություն ի Բարձր Հայք (1872-1873), Եր., 1991:

³ Տե՛ս Միրախորյան Մ., Ուղևորություն ի հայաբնակ գաւառս, Կ. Պոլիս, 1884:

⁴ Տե՛ս Աճառեան Հ., Պոլսէն Կարին, Նոր Նախիջևան, 1909:

⁵ Տե՛ս Թառլաքեան Բ., Նշխարներ Համլէնի եւ Տրապիզոնի բանասիրտութեան, Եր., 1986:

Հակոբոս Տաշյանը¹, Վահան Պարտիզակցին², Մարտիրոս Հանյանը³, Հարություն Պզտիկյանը⁴ և այլք:

Տարբեր դարերում տարբեր սահմաններով է պատմությանը հայտնի Տայքը: Յակոբոս Տաշեանը գրում է, որ «Հայաստանի առաջին բաժանմամբ իսկ՝ Հռովմեական եւ Սասանեան պետութեանց միջեւ Կարին ու Սպեր յունական բաժնին մէջ էին, Թորթոմ ու Կիսկիմ՝ Տայոց աշխարհի հետ՝ Պարսից բաժնին»⁵: Դա՛օքք (Տայք) նահանգի սահմանների, տեղագրության, բնության և այլնի մասին տեղեկություններ են հայտնում Քսենոֆոնը, Խորենացին, Բուզանդը, Լաստիվերցին, Ղուկաս Ինճինյանը և այլք, որոնց վկայությունները համադրելով՝ կարող ենք ասել, որ այն տարածվել է Էրզրումից Բաբերդով մինչև Սև ծով՝ ներառելով Կարին, Համշեն, Տրապիզոն տարածքները՝ համապատասխան բարբառներով ու խոսվածքներով⁶:

Պատմական մի շարք փաստեր, պատմիչների վկայություններ, ուսումնասիրություններ և քարտեզների վերլուծություններ է վկայաբերում Ա. Եղիազարյանը⁷: Լ. Նազարյանը բյուզանդական աղբյուրների հիման վրա ներկայացնում է Տայք և հարակից տեղանունների տարբերակները⁸: Հայերենախոսների տեղաշարժերին անդրադառնալով՝ Տ. Սարգսյանը Ղրիմ է տանում Բաբերդցի Վերին Գոզոլի/Գոզոլք գյուղից, նաև Դերջանից արտագաղթած հայերին: Նա գրում է. «14-րդ հարյուրամյակի

¹ Տե՛ս Տաշեան Յ., *Հայ բնակչությանը Սև ծովէն մինչև Կարին, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1921*: Տաշեան Յ., *Տայք, դրացիք եւ Խտտորջոյ, պատմական-տեղագրական ուսումնասիրություն, հատոր Ա, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1973*:

² Տե՛ս Պարտիզակցի Վ., *Խօսք գիպրեկնեսց, Կ. Պոլիս, 1879*:

³ Տե՛ս Հանեան Ս., *Երզնէր, առակներ եւ նւ Խտտորջոյ, Տփղիս, 1904*:

⁴ Տե՛ս Պզտիկեան Յ., *Տայք. Բարձր Հայք վրացական թէ՛ հայկական (նամբորդական նօթեր), Մխիթարեան հրատարակություն, Վիեննա, 2005*:

⁵ Տաշեան Յ., *Տայք, դրացիք եւ Խտտորջոյ, պատմական-տեղագրական ուսումնասիրություն, հատոր Ա, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1973, էջ 61*:

⁶ Տե՛ս Ինճինեան Ղ., *Ստորագրություն հին Հայաստանեայց, Նահանգ չորեքտասաներորդ. Տայք, Վենետիկ, 1822, էջ 368-375*:

⁷ Տե՛ս Եղիազարյան Ա., *Բագրատունիները և Մամիկոնյանները Տայքում, «Պատմական Տայք», Ս. Էջմիածին, 2019, էջ 94-105*:

⁸ Տե՛ս Նազարյան Լ., *Տայք անվանումն ըստ Բյուզանդական աղբյուրների, «Պատմական Տայք», Ս. Էջմիածին, 2019, էջ 120-131*:

առաջին կեսին թերակղզի տեղափոխված հայերի թվում շատ էին Բարձր Հայքից, հատկապես Բաբերդից գաղթածները»¹:

Հետագա տեղաշարժերի մասին վկայում է Ա. Ակոպովը՝ հիմնականում դիտարկելով Թորթումի տարածքը և մահմեդականացած կեսկես հայերին: Նա գրում է. «18-19-րդ դարերի սահմանագլխին Թորթումի գավառի հայ քրիստոնյա բնակչության թիվը կրճատվեց, իսկ կեսկեսները դարձան գավառի բնակչության մեծամասնությունը»²: Նրանց մի մասը հաստատվեց Ախալցխայի տարածաշրջանում:

Արժեքավոր են Մխիթարյան հայր Հ. Պզտիկյանի ճամփորդական հուշերը ներկայիս Տայքի մասին: Սումէլա կատարած ճամփորդության մասին նա գրում է. «Վերադառնալով մայրուղի՝ կանցնինք բազմաթիւ նախապէս քրիստոնէայ գիւղերէ, դժուար է զանազանել ազգութիւնները ներկայիս: Միայն Համէնցիներն են, որ պահած են իրենց բարբառը»³: Քանի որ հեթանոս հայերս ունեցել ենք ծառի պաշտամունք, տեղեկատվական է նաև հետևյալ հատվածը. «Կիւմիշխանէն դէպի Բաբերդ բարտիներու մայրուղի կարելի է կոչել, իսկական բարտիները հոս են: Հայաստանի խորհրդանիշ այս ծառը կարծես կուզէ փաստել, որ իսկական Հայաստանն ալ հոս կը սկսի, Կիւմիշխանէի եւ Անահտական լեռնաշղթաներու միջեւ գտնուող Բաբերդի լեռնադաշտը»⁴:

Վահան Պարտիզակցին ևս կարևոր փաստեր է հիշատակում տայքցիների կրոնի, լեզվի, հատկանունների մասին: Այսպես՝ «Պոնտոսի եւ Խաղտեաց ժողովրդեան կարծես ճակատագիրն է եղած կրօն ու ազգ փոխելը: Հայոց տիրապետութենէն յետոյ, Հռոմէացիք, Պարսիկք, բիւզանդեան Հռոմք եւ Թիւրքք հետզհետէ տիրեցին եւ միշտ տիրող ազգին լեզուն, մանաւանդ կրօնը մեծ դեր խաղացած են: Գաւառները կանուխէն թողած են կրօննին, հետեւաբար քրիստոնէական շէնքեր շատ քիչ կան,

¹ Մարգարյան Տ., *Տայքի և հարակից գավառների հայությունը Ղրիմում 14-15-րդ դարերում*, «Պատմական Տայք», Ս. Էջմիածին, 2019, էջ 406:

² Akopov A., *Administrative and demographic Picture of Tortum Region (from the 16th Century up to 1878)*, «Historical Tayk» Collected Papers, Holy Etchmiadzin, 2019, p. 237-449.

³ Պզտիկյան Յ., *Տայք Բարձր Հայք վրացական թէ հայկական (ճամբորդական նոթեր)*, Մխիթարեան հրատարակություն, 2005, Վիեննա, էջ 33:

⁴ Պզտիկյան Յ., *նշված աշխ.*, էջ 39:

բայց գիւղօրէից անուանք եւ գերդաստաններու մականունք դեռ հայկական են»¹:

Տայքի հայերի լեզուն

Ճորոխ գետի ավազանում և Էրզրումից Բաբերդով մինչև Տրապիզոն ընկած տարածքում ապրող հայերը հիմնականում հաղորդակցվում էին բարբառային հայերենի երեք տարբերակներով՝ Կարնո, Համշենի և Տրապիզոնի, որոնք մաս են կազմում բարբառների արևմտյան խմբակցության: Գ. Ջահուկյանը, ըստ հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման, նշվածները տեղակայում է տարբեր բարբառախմբերում:

- 1) Կարնո բարբառի խմբում ներառում է Կարին քաղաքի, Գյումրու, Բաբերդի և Խնդածորի խոսվածքները:
- 2) Համշենի կամ հյուսիսարևմտյան միջբարբառախմբում ներառում է Մարթիլի, Մալայի, Չեֆանոսի խոսվածքները և Եղեսիայի բարբառը:
- 3) Տրապիզոնի ենթաբարբառը Պոլսի միջբարբառախմբի մեջ է մտնում, որի հետ լեզվական ընդհանրություններ ունեն Չմյունիայի, Նիկոմեդիայի, Պարտիզակի, Ռոդոսթոյի, Օրդուի, Ադաբազարի բարբառներն ու խոսվածքները²:

Համշենի բարբառը՝ որպես կենդանի հաղորդակցության միջոց բուն Տայքում

Ներկայումս պատմական Տայքի տարածքում պահպանված է Համշենի բարբառը, որը, ըստ Սևան Նիշանյանի, գործածական է Արդվինի Հոփա և Բորչկա շրջանների 23 գյուղերում: Չնայած բռնաձուլման քաղաքականությանը՝ համշենահայերը ներփակ կյանքի շնորհիվ կարողանում են պահպանել բարբառը:

Համշենահայերը գիտակցում են իրենց հայ լինելու իրողությունը, մահմեդական են, հիմնականում ունեն օտար անձնանվանական համակարգ: Նրանք, չնայած շրջապատում թուրքերենի լեզվական գերակայությանը, ազգակից համայնքում՝ որպես հաղորդակցության հիմնական մի-

¹ Պարտիզակցի Վ., *Խօսք գիայրենեաց, Կ Պոլիս, 1879, էջ 18-19:*

² Տե՛ս Ջահուկյան Գ., *Հայ բարբառագիտության ներածություն, <ՄՄՄ> ԳԱ, Եր., 1972, էջ 132-133:*

ջոց, գործածում են Համշենի բարբառը: 200-300 տարի առաջ մահմեդականություն ընդունած հայության այս սովոր գանգվածը ծանոթ է իր անցյալին, ավանդապաշտ է, հարազատ է ազգային բազմաթիվ սովորությունների, հիշում և նոր սերնդին է փոխանցում բանահյուսական հնամենի պատումները, ազգային երգերն ու աղոթքները: Այս մասին Լ. Սահակյանը փաստում է. «Այսօր էլ դեռ իսլամացված համշենցիների սերունդները հիշում են իրենց մեծահասակներից լսած ծածկագրված բառերով ժողովրդական աղոթքներ, որոնցում առկա են հայերեն (Համշենի բարբառով) և նրանց կրոնափոխությամբ պայմանավորված արաբերեն ու թուրքերեն բառեր»¹:

Անդրադառնալով համշենահայերի լեզվին՝ Հակոբոս Տաշյանը հիշատակում է, որ «Հայ լեզուի դեմ մաքառած են արգիլելով եւ համոզելով, թէ ուղղահաւատ մահմետականի համար մեղք է անհաւատի լեզուախօսի»: Ապա վկայաբերում է Բոխին, որին արդվինցի կրոնափոխները խոստովանել են, որ մեղք են գործել և խոսել են մայրական կաթի հետ ստացած լեզվով, չնայած «սուրբ լեզուն՝ թուրքերենն այլ գիտեն» և հույս ունեն, որ դրախտում «Աստուծոյ եւ հրեշտակաց անհասկանալի չեն մնար»: «Այսպիսի ըմբռնմանց տարածուելուն արդիւնքն եղած է ամէն տեղ լիովին թուրքախօս դառնալը»²:

Պետության կողմից չստանալով կրթամշակութային աջակցություն՝ համշենահայերը անձնական նախաձեռնությամբ են գորավիզ դառնում ազգային ժառանգության պահպանմանը: Ժամանակակից համշեներենի պահպանման գործում մեծ ներդրում ունեն հատկապես արդվինցի Հուրիե Շահինը, Մահիր Օզքանը և այլք, որոնք հեղինակում են բարբառային գրքեր, ինքնուսույցներ, դասավանդման կրթական ծրագրեր:

Հուրիե Շահինը հեղինակն է «Asimilasyon politikasi dilleri nasıl yok ediyor» («Բռնաձուլման քաղաքականությունը ինչպե՞ս է ոչնչացնում լեզուները», Անկարա, 2014), «Hamşetsnak Lizu Kidanutun» («Համշեներենի

¹ Սահակյան Լ., Համշենի հայկական ձեռագրերում, . Եր., 2019, էջ 138:

² Տաշեան ԅ., Հայ բնակչութիւնը Սև ծովէն մինչեւ Կարին, . Վիեննա, 1921, էջ 36-37:

քերականություն», Անկարա, 2018), 3000-բառանոց բարբառային բառարանի, ինչպես նաև «Կորուսյալ կյանքեր», «Հրե կարմիրը», «Սիրո գույնը» վեպերի և հոդվածների: Անկարայում հրատարակում է «Համշենցու Գոր» ամսագիրը, մշակել է համշեներենի դասավանդման կրթական ծրագիր:

Հուրիեի դեկավարած «Հոփա» միությունը դիմել է Թուրքիայի Հանրապետության ազգային կրթության նախարարությանը՝ Համշենի բարբառը տայեցիների համար որպես երկրորդ լեզու գրանցելու և դպրոցում ուսուցանելու արտոնություն ստանալու համար:

Շահինն ասում է. «Ուսումնասիրելով արևմտահայերենը՝ հասկացա, որ համշենահայերենը հայոց լեզվի բարբառներից մեկն է, դասական հայերեն է»¹:

Բարբառի կենսունակության ապահովման առումով ուշագրավ են նաև Մահիր Օզքանի «Համշենեան պատմուածներ, Համշենակ հեքիաներ», «Համշենակ, համշենահայերեն» գրքերը, ինչպես նաև Անտուան դը Մենտ-Էքզյուպերիի համշեներեն թարգմանած «Փոքրիկ իշխանը», որոնք լույս են տեսել Ստամբուլի «Արաս» հրատարակչության կողմից²:

Մտահոգիչ է այն, որ հնագույն գիր ունեցող ժողովրդի մի հատվածը ստիպված է գրել ու հրատարակել թուրքատառ հայերենով:

Ըստ Հուրիեի տվյալների՝ Արդվինի նահանգում ապրում է մոտ քսանհինգ հազար, Չաքարիայում, Դյուզեում, Ստամբուլում՝ շուրջ հազար հայախոս հայ: Ռիզեում ապրող շուրջ հարյուր հազար հայը, չնայած թրքախոսությանը, գործածում է բազմաթիվ հայերեն բառեր:

Համշենի Քեմալ Փաշա, Հոփա, Արդանուշ, Կարասաչ և այլ բնակավայրերում հարցումներ կատարելիս նկատեցինք, որ Թուրքիայի համշենահայությունը միակերպ չի ընդունում հայ լինելու իրողությունը, չնայած բոլորն էլ բարբառախոս են: Այս հայերին ծայտյալ անվանել չենք կա-

¹ Մարտիրոսյան Հ., «Ռադիոյուր», skubi.net/stypendium2019_en.html?fbcl

² Տե՛ս Օզքան Մ., Համշենեան պատմուածներ. Համշենակ հեքիաներ, «Արաս» հրատ., Ստամբուլ, 2022: Նույնի՝ Համշենակ. Համշենահայերեն, «Արաս» հրատ., Ստամբուլ, 2023: Antoine de Saint-Exupery, Bidzig Priens, tartsenoge (<դարձնող, թարգմանիչ>) Mahir Ozkan, «Aras», Istanbul, 2022:

րող, քանի որ որքան էլ նման հայերը ժխտեն իրենց ազգային պատկանելությունը, միևնույն է, բացահայտվում են հայերենախոսությամբ:

Թուրքիայի համշենահայերը հիմնականում ծանոթ են Համշենի պատմությանը, գիտակցում են հայ լինելը: Ոմանք գիտեն, որ հայ են, սակայն չեն խոստովանում. զգուշավոր են, խուսափում են ազգային անվանահամակարգից, ունեն ազգային պատկանելությամբ պայմանավորված վնասի կամ վտանգի վախ, հոգեբանական տագնապ: Ոմանք էլ վատ տեղեկացված լինելու հետևանքով կասկածանքով են մոտենում հայ լինելու հանգամանքին:

Համշենահայերը Հայաստանում չեն ներգաղթել, առանձին բնակավայրեր չունեն, այդ պատճառով ՀՀ տարածքում Համշենի բարբառը չի գործածվում և դժվարհասկանալի է հայրենաբնակներին: Այս առումով տեղին է Բաֆֆու նկատառումը. «Մի գավառացի մյուս գավառացու լեզուն չէր հասկանում, թեև երկուքն էլ եղբայրներ էին»¹: Հայաստանաբնակ սակավաթիվ համշենահայերը բարբառով խոսում են միայն ընտանիքներում:

Տրապիզոնի ենթաբարբառ²

Հ. Աճառյանը Համշենի տարածքում գործածված խոսվածքները բաժանում է երեք հիմնական մասի՝ Համշենի կամ Ճանիկի, Տրապիզոնի և Օրդուի³: Տրապիզոնի բարբառով խոսել են Համշենը թողած և Տրապիզոնի շրջակա գյուղերում ապաստանած հայերը, որոնք հետագայում անցան Կովկաս և Կուրան: Այսպիսով, Տրապիզոնը Նիկոմեդիային, Կեսարիային հարող բարբառային կղզյակ էր՝ բնակեցված Կարնո և Պոլսի բարբառների խոսվածքներով:

Բարբառակիր Ս. Լևոնյանը, հետևելով Հ. Աճառյանի դասակարգման սկզբունքին, հավաստում է. «Աբխազիայի հայաբնակ տարածքներ-

¹ Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 7, Հայպետրատ, Եր., 1963, էջ 165:

² Ենթաբարբառի հնչյունական, քերականական, հասկացական-բառանվանողական և բառինաստային զուգաբանությունները մանրամասն տես՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի պրիսիվի N 99ա «Տրապիզոնցիներով բնակեցված Ծինգեր և Միմեր, 2-րդ Բազառոյաչա» և N 99բ «Տրապիզոն» տետրերը:

³ Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, . Եր., 1947:

րում տարբերվել է հիմնականում երեք խոսվածք՝ Թիրաբիզոնի, Ջրնիզի և Էռոզի (Օրդուի)»¹: Տրապիզոնցիները խոսվածքը պահպանել են Ծեբել-դայի Լըմսին գյուղակում, որտեղ մեծամասնություն էին կազմում: Մնացած գյուղակներում հաղթել է Ճանիկի խոսվածքը:

Տրապիզոն քաղաքից, Օրդուից, Ինիայից ներգաղթել են Աբխազիայի Բագատյաշա, Գուլրիփշիի Մյասնիկով, Մէձարա, Սուխումի Նեյդորֆ: Տրապիզոնի Ծինգեր և Միմեր գյուղերից և Օրդուից գաղթել են Աբխազիայի Երկրորդ Բագատյաշտա՝ Ջուղին կեղ: Գաղթականների մի մասը հաստատվել է Ծեբելդա, Ամթքելի, Ազանտա, Լատա և այլ բնակավայրերում: Գագրայի Ալախաձե գյուղի բնակիչների մեծ մասը Սամսունի համշենահայեր են: Գյուղը լեզվական տեսակետից համասեռ չէ, քանի որ նույն տարածքում կան Օրդուից և Տրապիզոնից գաղթածներ:

Տրապիզոնի, նաև Սամսունի հայության տեղաշարժը տարածական էր, այդ իսկ պատճառով խոսվածքը կրում է այլ բարբառների ազդեցություն՝ մասամբ պահպանելով խոսվածքի հատկանիշները: Լեզվական տեսակետից Տրապիզոն քաղաքի լեզվատրակը տարբերվում է գյուղերի խոսվածքներից: Ինչպես նկատում է Հ. Տաշյանը, «Տրապիզոնի անմիջական կից հայ գիւղերն իսկ Համշենցուց բարբառով կը խօսին»²:

Կարնո բարբառի լեզվատարածական սահմանները

Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի Կարնո բարբառը *կը* ճյուղի ամենամեծ բարբառներից է, որի սահմանները Տայքից ձգվել են մինչև Խնուս, Երզնկա, Գյումուշխանե, իսկ կենտրոնը եղել է Կարինը: Բարբառի մասին մատենագրական վկայություններ կան դեռևս 8-րդ դարից: Ստեփանոս Սյունեցին, խոսելով ծայրագավառային բարբառների՝ «գբառն զեզերականս» մասին, հիշատակում է նաև «զՍպերացն», այսինքն՝ Սպերի խոսվածքը: 13-րդ դարում Հովհաննես Երզնկացին Թրակացու քերականությանն անդրադառնալիս հաստատում է Ստեփանոս Սյունեցուն, և ինքն էլ անդրադառնում հյուսիսային այդ բարբա-

¹ Տե՛ս ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի արխիվի N 336 «Ճանիկ, Սամսունի Ծեբելդա» տետրի առաջաբանը:

² Տաշյան Զ., Հայ բնակչությունը Սև ծովէն մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 40:

ռին: 17-րդ դարում Հակոբ Կարնեցու գործերը կրում են մայրենի բարբառի ազդեցությունը¹:

1887 թ. ռուս լեզվաբան Տոմսոնը ներկայացնում է Կարնո բարբառի Ախալցխեսի խոսվածքը²: Այս ուսումնասիրությունը թերի է, քանի որ հեղինակը չի եղել Ախալցխեսում, չէր տիրապետում խոսվածքին և տեղեկությունները քաղել է մի վաճառականից:

20-րդ դարում Հր. Աճառյանը, Գ. Ջահուկյանը, Ա. Ղարիբյանը, Ա. Գրիգորյանը և այլք քննում են Կարնո բարբառին առնչվող հարցեր, իսկ Հ. Մկրտչյանը գրում է մենագրություն՝ Կարնո բարբառի մասին:

Կարնո բարբառի խոսվածքներով են խոսել Կարսի, Բասենի, Նարմանի, Խոտորջուրի, Բաբերդի, Սպերի, Այնթապի, Դութախի, Շնջանի, Մըլանի, Մալազկերտի, Քդիի, Հըրդիֆի, Խնուսի, Դերջանի, Կիսկիմի, Թորթումի և այլ բնակավայրերի հայերը:

19-րդ դարի սկզբին կարնեցիների մեծ մասը տեղաշարժվել է դեպի Արևելյան Հայաստան և Վրաստան՝ տեղակայվելով հետևյալ համապատասխանությամբ. Չիֆլիկից՝ Ջուլդա (Ախալցխա), Նորշենից՝ Ծղալթբիլա (Ախալցխա), Օրդվիսից՝ Ղաղոլար (նաև՝ Ախալցխայի Բուռնաշետ), Երկար Մասուրից՝ Ախալքալաքի Օլավերդ, Էրզրումից՝ Ախալքալաքի Բուղաշեն, Վաչխան, Թոփալ Չաուշից՝ Բեժանո, Խաչգյուղից՝ Ալաստան, Բասենի Ավլար և Բահար գյուղերից՝ Ախալքալաքի Լոմատուրցի:

Այսօր էլ Ախալցխեսի, Ախալքալաքի և Բոզդանովկայի հայկական գյուղերը շատ լավ պահպանել են իրենց մայրենին և ներկայումս խոսում են Կարնո բարբառի համապատասխան խոսվածքներով, բացառությամբ Հեշտիա, Թորիա, Ուժմանա, Դիլիֆ և Փոկա գյուղերի, որտեղ Մուշից գաղթած բնակիչները խոսում են իրենց բարբառով:

Խոտորջուրի գավառում նույնպես խոսել են Կարնո բարբառի խոսվածքներով:

Հ. Տաշյանը փաստում է, որ մինչև 1915 թ. Տայքի տարածքում գործուն են եղել հասկապես Կարնո, Բաբերդի, Խոտորջուրի, Տրապիզոնի

¹ Տե՛ս Կարնեցի Յ., Տեղագիր Վերին Հայոց, Վաղարշապատ, 1903:

² Տե՛ս Томсон А., Лингвистические исследования, СПб, тип. Евдокимова, 1887:

բարբառները: Նա գրում է. «Համշենի անմիջական դրացին՝ լիովին հայ մնացած Խոտորջուր տարբեր հայերեն բարբառ մ'ունի, թեև նմանության այլևայլ կետեր կան»¹: Ըստ Խոտորջուրի Միջընթաղի նախկին բնակիչների Թորգոմ և Երվանդ Գևորգյանների՝ գավառի ինը գյուղերից ութը՝ Խնդաձոր, Ճիճապաղ, Կիսակ, Միջինթաղ, Սունինց, Կաղմըղուտ, Վահնա, Զեղուտ, ունեն միևնույն խոսվածքը: Միայն Կրման գյուղի խոսվածքն է տարբերվում հիշյալ գյուղախմբի լեզվից: Խոտորջուրի Միջընթաղ գյուղի բարբառային գրանցումներով տետրի առաջաբանում Դ. Կոստանդյանը գրում է. «Տարբերությունը հիմնականում այն է, որ Կրմանի խոսվածքում չկա *ր>* փոփոխություն, որպիսին որոշ դիրքերում, հատկապես բաղաձայններից առաջ, իսկ անվերապահորեն ռնգայիններից առաջ կա գավառի մյուս գյուղերում»²:

Եզրահանգում. Այսպիսով, բարբառագետներին հասու ձեռագիր և տպագիր նյութերը, բարբառակիրների հետ ունեցած հարցումները վկայում են, որ Տայքի տարածքում ներկայումս կենսունակ է Համշենի բարբառը: Նախկինում Տայքում ընդարձակ տարածք ընդգրկած Կարնո բարբառը գործուն է մասնավորաբար Շիրակի դաշտի բնակավայրերում և Ջավախքում:

Ըստ 2014 թվականին ԹՀ-ում կատարած մեր հարցումների՝ Էրզրումի Դութաղ գյուղի հայերը բարբառախոս են: Մոտակա Էրենլեր քրդաբնակ գյուղում ևս կան հայեր, որոնք գիտեն Կարնո բարբառը:

Դատելով Կարնո բարբառի ներկա կարգավիճակից՝ վստահորեն կարելի է ասել, որ այն կուղեկցի հայությանը իր գոյության ողջ ընթացքում:

Տրայիզոնցիները և խոտորջուրցիները, կորցնելով լեզվական հարագատ միջավայրը, ընթացել են տարածական ուղիներով և հայտնվելով տարբեր բնակավայրերում՝ մայրենի բարբառը կորցրել են գրական լեզվի կամ ավելի զորեղ բարբառի ազդեցությամբ: Ինչպես խարբերոցի Համաստեղն է գրում, «Բարբառը ներկի մը պես կը կորսնցնէ իր խաս գոյները»³:

¹ Տաշեան Յ., Հայ բնակչությունը Սև ծովէն մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջ 61:

² Տե՛ս ՀՀ ԳԱԱ լեզվի հնաստիտուտի արխիվի N 59. «Խոտորջուրի Միջընթաղ» տետրը:

³ Համաստեղ, Նամակսանի, Երևան, 2003, էջ 258:

References

1. Acharyan H., *Examining the Hamshen dialect* [Knnutyun Hamsheni barbari]. Yerevan, Academy of Sciences of Armenia SSR, 1947 (in Armenian).
2. Acharyan H., *Karin from Constantinople* [Polsen Karin]. New Nakhichevan, 1909. (in Armenian).
3. Akopov A., *Administrative and demographic Picture of Tortum Region (from the 16th Century up to 1878)*, «Historical Tayk» Collected Papers, Holy Etchmiadzin, 2019:
4. Hamastel, *Letters* [Namakani]. Yerevan, 2003. (in Armenian).
5. Hajian M., *Songs, fables, etc., Khotrjur* [Yerger, arakner yevn yevn Khotrjroy]. Tbilisi, 1904. (in Armenian).
6. Inchijian G., *Signature of an old visit to Armenia, Fortieth State. Tayk* [Storagrutyun hin Hayastaneayc, Nahang chorektasanerord. Tayk]. Venice, 1822. (in Armenian).
7. Jahukyan G., *Introduction to Armenian Dialectology* [Hay barbaragitutyun neratsutyun]. Academy of Sciences of Armenia SSR, Yerevan, 1972. (in Armenian).
8. Karnetsi H., *Topographer of Upper Armenians* [Tegagir Verin Hayots]. Vagharshapat, 1903 (in Armenian).
9. Martirosyan H., "Radio news" [Radiolur], skubi.net/stypendium2019_en.html?fbcl (in Armenian).
10. Mirakhorian M., *Trip to the Armenian province* [Ugevorutyun i hayabnak gavars]. Constantinople, 1884. (in Armenian).
11. Nazaryan L., *The Denominatiopn of Tayk in Byzantine sources* [Tayk anvanumn ist Byuzandakan agbyurmeri], "Historical Tayk" collection of articles, S. Etchmiadzin, 2019. (in Armenian).
12. Ozkan M., *Hamshenian stories* [Hamshetsnak hekianer]. Istanbul, "Aras" ed., 2022. (in Armenian).
13. Ozkan M., *Hamshetsnak. Hamshen Armenian.*, Istanbul, "Aras" ed., 2023:
14. Ozkan M., *Antoine de Saint –Exupery, Bidzig Priens*, tartsenoge Mahir Ozkan, Istanbul, «Aras», 2022. (in Armenian).
15. Partizaktsi V., *Speech of the homeland* [Khosk zhayreneats], K. Polis, 1879. (in Armenian).
16. Pztikian H., *Tayk. Is High Armenian Georgian or Armenian (traveler's notes)* [Tayk. Bartsr Hayk vratsakan te haykakan (chambordakan noter)]. Vienna, Mkhitarian Publishing House, 2005. (in Armenian).
17. Raffi, *Collection of Countries* [Yerkeri jogovatsu]. Vol. 7, Yerevan, Haypethrat, 1963 (in Armenian).
18. Sahakyan L., *Hamshen in Armenian manuscripts* [Hamsheny haykakan dzeragerurum]. YSU publishing house, Yerevan, 2019. (in Armenian).

19. Sargsyan T., *Armenians of Tayk and Neighboring Provinces in Crimea in the 14th-15th centuries* [Tayki ev harakits davarneri hayutyuny Krimum 14-15-rd darrerum]. "Historical Tayk" collection of articles, S. Etchmiadzin, 2019. (in Armenian).
20. Tarlakian B., *Mentions of Hamshen and Trebizond Menagerie* [Nshkharner Hamsheni ev Trapizoni banahyusutyun]. Yerevan, 1986. (in Armenian).
21. Tashian H., *The Armenian Population from the Black Sea to Karin* [Hay bnakchutyuny Sev tsoven minchev Karin]. Mkhitarian Printing House, Vienna, 1921. (in Armenian).
22. Tashian H., *Tayk, Neighbors and Khotorjur, a historical-topographical study* [Tayk, dratsik ev Khotorjur]. Volume A, Vienna, Mkhitarian Publishing House, 1973. (in Armenian).
23. Tevkants E., *Journey to High Armenia (1872-1873)* [Chanaparhordutyun i Bartsr Hayk], Yerevan, 1991. (in Armenian).
24. Thomson A., *Linguistic studies* [Lingvisticheskie issledovaniya], St. Petersburg, Evdokimov printing house, 1887. (in Russian).
25. Yeghiazaryan A., *Bagratids and Mamikonyans in Tayk* [Bagratuninery ev Mamikonyannery Takum], "Historical Tayk" collection of articles, S. Etchmiadzin, 2019. (in Armenian).

ՀՏԳ՝ 398

**ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐՈՐԸ ՈՐՊԵՍ ՎԵՐԱՐՏԱԳԻՎՈՂ ԺԱՆՐ
(ՏԱՅՔԻ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՕՐՈՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)**

Հասնիկ Մատիկյան

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների կենտրոն,
Շիրակի պետական համալսարան, Հայաստան
hasvrej@mail.ru

Ամփոփում. Օրորոցայինը՝ որպես բանահյուսական կայուն ժանր, ունի ուշագրավ նկարագիր Տայքի և Շիրակի բանահյուսական մտածողության մեջ:

Տայքն ու Շիրակը առանձնանում են իրենց պատմական նկարագրով, անցյալով, լեզվամտածողությամբ:

Տայեցիների մասին ուշագրավ վկայություն է մեզ հաղորդում Հակոբ Տաշյանի *Տայք, դրացիք և Խոտորջուր/ Պատմական-տեղագրական ուսումնասիրություն* աշխատանքը:

Մերօրյա ուսումնասիրությունների շարքում պետք է առանձնացնել Ա. Ակոպովի՝ Տայքին նվիրված հոդվածաշարը:

Բանագիտական ուսումնասիրություններ կատարելուց առաջ հետազոտողը պետք է կարևոր ու հավաստի աղբյուրներից օգտվի տվյալ տարածաշրջանի ժողովրդագրական, պատմական, տեղագրական, նարտարապետական տվյալներ ձեռքբերելու համար, որոնք կծառայեն հետազոտության խորքային ու համակողմանի քննությանը: Այս առումով նշենք Ա. Ակոպովի աշխատանքներից մի քանիսը՝ *Տայքը X դարում (պատմական ակնարկ)*, *Պատմական Տայք նահանգն Արևմտյան Հայաստանի վարչաքաղաքական համակարգում XVI-XVIII դարերում*, *Ժողովրդագրական գործընթացները պատմական Տայքում XVI-XVIII դարերում*, *Տայքի ազգային պատկանելության հարցը պատմագիտության մեջ* հոդվածները:

Քանի որ Տայքը ամենաքիչ ուսումնասիրվածն է բանագիտական դաշտում, ուստի տեղի հայերի բանահյուսական ժառանգությունը ներկայացնելու համար անհրաժեշտ է համապարփակ մոտեցում դրսևորել՝ հետազոտության առանցքում ունենալով նաև այլ մարզերի, մասնավորապես Համշենի բանահյուսությունը:

Ծիրակի բանահյուսական ժառանգությունը ունի հարուստ նկարագիր. օրորոցայինը՝ որպես վերարտադրվող ժանր, պահպանվում է շիրակցիների բանահյուսական մտածողության մեջ:

Բանալի բառեր՝ *Տայք, Համշեն, Խոտորջուր, տեքստ, օրորոցային, տարբերակ, բանահյուսություն:*

**THE HISTORICAL LULLABY AS
A REPRODUCTIVE GENRE
(With Special Reference to Tayk and Shirak)**

Hasmik Matikyan

Shirak Center for Armenological Studies of NAS RA
Shirak State University, Armenia,
hasvrej@mail.ru

Abstract: The lullaby, as a stable folkloric genre, has a remarkable description in the folkloric thinking of Tayk and Shirak. Tayk and Shirak are distinguished by their historical description, past, and linguistic thinking.

Hakob Tashyan's work entitled *Tayk, Dratsik and Khotorjur/ Historical and Topographical Study* provides us with remarkable evidence about the people of Tayk.

Among the current studies, A. Akopov's series of articles dedicated to Tayk should be highlighted.

Before conducting folkloric studies, the researcher must use important and reliable sources to obtain demographic, historical, topographic, and architectural data of the given region, which will serve for an in-depth and comprehensive examination of the research. In this regard, it is worth mentioning A. Akopov's works: *Tayk in the 10th century (historical review)*, *Historical Tayk Province in the Administrative-Political System of Western Armenia in the 16th-18th centuries*, *Demographic Processes in Historical Tayk in the 16th-18th centuries*/, *The Issue of Tayk's Nationality in Historiography*, etc. Since Tayk is the least studied in the field of folklore, it is necessary to demonstrate a comprehensive approach to present the folklore heritage of local Armenians, taking into account the folklore of other regions, in particular Hamshen, as the focus of the research.

The folklore heritage of Shirak has a rich description: the lullaby, as a reproducible genre, is preserved in the folklore thinking of the people of Shirak.

Key words: *Tayk, Hamshen, Khotorjur, text, lullaby, version, folklore.*

Մեծ Հայքի Տայք նահանգի մասին կարևոր տեղեկատվություն ենք ստանում Յակոբոս Տաշեանից: Հեղինակը նշում է, որ ճոխ տեղեկություն կգտնենք նրա մատենագրության մեջ. «Սև գետ ու Համչեն յատուկ մտօք Խաղտեաց կը վերաբերին. ուստի Տայոց աշխարհէ դուրս են: Բայց՝ անմիջական սահմանակից Տայոց ու նաեւ Բարձր-Հայոց՝ նուց ի վեր պետք էր որ այլեւայլ կողմանէ կապ ունենային այլ աշխարհաց հայութեան հետ»¹:

Մեջբերենք Տայեցիների տեղաշարժերի մասին Ա. Ակոպովի հետևյալ դիտարկումը. «18-19-րդ դարերի սահմանագլխին Թորթումի գավառի հայ քրիստոնյա բնակչության թիվը կրճատվեց, իսկ կեսկեսները դարձան գավառի բնակչության մեծամասնությունը»²:

Տայեցիների լեզվական նկարագրին անդրադարձել է Հ. Մեսրոպյանը «Տայքի բարբառների լեզվատարածքային առանձնահատկությունների մասին հաղորդմամբ». *Ճորոխ գետի ավազանում և Էրզրումից Բաբերդով մինչև Տրապիզոն ընկած տարածքում ապրող հայերը հիմնականում հաղորդակցվում էին բարբառային հայերենի երեք տարբերակներով՝ Կարնո, Համչենի և Տրապիզոնի, որոնք մաս են կազմում բարբառների արևմտյան խմբակցության: Գ. Չահուկյանը, ըստ հայերենի բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման, նշվածները տեղակայում է տարբեր բարբառախմբերում*³:

Հ. Մեսրոպյանը ընդգծում է, որ Խոտորջուրի գավառում խոսել են Կարնո բարբառի խոսվածքներով: Մինչև 1915թ. Տայքի տարածքում գործուն են եղել Կարնո, Բաբերդի, Խոտորջուրի բարբառները:

Հաշվի առնելով Տայքի և Ծիրակի պատմագագրական տարածաշրաններում Կարնո բարբառի թափանցումն ու լեզվամտածո-

¹ Տաշեան Յ., *Տայք, դրացիք և Խոտորջուր, պատմական-տեղագրական ուսումնասիրություն, հատոր Ա, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1973, էջ 3:*
² Akopov A., *Administrative and demographic Picture of Tortum Region (from the 16th Century up to 1878)*, «Historical Tayk» Collected Papers, Holy Etchmiadzin, 2019, p. 237-449.
³ Մեսրոպյան Հ., *Տայքի բարբառների լեզվատարածքային առանձնահատկությունների մասին, Պատմական Տայքը պատմության խաչուղիներում/ պատմաանշակության համադրություններ/, միջազգային գիտաժողով, Գյումրի 28-30, 2024:*

ղությունը՝ կարող ենք փաստել, որ օրորոցայինը Կարնո բարբառի համ ու հոտով է մատուցվել մանկանոցին:

Օրորոցայինը՝ որպես քնարական երգատեսակ, անիվի պես պատվում է պատմական մի շրջանից մյուսը: Այդ պտույտի ընթացքում շրջանը ընդլայնվում է: Տարբեր տարածաշրջանների օրորները, ունենալով ընդհանուր գծեր, երբեմն հատկորոշվում են տիպական գծերով, որոնք պայմանավորված են տեղական բարբառով, դարձվածքային մտածողությամբ, մշակութային յուրահատկություններով, հավատալիքներով:

Ուսումնասիրության ընթացքում նկատել ենք, որ պատմական օրորներն ունեն կերպարային ընդհանրություններ. օրորասացը դիմում է քամու և եղնիկի օգնությանը: Խոտորչուրը, լինելով Տայքի կարևոր տեղավայրերից մեկը, ունի բացառիկ օրորներ: Տիպական նմուշ է՝ *Նանիկ, մտամոլորի օրդի, նանիկ* օրորը Ռ. Գրիգորյանի *Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր* գրքից.

Նանիկ, մտամոլորի օրդի, նանիկ,
Քամին փչեր, օրորացնուր,
Եղնիկնին գային քեզի ծիծ տային,
Հրեշտակնին գային քեզի լեղացնեին,
Նանիկ, մտամոլորի օրդի, նանիկ...¹

Ծիրակի օրորոցային երգերում նույնպես հրեշտակն է մեջբերվում որպես օրորոցկանի պահապան.

Քնի՛, քնի՛, անուշ բալա,
Իմ համով տղա,
Հրեշտակները գուգան,
Քեզի օրոր կըսեն,
Քեզի անուշ քուն կըերեն

/Բանասաց Ջենմա Խաչատրյան, ծնվել է 1950 թ. Ախուրիկում,
կրթությունը միջին մասնագիտական/

¹ Գրիգորյան Ռ., *Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970, էջ 65:

Խոտորջուրի ընտանեկան կյանքը նահապետական է. «Կապրին նոյն հարկին տակ և մինևնոյն սեղանէն կատանան իրենց սնունդը և դաստիարակությունը: Երբ ընտանիքը բազմանդամ է, երեք սեղան կպատարաստուի, հայրերը և որդիները ու մեծ թոռները միասին, մայրը, հարսները և տան մնացող կամ տարիք ունեցող թոռները մեկ տեղ և փոքրերը երբորդ սեղան մը կը շրջապատեն: Շատ մը ընտանիքներու մէջ գեղեցիկ սովորութիւնը կա հոգևոր երգեր երգելու: Սիրով կ'ըսի *Հավատով խոտովանիս*-ը, *Նայեաց սիրով* կամ *Աղաչեմ քեզ Աստվածածին, Դու ես տանար անեղ Բանին* Կերգեցուին ազատագրական շարժումի երգեր ու մանիներ: Այս վերջինները մանավանդ երբ մայրիկը իր քնքուշ փոքրիկը կընացնէ:

Ն. Շնորհալու *Նայեաց սիրով*-ը խաղաղական ժամերգության երգվող շարական է: Խնդրվում է Աստծուն անդորրություն և խաղաղություն պարգևել մարդու հոգուն.

Նայեաց սիրով, Հայրդ գթած,
Ի քո ստեղծեալ գործս ձեռաց.
Եւ զբանակս հրեշտակաց
Տուր պահապան մեզ տկարացս,
Փրկեա զանձինս ի փորձանաց,
Ի խաւարի շրջող դիւաց.
Չի ի տուրնջեան և գիշերի
Տացուք քեզ փառս անլռելի:

Ծիրակցի մայրերը օրորների ցանկում ներառել են նաև հոգևոր երգեր, շարականներ: *Օրորոցայինը և աղոթքը որպես քնամուտի տեքստեր /անգլերենում և հայերենում/* հոդվածում օրորոցայինը դիտարկել ենք որպես աղոթք տեքստ՝ ընդունելով վերջիններիս ժանրային սերտ թափանցելիությունը և նախաքնային տեքստ լինելու իրողությունը:

Համշենահայերի բանահյուսական ժառանգությունը Ս.Վարդանյանի հետաքրքրությունների շրջանակում է: Բանագետը տարիներ շարունակ հավաքագրել է բանահյուսական նմուշ համշենահայերից, մասնավորապես խաղիկներ: *Չայն համշենական* թերթը / գլխ. խմբագիր՝ Ս. Վարդանյան/ համշենահայերի բանահյուսական և ազգագրական պատկերը ներկայացնող լավագույն միջավայրն է:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատմական տարածքը էական նշանակություն ունի բանահյուսական տեքստի արարման, պահպանման և տարածման գործում:

Եզրահանգում. Այսպիսով, Տայքի բանահյուսական ժառանգությունը խորքային ուսումնասիրման կարիք ունի: Անհրաժեշտություն կա հավաքագրել տայեցիների բանահյուսական պատառները, հատկապես օրորները. օրորի տեքստը բովանդակում է կարևոր տեղային ցուցիչներ: Ճանաչողական առումով օրորերգը ճկուն է, բազմաբովանդակ, վերարտադրվող, վերստեղծվող ժանր է: Շիրակի և Տայքի օրորերգերը առավել համեմատելի են դառնում աղոթք տեքստերի ուսումնասիրման տեսանկյունից: Թե՛ տայեցիները, թե՛ շիրակցիները հավատով են հյուսել օրորի երգը. տեքստի տիրույթում պարբերաբար շեշտադրվել են *Աստված, հրեշտակ* բառերը:

References

1. Akopov A., *Administrative and demographic Picture of Tortum Region* (from the 16th Century up to 1878), «Historical Tayk» Collected Papers, Holy Etchmiadzin, 2019.
2. Grigoryan R., *Armenian Folk Lullabies and Children's Songs* [Hay zhoghovrdakan ororots'ayin yev mankakan yerger], Armenian SSR Academy of Sciences Publishing House, Yerevan, 1970, p. 65., 1973.
3. Hulunian Y., Hadjian M., *Houshamadyan Khodorjuri*, Mkhitarian Publishing House, 1964.
4. Mesropyan H., *On the Linguistic and Territorial Peculiarities of Tayk Dialects* [Tayk'i barbarneri lezvataratsk'ayin arrandznahatkut'yunneri masin], Historical Tayk at the crossroads of history / historical and cultural combinations /, international conference, Gyumri 28-30, 2024.
5. Tashian H., *Tayk, Neighbors and Khotorjur, a Historical-Topographical Study* [Tayk, dratsik ev Khotorjur]. Volume A, Vienna, Mkhitarian Publishing House, 1973. (in Armenian).
6. Vardanyan S., *The Setting of the Folk Tale* [Banahyusakan patumi mijavayry/kronap'vokh hamshenahayeri mi zvarchapatumi tarberaknery] Variants of a funny tale of the converted Hamshen Armenians /, Hegh. ed., 2022.

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ՇԻՐԱԿԻ ԱՄՐԱՇԻՆԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԸ II-I ՀԱՉԱՐԱՄՅԱԿՈՒՄ. ԲԱՐՏԵՉԱԳՐՈՒՄ
ԵՎ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ**

Լևոն Մկրտչյան

ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Հայաստան
levoncultur@gmail.com

Անփոփում. Հոդվածը նվիրված է Շիրակի արևմտյան հատվածի ամրաշինական համակարգի թվայնացման աշխատանքներին: Առաջին անգամ փորձ է կատարվելու այս գոտու հնագույն ամրաշինությանը վերաբերող գրականական և արխիվային տվյալները մեկտեղելով՝ կազմել դրանց թվային շտեմարաններն ու տարածման արեալի քարտեզները՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները:

Շիրակը Հայաստանի ամրաշինական համակարգի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունի: Պատահական չէ, որ 20-րդ դարասկզբին, այսպես ասած, «կիկլոպյան» ամրոցների առաջին ուսումնասիրողներից Թ.Թորամանյանն ու Ատրապետն իրենց հետազոտություններում մեծ տեղ հատկացրեցին շիրակյան օրինակներին (Հոռոմ, Գուսանագյուղ և այլն): Այդ աշխատանքներում նաև հպանցիկ անդրադարձ կար Կարս գետահովտի և Ականից դաշտի ամրոցներին:

Խնդրո առարկա գոտու ամրաշինությանը վերաբերող հասանելի տվյալների նույնականացման և տեղայնացման աշխատանքների (արքանյակային պատկերների ուսումնասիրություն) ժամանակ պարզվեց, որ գործ ունենք ավելի քան հինգ տասնյակ ամրոցների հետ, որոնց զգալի մասը նախկին ուսումնասիրողներին հայտնի չէին: Սրանք Հայաստանի ընդհանուր ամրոցաշինությանը վերաբերող օրինակներից են՝ տեղակայված գետերով շրջափակված միջին և բարձր բլուրների գագաթներին (1700-2300 մ.ծ.մ.) և գետահովիտների սարավանդներին, որտեղ նկատվում են օվալաձև համակենտրոնությամբ կամ ուղղանկյունին մոտեցող պարսպազծերի հետազծերը:

Բանալի բառեր` Արևմտյան Շիրակ, մշակութային լանդշաֆտ, ամրաշինական համակարգ, լծվային հնագիտություն, քարտեզագրում:

WESTERN SHIRAK FORTIFICATION SYSTEM IN BC II-I MILLENNIUM. MAPPING AND DIGITIZATION

Levon Mkrtchyan

Shirak Center of Armenological Studies NAS RA, Armenia
levoncultur@gmail.com

Abstract: The article is dedicated to the digitization of the fortification system of the eastern part of Shirak. For the first time, an attempt will be made to combine the literary and archival data related to the ancient fortifications of this zone, to compile their digital databases and distribution area maps, using the opportunity provided by modern technologies.

Shirak is of great importance for the study of the fortification system of Armenia. It is no coincidence that at the beginning of the 20th century, T. Toramanian and Atrpet, one of the first researchers of so-called "Cyclope" fortresses, devoted a great deal of space to Shirakian examples (Horom, Gusanagiugh, etc.) in their research. In those works, there was also a brief reference to the fortresses of the Kars river valley and the Akanit field. During the identification and localization of the available data related to the fortifications of the zone in question (study of satellite images), it turned out that we are dealing with more than five dozen fortresses, most of which were unknown to previous researchers. These are examples of the general fortress construction of Armenia, located on the tops of medium and high hills surrounded by rivers (1700-2300 m.a.s.l.) and on the slopes of river valleys, where the trajectories of enclosures with oval concentricity or approaching a rectangle can be observed.

Key words: *Western Shirak, cultural landscape, fortification system, digital archaeology, mapping.*

Նախաբան. Ժամանակակից հնագիտությունն արդեն դժվար է պատկերացնել առանց նորագույն տեխնոլոգիաների կիրառման: Այդ իսկ պատճառով դաշտային աշխատանքների հավաստումները հեշտացնելու և ճշգրիտ տվյալներ ստանալու համար բացառիկ կարևոր նշանակություն ունեն համակարգչային ծրագրերով աշխատող տարբեր թվայնացման եղանակների կիրառումը: Սրանով հնարավորություն է ընձեռվում ստացված թվային մոդելների հիման վրա կազմել հնավայրերի հանույթներ և հատակագծեր [Benik Vardanyan, Levon Mkrtchyan, 2023, 446]:

Սակայն թվայնացման համար հարկավոր են ելակետային պատկերներ: Սովորաբար, դաշտային աշխատանքների ժամանակ հուշարձանների նույնականացման և տեղայնացման համար կիրառվում են օդանկարահանում (դրոնի միջոցով): Մեր աշխատանքը դժվարանում էր, քանի որ խնդրո առարկա տարածքը ուսումնասիրության համար փակ է: Ուստի, որպես ելակետ ընդունվեցին և կիրառվեցին արբանյակային պատկերները: Ենթադրյալ ամրոցների տարածքների մասին արդեն հավաքված տեղեկություններով կատարվում էր արբանյակային պատկերների գնում, Google Earth համակարգի տիեզերական լուսանկարներով, որով խնդրո առարկա տարածքի բոլոր բյուրները, բլրաշղթաները մանրամասն գնվում էին՝ նպատակ ունենալով գտնել ձեռակերտ կառուցվածքներ՝ ենթադրյալ պարսպագծեր, կամ դրանց հետագծերը:

Թվայնացման և քարտեզագրման այս եղանակով ուսումնասիրվել է Արցախի Հանրապետության ամրաշինական համակարգը (Արցախի ազատագրված տարածքների նորահայտ ամրոցների ուսումնասիրություն, արշավախմբի ղեկավար՝ Գ. Սարգսյան): Քարվանձառի, Քաշաթաղի և Հադրութի շրջաններում ուսումնասիրվել են ավելի քան վեց տասնյակ ամրոցներ, որոնց գերակշիռ մասը նորահայտ է [Սարգսյան, Գնունի, Մկրտչյան, 2023, 16-17, Ավետիսյան, Գնունի, Սարգսյան, Մկրտչյան, Բորոխյան, 2023, 8]: Հընթացս ուսումնասիրվել են նաև մեզալիթյան մշակույթի հուշարձանները [Ավետիսյան, Գնունի, Մկրտչյան, Սարգսյան, Բորոխյան, 2023, 8]: Ներկայումս նույն եղանակով ուսումնասիրվում է Ծիրակի՝ ՀՀ տարածքում առկա հատվածը (հավաստվել է՝ 50 ամրոց), Աշոցքի սարահարթի (Ամասիայի և Աշոցքի շրջաններ), Արփա լճի

և Ախուրյանի ստորին հոսանքի ավազանների ամրոցները (հավաստվել է՝ 70 ամրոց):

Ցանկացած տեղեկությունների շտեմարանների կազմման համար առաջնահերթ են արդեն առկա գրականության հավաքագրումն ու դասակարգումը: Մեր թվային շտեմարանի նույնականացման համար կարևոր նշանակություն ունեցան հատկապես նախորդ դարի հայ ուսումնասիրողների՝ Ծիրակի մասին նկարագրությունները: Հատկանշական է, որ դրանցից Ղ. Ալիշանն ինչպես Ծիրակի, այնպես էլ Հայաստանի տարբեր նահանգներին և գավառներին վերաբերող մեծածավալ աշխատանքները գրել է՝ երբեք չլինելով Հայաստանում:

Արևմտյան Ծիրակի ամրաշինական համակարգի ուսումնասիրության պատմությունը

Մեծ Հայքի պատմական Ծիրակ գավառը հարուստ է բազմադարյան մշակութային հուշարձաններով: Պատահական չէ, որ Ծիրակում են եղել Հայաստանի երկու մայրաքաղաքները՝ Ծիրակավանն (Երագգավորս) ու Անին: Հենց վերջինիս պեղումներով էլ (1892թ., Ն. Մառի ղեկավարությամբ) Հայաստանում հիմք դրվեց հնագիտական սիստեմատիկ պեղումներին՝ հնագիտական ինքնատիպ «դպրոցով»:

Արևտյան Ծիրակը՝ Ականիս կամ Ականից դաշտն, առաջին անգամ հիշատակվում է Մեբեոսի մոտ՝ կապված VI-VII դարերում տեղի ունեցած դեպքերի հետ, երբ պարսիկների հարձակումներից պաշտպանվելու համար շրջակա գյուղերի բնակիչներն ապաստան են գտնում Արգինայի բերդում [Թորամանյան, 1984, 20]: Այն որպես տեղանուն հիշատակվում է նաև վիմագիր արձանագրություններում [Բադալյան, 2022, 199-200]:

Իսնդրո առարկա տարածքի համար չափազանց կարևոր նշանակություն ունեն պատմաշխարհագրական բնույթի ուսումնասիրությունները: Ականատեսի բացառիկ կարևոր աշխատանք է «Ստորագրութիւն Կարսի շրջակա գիւղօրէից և վանօրէից» վերտառությամբ ձեռագիրը, որը, 1878 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո, կազմել է Էջմիածնի միաբանության անդամ Կյուրեղ Սրապյանը՝ նպատակ ունենալով ուսումնասիրել հետագայում ձևավորվող Կարսի մարզի բնակավայրերի բնակչության ո՛չ միայն սոցիալ-տնտեսական վիճակի, այլև վանքերի,

եկեղեցիների և այլ առկա կառույցների մասին ամփոփ տեղեկությունները [Ադամյան, 1970, 90-94, 97-98, 100-103, 106-110, 112, 114, 117, 121-122]: Այս աշխատանքում հիշատակվում են ավելի քան երեք տասնյակ հին և միջնադարյան ամրոցներ:

Արևմտյան Շիրակի ամրաշինության մասին հաջորդ անդրադարձը ժամանակագրորեն կապված է Ալիշանի հետ: Շիրակյին վերաբերող իր մեծածավալ աշխատանքում հիշատակում է Կարս գետի միջին հոսանքը, Ականից գետը (Մավրակ) և դաշտը եզերող բարձունքներին տեղակայված բազմաթիվ ամրոցների և պաշտպանական կառույցների մասին [Ալիշան 1881, 8, 11-13, 16, 104, 135]՝ կարևոր տեղեկություններով լրացնելով նախորդ ուսումնասիրողի հաղորդած տվյալները:

Հաջորդ աշխատանքներն արդեն անդրադառնում են Արևմտյան Շիրակի ամրաշինական հին համակարգերին («կիկլոպյան» ամրոցներին)՝ դրանք որպես առանձին ուսումնասիրության թեմա, որոնք կապված են Ատրպետի, Թ. Թորամանյանի կատարած ուսումնասիրությունների հետ: 19-րդ դարի վերջերին շրջելով Արևմտյան Շիրակում՝ Ատրպետը նկարագրում է մի շարք «կիկլոպյան» ամրոցներ, դրանք կոչելով «աչկատարեան» [Ատրպետ 1914, 184-185]: Ուսումնասիրելով Շիրակի, ապա նաև Արագածի փեշերի «կիկլոպյան» ամրոցները՝ Թ. Թորամանյանն արդեն փորձեց տիպաբանել այդ օրինակները [Ատրպետ 1914, 184-185]:

Արևմտյան Շիրակի ամրաշինական լանդշաֆտի ձևավորումը

Շիրակի դաշտն ընդգրկում է Ախուրյանի ողջ ստորին հոսանքի ավազանը՝ հյուսիսում սահմանափակվելով Շիրակի, արևելքում՝ Փամբակի լեռնաշղթաներով, իսկ հարավում՝ Արագածի հյուսիս-արևմտյան լանջերով, որով փաստացի ՀՀ-ում զբաղեցնում է մոտ 30 կմ երկարությամբ, 20 կմ լայնությամբ տարածք: Հյուսիս-արևմտյան մասում դաշտն անցնելով Ախուրյանի ձախ ափը՝ հասնում է Եղնախաղի լեռնաշղթայի հարավային մատույցներին, իսկ արևմուտքում արդեն ձուլվում է Կարսի սարահարթին: Ստացվում է՝ Ախուրյան գետով դաշտը բաժանվում է երկու մասի, արևելյան մասը նախկինում երբեմն անվանել են Ալեքսանդրապոլի (Գյումրիի) դաշտ, իսկ արևմտյան մասը՝ Շիրակավանի (Շորագյալի) [Ալիշան, 1881, 6]:

Արևմտյան Շիրակը զբաղեցնելով Կարս և Ախուրյան գետերի ստորին հոսանքի միջև ընկած բերրի հողատարածքները՝ բովանդակ Շիրակի հետ մեկտեղ եղել է Հայաստանի հացահատիկի մշակման կենտրոններից մեկը: Հնագույն հասարակությունների համար բացառիկ կարևոր նշանակություն ունեին մշակովի դաշտերը, որպես երկրագործության հիմնական աղբյուր, որոնց ոռոգումը կատարվում էր այդ դաշտերն օղակող բարձրադիր լեռնաշղթաներից բխող բնական հեղեղատներով, այնուհետև, նաև այդ հասարակությունների կողմից կառուցված առաջին ջրաբաշխական համակարգերով [Ատրպետ 1924, 132, 139, Բալանթար 1937, 171-194]: Այս լեռնաշղթաներն իրենց հուռթի արոտավայրերով հիանալի պայմաններ էին ստեղծում նաև անասնապահության համար:

Թեպետ արագահոս գետերն իրենց խորը կիրճերն ու բարձր, երկար ձգվող լեռներն այս սարահարթերի համար արդեն բնական ամրություններ էին, սակայն այսպիսի բարենպաստ պայմաններին տիրանալու և դրանք ճիշտ կառավարելու համար բրոնզ-երկաթիդարի ժամանակահատվածում Հայաստանի տարբեր սարահարթերում և գետահովիտներում առաջ էին գալիս կենտրոնական դիրք գրավող, ամրացված դարավանդներով բլուր-բնակավայրերը, որոնք փորձելու էին իրենց ձեռքը առնել նման միջավայրերի վարչական կառավարումը: Հետզհետե առաջ էր գալիս լեռնաշղթաների և գետերի կիրճերի անցանելությունը փակելու խնդիրը: Այս համակարգը հետագայում նաև ամրոցների ցանցով պատեց գետերի սարավանդները՝ վերջնահաշվում դառնալով բնական և մշակութային լանդշաֆտով մի կուռ համակարգ: Այսպիսի իրավիճակ էր ո՛չ միայն Շիրակի, այլև հարևան Կարսի, Արդահանի և Աշոցքի սարահարթերում (ուսումնասիրությունը՝ Լ.Մկրտչյան):

Արևմտյան Շիրակում մեր կողմից քարտեզագրվել են ավելի քան հինգ տասնյակ ամրոց, սակայն այս պահին թվային շտեմարանում առկա են 31 ամրոցներ, որոնք որոշակիորեն ճշտված և գրականությունից հայտնի օրինակների հետ նույնականացված են (նկ. 1): Սրանք հյուսիսից դաշտը եզերում են Կարս գետի ողջ միջին հոսանքով հասնելով Ախուրյան և Կարս գետերի խառնարան, հարավում՝ մինչև Մեծ և Փոքր Ալաջաներ:

Կարսի գետահովիտ

Կարսի գետահովտում հաշվվում է մեկ տասնյակ ամրոց, որոնք տեղակայված են կիրճի եզրի հրվանդանաձև բարձունքներին (մոտ 1580-1680 մ.ժ.մ.)՝ իրարից 3-5 կմ հեռավորությամբ: Արբանյակային պատկերների ուսումնասիրությամբ երևում է, որ սրանք հիմնականում անկանոն հատակագծով են՝ կրկնում են ռելիեֆի ձևը:

Առանձին կանգնած օրինակներ

Սրանք տեղակայված են Ականից դաշտում՝ տեղանքի նկատմամբ գերիշխող, առանձին լեռների և հանգած հրաբուխների գագաթներին (մոտ 1680-1720 մ.ժ.մ.): Արբանյակային պատկերների ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ այս ամրոցները մեկուսի վայրերում գտնվելով՝ հեռու են մնացել ավերումներից ու խաթարումներից, հետևաբար՝ բավականին լավ են պահպանված, և ունեն ակնառու տարբերվող չափեր և կառուցվածք: Դրանցից Ալաջա 1-ը (մոտ 115x92 մ չափեր) գտնվում է Փոքր Ալաջայի գագաթին և ունի համակենտրոն շրջանաձևություն (նկ.2): Այս ամրոցից ուղիղ տեսողական կապ է հաստատվում դաշտի գրեթե կենտրոնում գտնվող Հովվաբերդի հետ, որը խնդրո առարկա տարածաշրջանի ամրաշինական համակարգի ամենամեծ ամրոցն է (մոտ 238x191 մ չափեր):


Եզրահանգում. Ի տարբերություն հարևան Արդահանի և Ջավախքի՝ Արևմտյան Ծիրակը գրեթե չի ուսումնասիրվել՝ կապված սահմանային գոտի լինելու հանգամանքով: Ուստի, Արևմտյան Ծիրակի ամրաշինական համակարգի ուսումնասիրությունը ո՛չ միայն կնպաստի հասկանալու Ծիրակի ամբողջ դաշտի, այլև ողջ Հյուսիսային Հայաստանի՝ Արդահանի, Աշոցքի սարահարթի և Ջավախքի նմանօրինակ համակարգերի ձևավորման և զարգացման խնդիրները:

Բրոնզ-երկաթիդարյան շրջանում ձևավորված այս ամրաշինական համակարգը հավանաբար չի կորցրել իր արդիականությունը նաև հետագա դարերում, ինչի օրինակներից են Արգինայի և Ծիրակավանի ամրոցների օգտագործումը վաղ միջնադարում: Հավանաբար նաև այս համակարգն է կիրառվել Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաքների

պաշտպանության համար՝ նախ Շիրակականի, ապա Անիի պարագայում:

References

1. Adamyan A., *A newsletter about Kars region* [Mi teghekgagir Karsi marzi veraberyal]. Buletin of Armenian Archives, 2 (26), Yerevan, 1970, pp. 89-124. (in Armenian).
2. Alishan Gh., *Shirak. topography-map* [Shirak: teghagrut'yun-patkerats'uyts']. Venice, Saint Lazarus Island, 1881. (in Armenian).
3. Atrpet, *Cyclopean fortresses of Shirak* [Shiraki ach'katarean amrots'ner]. Ethnographic Journal, № 2, 1914, pp. 165-188. (in Armenian).
4. Atrpet, *Shirak Canal* [Shiraki jrants'k'y]. Monthly Review, N 3-4, March-April, Vienna, 19224, pp. 132-142. (in Armenian).
5. Avetisyan H., Gnuni A., Sargsyan G., Mkrtychyan L., Bobokhyan A., *Megalithic Culture of Artsakh* [Arts'akhi megalit'yan mshakuyt'y]. Publishing house of the institute of Archaeology and Ethnographi, Yerevan, 2023. (in Armenian).
6. Badalyan G., *On the location of Shirak's settlements* [Shiraki bnakavayreri teghoroshman harts'i shurj]. "Vem", Pan-Armenian journal, year 14 (20), april-june 2022, pp. 193-223. (in Armenian).
7. Toramanian T., *Materials of the History of Armenian Architecture* [Nyu't'er haykakan chartarapetut'yan patmut'yan]. Yerevan, 1942. (in Armenian).
8. Toramanian T., *Zvartnots, Gagkashen* [Zvart'nots', Gagkashen]. Yerevan, 1984.
9. Sargsyan G., Gnuni A., Mkrtychyan L., *The fortresses of Qashatagh region of the Artsakh Republic* [Arts'akhi Hanrapetut'yan K'ashat'aghi shrjani amrots'ner]. Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia, "Nrane" Publishing House, Yerevan, 2022. (in Armenian).
10. Kalantar A., *An Ancient Water Distribution System in Soviet Armenia* [Mi hnaguyn jrabashkhakan sistem Khorhrdayin Hayastanum], Bulletin of the ASSR Institute of History and Literature, 1937, N II, pp. 171-194. (in Armenian).
11. Vardanyan B., Mkrtychyan L., *Modelling of Bronze and Iron Age monuments at the northwestern slopes of the mount Aragats based on the case study of Lernakert, Systemizing the Past*, Y. Grekyan (editor), A. Bobokhyan (editor), Festschrift in Honour of Pavel Avetisyan, Archaeopress Archaeology, 2023, pp. 446-453. (in Armenian).



Նկար 1, Արևմտյան Շիրակի ամրաշինական համակարգի տարածույթը



Նկար 2, Արբանյակային պատկեր, Ալաջա 1



Նկար 3, Արբանյակային պատկեր, Հովվաբերդ

ՀՏԳ 93/94

**ՏՐԱՊԻՉՈՆ ՔԱՂԱՔԸ ԸՍՏ ՕՏԱՐ ԵՎ ՀԱՅ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ
(XVIII ԴԱՐԻ ՎԵՐՉԻՆ ՔԱՌՈՐԴ – XIX ԴԱՐԻ ՍԿԻՉԲ)**

Արման Մալոյան

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան»
Մատենադարան, Հայաստան,
armanmaloyan1976@gmail.com

Ամփոփում: Տրապիզոն քաղաքը գտնվում է Թուրքիայի Հանրապետության հյուսիս-արևելքում՝ Սև ծովի հարավային ափին՝ Կոլաթ-դաղ լեռան ստորոտին: Քաղաքը հիմնադրվել է Հունական մեծ գաղութ-

թացման ժամանակաշրջանում՝ Զ.Ժ.ա. VIII դ.: Հայերը Տրապիզոնում և շրջակա տարածքներում բնակվել են հնագույն ժամանակներից:

XVIII դարի վերջին քառորդին և XIX դարի սկզբին Արևելքում գտնված եվրոպացի հեղինակների ուղեգրություններում օգտաշատ վկայություններ կան, որոնք կարևոր, հավաստի տվյալներ են հաղորդում XVIII դարի վերջին քառորդի և XIX դարասկզբի Օսմանյան կայսրության, ինչպես նաև հայոց պատմության վերաբերյալ: Դրանք բավականին արժեքավոր են և կարող են օգտակար լինել հետագա ուսումնասիրությունների համար:

XVIII դարի վերջին քառորդին Արևելքում հատուկ դիվանագիտական առաքելությամբ ճանապարհորդած Ֆրանսիացի ուղեգիր Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆը Տրապիզոնի մասին հաղորդում է արժեքավոր տեղեկություններ: Ըստ Ֆերիեր-Սովբեֆի վկայության՝ XVIII դարի վերջին քառորդին Տրապիզոնը, թեպետ զրկված իր նախկին պերճանքից, դեռևս մնում էր Անատոլիայի ամենանշանակալից քաղաքներից մեկը: Ցավոք, Ֆերիեր-Սովբեֆը Տրապիզոնի բնակչության թվի և ազգային կազմի մասին տվյալներ չի հաղորդում: Սակայն համադրելով XVIII դարի վերջին քառորդի և XIX դարի սկզբի հեղինակների հաղորդած տեղեկությունները, կարող են հաստատապես ասել, որ XVIII դարի վերջին քառորդին և XIX դարի առաջին կեսին Տրապիզոնի բնակչությունը կազմել է մոտ 30.000 – 40.000 մարդ և որ հայերն իրենց թվաքանակով գրավել են երրորդ տեղը՝ թուրքերից և հույներից հետո, ունեցել են մոտ 400–500 տուն կամ շուրջ 2500 – 3500 հոգի: Սակայն հայոց թիվը հաճախակի է կտրուկ փոփոխվել: Հայ ազգաբնակչության թվաքանակի այդ վայրիվերումները պայմանավորված էին Տրապիզոնում և շրջակայքում տիրող անկայուն իրավիճակով:

Բանալի բառեր՝ *Տրապիզոն, Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆ, XVIII դարի վերջին քառորդ, XIX դարի սկիզբ, ուղեգրություն, Հայաստան, Պոնտոս, հայոց պատմություն, Օսմանյան կայսրություն:*

**THE CITE OF TREBIZOND ACCORDING TO DATA OF
FOREIGN AND ARMENIAN SOURCES
(THE LAST QUARTER OF THE 18TH CENTURY - THE
BEGINNING OF THE 19TH CENTURY)**

Arman Maloyan

"Vache and Tamar Manukyan Matenadaran" Library
of the Mother See of Holy Etchmiadzin, Armenia.,
armanmaloyan1976@gmail.com

Abstract. The travel accounts of European authors found in the east in the last quarter of the 18th and early 19th centuries contain useful information that conveys important and reliable facts about the Ottoman Empire in the last quarter of the 18th century and the early 19th century, as well as about the history of Armenia. They are quite valuable and may be useful for further research.

In the last quarter of the 18th century, the Frenchman L.-F. Ferrières-Sauvebœuf, who visited the East on a special diplomatic mission, reports valuable information about Trebizond, some of which is missing in other sources.

French author L.-F. Ferrières-Sauvebœuf, who traveled with a special diplomatic mission to the East in the last quarter of the 18th century, reports valuable information about Trebizond, some of which are missing from other sources. According to the evidence of L.-F. Ferrières-Sauvebœuf, in the last quarter of the 18th century, Trebizond, although it lost its former glory, still remained one of the most significant cities in Anatolia. Unfortunately, Ferrières-Sauvebœuf does not provide data on the population and ethnic composition of Trebizond. However, comparing the information provided by the authors of the last quarter of the 18th century and the beginning of the 19th century, we can say with confidence that in the last quarter of the 18th and the first half of the 19th century, the population of Trebizond was about 30.000-40.000 people, and Armenians occupied the third place in terms of their

number, after Turks and Greeks. The number of Armenians was about 400-500 houses or about 2500-3500 souls. However, the number of Armenians often changed dramatically. These fluctuations in the number of the Armenian population were caused by the unstable situation in Trebizond and its surroundings.

Key words: *Trebizond, L.-F. Ferrières-Sauveboeuf, last quarter of the 18th century, early 19th century, travel, Armenia, Pontos, history of Armenia, Ottoman Empire.*

Նախաբան. XVIII դարի վերջին քառորդին և XIX դարի սկզբին Արևելքում գտնված եվրոպացի հեղինակների ուղեգրություններում օգտաշատ վկայություններ կան, որոնք կարևոր, հավաստի տվյալներ են հաղորդում XVIII դարի վերջին քառորդի և XIX դարասկզբի Օսմանյան կայսրության, ինչպես նաև հայոց պատմության վերաբերյալ: Դրանք բավականին արժեքավոր են և կարող են օգտակար լինել հետագա ուսումնասիրությունների համար:

XVIII դարի վերջին քառորդին Արևելքում հատուկ դիվանագիտական առաքելությամբ ճանապարհորդած Ֆրանսիացի ուղեգիր Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Տրապիզոնի մասին: Վերջինիս մասին Ֆերիեր-Սովբեֆը գրում է հետևյալը. «Տրապիզոնը հայտնի է եղել հունական կայսրության (իմա՝ Բյուզանդիայի – Ա.Մ.) անկման ժամանակ. օսմանները՝ Փոքր Ասիայի տերերը, գրավել էին Կ. Պոլսի գահը. Տրապիզոնում մի փոքրիկ կայսրություն է ձևավորվում, որը, ի վերջո, կարճ ժամանակ անց փլուզվում է՝ ամբողջ Հունաստանը (իմա՝ Բյուզանդիան – Ա.Մ.) նվաճած թուրքերի հզորության տակ: Այս քաղաքը, թեպետ, զրկված իր նախկին պերճանքից, դեռևս մնում է Անատոլիայի ամենանշանակալից [քաղաքներից] մեկը. տեղադրված է ծովեզերքին, վատ խնամված նավահանգիստ [ունի], կարող է ընդունել միայն փոքրիկ նավեր, բայց նրա առևտուրը բավական ընդլայնված է այն ժամանակից, ինչ ռուսները նավարկում են Սև ծովում. Մեգրելիայի, Վրաստանի և Պարսկաստանի քարավանները հաջորդաբար այնտեղ են գալիս և շատ մեծ ակտիվություն են հաղորդում Տրապի-

գոնի առևտրին: Նրա բնակիչները մեծ մասամբ զբաղված են պղնձագործությամբ, որի արտադրանքը մեծ սպառում ունի. փաշան, որը կառավարում է քաղաքը, իր հրամանատարության տակ ունի մեծ թվով ենիչերիներ, որոնք համարվում են կայսրության ամենաանհնազանդները. շարունակաբար տրվելով վիճաբանությունների և բռնարարքների՝ երկու կողմ կազմող խռովարար խմբերի պատճառով, շաբաթ չկա, որ այս կատաղի զինվորները կռիվներ չանեն, որոնք միշտ ավարտվում են նրանցից շատերի մահով և հավասարապես տագնապ են տարածում բոլոր թաղամասերում»¹:

Տրապիզոն քաղաքը գտնվում է Թուրքիայի Հանրապետության հյուսիս-արևելքում՝ Սև ծովի հարավային ափին՝ Կոլաթ-դաղ լեռան ստորոտին: Քաղաքը հիմնադրվել է դեռևս Հունական մեծ գաղութացման ժամանակաշրջանում՝ Ք.ժ.ա. VIII դ.: Հայերը Տրապիզոնում և շրջակա տարածքներում բնակվել են հնագույն ժամանակներից:

***Տրապիզոն քաղաքը և հայության տնտեսական կյանքը
XVIII դարի վերջին քառորդին և XIX դարի սկզբին***

Այսպիսով, ըստ Ֆերիեր-Մովբեֆի վկայության՝ XVIII դարի վերջին քառորդին Տրապիզոնը, թեպետ գրկված իր նախկին պերճանքից, դեռևս մնում էր Անատոլիայի ամենանշանակալից քաղաքներից մեկը, և հետագայում նրա դերն էլ ավելի մեծացավ: Այսպես, 1808–1809 թթ. Օսմանյան Թուրքիայով անցած անգլիացի Ջեյմս Մորիերը գրում է, որ «Սև ծովի նավահանգիստն է Տրապիզոն, որտեղից տարվում է Կ. Պոլսի առևտուրը»²: Իսկ ավելի ուշ Ֆ. Էնգելսը գրում է, որ «Կ. Պոլիսը և հատկապես ասիական Թուրքիայում գտնվող Տրապիզոնը հանդիսանում են ներքին Ասիայի, Տիգրիսի և Եփրատի հովիտների, Պարսկաստանի և Թուրքեստանի քարավանային առևտրի գլխավոր շուկաները: Եվ այդ առևտուրն արագորեն աճում է... իր դիրքի շնորհիվ Տրապիզոնն ավելի է համա-

¹ *Sté Ferrières-Sauvebœuf, Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières-Sauvebœuf, fait en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782 jusqu'en 1789, t.1, Maestricht, 1790, p. 207-208.*

² *Տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2., Երևան, 1934, էջ 285:*

կերպված այդ առևտրին, քան որևէ այլ կետ»¹: Ինչպես դիպուկ նկատել է Ֆերիեր-Սովբեֆը, Տրապիզոնի դերի և նշանակության բարձրացումը սերտորեն կապված էր Սև ծովում ռուսական ծովային առևտրի սկզբնավորման և զարգացման հետ: Կարևոր գործոն էր նաև Տրապիզոնի աշխարհագրական բարենպաստ դիրքը: Ըստ Ս. Ծոցիկյանի՝ «Այս նաևահանգիստ քաղաքն ունեցած է մեծ վաճառականություն, հին ժամանակներէն սկսած մինչև վերջին ատեններս: Քիւրտիստանի, Լագիստանի, Թուրքիոյ ու Հայաստանի ներքին գաւառներու, եւ Պարսկաստանի ու Կովկասի առևտրական ճամբաները կ'անցնին Տրապիզոնէ: Այս քաղաքը կուգան եւ ասկէ կը մեկնին ճամբորդներու մեծ խմբեր եւ խոշոր կարաւաններ, ապրանքներ բեռցուցած ուղտերու ու ջորիներու վրայ»²: Բացի տեղական բերքից (եգիպտացորեն, ծխախոտ, կիտրոն, լոբի, ձիթապտուղ, կաղին, ընկույզ, շագանակ, խոզակաղին, ծվաղ և այլն) Տրապիզոնից արտահանում էին նաև կտավ, կապար, երկաթ, «այլև պղինձ Արդնոյ գոր քաջ գտեալ առաքեն 'ի Կոստանդնուպոլիս և Յիսլիմեա. նաև կերպասեայ գործածք Հալպայ, Շամայ, Տիարպէքիոյ, զորս տանին 'ի Մոսկովս: Յարուեստաւորս սորա երևելի են պղնձագործք, զորոց զգործ տանին ի' Մոսկովս, 'ի Կոստանդնուպոլիս, և անտի աստ և անդ մինչև յԵգիպտոս. նաև հրահանագործք այս է՝ չախմախճիք, և մորթեգործք զորոց զվաճառ տանին մինչև յերզիռում»³: Ծովային առևտրում բարգավաճում ցուցաբերելով հանդերձ՝ Տրապիզոնը, ըստ Ֆերիեր-Սովբեֆի, ուներ վատ խնամված նավահանգիստ: Ինճիճյանը ևս նշում է, որ «Նաևահանգիստ Դրապոնոյ ծանծաղ է և անպատասպար 'ի հիւսիսային հողմոց, ուստի նաք ձմերեն 'ի Փլադանա»⁴:

1847 թ. Տրապիզոնում եղած Ֆերուխանը ևս նշում է, որ Տրապիզոնի նավակայքերը հյուսիսարևմտյան սաստիկ քամիներից անպաշտ-

¹ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, с. 384, *հմմտ.* Հ. Ղազարյան, *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.*, Երևան, 1967, էջ 212:

² Տե՛ս Ս. Մ. Ծոցիկյան, *Արևմտահայ աշխարհ, Նյւ Եորք, 1947*, էջ 771-772:

³ Տե՛ս Ղ. Ինճիճեան, *Աշխարհագրութիւն, Մասն առաջին, հատոր Ա.*, էջ 383:

⁴ Նոյն տեղում, էջ 390:

պան լինելու պատճառով նավերը գնում էին ձմեռելու Սյուրմենե կամ Պլատանա¹:

Ավելի ուշ Ֆրանսիացի նշանավոր աշխարհագրագետ Է. Ռեկյուն Տրապիզոնի մասին գրում է հետևյալը. «Այս քաղաքն է եղել մշտապես Իրան գնացող վաճառականների և նրանց վաճառքի իջման նաւահանգիստը, ուր բերուել են նաև Պարսկաստանից Արևմուտք ուղարկուած ապրանքները կարաւաններով: Քաղաքի նաւակայքը շատ վատն է, և անյահաջող եղանակին նաւերը ստիպուած են գնալ աւելի արևմուտք՝ մրգաստաններով շրջապատուած շնորհագեղ Պլատանայի առջև կանգնելու»²: Նույն վիճակն է նշում նաև Ս. Ծոցիկյանը, գրելով, որ «Տրապիզոնի նաւահանգիստն այցելող մարդատար եւ ապրանքատար շոգենաւերը, ասկէ առաջ, խարիսխ կը ձգէին ծովուն բացերը, եզերքէն բաւական հեռու, ջրերուն մշտապէս պէկոծ ու յորձանուտ վիճակին եւ կանոնաւոր քարափի չգոյութեան պատճառաւ»³:

Տրապիզոն քաղաքի բնակչության ազգային կազմը XVIII դարի վերջին քառորդին և XIX դարի առաջին քառորդին

Ֆերիեր-Սովբեֆը, ցավոք, Տրապիզոնի բնակչության թվի և ազգային կազմի մասին տվյալներ չի հաղորդում:

1813–1814 թթ. Փոքր Ասիայում եղած ուղեգիր Ջոն Մակդոնալդ Քիննեյըը հետևյալ ուշագրավ տեղեկությունն է հաղորդում. «Բնակչությունը (Տրապիզոնի – Ա.Մ.) հասնում է, ասում են, 15.000 շնչի՝ թուրքերի, հույների, հրեաների, հայերի, վրացիների, մեգրելների, չերքեզների և թաթարների համասեռ խառնուրդի»⁴: Սակայն, ի տարբերություն Քիննեյի հաղորդածի, Ղ. Ինճիճյանը գրում է, որ «Թիւ համօրէն բնակչաց է 8000 տուն. յորոց իբրև 500 տունք հայոց, 1.500 յունաց, և 6000 տանկաց. թաղք

¹ Տե՛ս Բարունակ Պէլի Ֆէրուհիսան, *Ճանապարհորդություն ի Բարբեռն ընդ Հայաստան, յամի տեսռն 1847, տպ. ի վանս Չ. Ս. Աստուածածնի յԱրմաշ, 1876, էջ 232:*

² Էլիզէ Ռեկյու, *Լագիստան, Հայաստան և Քորդիստան, Կիլիկիա, Փոքր Ասիա, Միջագետք, Ատրիք և Պարթևոնի, թարգմանեց՝ Միաբան, Վաղարշապատ, 1893, էջ 47:*

³ Տե՛ս Ս. Մ. Ծոցիկյան, *նշվ. աշխ., էջ 772:*

⁴ John Macdonald Kinneir, *Voyage dans l'Asie-Mineure, l'Arménie et le Kourdistân, dans les années 1813 et 1814, traduit de l'Anglais, par N. Perrin, tome deuxième, Paris, 1818, p. 86.*

նորա 36, յորոց գույթ թաղս տան հայոց, իսկ մնացեալսն տանկաց»¹: 1836թ. ճանապարհորդած Սենեքերիմ Տեր-Մինասյանը հաղորդում է, որ Տրապիզոնի «բնակիչներն են Հայ, Յոյն ու Տաճիկ: Հայերը հիմայ 3 եկեղեցի ու մէկ դպրատուն մը ունին. իրենք քաղաքին մէջը 500 տունի չափ կան, բայց գեղերուն մէջը 1000 տունի չափ, 200 տունի չափ ալ կաթովիկ ըսված Հայերը ունին»²: Իսկ Մինաս վրդ. Բժշկյանը նշում է. «Հին ատենը շատ երևելի և բազմամարդ քաղաք էր Տրապիզոն, փառաւոր մարդիկ և փառաւոր շէնքեր ալ շատ կային. Սուլ. Ահմէտին ժամանակը տասներուք հազար տուն կար, առաջ շատ աւելի էր. բայց հիմա հազիւ կէտը կելլէ: Քաղաքացիք երկու հարիւր տուն հազիւ կելլեն, առաջ շատ էին. իսկ գեղացիք հինգ հարիւրէն աւելի են»³:

Իսկ 1829–1830 թթ. Փոքր Ասիայում ճանապարհորդած Ժան-Շառլ Բեսը հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Որոշ ճանապարհորդներ Տրապիզոնի բնակչությունը շատ սխալմամբ հաշվում են 250.000 հոգի, այնինչ այն կազմում է մոտավորապես 45.000 հոգի: Արվարձանները բավական ընդարձակ են և զբաղեցված են բացառապես հույներով և հայերով: Բուն քաղաքը բնակեցված է թուրքերով»⁴: Ավելի ուշ շրջանի վերաբերող տվյալ է տալիս Աբել վրդ. Մխիթարյանցը: Ըստ նրա՝ Տրապիզոնում «գիւղացւոց հետզհետէ գաղթելովը՝ հիմա չորս հարիւր տուն լուսաւորչակրօն հայք կան»⁵:

Ըստ ռուս հեղինակ Ն. Ուշակովի՝ Տրապիզոնի բնակչության թիվը հասնում է մինչև 20.000 հոգու. նրանց մեծ մասը թուրք են, 600 տուն հայ և մոտ 1000 տուն հույն⁶: Ուշակովին կրկնում է Ֆրանսիացի հեղինակ

¹ Տե՛ս Ղ. Ինճինեան, Աշխարհագրություն, Մասն առաջին, հատոր Ա., էջ 387:

² Տե՛ս Օրագրություն ճանապարհորդության պարոն Ա. Սենեքերիմայ Տեր Մինասեան Կոստանդնուպոլսեցոյ Յամի Տեառն 1836, Եղանակ (օրացոյց), 1839 ամին ի Չմիւռնիս, էջ 117:

³ Հ.Մինաս վրդ. Բժշկեան, Պատմություն Պոնտոսի, որ է Սեւա ծով, Վենետիկ, 1819, էջ 91, 82:

⁴ Տե՛ս Besse Jean-Charles, Voyage en Crimée, au Cavcasse, en Georgie, en Arménie, en Asie-Mineure et à Constantinople, en 1829 et 1830, Paris, 1838, p. 302:

⁵ Աբել վրդ. Մխիթարեանց, Վեպ գաղթականության չայոց Տրապիզոնու, Կոստանդնուպոլիս, 1857, էջ 55:

⁶ Տե՛ս Ушаков Н.И., История военных действий в Азиатской Турции в 1828 и 1829 годах, Санкт Петербург, 1836, ч. I, с. 132.

Ֆելիքս Փոնտոնը¹: Իսկ 1839–1840 թթ. Արևելքում ճանապարհորդած ֆրանսիացի հեղինակ Շառլ Տեքսիեն նշում է, որ Տրապիզոնի քրիստոնյա բնակչության թիվը հասել է մոտ 18.000 հոգու, այնքան հայ կա, որքան հույն: Վերջիններիս մեջ կան մի քանի ընտանիք Լազիստանի բնիկներից, որոնք հայտնի են մեցո անունով²: Իսկ 1847 թ. ճանապարհորդած Ֆերուհիսանը գրում է, որ «Տրապիզոնն ունի 33.000 բնակիչ՝ տաճիկ, հայ ու յոյն. 5000-էն աւելի տուն. 3000 տաճիկի, 1000 յունաց, 588 հայ, 140 հռովմէական և 9 բողոքական հայոց»³:

Եզրահանգում. Այսպիսով՝ համադրելով XVIII դարի վերջին քառորդի և XIX դարի սկզբի հեղինակների հաղորդած տեղեկությունները, կարող են հաստատապես ասել, որ XVIII դարի վերջին քառորդին և XIX դարի առաջին կեսին Տրապիզոնի բնակչությունը կազմել է մոտ 30.000 – 40.000 մարդ և որ հայերն իրենց թվաքանակով գրավել են երրորդ տեղը՝ թուրքերից և հույներից հետո, ունեցել են մոտ 400-500 տուն կամ շուրջ 2500-3500 հոգի: Սակայն հայոց թիվը հաճախակի է կտրուկ փոփոխվել: Հայ ազգաբնակչության թվաքանակի այդ վայրիվերումները պայմանավորված էին Տրապիզոնում և շրջակայքում տիրող անկայուն իրավիճակով:

Որ իրավիճակը Տրապիզոնում և շրջակայքում անկայուն է եղել, վկայում է նաև Ֆերիեր-Սովբեֆը, գրելով, որ փաշայի հրամանատարության տակ գտնվող մեծ թվով ենիչերիները կայսրության մեջ ամենաանհնազանդներն են, շարունակ վիճում և բռնություններ են գործադրում, և այդ կոիվները միշտ ավարտվում են մահերով և տազնապ են տարածում քաղաքի թաղամասերում: 1805–1806 թթ. Հայաստան և Պարսկաստան ճանապարհորդած ֆրանսիացի ուղեգիր Պ.-Ա. Ժոբերը հիշատակում է, որ «Տրապիզոնի աղան պատերազմի մեջ էր հին Լազերի երկրի

¹ *Si' u La Russie dans L'Asie-Mineure, ou campagnes du maréchal Paskévitch en 1828 et 1829; et tableau du Caucase, envisagé sous le point de vue géographique, historique et politique; par Félix Fonton, Paris, 1840, p. 187.*

² *Si' u Texier Charles, Description de l'Arménie, la Perse et la Mésopotamie, Paris, 1852, t. 1, p. 52.*

³ *Տե'ս քարունակ Պէլի Ֆերուհիսան, Ճանապարհորդութիւն ի Բաքեղոն ընդ Հայաստան, յամի տեսնոն 1847, ի վսնս Չ. Ս. Աստուածածնի յԱրմաշ, 1876, էջ 224:*

բնակիչների դեմ»¹: Իսկ հայ հեղինակ Հ. Հովակիմյանը հաստատում է, որ «Ճանիկի գաւառին մէջ, մինչև ԺԹ. դարու կեսերը կ'իշխէին տերէպէյիները, որոնք մինչև վերջը պատերազմի մէջ էին իրարու եւ կեղրոնական իշխանութեան հետ»²: Իսկ Աբել վարդապետը գրում է, որ «...1765-էն մինչև 1772 թուականները՝ Տրապիզոնի քաղաքական խաղաղութիւնը կը խռովի եւ ժողովուրդը տակնուվրայ կըլլայ Տէրէպէկներու պատերազմաց երեսէն, որոնք Տրապիզոնի մէջ քանի մը կարգ ըլլալով, այսինքն հարիւրք, որք են բուն քաղաքացիք, իննուսուն եւ հինգք եւ քսան եւ հինգք, այսինքն եկամուտք, այս կարգերը քաղաքին առանձին առանձին մասերուն իշխելով, մէկ մէկու դէմ կռիւ կը բանային մէկգմէկ յաղթահարելու... Անատոլի ներքին քաղաքները եւ Տրապիզոնի գիւղերն անգամ, ուր որ ինքնագլուխ իշխաններ կը նստէին, աւելի հանգստութիւն կար քրիստոնէայ ժողովրդոց համար, քան թէ Տրապիզոն եւ անոր նման Սեւ ծովու հարաւային ափանց վրայ եղած ու ուրիշ քաղաքները»³: Ահա այս ամենի հետևանքով Տրապիզոնի քրիստոնյա բնակչությունը հեռացավ քաղաքից դէպի Դրիմ, Կ. Պոլիս, Չանիկ: Երկյուղն այնքան էր տիրել քաղաքին, որ քրիստոնյաները նույնիսկ եկեղեցի չէին կարողանում գնալ և թաղից թաղ անցնել: Եվ ըստ Աբել վարդապետի՝ «աս հալածանաց երեսէն Հայոց եկեղեցիներն ալ Ս. Օզսէնտ, Չարխափան եւ Ս. Յովհաննէս ամայի մնացին: ...մնացորդ ազգին երկու մասն ալ այնքան քիչցան, որ Աստուածամայր եկեղեցին հազիւ կը հաւաքուէին»⁴: Բարեբախտաբար, հետագայում դերերեյների իշխանությունը թուլացավ և վիճակը փոխվեց: Դրան նպաստեց նաև եվրոպական տերությունների հյուպատոսների և առևտրականների ներկայությունը քաղաքում: Քրիստոնյաները տակավ առ տակավ գլուխ բարձրացրին, քաղաքից հեռացածների մի մասը վերադարձավ, ամայի մնացած եկեղեցիները սկսեցին գործել:

¹ Jaubert P.- Am., *Voyage en Arménie et en Perse, Fait dans les années 1805 et 1806, Paris (s.d.), p. 7.*

² Պատմություն Հայկական Պոնտոսի, պատմագրեց Յովսէփն Յովակիմնէան (Արշակունի), Պէլրոյթ, 1967, էջ 710-711:

³ Աբել վրդ. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 45-46, 53:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 46, 76:

Հավելենք, որ քաղաքում հայերի բազմաքանակության ու մշտապես ներկայության լրացուցիչ ապացույց է այն փաստը, որ Տրապիզոնում հայերն ունեին չորս եկեղեցի¹, որոնց պատերին, ինչպես նաև տապանաքարերին եղած արձանագրությունները հիմնականում վերաբերում էին XIV–XV դարերին: Այդ չորս եկեղեցիներն էին Սբ Աստվածամայր, Չարխափան (Սբ Աստվածածին կամ Սբ Ստեփանոս), Սբ Հովհաննես և Սբ Օգոստին:

References

1. Besse Jean-Charles, *Voyage en Crimée, au Caucase, en Georgie, en Arménie, en Asie-Mineure et à Constantinople, en 1829 et 1830*, Paris, 1838.
2. Bzh'sh'kyan M., *History of Pontus, which is the Black Sea* [Patmut'yun Pontosi, vor e Sev c'ov]. Venice, 1819. (in Armenian).
3. C'ots'ikyan S., *Western Armenian world* [Arevmtahay ashkharh]. New York, 1947. (in Armenian).
4. Der Minasyan S., *Travel diary of Mr. A. Senek'erim Der Minasyan of Constantinople in the Year 1836 // Weather (calendar)* [Oragrut'yun ch'anaparhordut'yan paron A. Senek'erima Ter Minasyan Kostandnupolsets'vo Hami Ty'arn 1836]. Smyrne, 1839. (in Armenian).
5. Ferrières-Sauvebœuf L.-F., *Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières-Sauvebœuf, Fait en Turquie, en Perse et en Arabie; Depuis 1782 jusqu'en 1789; Avec ses observations sur la Religion, les Mœurs, le Caractère et le Commerce de ces trois Nations. Suivies de détails très-exacts sur la Guerre des Turcs avec les deux Cours Impériales, d' Autriche et de Russie; les dispositions des trois Armées, et les résultats de leurs Campagnes. A Maestricht, Chez J. P. Roux et Compagnie, Imprimeurs-Libraires, associés. - tome premier*, 1790.
6. Feruhkhan B., *Journey to Babylon and Armenia in the year 1847* [Ch'anaparhordutyun i Babelon y'nd Hayastan hami ty'arn 1847]. Armash, 1876. (in Armenian).

¹ Տե՛ս Ղ. Բնճիճեան, *Աշխարհագրոյթիւն, Մասն առաջին, հատոր Ա.*, էջ 387, նաև *Միլևսս վրդ. Բժշկեան*, նշվ. աշխ., էջ 79, *Աբէլ վրդ. Մխիթարեանց*, նշվ. աշխ., էջ 29-31, Յ. Յովսէփիսեան, նշվ. աշխ., էջ 83, Հայր Համազասպ Ոսկեան, *Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպէքիդի եւ Տրապիզոնի նահանգներու վանքերը*, Վիեննա, 1962, էջ 234:

7. Félix F., La Russie dans L'Asie-Mineure, ou campagnes du maréchal Paskévitch en 1828 et 1829; et tableau du Caucase, envisagé sous le point de vue géographique, historique et politique; par Félix Fonton, Paris, 1840.
8. Ghazaryan H., The social-economic and political status of Western Armenians in 1800-1870 [Arevmtahayeri social-intesakan ev qaxaqakan kats'utyuny' 1800-1872 tt.]. Yerevan, publication of NS of ASSR, 1967. (in Armenian).
9. Hakobyan H., *Travel notes, tome VI* [Aghbyurner Hayastani ev Andrkovkasi patmutyan, Ughegrutyunner, h. VI]. XIX dari arajin qsanamyak (1800-1820), Yerevan, publication of Melgonyan found, 1934. (in Armenian).
10. Hovakimyan H., History of Armenian Pontus [Patmut'yun Haykakan Pontosi]. Beirut, 1967. (in Armenian).
11. Inch'inch'yan Gh., Geography of four parts of the world, of Asia, of Europe, of Africa and of America, p. 1, v. 1 [Ashkharhagrutyun chorits' masants' ashkharhi]. Venice, St. Lazar, 1806. (in Armenian).
12. Jaubert P.- Am., Voyage en Arménie et en Perse, Fait dans les années 1805 et 1806, Paris (s.d.).
13. Kinneir J. M. Voyage dans l'Asie-Mineure, l'Arménie et le Kourdistân, dans les années 1813 et 1814; Suivi de remarques sur les Marches d'Alexandre, et la Retraite des Dix-Mille, Par John Macdonald Kinneir, Capitaine au service de l'honorable Compagnie des Indes, major de place au fort Saint-George, et agent diplomatique auprès du Dorbar de sa hauteesse le Nabâb du Carnatic. Traduit de l'Anglais, par N. Perrin, Avec une grande carte. Paris. Librairie de Gide Fils. - tome deuxième, 1818.
14. Marx K., Engels F., Works, Vol. IX [Marx K., Engels F., Sochineniya, t. IX]. Moscow, 1957. (in Russian).
15. Mkhitharyants' A., A novel of Armenian emigration to Trabzon [Vep gaght'akanut'yan Hayots' Trapizonu]. Constantinople, 1857. (in Armenian).
16. Reclus Élisée, Lazistan, Armenia and Kurdistan, Cilicia, Asia Minor, Mesopotamia, Assyria and Palestine [Reclus Élisée, Lazistan, Hayastan, ev K'urdistan, Kilikia, P'ok'r Asia, Mijagetk', Asorik' ev Paghestin]. Vagharshapat, 1893. (in Armenian).
17. Texier Charles, Description de l'Arménie, la Perse et la Mésopotamie, t. 1, Paris, 1852.
18. Ushakov N., History of military operations in Asian Turkey in 1828 and 1829 [Istoriya voyennykh deystviy v Aziyatskoy Turtsii v 1828 i 1829 godakh]. t. 1, St. Petersburg, 1836. (in Russian).
19. Voskryan H., The Monasteries of the provinces of Sebastia, Kharberd, Tiarpekir and Trabzon [Sebastiayi, Kharberdi, Diarbek'iri ev Trapizoni nahangneru vank'ery']. Vienna, 1962. (in Armenian).

ՀԳՏ՝ 93. 94

**ԱԶՆՎԱԿԱՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՌԻՈՒՄ
XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ**

Հասմիկ Ամիրջանյան

ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան
Amirjanyan.hasmik@rambler.ru

Ամփոփում. XVIII դարի ընթացքում Լոռիում գոյություն ունեցող հողատիրության ձևերը՝ հատկապես ազնվականական, վանքապատկան և այլն, որոշ փոփոխություններով պահպանվեցին XIX դարի սկզբին: Գլխավոր հողատերերը համարվում էին ազնվականներն ու խոշոր վանքերը: Նրանց միջև անընդմեջ պայքար էր գնում հողի համար, ինչի վերաբերյալ Վրաստանի և Իմերեթի հայոց վիճակային կոնսիստորիայի արխիվներում պահպանվել են բազմաթիվ նյութեր: Սակայն XIX դ. սկզբին Վրաստանի, այնուհետև Ռուսաստանի կազմում նրանք աստիճանաբար կորցնում են իրենց իրավունքները, ինչը շարունակվում է մինչև դարավերջ:

XIX դ. երկրորդ կեսին ցարական կառավարությունն Անդրկովկասում անցկացրեց հողային բարեփոխումներ (ռեֆորմներ), կատարվեցին հողաբաժանման աշխատանքներ, ինչի հետևանքով նախկինում ազնվականական ու վանքապատկան շատ հողեր դարձան պետական: Այդ հանգամանքը և անկայուն քաղաքական ու սոցիալական իրավիճակը Լոռիում պատճառ դարձան, որ Լոռու ազնվականների մեծ մասը լքի հայրենիքը և վերաբնակվի Վրաստանում՝ Թիֆլիսում:

Չնայած այդ հանգամանքին, փաստերը վկայում են, որ հայ ազնվականները պահպանեցին իրենց հողային սեփականության մի մասն ընդհուպ մինչև XIX դարի վերջը:

Բանալի բառեր՝ *Լոռու գալխառ, ազնվականական, ռուսական կառավարություն, հողատիրություն, հողային քաղաքականություն, հողային վեճեր, Թիֆլիս, պետական հողեր:*

THE NOBLE LANDOWNING SYSTEM IN LORI IN THE 2ND HALF OF THE 19TH C.

Hasmik Amirjanyan

Institute of history NAS RA, Armenia
amirjanyan.hasmik@rambler.ru

Abstract: In the eighteenth century, the region of Lori was home to a variety of property types, including ecclesiastical and privately- owned lands. These properties persisted until the advent of the nineteenth century. The primary landowners were the Church and the nobility. Such discussions were a constant feature of their relationship. A substantial corpus of archival materials pertaining to the debates between the Armenian consistory of Georgia and Imereti is available for examination.

However, at the beginning of the 19th century, as a result of the incorporation of Georgia and Imereti into the Russian Empire, they lost their rights, which remained in place until the end of the century. In the latter half of the nineteenth century, the Russian Empire implemented a land policy in Transcaucasia and published the Statute on the Demarcation of Land. Following this, the majority of lands were under government control.

Furthermore, in order to populate the Lori region with the state population, the Russian government initiated the purchase of noble lands. Consequently, a portion of the Lori lands were also transformed into state territory. These circumstances, coupled with the prevailing instability in the political and social milieu of Lori, compelled the majority of the Lori nobility to relinquish their homeland and seek refuge in Georgia, more specifically in Tiflis.

Key words: *the Lori region, nobility, the Russian government, the landowning system, the land policy, territorial discussions, Tiflis, the state lands.*

Նախաբան. 1801թ. Ռուսաստանի կազմում ներառվելուց հետո Լոռիում գոյություն ուներ հողատիրական բազմաշերտ համակարգ: Մասնավորապես գերիշխում էր ազնվականական հողատիրությունը, երբ հողը

տոհմիկ հայ ազնվականների (իշխաններ)՝ Լոռու-Մելիքյանների (Լորիս-Մելիքյան, Լորիս-Մելիքով), Արղույթյանների (Արղույթինսկի, Արղույթինսկի-Դոլգորուկով), Քալանթարյանների (Քալանթարով), Շահվերդյանների (Շավերդով) և այլոց ժառանգական կալվածքն էր: Վերջիններս իրենց բնակված գյուղերի և դրանց շրջակա հողերի լիիրավ սեփականատերերն էին: XVIIIդ. վերջերին Լոռիում հողեր ձեռք բերեցին վրացի ազնվականները: Դրան նպաստեց տարածքի՝ Վրաստանի տիրապետության տակ գտնվելու հանգամանքը¹: Խոշոր հողատերեր էին շարունակում մնալ վանքերը: Ռուսաստանի կազմի մեջ Լոռու գավառում ի հայտ է գալիս պետական հողատիրությունը:

Լոռիում ընթացող պայքարը ռուս չինովնիկների, վրացի, հայ կալվածատերերի և հայոց եկեղեցու միջև՝ կապված հողերի ձեռքբերման կամ պահպանման հետ, չդադարեց մինչև դարավերջ և ակնհայտորեն խոչընդոտեց տարածքի տնտեսական կյանքի զարգացմանը: Եթե ռուսական կառավարությունը, շահագրգռված տեղում հանքարդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմամբ՝ փորձում էր ամեն գնով տիրանալ լավագույն հողերին՝ հողագնումից մինչև բռնագավթումներ, ապա վրացի ազնվականներն (իշխան, թավադ) օգտվելով առիթից, փորձում էին իրենց հերթին տեր դառնալ հայ տոհմիկ ազնվականների կամ վանքապատկան հողերին: Հայ ազնվականներն իրենց հերթին ձգտում էին պահպանել դարավոր ժառանգական կալվածքները: Հայոց եկեղեցին փորձում էր անձեռնմխելի պահել վանքապատկան հողատիրությունը: Պայքարը լրացնում էին տեղի թաթարները, հարևան Ղազախի գավառի թուրքերը, անհատ ձեռներեցները և այլ նորահայտ-սեփականատերեր, որոնք ինչ-ինչ պատճառներով հաստատվելով Լոռիում, փորձում էին հողատեր դառնալ:

Ազնվականներից Արղույթյան իշխանական տոհմը հիմնականում բնակվում էր Սանահինում: Արդվիում (հնում՝ Մելիքգյուղ) երկու ազնվականական տոհմ կար՝ 11 գերդաստանից բաղկացած. Լոռու-Մելիքյան և Քալանթարյան, որոնք սերում էին նույն արմատներից: XIX դ. Լոռու-Մելիքյաններին են պատկանել Հազվի (XVIII դ. եղել է Օձունի վանքի սե-

¹ Ավրաբեկյան Խ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Ե., 1959, էջ 92:

փականությունը), Աքորի, Հովնանաձոր (Օվանդարա), Ամոջ (վերջինիս մի մասը պատկանում էր Բաժբեուկ-Մելիքյաններին) և այլ գյուղեր: Որնակը եղել է Սանահինի վանքի, որոշ ժամանակ նաև՝ Լոռու-Մելիքյանների և Արղությանների սեփականությունը¹: Արդվին պատկանել է Լոռու-Մելիքյաններին և Քալանթարյաններին², Իգահատը (Այգեհատ) կառավարվել է Շահվերդյան ազնվականական տոհմի կողմից³, Ճոճկանը մինչև XIX դ. վերջերը որպես կալվածք պատկանել է գեներալ Մ. Լորիս-Մելիքովին և վրացի իշխան Լևան Մելիքովին: Վերջինիս սեփականությունն էր նաև Խոժոռնին: XVIIIդ. սկզբին վրացական գույքային փաստաթղթերում որպես տեղի հողատեր բազմիցս հիշատակվում են Չավարաշվիլի կամ Չավրաշվիլի (Չավարյան) տոհմի անդամները, դարավերջին նրանց մի ճյուղը հաստատվում է Օձուն, Իգահատ (Այգեհատ), Արդվի և Մդարթ գյուղերում⁴: Մեծ և Փոքր Ղարաքիլիսաները, Լոռու գավառի հյուսիսային կողմում, Ձորագետի վերին հոսանքում տեղակայված Շահնագար, Շիշթափա և Սարչապետ գյուղերն ամբողջությամբ կալվածատիրական էին⁵: Շահնագարի հողատարածքները պատկանում էին Բորչալուի գավառի մեծահարուստ Մելիք-Շահնագարյանին, որի անունով էլ գյուղը կոչվեց Շահնագար: Ախթալայի պղնձաձուլական գործարանը, ինչպես նաև Մադախլո գյուղը (5544 հեկտար ընդհանուր տարածությամբ) գտնվում էր Մելիքովների կալվածատիրական հողերի վրա⁶: Երզնկյանները կալվածքներ ունեին Հադաստում. «Իւրաքանչիւր գերդաստան Հադբասաց՝ իսկ Երզնկեանք առանձնակի ունին աստ գրաժանեալ վարելահողս, տնատեղիս, կալս և խոտամարգս...»⁷ և այլն: Ռուսաստանին անցնելու նախօրյակին Լոռիում կալվածքներ ունեին վրացի ազնվականներ Բագրատիոն

¹ «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1880, 13-ր սեպտեմբերի, N 70:

² «Մեղու Հայաստանի», 1873, 31-ր մարտի, N 12:

³ «Մեղու Հայաստանի», 1873, 10-ր մարտի, N 9:

⁴ Չավրիկ Ս., Միրզոյան Ս., Չավարյան-Չավրիկների տոհմագրությունը, «Վեմ», հուլիս-սեպտեմբեր, թիվ 2, 2009, էջ 32, 42:

⁵ Լալայեան Ե©, Բորչալուի գաւառ, Թիֆլիս, ա. թ., էջ 69:

⁶ Кавказский календарь на 1891, Тифлис 1890, с. 70.

⁷ Երզնկյան Ռ., Հնախոսական տեղագրություն Հադաստայ աշխարհահռչակ վանից Սրբոյ Նշանի, Վաղարշապատ, 1886, էջ 99:

Մուխրանսկին, Բորչալուում և Շնողում՝ Դավիթ Աբաշիձեն¹: Հաղպատ գյուղը 1796թ. վրաց Հերակլ II թագավորի կողմից որպես պարզև տրվել էր վրացի իշխան Բարաթովներին²: Այդ պահից սկսած Բարաթովները պայքար են մղում հայ ազնվականների և վանքի միաբանների դեմ՝ իրենց տրված տիրությունների պահպանման և ընդլայնման համար, որը տևում է ամբողջ XIX դ. ընթացքում: Պատահական չէ, որ Հաղպատի ազնվականներ Երզնկյանները հետագայի աղբյուրներում հիշատակվում են սուկ որպես քիչ թե շատ ունևոր անձինք:

XIX դ. սկզբներից մինչև 1830-ական թթ. երկրամասում ռազմա-քաղաքական իրադրության հետևանքով ավերվում են Լոռու բազմաթիվ բնակավայրեր, սոցիալ-տնտեսական կյանքն անկում է ապրում: Դրա հետևանքով բնակչության հետ տարածքը լքում են նաև Լոռու տոհմիկ ազնվականներից շատերը, իսկ լքված հողերը ժամանակի ընթացքում ձեռք են բերում նոր սեփականատերեր:

Այս ամենի արդյունքում Փամբակի երկրամասում ավատական կամ կալվածատիրական հողատիրությունն իսպառ բացակայում էր, իսկ Լոռու գրեթե ամբողջ սարահարթը պատկանում էր վրացի ազնվական Օրբելիանիներին (Ջամբակուրիան-Օրբելիանիներ), այնուհետև հողեր ձեռք բերեցին Բագրատիոն Մուխրանսկին, բարոն Կուզենբախը, Ճարիֆովը, Մագինովը և այլք³: «Ամենալավ, բերրի հողերը պատկանում են զանազան իշխանների, թավաղների ու աղալարների: Այդ հողերի վրա բահրով ապրում է ռանճապար ժողովուրդը, հերկում, ցանում, հնձում...»⁴:

Ազնվականական հողատիրության կրճատմանը նպաստեց նաև ցարիզմի քաղաքականությունը: 1801թ. սկսած Լոռիում ռուս բարձրաստիճան գինվորականները կալվածատիրական հողեր գնելով դրանք բնակեցնում էին ըստ իրենց հայեցողության կամ օգտագործում տնտեսական կա-

¹ *Акты, собранные Кавказской археографической комиссией (այտիւիւտիւնի՝ ԱԿԱԿ), տ. 1, 1866, թ. 157, ս. 195. Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., Մեծ Ղարաքիլիսա, Ե., հ. 1, 2002., էջ 140:*

² *Երիզյան ԱյԾ, Ամենայն հայոց Կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 215:*

³ *Ավրաբելյան Իս., նշվ. աշխ., էջ 161, Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., նշվ. աշխ., էջ 140-141, Քարիանյան Գ., Գուգարք, Ե., 2011, էջ 45:*

⁴ *Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու., հ. 6, Ե., 1994, էջ 28:*

րիքների համար, ինչպես օրինակ Ալավերդու և Շամլուղի գործարաններն ընդգրկող հողերը և անտառները. «...ազնվականներից պետությանը զիջված՝ Արդուլթինսկի-Դուզդուրուկովներից և Լորիս-Մելիքովներից»¹: 1840-ական թթ. սկսած իշխանություններն սկսեցին հայ գյուղացիությունից խլել ու ռուս վերաբնակիչներին տրամադրել ընդարձակ ու բարեբեր հողատարածություններ: Այդպես հիմնվեցին Վորոնցովկան և Նովո-Միխայլովկան. առաջինը հիմնվեց 1844թ. Լոռու Մեծ Դարաքիլիսա գյուղում, իշխան Ջամբակուրիան-Օրբելիանիների կալվածատիրական հողերի վրա²:

Նման քաղաքականության հետևանքով որոշ գյուղեր դարձան կիսով չափ ազնվականական, կիսով չափ՝ պետական: Դա պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ արևմտահայ կամ այլ եկվոր բնակիչները, որոնք բնակեցվել էին ազնվականների հողերի վրա, համարվեցին պետական գյուղացիներ: Օրինակ՝ ազնվականապատկան Այգեհատ գյուղը (Շահվերդյանների ժառանգական հողատիրությունը) բաղկացած էր 27 տնից, «...որոնցից 24 տունը ազնուականներ են, Շահվերդեանք, իսկ երեք տունը եկաւոր հարկատուք (եկվորներ՝ պետությանը հարկատու-Հ. Ա.)»³: Արդվիի բնակիչները «Բորդերեանք հայեր են, որոնցից հինգ տունը՝ ազնուական Քալանդարեանք են, իսկ իննը տունը հարկատուք: Հողը պատկանում է Քալանդարեանցներին և Լորիս Մելիքեաններին»⁴: Մարց գյուղի ամառանոցները կիսվում էին միաժամանակ պետության, եկեղեցու և ազնվական Բաժբեուկ-Մելիքովների միջև⁵: Հսկայական չափերի էին հասնում ազնվականներին՝ Բարաթովներին, Արդուլթյաններին, Լորիս-Մելիքովներին, Մելիքովներին և այլոց պատկանող անտառները⁶:

Գյուղերի՝ միաժամանակ տարբեր սեփականատերերի պատկանելը մշտապես վեճերի առիթ էր հանդիսանում: Վիճահարույց դեպքերի մասին

¹ АКАК, т. 2, Тифлис, 1866, док. 187, с. 210, т. 12, Тифлис, 1904, с. 1346.

² Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը (XIX-XX դարերում XXI դարի շեմին), Ե., 2002, էջ 51-52, Ավիպբեկյան Խ., նշվ. աշխ., էջ 167:

³ «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 10-ր մարտի, N 9:

⁴ «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 31-ր մարտի, N 12:

⁵ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 66, ց. 1, գ. 28, թթ. 21, 23:

⁶ Аргутинский-Долгоруковъ А., Борчалинский уезд въ экономическомъ и коммерческомъ отношеняхъ, Тифлис, 1897, с. 128.

արժանահավատ տեղեկատու են հանդիսանում Վրաստանի և Իմերեթի թեմի հայոց վիճակային Կոնսիստորիայի արխիվային նյութերը, քանի որ վանքային տնտեսությունները ևս իրենց հողային տարածքները ժամանակի ընթացքում ստիպված կիսում են այլ սեփականատերերի՝ հիմնականում պետության և ազնվականների հետ:

Դարասկզբին սկսված Հաղպատ գյուղի հողերի սեփականության համար պայքարը Լոռու ազնվականներ Բարաթովների, Պոպունաբեկովների և Թիֆլիսի հայոց հոգևոր թեմի միջև շարունակվում էր¹: Նրանք բոլորն էլ գյուղը համարել են իրենց սեփականությունը: Պոպունաբեկովներին անգամ հաջողվել է կալվածագիր ձեռք բերել, որում հայտագրված էր, որ Հաղպատ գյուղն իր հողերով և վանքով պատկանում է իրենց, և Լոռու իշխանները դրանց նկատմամբ տիրապետման իրավունք չունեն²:

Հողային վեճեր հաճախակի էին ընթանում իշխան Արղությանների և Սանահինի վանքի միջև, քանի որ գյուղի հողերը կիսվում էին այդ երկուսի միջև: 1883 թ. Վարդան արքեպիսկոպոս Օձնեցին գրում է. «Ունի վանքն ի Սանահին սեպիական իւր վարելահող ի կէսին, իւրում երիսուն հինգ օրավոր որոց տասանորդն ստանում է վանքն, ևս և ունի հողաբաժին, ի Սանահին, և Որնակայ գիւղօրայս, իսառն և անբաժան ըստ Արղութեանաց ազգին...»³:

Վանքի, ազնվականների ու պետության միջև 1870-ական թթ. սկսված հողային վեճը Օձունի վանքապատկան Մարց գյուղի շուրջ ավարտվեց 1898 թ: Կալվածքից, որը հավասար էր 21000 դեսյատին⁴, 7000 դեսյատինը անցնում է պետական գանձարանին, 10500 դեսյատինը մնում է վանքին, մնացյալի սեփականտերեր էին ազնվականներ Բաժբեուկ-Մելիքովները⁵: Մարցի հողերի մի մասն էլ, ինչպես նաև Լորուտ և Ահնիձոր գյուղերից մասեր և Շամուտ գյուղն ամբողջությամբ հափշտակել էին հարևան

¹ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 27, վավ. 79, թթ. 1-2, վավ. 106, թթ. 1-11:

² ՄՄ, թղթ. 27, վավ. 79, թթ. 1-2:

³ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3875, թ. 114, գ. 3862, թ. 116:

⁴ Մեկ դեսյատինը հավասար է 1,0925 հա:

⁵ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2397, թթ. 47, 155, 166, գ. 2423, թ. 1:

Ղազախի գավառի թուրքերը (թաթարներ)¹:

1860-ական թթ. վերջերից սկսած, հատկապես ցարական կառավարության կողմից 1870 թ. մայիսի 14-ին հրատարակված կանոնադրության հետևանքով, որի արդյունքում կատարվեցին հողաչափական աշխատանքներ, Լոռիում ազնվականական հողատիրությունն էլ ավելի կրճատվեց: Դրա պատճառը նաև քաղաքների աճն էր, առևտրի և արհեստների զարգացումը, ինչով զբաղվելն ավելի շահավետ է դառնում, և հողատիրության բնագավառում չունենալով մեծ եկամուտներ, ազնվականներն սկսում են վաճառել հողը:

1869թ. սեպտեմբերի 10-ին Ալավերդու կավածքի սահմանաբաժանման առիթով, նշված տարածքից և սահմանամերձ վայրերից հրավիրված հողատեր-ազնվականների թվում էին Արդոթյանները, Չարվրիևները, Բարաթովները, Մելիքովները, Ջավախովները²:

Վրացի Օրբելիանիների ընդարձակ կավածքները, որ մի քանի տասնյակ տարի առաջ տարածվում էին ավելի քան 60-70 հազար դեսյատին տարածքի վրա՝ գլխավորապես Դերեդ, Մաշավերա և Ալգետ գետերի ափերին, մշտապես ենթարկվելով բաժանումների բազմանդամ ընտանիքի ներկայացուցիչների միջև, և մասամբ անցնելով իգական գծով ժառանգների ձեռքը, բավական կրճատվեցին: Մի մասն էլ պետականացվեց: Այսուհանդերձ, մինչև XIX դ. կեսերը նրանք պահպանեցին իրենց կավածքների մի մասը, իսկ Լոռի³ կավածքը կիսվում էր նրանց և Վորոնցովկայի հասարակության միջև⁴: Դարի երկրորդ կեսերից Օրբելիանիները կավածքների մեծ մասը վաճառեցին՝ հիմնականում ռուսաբնակ Վորոնցովկայի և Շահնագարի բնակիչներին⁵: Թիֆլիսի դատական պալատի հո-

¹ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2397, թթ. 155, 166, գ. 2940, թթ. 25-26:

² ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 5, թթ. 11-21:

³ *Ձեռագրի բնագրում գրված է §Локское имени*¹, կարծում ենք խոսքը Վիրսիայոց լեռնաշղթայի կենտրոնական մասում գտնվող Լոռի կամ Լոկի լեռնագանգվածի մասին է, որն ընկած է Տաշիր քաղաքի և Վրացական հանրապետության սահմանգլխին: Լեռնագանգվածի բլուրները բաժանվում են հովիտներով, որոնք էլ հանդիսացել են մասնավոր հողեր: Տես՝ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմեցին՝ Թ. Խ. Հակոբյան, Սո. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, հ. 2, Ե., 1988, էջ 602-603:

⁴ ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 19, թ. 3, գ. 19, թթ. 6-7, 21, գ. 20, թթ. 29-30:

⁵ Ավրայբեկյան Խ., նշվ. աշխ., էջ 161:

դաչափական գրասենյակի նախագծով սահմանազատված և իշխան Օրբելիանիների տիրապետության տակ գտնված հողերը 1884 թ. 15 հազար դեսյատինից քիչ էին¹:

1860-ական թթ. Ալավերդու պետական տարածքներից սահմանազատված Սանահինի հողանների տերերի շարքում նշված է Արդոյան իշխանական տների ներկայացուցիչների մոտ երկու տասնյակ անուններ, որոնց մի մասը բնակվում էր Թիֆլիսում²: 1870թ. մայիսի 18-ից մինչև 1890թ. օգոստոսի 2-ը տևած ժամանակահատվածում Ամոջ գյուղի սահմանազատման աշխատանքների ժամանակ կազմված ցուցակներում նշվել են Սանահինի հողանների 15 անուն հողատերեր, որոնցից 13-ը՝ Արդոյաններ³: Նրանք մինչև XIX դ. վերջերը թեև պահպանեցին իրենց կալվածքների մի մասը, սակայն չունեին նախկին հզորությունն ու դիրքը: Արդոյանների կալվածքները սահմանափակվում էին Դեբեդի աջ ափին և Լավար լեռան հյուսիսային ու հարավային լանջերին՝ 14000 դեսյատին ընդհանուր մակերես տարածքով: Արդոյաններին շարունակում էր պատկանել տարածքներ Որնակ⁴ և տոհմական Սանահին գյուղերից: Սանահինի հողանների մի մասը շարունակում էր մնալ Սանահինի վանքի սեփականությունը⁵: Արդոյաններից շատերը ևս տեղափոխվեցին Թիֆլիս:

Լորիս-Մելիքովները, բացի իրենց ժառանգական կալվածք Արդվի գյուղից և Որնակում որոշ կալվածքներից, 1869-1891 թթ. ունեին ամառանոցային հանդամասեր Ալավերդիում, ոչ մեծ հողատարածք Սանահինում, արոտավայրեր Աքորիում և Լավարում⁶:

Իշխան Մելիքովները տիրում էին Լավար լեռան հյուսիսային և հյու-

¹ Ерицов А., Экономический быт государственных крестьян Борчалинского уезда Тифлисский губернии, Т., 1889, с. 105.

² ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 5, թթ. 6-7:

³ ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 13, թ. 8:

⁴ «Մեղու Հարստանի», Թիֆլիս, 1880, 13-ր սեպտեմբերի, N 70, Էփրիկյան Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վենետիկ, 1907, էջ 188:

⁵ ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 28, թթ. 21-20:

⁶ ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 5, թթ. 6-7, գ. 13, թ. 8, գ. 28, թ. 21, գ. 99, թ. 9: Кавказский календарь на 1891, Тифлис 1890, с. 71.

սիս-արևելյան լանջերին՝ ըստ հողաբաժանման պլանի՝ 18000 դեսյատին տարածքի: Նրանց էր պատկանում նաև Խոժոռնի գյուղը, Գյուլլուբաղի և Սադախլոյի ամառանոցները¹: 1884 թ. իշխան Մելիքովները պայմանագիր կնքեցին Պրիվոլնոյեի բնակիչների հետ՝ մոտակա անտառը որոշակի ժամանակով տրամադրելով նրանց, ինչի արդյունքում, անբարեխղճորեն օգտագործվելով, այն կողոպտվեց²: 1890-1891 թթ. իշխաններ Իվան և Ալեքսանդր Մելիքովները հողատեր էին յոթ վայրում, այդ թվում՝ Ախթալայում և Սադախլոյում՝ 5544 դեսյատին չափով³:

Ազնվական Բաժբեուկ-Մելիքովների հիմնական կալվածքը Ամոջ գյուղն էր, նաև հողեր Մարցում⁴: Դեռևս 1799 թ. վրացերեն լեզվով կազմված կալվածագրով Սիմեոն եպիսկոպոսը 150 ռուբլով Բաժբեուկ-Մելիքովներից գնել է նրանց ժառանգական Մարց կալվածքի 5/4 մասը⁵: 1870թ. մայիսի 18-ից մինչև 1890 թ. օգոստոսի 2-ը տևած Ամոջ գյուղի ամառանոցների սահմանազատման վերաբերյալ փաստաթղթային գործում որպես գյուղի կալվածատերեր նշված են յոթ անուն Բաժբեուկ-Մելիքովների ազնվական տոհմից⁶:

Իշխան Բարաթովներին էր պատկանում Հադպատ գյուղը՝ մեծամասամբ բնակեցված Բարաթովների ժամանակավոր պարտավորյալ գյուղացիներով⁷: Մյուս խոշոր հողակտորը Խրամի ավազանին էր՝ սահմանակից Ծակային և հասնում էր մինչև Թիֆլիսի գավառ:

Բրդաձորի⁸ ամառանոցը պատկանում էր իշխաններ Միխայիլ Լորիս-Մելիքովին, Ալեքսանդր և Միխայիլ Արղութինսկիներին և Ալեքսանդր Չավրիևին⁹, Իգահատի հողանը պատկանում էր ազնվական Շահվերդովներին, Մեիրաբովներին, Սոֆիա Չավրիևին և այլոց՝ թվով 16 անուն,

¹ ՀԱԱ, ֆ. 66, ց 1, գ. 5, թ. 7:

² Ерицов А., Экономический быт государственных крестьян..., с. 75.

³ Кавказский календарь на 1891, Тифлис 1890, с. 71.

⁴ ՀԱԱ, ֆ. 66, ց 1, գ. 5, ԱՃ. 21, 23:

⁵ «Արարատ», Էջմիածին, 1901, թիվ Է-Ը, էջ 357:

⁶ ՀԱԱ, ֆ. 66, գ. 1, գ. 13, թթ. 5-7:

⁷ ՀԱԱ, ֆ. 66, գ. 1, գ. 5, թ. 7:

⁸ Գյուղ Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառում: Այժմ՝ Բուրդաձորի, Վրաստանի Հանրապետության Մամնետյի շրջանում:

⁹ ՀԱԱ, ֆ. 66, գ. 1, գ. 5, թ. 7:

որոնք բնակվել են Իգահատում և Թիֆլիսում¹: Վարդաբուրից արևելք՝ Քելթեվան և Թոզլուխ կավածքները Չալալօղլիում բնակվող Խան-Ազովների (Խանագով, Խան-Աղյան) ժառանգական կավածքն էր²:

Արդվիի կավածքները, անմարդաբնակ Օղոմսին, Քոբերտը, Տոսկաջուրը պատկանել են, Լորիս-Մելիքովիներին, Այվազովներին և Քալանթարովներին, իսկ գյուղի հողան Լորիս-Աղեկիի (հետագայում այստեղ ձևավորվել է Աղեգի կամ Կարմիր Աղեգի գյուղը) կավածքը պատկանում էր գեներալ-մայոր, թիֆլիսաբնակ Իսրաիլ բեկ Եղիզարովին³: Ջիլիգան գտնվում էր կապիտան Նիկոլայ Կորգանովի ժառանգների տիրապետության տակ և այլն:

Մնացած մանր հողատերերից հիշատակելի արժանի են ազնվական Երզնկյանները (Ամոշ, Հաղպատ), Շանշինները (Բոլնիսի ափին), Պիտոնները (Մաշավերայի ափին), Ենիկոլոպովները (Բորչալուի ցածրավայրում), Շատինյանները⁴ (Ներքին Կարակալայում), Նազարբեկյանները (Քոլագիրանում) իշխան Աբաշիձեն (Մանասինում), Դավիթ Եվգենիևը (Ախթալայում) և այլք:

Վաճառելով կավածքները, Լոռու ազնվական ընտանիքների մի մասը հաստատվում էին խոշոր քաղաքներում: Հրապուրիչ վայր էր Թիֆլիսը, և պատահական չէ, որ նրանցից շատերի սերունդներին հետագայում տեսնում ենք թիֆլիսաբնակների շարքերում⁵: Նրանց ավանդական կավածքներն աստիճանաբար վերածվում են պետական, համայնական կամ մասնավոր սեփականատիրական կավածքների, վատագույն դեպքում ձեռք են բերվում օտարների կողմից: 1890-1891 թթ. Թիֆլիսի նահանգում 380 դեպյատինից ավել հողեր ունեցող ազնվականների ցուցակում Բորչալուի գավառում հիշատակվում են Արդութինսկի-Դոզորուկովները, Քալան-

¹ ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 28, թ. 20:

² ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 85, թ. 8, գ. 89, թ. 8, գ. 94, թթ. 8-16, գ. 95, թ. 12., *Кавказский календарь на 1891*, *Тифлис 1890*, с. 71, *Քարհանյան Գ., նշվ. աշխ., էջ 87*:

³ ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 28, թթ. 18-19, 20, 23, գ. 36, թթ. 6-7:

⁴ Այս տոհմի մասին չ՛հ Ազգային արխիվի նյութերում հետագայում տեղեկությունների չենք հանդիպել:

⁵ ՀԱԱ, ֆ. 66, ց. 1 գ. 19, թ. 6, գ. 28, թթ. 18-19:

թարովները, Լորիս-Մելիքովները, Մելիքովները¹:

Վորոնցովկայի մոլոկանները 1870-1885 թթ. ընթացքում Օրբելիանիներից և Կորոլովներից գնելով նոր վարելահող, արոտավայր, խոտհարքներ և անտառ՝ իրենց տարածքներն ընդարձակեցին՝ հասցնելով 14311 դեյաստինի: «Կառավարութիւնը շատ օգնեց սոցա տուալ 32 հազար ռուբլի 15 տարի ժամանակով անտոկոս և բացի դորանից՝ իշխան Օրբելիանովից վերջին անգամ գնած հողի համար Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկասու փոխարքան (Վորոնցովը Հ. Ա.) նուիրեց իւր քսակից 5000 ռ.»²: Այս քայլով Վորոնցովկայի բնակիչներն առաջինն օրինակ ծառայեցին հողի՝ որպէս համայնքային սեփականություն ձեռքբերման գործում:

Դարավերջին պետական Օփրետ գյուղի բնակիչները, Ալեքսանդերիիվսի և Եկատերինենֆելդի գերմանացիները, Թիֆլիսի բնակիչ Խուրդադովը, Բարոն Ա. Ֆոն-Կուչենբախը հողեր գնեցին ազնվականներ Մելիքովներից, Օրբելիանիներից, իշխաններ Էրիստովից, Բ. Մուխրանսկուց, իշխան Անդրեյսկովների ժառանգներից և այլոցից³:

Վրացի ազնվականների կողմից հողերի վաճառքի պատճառն այն էր, որ 1860-1870-ական թթ. գյուղացիական բարեփոխումների իրականացման ժամանակ ցարիզմը ձգտում էր թուլացնել նաև ազնվականության դիրքերն ու ազդեցությունը, որով Անդրկովկասում կապահովվեց բարենորոգումների արագ ընթացքը: Վրաց ազնվականությունն աստիճանաբար զրկվեց իր ճորտ գյուղացիներից և ազնվական կոչումներից⁴: XIX դ. վերջին Լոռիում նրանց հողերը որոշ չափով պահպանվեցին փոքր գյուղերում, ինչպէս օրինակ Քարինջում⁵:

Եզրահանգում. Այսպիսով, Լոռու գավառում հողի սեփականատիրոջ իրավական համակարգը փոփոխություն է կրում հատկապես XIX դ.

¹ Кавказский календарь на 1890, Тифлис 1889, с. 69-71.

² «Փորձ», Թիֆլիս, 1876, N 1-2, էջ 428:

³ Ерицов А., Экономический быт государственных крестьян..., с. 107, Арзутинский-Долгоруков А., նշվ. աշխ., с. 57-58.

⁴ Ավիարբեկյան Խ., նշվ. աշխ., էջ 92, հայոց պատմություն, հ. 3, գիրք 1, Ե., 2010, էջ 387:

⁵ ՄՄ, Կայթողկուսական դիվան, թղթ. 237ա, վավ. 58, թ. 1:

երկրորդ կեսից սկսած՝ սոցիալ-տնտեսական հանգամանքներից ելնելով: Տարածաշրջանում ռուսական տիրապետության հաստատման, ավելի ուշ՝ կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով պետական և կալվածատիրական հողերի քանակն ավելանում է՝ վանքապատական և տոհմիկ ազնվական հողերի հաշվին:

Չնայած այս ամենին, Լոռու տոհմիկ հողատեր-ազնվականները կարողացան անգամ XIX դ. վերջերին պահպանել իրենց հողատիրության մի մասը: Ազնվականական հողատիրությունը վերջնականապես անկում ապրեց երկրամասում՝ խորհրդային կարգերի հաստատումից հետո:

References

1. *Acts Collected by the Caucasian Archaeographic Commission* [Akty, sobrannye Kavkazskoj arheograficheskoy komissiej]. Vol. 1, Tiflis: publication of Printing House of the Main Administration of the Caucasian Viceroy, т. 2, 1866, т. 12. 1904. (in Russian).
2. **Ararat**, Ejmiadzin, 1901. (in Armenian).
3. Argutinsky-Dolgorukov A. *Borchali District in Economic and Commercial Relations*, [Borchalinskij uezd v jekonomicheskom i kommercheskom otnoshhenijah]. Tiflis: Printing House of V. E. Kheladze. 1897. (in Russian).
4. **Avdalbekyan Kh.** *The Land Issue in Eastern Armenia* [Hoghayin harcy' Arevelyan Haystanowm]. Yerevan: "Haypethrat" publ., 1959. (in Armenian).
5. *Caucasian Calendar for 1890* [Kavkazskij kalendar']. Tiflis, 1889. (in Russian).
6. *Caucasian Calendar for 1891* [Kavkazskij kalendar']. Tiflis, 1890. (in Russian).
7. **Dictionary of Place Names of Armenia and Adjacent Areas** [Hayastani ev harakic shrjanneri teghanownneri bararan]. Compiled by T. K. Hakobyan, St. T. Melik-Bakhshyan, H. K. Barsghyan, Vol. 2: Yerevan, Yerevan University Press, 1988. (in Armenian).
8. **Eprikan S.**, *Illustrated Natural Dictionary* [Patkerazardn bnashxarhik bararan]. Vol. 2: Venice, St. Lazarus, 1907. (in Armenian).
9. Ertsov A., *Economic Life of State Peasants in Borchali District of Tiflis Province* [Jekonomicheskij byt gosudarstvennyh krestjan Borchalinskogo uezda Tiflisskij gubernii]. Tiflis: Printing House of A. A. Mikhrelson, 1889. (in Russian).
10. **History of the Armenians** [Hayoc patmowtyown]. Vol. 3, Book 1, Yerevan, "Zangak 97" Publishing House, 2010. (in Armenian).
11. **Karkhanyan G.**, *Gugark* [Gowgarq]. Yerevan, "Asoghik" Publ., 2011. (in Armenian).

12. **Khojabekyan V.**, *Population Reproduction and Migration in Armenia (19th-20th Centuries on the Threshold of the 21st Century)* [Hayastani bnakchowt'yan verartadrowt-yowny ev teghasharjheri (XIX-XX darerowm XXI dari shemin)]. Yerevan, "Gitutyun" Publ., 2002. (in Armenian).
13. **Lalayan E.**, *Borjalu Province* [Borchalui gawar]. Tbilisi, Year not specified.
14. **Matenadaran named after Mesrop Mashtots** [Mesrop Mashtoci anvan Matenadaran]. Katoghikosakan divan, Doc. 27, 237a. (in Armenian).
15. Meghu Hayastani, Tiflis, 1873, NN 9, 12, 19, 1880 N 70. (in Armenian).
16. **National Archives of Armenia** [Hayastani azgayin arxiv]. F. 53, C. G. 2397, 2940, 2423, 3862, 3875. (in Armenian).
17. **National Archives of Armenia** [Hayastani azgayin arxiv]. F. 66, C. 1, G.5, 13, 19, 20, 21, 28, 36, 85, 89, 94, 95, 99. (in Armenian).
18. Pordz, 1876, Tiflis, Issues 1-2. (in Armenian).
19. **Tumanyan H.**, *Complete Work* [Erkeri liakatar jhoghovacow]. Vol. 6: Yerevan, "Gitutyun" Publishing House, 1994. (in Armenian).
20. **Virabyan S., Etimyan G.**, *Great Kharakilisa* [Mec Gharaqilisa]. Yerevan: "Van Aryan", Vol. 1, 2002. (in Armenian).
21. **Yeritsyan A.**, *The Armenian Catholicosate and the Armenians of the Caucasus in the 19th Century* [Amenayn hayoc Katoghikosowtyowny ev Kovkasi Hayq XIX darowm]. Part A: Tbilisi, Printed by M. Sharadze, 1894. (in Armenian).
22. **Yerznkyan R.**, *Archaeological Geography of the World-Famous Haghpat Monastery* [Hnaxosakan teghagrowtiwn Haghpatay ashxarhahrchak vanic Srboy Nshani]. Vagharshapat: Printed at the Holy Catholic Cathedral of Ejmiadzin, 1886. (in Armenian).
23. **Zavriyev S., Mirzoyan S.**, *Genealogy of the Zavriyev-Mirzoyan Family* [Zavaryan-Zavrievneri tohmagrowtyowny]. "Vem", July-September, Issue 2, 2009, pp. 32-42. (in Armenian).

ՀՏԳ՝ 93. 94

**ԿԱՐՍԻ ԱՆԿՄԱՆ (1920 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ) ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ
ՍՓՅՈՒՌԱՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Նարինե Մովսեսյան

ԳԱԱ, պատմության ինստիտուտ, Հայաստան
narinem2006@gmail.com

Ամփոփում: 1920 թ. թուրք-հայկական պատերազմի տարբեր հարցերի վերաբերյալ իր ուրույն խոսքն է ասել սփյուռքահայ պատմագիտությունը: Հոդվածում ներկայացվում է պատերազմի առանցքային իրադարձություններից մեկի՝ Կարսի անկման գնահատականը, ինչպես այն դիտարկվում է սփյուռքահայ պատմաբանների կողմից:

Կարսի անկումը կարևոր նշանակություն ունի պատերազմի բնույթի, ընթացքի և ավարտի վերլուծության համար: Այն կարևորագույն իրադարձություն հանդիսացավ՝ վերլուծելու և պարզաբանելու պատերազմի բնույթը, ընթացքն ու ավարտը: Հոդվածում կարևորվում են սփյուռքահայ գործիչների աշխատությունները, հուշագրություններն ու հոդվածները, որոնց մի մասն սկզբնաղբյուրային նշանակություն ունեն, քանի որ դրանց հեղինակներն ապրել են նշված ժամանակաշրջանում կամ դրանից ոչ այնքան ուշ:

Կարսի անկման վերաբերյալ տեսակետները ձևավորվել են մի շարք գործոններով, այդ թվում՝ հայկական գործի պատրաստվածության բացակայությամբ, զինվորական ղեկավարության անկարողությամբ, ինչպես նաև բոլշևիկյան հակաքարոզչությամբ և այլն:

Հոդվածի նպատակն է ներկայացնել սփյուռքահայ պատմագետների դիրքորոշումներն այս հարցի վերաբերյալ, ինչը կատարվում է առաջին անգամ ամբողջական կերպով: Այս պատմաբաններից շատերը հարցին անդրադարձել են թուրք-հայկական պատերազմի համատեքստում, բայց նրանց վերլուծությունները, այնուամենայնիվ, տրամադրում են որոշակի պատկերացում տեղի ունեցած իրադարձությունների և իրավիճակի

մասին, որոնք հանգեցրել են կարևորագույն բերդաքաղաքի՝ Կարսի՝ առանց կրակոցի հանձնմանը թուրքերին:

Բանալի բառեր՝ *Միյունքահայ պատմագիտություն, Կարս, թուրքական կառավարություն, Հայաստանի Հանրապետություն, թուրք-հայկական պատերազմ, ռազմա-քաղաքական, Հայաստանի կառավարություն:*

THE FALL OF KARS (1920, OCTOBER) ESTIMATION IN THE ARMENIAN DIASPORA HISTORIOGRAPHY

Narine Movsesyan

institute of History NAS RA, Armenia
narinem2006@gmail.com

Abstract: This article analyses the ways in which diaspora historiography has approached various aspects of the Turkish-Armenian War of 1920 within the historical context of Armenia. The analysis focuses on the military and political circumstances during the war as portrayed by authors from the Armenian diaspora. The principal sources consulted for this study are monographs and articles written by the aforementioned historians. The author analyses the perception of the fall of Kars during the conflict as presented in diaspora historiography.

The findings elucidate the perspectives of diaspora authors on the events that led to the capture of the strategically significant fortress of Kars. These historians provide a more profound comprehension of the intricate military and political milieu, underscoring the political context, the strategies deployed by Turkish diplomacy, and the motivations that precipitated the invasion.

The majority of diaspora scholars contend that the war of 1920 was an unavoidable consequence, asserting that the Armenian government was ill-prepared for the conflict. This lack of preparedness, in conjunction with other contributing factors, ultimately resulted in the downfall of Kars.

Key words: *The Armenian diaspora historiography, Kars, Turkish government, Republic of Armenia, Turkish-Armenian War, military-political situation, the Armenian government.*

Նախաբան. Սփյուռքահայ պատմաբանները՝ Ռիչարդ Հովհաննիսյանը, Գևորգ Եազրնյանը, Ռուբինա Փիրումյանը, Վահե Արծրունին և այլք, առավել բազմակողմանի մոտեցում ցուցաբերեցին հարցի նկատմամբ, քանի որ ժամանակին ձերբազատվեցին խորհրդային գաղափարախոսական կապանքներից և ավելի շուտ լծվեցին հարցի ուսումնասիրմանը: Չնայած դրան, որոշ հեղինակներ, այնուամենայնիվ, լինելով ՀՅԴ-անդամ կամ 1918-1920 թթ. ընթացքում ՀՀ-ում պետական պաշտոններ զբաղեցրած անձինք, գերծ չէին կուսակցական կաղապարներից: 1920թ. թուրք-հայկական պատերազմում Կարսի անկումը շրջադարձային եղավ ոչ միայն պատերազմի ելքի, այլև առհասարակ Հայաստանի Հանրապետության ճակատագրում: Անդրկովկասի հանրապետություններից յուրաքանչյուրն ուներ իր ռազմավարական հենակետը: Ադրբեջանի սահմաններում նավթային Բաքուն էր, Վրաստանը տիրապետում էր միջազգային առևտրի նավահանգիստ Բաթումին, իսկ Հայաստանը հսկում էր ողջ տարածաշրջանի բանալի՝ Կարս ամրոցը: Հայտնի է, որ հոկտեմբերի 30-ին, անցնելով Սարիղամիշ-Կաղզվան ճանապարհով, թուրքերը գրավեցին այն գրեթե առանց դիմադրության, իսկ նոյեմբերի 7-ին՝ նաև Ալեքսանդրապոլը:

Հետայսու Կարսը հենակետ հանդիսացավ թուրքերի հետագա առաջխաղացման ճանապարհին: Ռ. Հովհաննիսյանը կարևորում է ԱՄԺ խոսնակ Մուստաֆա Զեմալի թուրքական բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին արձակած հրամանը, որով վերջինը լիազորվեց սեպտեմբերի 20-ին «...գրավել Կարսի նահանգը՝ մինչև Կաղզվան, Նովո-Սելիմնու Մերդենենկը և եթե պայմանները թույլատրեն՝ նույնիսկ ավելի հեռու»¹:

¹Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Ե., 2016, էջ 221:

1920 թ. հոկտեմբերի 30-ին տեղի ունեցած Կարսի անկմանը հետևեց Ալեքսանդրապոլ քաղաքի կեսօրյա մարտերից հետո բավականին արագ հանձնումը, ինչն՝ իր հերթին բերեց տասնյակ հազարավոր մարդկանց գերի ընկնելը, բարոյական անկայունության խորացումը, Հայաստանի կառավարության կողմից հաշտության ծանրագույն պայմանների ընդունումը և այլն: Ինքն իրեն, Կարսն իր ամբողջուններով ռազմավարական խոշորագույն նշանակություն ուներ Հայաստանի պաշտպանության համար և պատահական չէ, որ հայերն իրենց հույսը դնում էին Կարսի բերդի ամբողջունների վրա (այնտեղ տեղակայված զորքն ու ռազմամթերքը հայերին հնարավորություն էր տալիս չորս ամսից ավել դիմակայելու): Հոկտեմբերի 30-ի Կարսի անկումը իրավացիորեն համարվել է ամոթ և խայտառակ պարտություն: Թուրքերը Կարսը գրավել էին գրեթե առանց մարտի, ինչը ծանր տպավորություն գործեց հայ հասարակության և նրա քաղաքական գործիչների վրա: «Ո՞վ կարող էր մտածել, թե մի երկու ամսում դաշտից յարձակուող տաճիկները լեռնաշղթայի բարձունքը կրհասնեն, եւ գրեթե առանց կռուի կրտիրանան առաջնակարգ ամրություն ունեցող բերդին», գրում է դեպքերի ակնառես Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցը¹: 1920 թ. սեպտեմբերի 28-ին Հայաստանի վարչապետ Հ. Օհանջանյանը (1920 թ մայիսի 5-հոյեմբերի 23) Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին հաղորդում է, որ թուրքերը հարձակվել էին Կարսի հայկական զորքերի վրա և հնարավոր է, որ մենք երկու օրվա ընթացքում ստիպված լինենք թողնել Սարիղամիշը²:

Գևորգ Եազրճյանը գտնում է, որ պատերազմում պարտության, մասնավորապես Կարսի անկման պատճառները վեր հանելու հարցում պատմագիտական մեծաքանակ գրականության մեջ ուշադրությունն առավելապես դարձվել է արտաքին և դիվանագիտական պատճառների վրա՝ հետին պլան մղելով ներքին՝ գաղափարական, ռազմական, ռազմա-

¹ Ոգուն չասպախնելու արդիւնքը (Կարսի անկումը 1920 թ. հոկտեմբերի 30-ին-Գարեգին Արք. Յովսեփյանցի յուշագրությունը և փաստաթղթեր), (այսուհետև՝ Ոգուն չասպախնելու արդիւնքը), կազմեց՝ Գ. Եազրճեան, Ե., 2002, էջ 4-7:

² Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 200, ց. 2, գ. 81, թ. 5:

հոգեբանական, վարչաիրավական և բարոյահոգեբանական պատճառները¹: Նա մեջբերում է նաև ՀՀ խնամատարության նախարար Արտաշես Բաբայանի և 1920 թ. մայիսից Շիրակի նահանգապետ հանդիսացող Կարո Սասունու վկայությունները: Այդ անձինք Կարսի անկման պատճառների շարքում առաջ են քաշել հետևյալ գործոնները. զինվորական բարձր հրամանատարության ապաշնորհությունն ու անփութությունը, հետախուզության բացակայությունը, սեփական ուժերի գերազնահատումը, Կարսի քաղաքային և զինվորական հրամանատարության միջև առկա հակամարտությունները, պատերազմին անպատրաստությունը, բոլշևիկների դավադրական քարոզչությունը, թուրքական բանակի առավելությունները, ցածր կարգապահությունը և այլն²:

Կ. Սասունին կարևորելով Կարսը՝ որպես ռազմավարական նշանակության ամրոց, գրում է, որ այնտեղի հայկական զինվորական ու վարչական մարմինները փոխհամագործակցված չէին աշխատում, ինչից շահեցին թուրքերը և դա ծանր անդրադարձավ հանրապետության բախտի վրա³:

Կարսի գրավումով վճռվելու էր թուրքական բանակի հետագա առաջխաղացման հարցը: Կարս ամրոցի՝ որպես ռազմավարական նշանակություն ունեցող կառույցի դերը շեշտելու նպատակով, Վահե Արծրունին մեջբերում է գնդապետ Ալ. Վեքիյանի հետևյալ խոսքերը. «Եթե կարողանայինք մէկ եւ կէս ամիս պահել Կարսի ամրութիւնները, անհաւանական չէր, որ թշնամին՝ չդիմանալով ցուրտին եւ քաղցին, լքէր եւ հեռանար»⁴: Դժբախտաբար, այդքան կարևոր բերդաքաղաքի ամրությունների վրա ուշադրություն դարձվեց միայն այն ժամանակ, երբ Սարիղամիշն ընկած էր, Մերդենենկի ճակատը՝ քանդված⁵:

Բացի վերոհիշյալ հանգամանքներից, Կարս հասել էր նաև թուրք-հայկական պատերազմի ամբողջ ընթացքում գործող բոլշևիկյան քարոզ-

¹ Եսգրնեան Գ., Կարսի 1920 թ. Անկման խորքային պատճառները, Ե., 2007, էջ 7:

² Ոգուն չսպախինելու արդիւնքը, էջ 4-7:

³ Մեջբերվում է ռաո Ներսիսյան Ա., Կարո Սասունի, Ե., 2004, էջ 158:

⁴ Վահե Արծրունի, Հայ-տանկական պատերազմը, Հայ սպայությունը, Շատախ, Ե., 2002, էջ 33:

⁵ Նոյն տեղում:

չությունը: Հասարակական-մշակութային գործիչ, Թիֆլիսի ՀՅԴ պաշտոնաթերթ «Հորիզոնի» խմբագիր Վ. Նավասարդյանը գրում է, թե երբ թուրքական բանակը գրավելով Սարիղամիշը՝ արշավում էր Կարսի վրա, բանակում ու ժողովրդի մեջ թռուցիկներ էին տարածվում, թե իբր քեմալական հեղափոխական բանակը գալիս էր փրկելու հայ բանվորին, գյուղացուն ու զինվորին դաշնակների անարգ լծից¹:

Ամերիկահայ պատմաբան Ռուբինա Փիրումյանը ընդգծում է, որ Կարսում ներկա հայ բոլշևիկները, հույս ունենալով, որ թուրքերը Կարսը պետք է հանձնեն ռուս բոլշևիկյան իշխանություններին, համագործակցում են քեմալականների հետ: Այդ համագործակցությունը նշանակում էր մատնություն կատարել, պահեստներ ցույց տալ և հայկական պաշտպանության մասին տեղեկություններ հաղորդել թուրքերին: Սակայն այդ համագործակցությունն ըստ ակնկալիքի չփոխհատուցվեց, քանի որ թուրքերը Կարսում հայերի սպանդ ու վայրագություններ կատարելով, չէին խնայել նաև բոլշևիկներին²:

Մի շարք հեղինակներ Կարսի անկման նախապայման են համարում նաև քաղաքի ներսում ի հայտ եկած տագնապն ու համընդհանուր հուսահատությունը³: Ամրացված բերդաքաղաքը, ազգային ոգու բացակայության և հաղթանակի կամ քիչ գոյության պայմաններում, առանց լուրջ դիմադրության, խայտառակ կերպով ինկավ թուրք և քուրդ միացյալ ուժերի ձեռքը՝ հոկտեմբերի 30-ի կեսօրին, - գրում է Գ Յազընյանը⁴: Նա ներկայացնում է, որ Կարսի վրա հարձակվող թուրքական զորքերի առաջապահի դեր էին կատարում քուրդ զինյալներն, որոնք Հայաստանի խորքերը առաջացող թուրքական զորքերի կողքին կռվելով, առանձնահատուկ դաժանությամբ վարվեցին Կարս քաղաքի և նահանգի հայ ազ-

¹ Մեջբերվում է ըստ Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Պեյրութ, 1953, էջ 113:

² Փիրումյան Ռ., Հայաստանը ՀՅԴ-բոլշևիկ յարաբերություններ հորոտում 1917-1921, Ե., 1997, էջ 264:

³ Արծրունի Վ., նշվ. աշխ., էջ 120:

⁴ Յազընյան Գ., Հայ-քրդական հարաբերությունների Կարսում 1919-1920 թվականներին, Մերձավոր Արևելք, հոդվածների ժողովածու, Ե., համ. 1, 2002, էջ 165:

գարնակչության հետ, անխնա բռնաբարելով, կողոպտելով ու սպանելով մարդկանց¹:

Յազրնյանն իր համաձայնությունն է հայտնում Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանի հետևյալ գնահատականին. «Մենք ունեինք բոլոր տվյալները Կարսի նահանգը մեծ պատնեշ դարձնելու թուրքական հարձակումների դեմ: Կարսի նահանգը ավելի քան կեսով բնակեցրած էր քրդերով, որ այնպես տրամադիր էին մերձենալու մեզ: Իսկ մենք, փոխանակ կոփելու այդ տրամադրությունը, ... փոխանակ սպառնալից բռունցք ստեղծելու մեր սահմաններում, մենք հետ մղեցինք դեպի մեր հովանին նետվող այդ քրդերին²:

Կարսի անկման պատճառները Գ. Յազրնյանը բաժանում է հիմնական երեք խմբի՝ իր ենթապատճառներով: Դրանք են Ա) Կարսի անկման և ՀՀ բանակի քայքայման գաղափարական պատճառներ: Բ) Կարսի անկման ռազմական պատճառներ: Գ) Կարսի անկման բարոյահոգեբանական պատճառները: Որպես ենթապատճառներ նա առանձնացնում է հետևյալը. Բանակի հրամկազմի ապագգային նկարագիր և նրանում հայկական պետականության գաղափարի թուլություն կամ բացակայություն, բարձրաստիճան սպայակազմի ռուսական լեզվամտածողություն ու օտարամոլություն, օտարների վրա հույս դնելը, ռազմական անպատրաստությունը, ռազմական պլանի և քարտեզների չգոյությունը, ռազմական ուժերի կենտրոնացման և խելամիտ օգտագործման սկզբունքի բացակայությունը կամ արհամարհումը, ռազմական տեղաշարժի բացակայությունը, տեղանքի առավելությունները գնահատելու անկարողությունը, ռազմական հետախուզության և հակահետախուզության խայտառակ վիճակը, հայերի՝ կռվելու և հաղթելու կամքի բացակայությունը, անառողջ մթնոլորտը զինվորական բարձրաստիճան հրամանատարների և պաշտպանության նախարարության հարաբերություններում, ինչպես նաև Կարսի նահանգի քաղաքացիական և ռազմական իշխանությունների միջև և այլն³: Այդ ամենը թելադրելով հան-

¹ Նույն տեղում, էջ 166:

² Նույն տեղում, էջ 166:

³ Եազրնեան Գ., Կարսի 1920 թ. անկման խորքային սպտճառները, էջ 22-80:

դերձ հեղինակը չի բացատրում, այդ ինչպե՞ս Սարդարապատի հերոսներ Մովսես Միլիկյանն ու Դանիել Բեկ-Փիրումյանը, Աշխարհամարտի վեց տարիների փորձ կուտակած հազարավոր զինվորները կորցրեցին իրենց մարտունակությունն ու հմտությունը: Ի՞նչն էր նրանց վատ կռվելու կարևորագույն, գուցե և քաղաքական պատճառը:

Թե որքան կարևոր էր Կարսի գրավումը՝ ակնհայտ է այն հանգամանքից, որ քաղաքի անկումը հայկական կողմին մղեց հաշտության ճանապարհի: Թուրքերն էլ՝ շահարկելով հայերի առաջարկած հաշտությունը՝ նորանոր ու ավելի ծանր պայմաններ էին առաջ քաշում: «Հոկտեմբերի 30-ին, մի վերջին կենաց մահու ճակատամարտից յետոյ ընկաւ Կարսը եւ թուրք բանակը անյապաղ դէպի Ալեքսանդրապոլ շարժուեց», գրում է Ռ. Փիրումյանը՝ նշելով, որ բերդաքաղաքի անկումից անմիջապես հետո ՀՀ կառավարությունը հեռագրում է Անգորա և պատրաստակամություն հայտնում հաշտության բանակցություններ սկսելու¹ :

Եզրահանգում. Ի մի բերելով սփյուռքահայ պատմաբանների երկերը, պետք է փաստենք, որ արտերկրում զարգացող հայ պատմագիտական միտքը իրավամբ արձանագրում է, որ Կարսի գրավումը կտրականապես փոխեց 1920թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքը հոգուտ քեմալականների: Կարելի է պնդել, որ նույն գործոնները, որոնք նշվում են որպես պատերազմում հայերի պարտության պատճառներ, նույնությամբ վերաբերվում են նաև Կարսի անկմանն ու նրանց տրվող գնահատականներին: Գտնում ենք նաև, որ սփյուռքի պատմաբանները որոշ չափով անտեսում են արտաքին քաղաքական գործոնը՝ ՀՀ կառավարության ոչ ճկուն վարվելակերպի մասով: Հնարավոր չէր անտեսել ծայրաստիճան վտանգավոր թուրք-բոլշևիկյան դաշինքը և միջոցներ չձեռնարկել այդ քաղաքական իրողության դեմ: Ժողովրդի և բանակի հուսահատությունը երկու կողմերից իրականացվող հարձակումների պայմաններում էապես կտորեց մարդկանց մարտունակությունը, ի չիք դարձրեց հաղթանակի նրանց ակնկալումները:

¹ Փիրումյան Ռ, նշվ. աշխ., էջ 267:

References

1. Hovhannisyán R., *Republic of Armenia* [Hayastani Hanrapetutyun]. Yerevan: “Tigran Mec” publ., volume 4. 2016. (In Armenian).
2. National Archive of Armenia. F. 200, c. 2, g. 81, t. 5. (In Armenian).
3. Nersisyan A., *Karo Sasuni* [Karo Sasuni]. Yerevan: Iranagitakan Kwvkasyan Kentroni hrat., 2004. (In Armenian).
4. Pirumyan R., Armenia in the field of ARF-Bolshevik relations 1917-1921 [Hayastany HYD-bolshevik yaraberutyunneri volortum 1917-1921], Yerevan: Yerevani Hamalsarani hrat., 1997. 264 p. (In Armenian).
5. Artsruni V., *The Armenian-Tajik war, the Armenian officer, Shatakh* [Hay-tachkakan paterazmy. Hay spayutyuny, Shatakh]. Yerevan: “Mughni” publ., 2002. 456 p. (In Armenian).
6. Vratsian S., *Armenia between the Bolshevik hammer and the Turkish slab* [Hayastany bolshevikyan murchi yev trqakan sali mijev]. Beirut, 1953, 348 p. (In Armenian).
7. Yeazjian G. *The result of not trusting the Spirit (The fall of Kars in 1920. on October 30,)* [Vogun chapavinelu ardyunqy, Karsi ankumy 1920 t. hoktemberi 30-in Garegin Arq. Yovseryanci jwshagrutyunnery]. Yerevan: “Azgaynakan akumb” publ., 2002. (In Armenian).
8. Yazchyan G. Armenian-Kurdish relations in Kars in 1919-1920, [Yazchyan G. Hay-qrdakan haraberutyunnery Karsum 1919-1920 tvakannerin], //Middle East [Merdzavor arevelk]. Collection of articles [hodvatsneri joghovatsu]. Yerevan: 2002. v. 1(24), pp. 158-169. (In Armenian).
9. Yeazjian G. The deep reasons for the decline of Kars in 1920 [Karsi 1920 t. ankman khorkayin patcharnery]. Yerevan: Thr author edition, 2007. (In Armenian).

ՀՏԴ 394

**ՇԻՐԱԿՅԱՆ ՈՒՏԵՍՏԸ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԻ
ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ**

Կարինե Սահակյան

ԳԱԱ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
ՇՊՀ, Հայաստան
sahakyanani@mail.ru

Ռոզա Հովհաննիսյան

ԳԱԱ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Հայաստան
vard-rosa@mail.ru

Ամփոփում. Շիրակը՝ իր սիրտ Գյումրիով, ավանդական նկարագիր ունեցող մարզ է: Ավանդականությունն առավելապես դրսևորվում է նրա արժեհամակարգի մեջ, որտեղ էականորեն առանձնանում է շիրակյան ազգային ուտեստը՝ որպես ավանդական կենցաղի կարևոր բաղկացուցիչ:

Վերջին ժամանակներս, սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական և բարոյահոգեբանական իրավիճակով թելադրված, մասնակիորեն ձևափոխվել, երբեմն խաթարվել են մեր ազգային ավանդույթներն ու սովորույթները: Այս ամենը բնականաբար ազդեցություն է թողել նաև մեր կենցաղի, հատկապես ազգային խոհանոցի վրա: Բացի այդ, պատմական բախտի հետևանքով հայերը սփռված են աշխարհով մեկ և նոր միջավայրում ստեղծել են նոր խոհանոց՝ հաճախ համադրելով ավանդական ու նոր կերակրատեսակների բաղադրիչները: Հետևաբար ժամանակն է համակարգենք, ուսումնասիրենք և վերագնահատենք ավանդական հայկական խոհանոցի, մասնավորապես՝ Շիրակի գյուղական ու քաղաքային բնակչության ուտեստի համալիրը իր ինքնատիպությամբ ու գրավչությամբ:

Արդի ժամանակներում, անշուշտ, խնդրի ուսումնասիրումը հրատապ է նրանով, որ մեր հարևան ժողովուրդները թիրախավորում են հայկական ազգային խոհանոցը՝ շատ ուտեստներ վերագրելով իրենց՝ ըստ դրանց նմանության:

Գյումրեցի հնաբնակներից գրառել ենք շուրջ 300 կերակրատեսակներ, այդ թվում՝ բազային ուտեստը տարբերակներով, տոնաձիսական համակարգին հատուկ կերակրատեսակներ, թաղման և հարսանյաց կերակրատեսակներ՝ պահպանելով նյութի բանահյուսական կողմը: Գրառել ենք շիրակյան ուտեստներին առնչվող քնարական երգեր, ավանդական զրույցներ, հավատալիքներ, պաշտամունքային նշանակություն ունեցող «աղ, հաց, մատաղ» առանցքային բաղադրիչներով բանավոր բանաձևային նմուշներ և այլն:

Բանալի բառեր՝ ուտեստ, հայկական ազգային խոհանոց, ավանդական կերակրատեսակներ, մոռացված կամ կորսված կերակրատեսակներ, առօրյա ուտեստ, տոնական և ծիսական ուտեստ:

SHIRAKIAN FOOD, AN IMPORTANT COMPONENT OF TRADITIONAL LIFESTYLE

Karine Sahakyan

Shirak Center for Armenological Studies of NAS, RA,
Shirak State University, Armenia,
sahakyanani@mail.ru

Roza Hovhannisyan,

Shirak Center for Armenological Studies of NAS, RA, Armenia,
vard-rosa@mail.ru

Abstract: Shirak, with Gyumri as its administrative centre, is a marz with a traditional character. The traditional character of Shirak is largely reflected in its value system, with the Shirakian national dish representing a significant element of traditional life.

In recent times, the socio-economic, socio-political and moral-psychological situation has resulted in the partial modification and, on occasion, disruption of our national traditions and customs. Such influences have naturally affected the daily lives of the population, particularly with regard to the national cuisine. Furthermore, as a consequence of historical circumstances, Armenians have dispersed throughout the globe, establishing a new cuisine in disparate environments, frequently melding traditional and novel ingredients. It is therefore necessary to organise, study and re-evaluate traditional Armenian cuisine, in particular the complex of dishes consumed by the rural and urban populations of Shirak, in order to ascertain its originality and attractiveness.

In the contemporary era, the examination of this subject is of paramount importance, as neighbouring peoples are attributing numerous dishes to the Armenian national cuisine on the grounds of their resemblance.

Approximately 300 dishes have been recorded from the ancient inhabitants of Gyumri, including the basic dish with variations, dishes specific to the festive system, soul bread and wedding dishes, thereby preserving the folkloric aspect of the material. Additionally, lyrical songs pertaining to Shirakian dishes, traditional discourses, beliefs, and oral formulaic samples comprising the key components "salt, bread, sacrifice" with religious significance have been recorded.

Key words: *dish, Armenian national cuisine, traditional dishes, forgotten or lost dishes, everyday dish, festive and ritual dish.*

Նախնարան. Մեր նպատակն է՝ հավաքել, համարել և ուսումնասիրել Ծիրակի մարզի մոռացված կամ կորսված ավանդական կերակրատեսակները, դիտարկել ուտեստի գործածության շրջանակներն ու սահմանները առօրյա, տոնական և ծիսական կյանքում: Իրականացրել ենք հետազոտական **մեթոդների տրանզուլյացիա** (հետազոտվող օբյեկտի մասին տեղեկատվություն հավաքել մի քանի մեթոդների համադրմամբ)՝ աներառելով ինչպես որակական մեթոդներ, այնպես էլ քանակական: Իրականացրել ենք **անկետավորում** հարցվող բանասացների շրջանում,

ինչպես նաև՝ **խորին հարցազրույցներ** առանցքային տեղեկատուների հետ: Անկետավորման համար ձևավորել ենք կամավոր սոցիոլոգ ուսանողների ստուգիչ խումբ և ազդեցության խմբում քանակական մեթոդով հավաքագրված տվյալները համադրել ու համեմատել ենք ստուգիչ խմբի արդյունքների հետ: Առանցքային տեղեկատուների հետ խորին հարցազրույցի մեթոդը ընտրել ենք ամբողջացնելու համար ուսումնասիրվող երևույթի մասին ստացվող տվյալները:

Գրառված բանահյուսական թեմատիկ նյութի շրջանակում պարզել ենք մեր ժողովրդի ուստեստային նախասիրությունները:

Շիրակի ազգային խոհանոցի ձևավորումը վաղեմի պատմություն ունի: Գյումրվա ուտեստների վրա մեծ ազդեցություն է գործել արևմտահայ ազգային խոհանոցը, քանի որ պատմական Գյումրի ներգաղթածները մեծավ մասամբ արևմտահայ հատվածից են: Բնակավայրի տնտեսական կյանքն էլ սկսել է աշխուժանալ միայն արևմտահայերի վերաբնակեցումից հետո (1829-1830 թթ.):

Անհրաժեշտ է ճշտել՝ ներգաղթածները ուտեստի ի՞նչ մշակույթ են բերել, աշխարհագրական միջավայրերի տարբերությունն ու բազմազանությունն ինչպե՞ս են ազդում ուտեստի համակարգի ձևավորման ու զարգացման վրա, հացկերույթի մշակույթը՝ միմյանց հետ «աղ ու հաց կիսելը», որքանո՞վ է նպաստում մարդկանց հույզերի արտահայտմանն ու ապրումակցմանը:

Գյումրու ամենօրյա կերակրատեսակները բազմազան են՝ տարբեր տեսակի շիլաներ, փլավներ, ապուրներ, որոնք կոչվում են բաղկացուցիչ հիմնական մասի անունով՝ ռսպով, բլղուրով, բրնձով և չորթանով փլավներ, չրով թիրիթ, շաղգամով յայնի, կորկոտապուր, պոչով ապուր, թանով ապուր, հառլապուր և այլն¹:

Տոնական օրերին գյումրեցու հարգի կերակրատեսակներից են թաթար բորակին, տոլման, քարի քյուֆթան, դազան խորովածը, թավա քիֆթասին /պարսկերեն՝ տապակած կոլոլակ/, իսկանաղը, թավան ու

¹ Բազեյան Գ. Այեքսանդրապոլի ավանդական ուտեստն ու հացկերույթը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Հ. 11: Գյումրի: 2008: Էջ 37:

քյալլան (կովի գլխից պատրաստվող կերակուր) Ալեքսանդրապոլում հարգի կերակուրներ էին հատկապես **արհեստավորների** շրջանում:

Ծիսական կերակուրներն էին Ամանորի պասուց տոլման, Կաղանդի տարեհացը,

Ծննդյան տոնի հարիսան, Տերնդեզի խեձախը/աղանձը/, Սբ Սարգսի փոխինդով խաշիլն ու աղի բլիթը, Սբ Զատկի փլավը, Սբ Խաչի քյաշքյան, Համբարձման կաթնապուրը և այլն:

Գյուճրվա նրբահամ խոհանոցի կերակուրները տարբերվում էին քաղցր ուտելիքների բաղադրիչներով: Այդպիսիք էին դոմով, քիշմիշով, մեղրով կամ շաքարով ճաշը, ջեյեզով փլավը (քիշմիշով, ծիրանի, սև սալորի չրերով ու նշով), չորացրած սպիտակ թթով ձվածեղը, խուրմով ձվածեղը, պաստեղով ձվածեղը, դայմաղը (եփած կաթի սերը՝ մեղրուսեր), հասութան, գուրբիան և այլն¹:

Մասնագիտական գրականության մեջ ուտեստի մշակույթի մաս են կազմում այս կամ այն ուտեստի ճաշակման ժամանակը, ձևը, միջավայրը, ճաշակելու ժամանակավոր արգելքներն ու դրանց դադարեցման եղանակները, ինչպես նաև՝ այլ գործոններ: Վերջիններիս հիմքում ընկած է սննդատեսակի (հատիկեղեն, մսեղեն, կաթնեղեն) գոհաբերման/ ընծայաբերման գաղափարը, որի նպատակն էր «հովանավոր ուժերին» հաշոդ բերքի համար երախտագիտություն հայտնելը կամ գալիք բերքառատություն հայցելը, տարերային աղետներից (օրինակ՝ երաշտից, տևական անձրևներից կամ մորեխից) պաշտպանվելը: Ըստ այդմ՝ ավանդական ուտեստի մշակույթն ունի ծիսահավատալիքային հենք և փոխկապակցված է տոնաձիսական մշակույթին, որն այդ ամենի գործնական արտացոլումն է. «Հարիսան, խաշը, կաթնապուրը, մատաղը եփվում էին մեհյանների, սրբավայրերի ու եկեղեցիների մոտ և գլխավորապես նվիրված էին երկրագործությանն ու անասնապահությանը հովանավորող աներևույթ ուժերին: Հարիսան նվիրված էր հատիկամշակու-

¹ Աղաբեկյան Հ. Ակնարկ պլեքսանդրապոլցու կերակրացանկից: ՇՊՄԺ 3-րդ հանրապետական գիտաժողովի զեկուցումների հիմնադրություններ: Գյումրի: 1998: Էջ 42-43:

թյանը, կաթնապուրը՝ կաթնամթերքի առատության ապահովմանը, խաշը՝ անասնապահության հաջողությանը, մատաղը՝ ընտանիքի անկո-րուստ լինելուն»¹:

Ժողովրդական տոներին առնչվող ծիսական կերակրատեսակների պահպանումը և վերաիմաստավորումը, միտված են ազգաբնակչության, հատկապես նոր սերնդի տոնածիսական ակտիվ վարքագծի և ավան-դական բնութագրի ապահովմանը, հարսանեկան և թաղման արարո-ղակարգերի ժամանակ ավանդաբար մատուցվող կերակրատեսակների՝ որպես ծեսը կարգավորող կարևոր գործոնի պահպանմանը:

Օրինակ՝ ակնհայտ է, որ սիրո հովանավոր, հարեհաս սուրբ Սարգիսն առնչություն ունի հացաբույսերի, մասնավորապես՝ ցորենի և դրանից պատրաստված փոխինդի հետ, որն ամենուրեք համարվում է Սբ Սարգսի տոնի ծիսական կերակուրը: Այդ օրը հավվա էին եփում և գիշերը մատաղի ձևով բաշխում ժողովրդին՝ վանքերի կամարների տակ օթևան գտած ուխտավորներին, կամ էլ մատաղատների մոտ հացի մատաղ էին բաժանում: Փոխինդով արված խաշիլի առաջին բրդունը դնում էին տան դռան շեմին կամ կտուրը, որ թռչունները գային, փախցնելով տանեին այն ուղղությամբ, որտեղ նրանց երազների կամ սպասումների իրականացման հորիզոնն էր²:

Չարչարանաց շաբաթին հարսները լույս առավոտից մինչև ուշ գիշեր խմոր էին հունցում՝ որպես նշխար Քրիստոսի մարմնի: Ս.Չատկի հացը թխելիս, որքան էլ տանը այլուր լիներ, այլուր էին մաղում: Առաջին մաղրածնից մի բուռ դնում էին Քրիստոսի համար: Չատկվա հավկիթը զարդարում էին հավերժության խորհրդանիշ ռիթմիկ կրկնվող ցորենի պատկերով՝ որպես կյանքի մշակայության արտահայտություն: Մեծ պասի հենց առաջին օրը ամեն տուն թխում էր յոթ անափ բաղարջ՝ ի նշան պասի յոթ շաբաթվա:

Տյառնընդառաջի ծիսական արարողակարգը նշվում էր աղանձի պատրաստմամբ: Ցորենը չորացնում-բովում էին, որ նմանողական հմա-

¹ <https://arar.sci.am/dlibra/publication/351554/edition/323911/content>

² Սահակյան Կ. Սուրբ Սարգիս /Ժողովրդական, կրոնածիսական, պատմական և ազգաբանական պատկերացումներ/, Երևան: «Գիտություն» հրատ.: 2011: Էջեր 5-6:

յուրյամբ գետինն էլ չորանար, և զարունը շուտ գար: Այս օրվա խորհրդով հմայական բարենադրություններն ուղղված էին բերքի և նյութական բարեկեցության ապահովմանը՝ *Տերնդեզ, դարմանը՝ կես, //Մի փուլ՝ ցանես, հարյուր քաղես:*

Հացի պաշտամունքն ըստ էության նույնանում է հատիկապաշտությանը: Բոլոր տեսակի հատիկները՝ ձավարեղենը, ցորենը և այլն, հմայող, հաջողություն ապահովող ուտելիքներից են, որոնց առատ օգտագործումը նախնական պատկերացումներում պիտի ապահովեր կյանքի հարատևությունն ու մշտնջենականությունը: Մարդու կյանքի անցումային փուլերը ևս նշվում է հատիկային պաշտամունքի դրսևորմամբ (երեխայի ատամհատիկը): Ավելին՝ հայոց ավանդական մշակույթը վկայում է, որ մի շարք տոների ժամանակ կատարվել են ոչ մսեղեն զոհաբերություններ. Սուրբ Մարգսին՝ փոխինդ, Տյառնդառաջին՝ աղանձ, Համբարձման տոնին կաթնով են արել և բաժանել յոթ տեղ: Նույն իմաստն ուներ նաև ընդդեմի առատ օգտագործումը: Այն ճաշատեսակները, որոնք ունեին հարգիության աստիճան, ևս առնչվում էին հատիկապաշտության դրսևորումներին:

Չափազանց կարևոր է հայկական այս կամ այն կերակրատեսակի բացահայտումը՝ ազգային տոների համատեքստում, օրինակ՝ Խաչվերացի կամ Սըրբխեչի շաբաթ օրը կանայք խմորեղեն էին թխում, իսկ տղամարդիկ ու մորթում: Ուլի միսը այդ օրվա առանձնահատուկ և անհրաժեշտ ուտելիքն էր: Չոհաբերվող ուլերի առատության պատճառով Ծիրակում այս օրը կոչվում էր «ուլան դռան», այսինքն՝ Ուլերի կոտորած կամ մորթ: Խաչվերացը քանի որ ազդարարում էր աշնան սկիզբը, տնտեսական տարվա մուտքը, Մուշից եկածներն ասում էին՝ «Աստուածածնա՝ բակը մտիր, Սըր խաչին՝ ծակը մտիր»:...Մաշկված, մաքրված ուլը կախում էին թոնիրում՝ տակը նախապես դնելով ձավարեղենով կաթսան: Ողջ գիշերը ուլը դանդաղ խորովվում էր մարմանդ կրակի վրա, փակ թոնիրում, իսկ հավիող ճարպն աստիճանաբար ներծծվում էր տակը

դրված ձավարի մեջ, առաջացնելով, ինչպես Շիրակում են ասում, «քաշկակ»¹:

Չատկի կիրակի օրը վերջին՝ (ախարի) կիրակին էր: Մատաղ էին անում երինջ (գարդարված չոր մրգերով ու գունավոր քարերով), արջառ, մատաղը եփում էին մեծ կաթսաների մեջ, գիշերն էր դրվում, որպեսզի գոհաբերության խորհուրդը ելնի առ Աստված: Առավոտյան՝ բարի լույսին, «փարիաջներով» բաժանում էին:

Չատկական կերակուր էր *ջեյեզով փլավը*: Գրառել ենք նաև այս կերակրատեսակի մի ուրիշ տարբերակ՝ *Չրով փլավ*, որն աչքի է ընկնում բանասացի ինքնուրույն հորինումներով. «Բրնձով փլավ էք պատրաստում: Չամիչը, սալորաչիրը, ծիրանաչիրը խաշում եք, հետո կարագի մեջ տապակում: Ավելացնում եք դարչին, մեխակ ու վանիլին: Քաղցրի սիրահարները կարող են մի գդալ մեղր ավելացնել: Տապակած չրերը լցրեք փլավի վրա, թողեք մի փոքր հանգստանան: Բաղդադի մի բուռ խուրմայի կորիզը հանում եք, փոքր թավայի մեջ յուղով թեթև տապակում: Մի մեծ ափսեի ծայրերին մանր կտրատած լավաշի կտորներ շարեք: Վրան լցրեք չրերով փլավը: Ապա փոքր թավայով արմավները նորից դրեք կրակին, վրան 3-4 հավկիթ կտորեք և ձվածեղ արեք: Մեծ ափսեով փլավի բուրգի գազաթը մի քիչ հարթեցրեք և արմավով ձվածեղը շուռ տվեք փլավի գազաթին: Այս փլավը Օննոյան և Չատկի տոներին սեղանի գարդն է /բանասաց՝ Ս. Մկրտչյան/:

Հարսանիքի օրը հարս ու փեսային տալիս էին գուրբիա՝ հավանգի մեջ լավ ձեծած ընկույզով ու մեղրով շաղախված՝ ի նշան հետագա կյանքի քաղցրության (ցայսօր էլ գործուն է «գուրբիա խո չդառա՛վ» արտահայտությունը):

Գյումրիում հայտնի Գևոր աղի բաղնիքը հարսնբաղնիք էր՝ կենդանի հերթով, մեջը սալաքար (սեղանքար) կար, որի վրա բաղնիքից դուրս գալիս հաց էին ուտում. կենտրոնում Միմնի ֆոից բերած կար-

¹Խոտատյան-Առաքելյան՝ Հայ ժողովրդական տոները: Եր., «Չանգակ-97», 2005: Էջ 238:

մրացրած գառն էր՝ կանաչը բերանին՝ զարդարված խնձորներով ու մոմերով¹:

Ընդգծենք, որ Շիրակի գյուղական համայնքներում առավելապես տարածված են կանաչեղենով կամ բանջարով պատրաստվող կերակրատեսակները, աղցանները, թթուների տեսականին, քանի որ դաշտի ու խոհանոցի հեռավորությունը այս վայրերում համեմատաբար կարճ է: Նշենք մի քանիսը՝ դանդուռ տապկած, ավելուկով բանջար, սպիտակ բանջար, եղինջ տապկած, տապկած թելուկ, տապկած զոխ և այլն:

Շիրակում *նիշաստա* /իմա՝ ածիկ/ անվանումով հայտնի ծիսական ուտեստը խորհրդանշում է ձմռան ավարտը և զարնան գալուստը: Մեծ պահքի սկզբում ցորեն են ծլեցրել, որ Չատիկի մոտենալու օրերին տոնի ծիսական կերակուրը պատրաստ լինի: Պատահական չէ, որ Չատիկ ծիսական արարողակարգի համաձայն՝ գյումրեցին ուներ համոզմունք, թե «հաց տուր, որ հաց բերի», այսինքն՝ հացահատիկի զոհաբերմամբ առատ բերքի ապահովում:

Հայ ժողովրդի ավանդական կենցաղում մշտապես գոյություն է ունեցել հացի պաշտամունք, որը դրսևորվել է նրա հավատալիքներում ու ծիսական գործողություններում: Հները հավատում էին, որ եթե նոր տան հիմքի մեջ մի բուռ ցորեն շաղ տային, տունը հացառատ կլիներ: Հիվանդ ունեցողը լավաշ էր թխում և յոթ տուն բաժանում, որ հիվանդը առողջանար: Եթե երեխան դեռ չէր քայլում, աջ ոտքին բոքոն էին կապում, որ ապահովեին նրա հեշտ քայլելը: Ըստ էության, մարդու կյանքի ճգնաժամային կամ անցումային փուլերում առկա խնդիրները լուծվել են հացի օգնությամբ: Հացով երդվել են (էս հացին քոռ աչքով նայեմ, թե սուտ ըսեմ), աղ ու հացով դիմավորել, իրար հետ հաց են կիսել: Մինչև օրս էլ արդիական են հացով մարդ, հացը կոկորդով ներս չգնալ, հացը շենանել, հացի մեջ աղ չլինել, հացը ցամաք ուտել, հացի պռունկը կտրել, հացով տեղ, հացին յուղ քսել, հացուփոր, հացին աղ չլինել, հացի հասնել,

¹Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ. «Կենցաղը, տոները, ծեսերը» բաժինը, էջ 237, Հեղինակային խումբ, Գյումրի.Քաղաքը և մարդիկ, Գյումրու քաղաքապետարան, 2009:

հացի տեր լինել, հացի քոռ, հացը ցամաք ուտել, հացը ծնկին, հացը աչքերը բռնի և բազմաթիվ այլ դարձվածքներ ու արտահայտություններ:

Բազմաբնույթ են հացի խորհրդանշական ընկալումն ու սահմանումները հայոց և տարբեր մշակույթներում: Հացահատիկի ոգին շատ մշակույթներում մարմնավորված է արական ու իգական սկիզբներում՝ հողաբերքի ու տղաբերքի խորհրդով:

Յուրաքանչյուր ժողովրդական տոնի և ծեսի ժամանակ ցորեն-ալյուր-հաց եռամիասնությանն առնչվող առանձնամաս կար, որն արտահայտում էր տոնի հիմնական բովանդակությունը: Մի դեպքում հացով կանխատեսումներ են արել, մյուս դեպքում այն դիտել որպես ծիսական կերակուր¹:

Վկայաբերենք շիրակյան ավանդական կենցաղում նախկինում հայտնի, այժմ մոռացված մի քանի կերակրատեսակներ՝ *սատրով քյուֆ-տա*, *սուբերակի*, *սիսեռով քյուֆթա*, *չրով թիրիթ*, հնդուշկով փլավ, դրմե սըրըմ և այլն:

Գյուղաբնակ կին բանասացները նշում էին, որ գյուղում ապրելով իրենք հաճախ են պատրաստում ավանդական ախորժալի ճաշեր՝ *ձավարով խաշի*, *քրչիկ*՝ թթու կաղամբով ու մանրացրած բլդուրով ապուր, *նմուռ*՝ թարմ տաք թոնրի հացը՝ հալեցրած յուղի մեջ բրդած, *պանրխաշ*, *սոխջուր* և այլն:

Տարբեր բանասացներից, ավանդական ուտեստների բաղադրատոմսերից բացի, մեզ հաջողվել է գրի առնել նաև ժողովրդական մտածողությամբ աչքի ընկնող չափածո երկեր, ինքնուրույն հորինումներ, որոնք գեղարվեստորեն բնութագրում են առավելապես գյուղական համայնքներում տարածված, տարիքային բարձր խմբի կողմից նախընտրելի ու գովելի ճաշատեսակներ, ինչպես, օրինակ՝ «Քրչիկի երգը».

Քանի գովամ, գովալու ես, // Ճաշերի մեջ շատ ընտիր ես,

Նաչալնիկի կերակուր ես, // Համով-հոտով անո՛ւշ քրչիկ:

Ելեք, ընկերանանք գնանք, // Մի ծանոթ գյուղ դոնախ մնանք,

¹ Խառատյան-Առաքելյան Հ. Հայ ժողովրդական տոները: Եր.: «Զանգակ- 97»: 2005: Էջ 25:

Տան տիրոջը մի պատվեր տանք, // Եփի համով, անուշ քրչիկ:

Քրչիկ, անունդ է բարի, // Ուտողի կյանքը կերկարի,
Նա կապրի հարյուր տարի, // Անմահական դեղ ես, քրչիկ:
Եկան քյուֆթեն ու բոգբաշը, // Լույս քյաբարն ու խինկալին,
Սևը տվեցին քո հային, // Աչքից ընկար, խղճո՛ւկ քրչիկ:

/Բանասաց՝ Կ. Ալեքսանյան/:

Բանահյուսական այս պատառիկը վկայում է ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում հայ մարդու սննդային նախասիրությունների ու վարքագծի փոփոխությունը:

Թեմատիկ առումով որպես բանավոր հորինում ուշագրավ է նաև մեր գրառած հետևյալ քնարական կատակերգը, որը տարածված է ազգագրական տարբեր վայրերում. ընդգծվում է յուղեղեն կերակուրի և հատիկի օգտագործման առավելությունը.

Աղջիկ- Մերս կերավ **եղեղեն**, // Ընձի բերավ հրեղեն:

Տղա-Մերդ կերավ **ձվածեղ**, // Քեզի բերավ քոռ անծեղ:

Աղջիկ- Մերս կերավ **կծու սոխ**, // Ընձի բերավ խաղ ըսող:

Տղա- Մերդ կերավ **պաղ հատիկ**, // Քեզի բերավ պտպտիկ:

Գյումրու բանավոր երգաստեղծանության չափածո տեքստերում հաճախ են հիշատակվում այս կամ այն կերակրատեսակի կամ կանաչեղենի անվանումը.

Հնձվորին հաց կտանեն, /Բերանը բաց կտանեն,

Տես՝ քեզ ինչքան կսիրեն, // **Ձուկը խաշած** կբերեն:

Կամ՝

Թոփառվա հանդը **զոխ** քաղի, դառա,

Մատուռ-մատուռ համբուրեցի, ետ դառա¹:

Երբեմն բանասացը, ուտեստի նկարագրությանը զուգահեռ, հիշում է նաև որևէ ասույթային բանաձև, օրինակ՝ *Ո՛վ ուտե եղև ու անուշը, ո՛վ զարկե գլուխը դուռը*:

¹ Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ): Մեր գրառումներից, - Կ.Ս.:

Կամ՝ զոհաբերության մատաղ մատուցելու դեպքում՝ օրհնանքի բանաձևը՝ Հայր *Աբրահամի մատաղն էղնի*, կամ *Աբելի մատաղն էղնի*, այսինքն՝ Աստծուն հանելի, ընդունելի մատաղ էղնի:

Հասարակական ու հավաքական հնչողություն ունեցող ճաշատեսակներից է նաև էրիշտան: Այս կերակրատեսակի պատրաստմանը, ինչպես և մատաղին, մասնակցում է գրեթե ողջ համայնքը: «**Էրիշտեն** մե հոգում գործ չէր, մաջու պես կենեին: Կրհավաքվեին հարս ու աղջիկ էն տունը, յուրդեղ օր էրիշտա բրդի էնեին: Հացի խմորից պընդի խմոր կըսարքեին, դաստախունը՝ խմորի տակ փռելու շորը, կըփռեին ու սաղ գիշեր ողներով կըրորոթեին: Յ'առավող էրիշտա կտրողին կըկանչեին: Մեծմեծ գընդեր կենեին, գըրդընակով կըբանային ու բարակ կօխվալեին: Խմորը 4-5 դատ կենեին ու կըկտրտեին: Ձեռով կըբարկցընեն ու կըփռեն յ'արեվին չորնալու: Յեղո կըտանեին ֆուռը /Միմոնի ֆուռը/ բորֆելու»¹:

Մուսաննա Գրիգորյանը /արմատներով մշեցի, Ջաջուռ Կայարան գյուղից/ պատրաստում է ինքնօրինակ բիջ-բավա: Ի դեպ, «Հայկական խոհանոցի բառարան»-ում մենք չգտանք այս երկբաղադրիչ անվանումով կերակրատեսակը, բայց առանձին՝ «Բավա»² անվանումով ուտեստը նկարագրվում էր որպես *ձկով սպաս, որն ուտում են մածուն խառնած*: Ամեն դեպքում փոփոխվող խոհանոցային քաղաքականության մեջ այս կերակրատեսակի բաղադրատոմսը որոշակիորեն հուշում է մարդկանց ուտեստային նախասիրությունների փոփոխման մասին: :

Ազգային խոհանոցն ակնհայտորեն ինքնօրինակ է դարձնում տվյալ էթնոսի համի գրավչությունն ու գաղտնիքը, որը, ըստ էության, փոխանցվում է սերնդեսերունդ՝ դառնալով ազգի մասնահատկություններից և երկրի գրոսաշրջային գրավչությունը ապահովող բաղադրիչներից մեկը:

Ուշագրավ է, թե աշխարհասփյուռ հայությունն ինչպե՛ս է փորձում ուտեստի մասին հիշողություններով վերականգնել կամ վերապրել անցյալը՝ ուտեստի մարդաբանության ժամանակակից մոտեցումների ու

¹ ԴԱՄ: Մեր գրառումներից, - Կ.Ս.:

² Ադամյան Վ., Բաբայան Շ. Հայկական խոհանոցի բառարան, Եր.: Հեղինակային հրատ.: 2015թ.: 445 էջ:

տեսական հարցադրումների հիմամբ: Ակներն է, որ այլեթնիկ մշակութային միջավայրում Հայաստանից տեղափոխվածները ուտեստի համակարգով կարողանում են պահպանել և դրսևորել իրենց հայկական ինքնությունը: Ակնհայտ է, որ համի կարոտախտն¹ու հիշողության դարձը օգնում են անձին վերականգնելու և վերաիմաստավորելու մոռացված կերակրատեսակները՝ որպես հայրենի տան կամ օջախի վերհուշ: Բնորոշ է, որ բազմէթնիկ միջավայրում Հայաստանից արտագաղթածները հայկական ավանդական ուտեստով փորձում են պահպանել իրենց հայկականությունն ու մշակութային արժեքները: Ուտեստը նաև որպես կենցաղավարության մշակույթ ստեղծում է էթնիկ միջավայր, որտեղ վերահաստատվում են սոցիալ-մշակութային կապերը, և ձևավորվում է կատարյալ հայրենիքի մանրակերտը, որն էլ օգնում է անձին՝ հարմարվողական դաշտ ստեղծելու կենսագործունեության համար:

Անկասկած, արժե անդրադառնալ ավանդական ուտեստներին վերաբերող ռիսկերին և դրանց հակազդողգործողություններին.

ՌԻՍԿԵՐԸ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Հայկական ուտեստների թիրախավորումը կամ վտանգված լինելը	Հայկական ուտեստին նվիրված գիտական հաղորդում/ուսումնասիրություն, աղբյուրագիտական և արխիվային նյութերի համադրում, տարածում, հայկական խոհանոցի դիմակայության ապահովում
Մոռացված կամ կորսված կերակրատեսակներ	Մոռացված կամ կորսված կերակրատեսակներին նոր իմաստավորում հաղորդել և նպաստել ուտեստը նոր ավանդույթների ու արժեքների մեջ վերածնելու կարողությանը
Հաղորդվող նյութի հավաստիության ոչ բավարար մակարդակ	Բազմակի հարցումներով հաղորդվող նյութի վալիդության ապահովում

¹ Ծառուդյան Ռ. Ծանփորդող ինքնություն, ուտեստը ուղեբեռներում, Հաբիջյուս. Մարդաբանական և հնագիտական ուսումնասիրություններ, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014:

Անշուշտ, ավանդական կերակրատեսակների վերականգնումն ու հայկական խոհանոցի դիմակայությունն ապահովումը հարկ է դարձնել ազգային ժառանգությանը տեր կանգնելու, նախորդ ու հաջորդ սերունդների միջև արհեստականորեն խզված կապը վերականգնելու հնարավորություն: Այս ամենը կնպաստի նաև ավանդական արժեքների նկատմամբ համարժեք վերաբերմունք մշակելուն ու դրսևորելուն՝ դառնալով ազգային հիշողության թարմացման փորձ:

Այսպիսով՝ ամփոփելով ասենք, որ տոնածիսական ճաշատեսակների պահպանումը և վերաիմաստավորումը միտված են ազգաբնակչության, հատկապես նոր սերնդի տոնածիսական ակտիվ վարքագծի և ավանդական բնութագրի ապահովմանը: Ամեն դեպքում հայկական ուտեստների համակարգի ուսումնասիրության խնդիրն արդիական է 21-րդ դարի մարտահրավերների վեկտորներում, քանի որ խոհանոցը ևս ենթարկվում է թիրախավորման, երբեմն այլոց կողմից յուրացման, որոնք մեր կերակրատեսակները փորձում են աշխարհին ներկայացնել որպես իրենցը:

Ինչ խոսք, պատմական բախտի վայրուվերումներում հայերը ոչ միայն կորցրել են իրենց հայրենի ուտանը, այլև բնաշխարհին սերտորեն առնչվող ուտեստները՝ ըստ բուսական ու կենդանական աշխարհի փոփոխության: Ճակատագրի երկփեղկումը հայերի համար ստեղծել է այնպիսի մարզինալ իրավիճակ ու բազմազանություն, որը ոչ միայն լեզվական իրողություններին է առնչվում /արևելահայ և արևմտահայ գրական լեզու/, այլև արտահայտվում է հայ ազգային խոհանոցում՝ ձևավորելով արևելահայ և արևմտահայ ազգային խոհանոցներ:

Եզրահանգում. Այս մաշկապուրձ ժամանակներում, երբ աշխարհը գնում է մոլեկուլային խոհանոցի ջատագովման ու կիրառման գաղափարի հետևից, հեշտ չէ պատկերացում կազմել, թե ինչպիսի հաջողություններ են գրանցվել հայկական խոհանոցային մշակույթի զարգացման ոլորտում: Հետևաբար հրատապ է շիրակյան ուտեստների համակարգի զարգացմանն ուղղված ծրագրերի քարտեզագրումը՝ ներառելով ֆորմալ և ոչ ֆորմալ ծրագրերը: Սրանով հանդերձ՝ թեմայի զարգացման հեռանկարում հարկ է համադրել մասնագիտական գրականության մեջ

եղած բոլոր աղբյուրներն ու նյութերը և հրնթացս հասնել հայկական ավանդական խոհանոցի անաղարտության, հնարավորինս անխառն նկարագրի վերականգնմանը՝ այն մաքրելով օտարամուտ տարրերից, ինչպես Կոմիտասը կարողացավ շրջել հայոց գավառներն ու ճշտել ժողովրդական երգի շունչն ու ոգին, հայ երգը մաքրագործել օտար նստվածքներից:

Հարկ է, Շիրակի մարզի կրթական հաստատություններում /դպրոց, վարժարան, քոլեջ/ որպես կյանքի հմտություն անցկացնել ազգային ուսեստների, մոռացված կերակրատեսակների ուսուցանում և գործնական պատրաստում, նոր սերնդին իրագեկել Շիրակի մարզի և Գյումրի քաղաքի ավանդական ուսեստների մասին, քանի որ խոհանոցը մեր ավանդական ազգային հարացույցի ամենաճանաչելի բաղադրիչներից է, մեր գոյի ու կեցության հավաքական արտահայտությունն ու խորհուրդը:

Անհրաժեշտ է շարունակական դարձնել հանիրավի մոռացության մատնված կամ կորսված ազգային կերակրատեսակների գրառումը, համակարգումը, նաև ուսեստներին առնչվող բանավոր զրույցների, հավատալիքների ու բանաձևային բանահյուսության նմուշների հավաքումը, ուսումնասիրումն ու հրատարակումը:

References

1. Adamyan V., Babayan Zh. *Dictionary of Armenian cuisine* [Haykakan khohanots'i barraran]. Yerevan, 2015. (in Armenian).
2. Aghabekyan H., *A hint from the food list of Alexandropolts* [Aknark alek'sandrapolts'u kerakrats'ankits']. "Fundamentals of reports of the 3rd republican conference of the Ukrainian Communist Party of Ukraine", Gyumri, 1998, pp. 42-43. (in Armenian).
3. Bazeyan K. *The traditional food and bakery of Alexandropol* [Alek'sandrapoli avandakan utestn u hats'keruyt'y]. "Scientific works", vol. 11, Gyumri, 2008. (in Armenian).
4. Kharatyan-Arakelyan H. *Armenian folk holidays* [Hay zhoghovrdakan tonery]. Yerevan, «Zangak- 97», 2005. (in Armenian).
5. Gyumri. *The city and people* [Gyumri. K'aghak'y yev mardik], Sahakyan K., Hovhannisyan R. "Life, holidays, rituals" section, pp. 229-257, Gyumri Municipality, 2009. (in Armenian).

6. Tsaturyan R. *Traveling identity, Food in luggage* [Champ'vordogh ink'nut'yun, Utesty ughebernerum], Habitus. Anthropological and archaeological studies, Yerevan, NAS "Science" publishing house, 2014. (in Armenian).
7. Sahakyan K. Hovhannisyan R. *Popular notions and beliefs related to bread*, [Hats'in arrnch'vogh zhoghovrdakan patkerats'umner yev havatalik'ner]. "Scientific works" of the National Academy of Sciences, Vol. 15, Gyumri, "Science", 2012. pp. 79-87. (in Armenian).
8. Sahakyan K., *Saint Sargis* [Surb Sargis]. People, religious, historical and ethnological ideas. Yerevan. "Science" newspaper. 2011. Page 5-6. (in Armenian).
9. *Have we eaten bread and salt together?* [K'i?ch' yenk' miasin agh u hats' kerel]. 2017, Ankara, Kars Center for Urban and Cultural Studies, page 132. (in Armenian and Turkish).
10. <https://arar.sci.am/dlibra/publication/351554/edition/323911/content>

ՀՏԳ 93.94

ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՄԲԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՆԻՈՒՄ

Անժեղա Մարգարյան

ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոն, Հայաստան
angelasargsyan.93@gmail.com

Ամփոփում. Ուսումնասիրությունը նվիրված է Այրարատ աշխարհի Շիրակ գավառի Անի քաղաքին: Ուսումնասիրության մեջ անդրադարձ է արված քաղաքի քաղաքական պատմության կարևորագույն դրվագներին, Անի քաղաքի՝ միջնադարյան քաղաքաշինությանը բնորոշ կառուցվածքային առանձնահատկություններին: Առանձին քննության են արժանացել Անի քաղաքի ներկայիս վիճակը, մեր կողմից իրականացվող դաշտային ուսումնասիրությունների արդյունքները, արդի փոփոխությունները, ու վերջին տարիներին թուրք արշավախմբերի ուսումնասիրությունները:

Բանալի բառեր` Անի մայրաքաղաք, միջնաբերդ, շահաստան, արվարձան, պարիսպներ, արշավախումբ սելջուկներ, շուկա, գերեզմանատուն, Մանուչեի մզկիթ

THE WORKS CARRIED OUT BY THE TURKISH EXPEDITIONS IN ANI IN RECENT YEARS

Anzhela Sargsyan

International scientific educational center NAS RA, Armenia
angelasargsyan.93@gmail.com

Abstract: The research is dedicated to the city of Ani in the Shirak province of the Ayrarat ashkharh. The study refers to the most important episodes of the city's political history, the structural features of the city of Ani, characteristic of medieval urban development. We have examined separately the current state of the city of Ani, the results of our researches, modern changes, and the studies of Turkish expeditions in the recent years.

Key words: *Ani capital, citadel, shahastan, suburb, walls, expedition Seljuks, market, cemetery, Manuche mosque.*

Նախաբան. Անի քաղաքը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Ծիրակ գավառում (ներկայիս Թուրքայի Կարսի նահանգ)՝ Ախուրյան գետի աջ ափին, Իգաձորով, Ծաղկոցաձորով և Գայլաձորով առանձնացված եռանկյունաձև հրվանդանի վրա: Հնագույն ժամանակներից Անիի տեղում եղել է բնակավայր, իսկ մերձակայքում՝ Ք.ա. VIII-VII դդ. դամբարանադաշտ:

Կաղ միջնադարում Անին պատկանում էր հայ նախարարական Կամսարական տոհմին: VIII դարում Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին Կամսարականներից գնում է Ծիրակ գավառը և միացնում իր

տիրույթներին: 961 թ. Բագրատունիներն իրենց արքունիքը Կարսից փոխադրում են Անի և այն հռչակում մայրաքաղաք¹:

Անին միջնադարյան քաղաքներից ավելի արագ ու բուռն զարգացում է ունեցել, իսկ արդեն Բագրատունիների օրոք՝ IX-XI դարերում դարձել է Հայաստանի խոշոր քաղաքներից մեկը՝ իր ուրույն դերն ունենալով Հայաստանի պատմության մեջ՝ որպես X դարի հռչակավոր մայրաքաղաք²:

Ընդհանուր ակնարկ: Անին իր զարգացման գագաթնակետին է հասնում IX-XI դարերում, երբ քաղաքական կյանքն ավելի խաղաղ էր: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ մայրաքաղաք Անին առևտրային կապերի մեջ էր Բյուզանդիայի, Պարսկաստանի, արաբական երկրների, Հարավային Ռուսաստանի և Միջին Ասիայի հետ: Այս դարերի ընթացքում Անին զարգանում է աննախադեպ արագ: Քաղաքում մեկը մյուսի հետևից ծնունդ են առնում հասարակական և պաշտամունքային բազմաթիվ կառույցներ³: XI դարում Անին բազմամարդ՝ շուրջ 100000 բնակիչ ունեցող մեծ ու փարթամ քաղաք էր: Մատթեոս Ուռհայեցին ասում է. «Էր Անի բազմամբոխ, քաղաքն լցեալ բիւր բիւրոց արանց և կանանց, ծերոց և տղայոց, որ հիացումն արկանէր տեսողացն...»⁴: Գագիկ I-ի մահից հետո խարխիվում են պետականության հիմքերը: Պայքարը սրվում է նրա որդիների՝ Հովհաննես-Սմբատ թագավորի և վերջինիս եղբոր՝ Աշոտ IV-ի միջև: Հովհաննես-Սմբատը, վախենալով Տայքի սպաստամբությունը ճնշած բյուզանդական բանակի ներխուժումից, 1023 թ. Անին իր մերձակայքով կտակում է Բյուզանդիային: Եղբայրների մահից հետո Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսը և Վեստ Սարգիս իշխանն աշխատում են ի կատար ածել Անիի հանձնման կտակը, սակայն հանդիպում են ազնվականության դիմադրությանը:

Պետականությունը պահպանելու նպատակով Վահրամ Պահլավունու առաջնորդությամբ 1042 թ. թագավոր է օծվում Աշոտ IV-ի որդի

¹ Կարապետեան Ս., Անի ՌԾ, *Ani 1050, ՀՃՈԲ հիմնադրամ, Եր.*, 2011, էջ 6:

² Հարությունյան Վ., Հայկական նարտարապետության պատմություն, *Եր.*, 1992., էջ 189:

³ Կարապետեան Ս., *նշվ. աշխ.*, էջ 6:

⁴ Մատթեոս Ուռհայեցի, *Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 147-148:*

Գագիկ II-ը: 1043-1044 թթ. քյուզանդական զորքերը մի քանի անգամ պաշարում են Անին՝ պահանջելով հանձնել քաղաքը: Վահրամ Պահլավունու զլխավորությամբ կազմակերպում է Անիի պաշտպանությունը: Այն անառիկ է մնում մինչև 1045 թ., երբ Գագիկ II թագավորին նենգաբար կանչում են Կոստանդնուպոլիս:

1064 թ. Հայաստան կատարած արշավանքի ժամանակ սելջուկները գրավում են Անին¹: 1072 թ. Դվինի ամիրա Աբուլսուարը սելջուկյան սուլթան Ալփ-Ասլանից գնում է Անին և տալիս իր որդի Մանուչեհին²: Դրանով հիմք է դրվում Անիի Շեդդադյան (Շադդադյան) իշխանությանը, որն ընդմիջումներով զոյատևում է մինչև 1199 թ.: XII դ. Անին մի քանի անգամ գրավում են հայ-վրացական միացյալ զորքերը: 1199 թ. Անին ազատագրվում և անցնում է Չաքարյաններին, իսկ արդեն 1236 թ. քաղաքը գրավում են մոնղոլները: Անգամ 1319 թ. ավերիչ երկրաշարժից հետո Անին որպես քաղաք դեռ պահպանում էր իր զոյությունը: Սակայն XIV դ. վերջին Լենկ-Թեմուրի արշավանքն ու իրար հաջորդող օտար տիրակալների ասպատակությունները նպաստում են բնակչության հոծ խմբերի արտագաղթին դեպի Վրաստան, Հարավային Ռուսաստան, Դրիմ և այլն: XV դ. Անին արդեն փոքր գյուղ էր, իսկ XVI դ. ավերակների կույտ, որը գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ³: 1878թ. Անին անցնում է Ռուսաստանին, իսկ 1918-1920 թթ. Կարսի մարզի հետ ներառվում է Հայաստանի Առաջին Հանրապետության կազմի մեջ, սակայն 1920 թ. զավթվում թուրքերի կողմից⁴:

Անի քաղաքի կառուցվածքը: Անին միջանդարյան քաղաքների կառուցվածքային առանձնահատկությունները կրող լավագույն օրինակներից է՝ բաղկացած միջնաբերդից, շահաստանից ու արվարձաններից,

¹ Կարապետեան Ս., նշվ. աշխ., էջ 6-7:

² Յովհաննէսեան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1970, էջ 707:

³ Կարապետեան Ս., նշվ. աշխ., էջ 7:

⁴ Մովսիսյան Ա., Արևմտյան Հայաստանի 10 ուխտավայրեր, Եր., 2011, էջ 10:

ինչպես նաև եռամսա պաշտպանական կառույցներից¹ (պարիսպներ, խանդակներ, գաղտնուղիներ)²:

Միջնաբերդ: Անիի միջնաբերդը տեղադրված էր քաղաքի նկատմամբ ամենաբարձր կետում: Այն Բագրատունիների այրոջանիստն էր: Արքունական պալատից բացի, այստեղ էին գտնվում զինանոցը («տուն զինաց»), գանձարանը («տուն գանձուց»), ամբարանոցը («համբարանոց»), բնակելի տները, պալատական եկեղեցին, արքայական գրադարանը, թագավորների գերեզմանոցը և այլն, որոնք գտնվում էին արքունական ապարանքի պարսպից դուրս և լրացնում էին դրա համալիրը: Անիի միջնաբերդն ուներ իր բաղնիքն ու ջրմուղը: Այսօր արդեն միջնաբերդի ամբողջ բլուրը ծածկված է տարբեր շինությունների ավերակներով³: Ենթադրվում է, որ քաղաքի բնակչության զգալի մասը ապրում էր հենց պարիսպներից դուրս՝ արվարձաններում և քարայրերում⁴:

Շահաստան: Սա քաղաքի ամրացված երկրորդ հիմնական բաղկացուցիչ մասն էր: Այստեղ էր կենտրոնացած ողջ գործարար կյանքը՝ նարտարապետական-գեղարվեստական տեսակետից առավել արժեքավոր հասարակական և պաշտամունքային շենքերը, վարչական մարմինները, առևտրական և արհեստավորական շենքերը, մաքսատները, իջևանատները, պալատները և բնակչության որոշ խավի բնակելի տներ⁵: Անիում «Բուն քաղաքը» կամ «Շահաստանը» երկու մասից էին բաղկացած՝ Հին քաղաքից և Նոր քաղաքից, որոնք այդպես են կոչվել տարբեր ժամանակներում պարսպապատվելու արդյունքում: Հավանական է, որ

¹ Հարկ է նշել, որ պաշտպանական կառույցների ամենաձախաստարն էին քաղաքաշինության մեջ, այդ է պատճառով, որ քաղաքի տեղանքը ընտրվում էր արդեն իսկ բնականորեն պաշտպանված վայրերում՝ խուսափելու համար հավելյալ ծախսերից: Բագրատունի թագավորների ոչինչ չեն խնայել սնգամ զուտ պաշտպանական նշանակության կառույցների վրա, դրանք դարձնելով մշակութային, նարտարապետական գրոխգործոցներ:

² Հարությունյան Վ., Հայկական քաղաքաշինության և նարտարապետության տեսության և պատմության հիմնախնդիրները, Եր., 2004, էջ 96-97:

³ Հակոբյան Թ., Անիի պատմություն, Եր., 1980, էջ 189-190:

⁴ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ., Եր., 1958, էջ 78:

⁵ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, Եր., 1960, էջ 319:

Անիի բնակչության կեսից ավելին կենտրոնացած էր հենց Բուն քաղաքում¹:

Արվարձաններ: Արվարձաններում, սովորաբար, ապրում էր բնակչության աշխատավոր մասը՝ արհեստավորներ, հողագործներ, օրավարձով աշխատող մշակներ, մանր առևտրականներ²: Արվարձանի բնակիչները քաղաքի և միջնաբերդի հետ կապվում էին Ախուրյանի վրա կառուցված կամուրջներով: Ըստ Թ. Թորամանյանի՝ Բագրատունիների թագավորության շրջանում Անի քաղաքն իր արվարձանների հետ զբաղվել է մոտ 25-30կմ² (2500-3000 հա) տարածք, որի մեծագույն մասը՝ ավելի քան 80 տոկոսը, կազմում էին արվարձանները՝ արտաքին պարսպից դուրս գտնվող թաղամասերը՝ Ախուրյանի ձորն ու մասամբ գետի ձախափնյա շրջանը՝ Ծաղկոցաձորը, Գլիձորը, Իգաձորը³:

Պարիսպներ: Բուն քաղաքի կարևոր ռազմաճարտարապետական կառույցներն են Աշոտյան կամ Փոքր պարիսպը (964 թ.) և Սմբատյան կամ Մեծ պարիսպը (989 թ.): Աշոտյան պարիսպների առնչությամբ Վարդան Արևելցին նշում է, թե Աշոտն իր պարսպի բուրգերի մեջ եկեղեցիներ կառուցեց, ինչը հաստատվել է քաղաքի պեղումների ժամանակ, քանի որ առնվազն եզրային բուրգերում եղել են մատուռներ: Հարկ է նաև նշել, որ Սմբատաշեն պարիսպների կառուցումից հետո Աշոտյան պարիսպը կորցրել է իր ռազմավարական նշանակությունը, և ինչպես պեղումների ժամանակ է պարզվել, դրան կից տներ ու այլ կառույցներ են ավելացվել⁴: Անիի ճարտարապետության հնագույն հուշարձանը միջնաբերդի պարիսպն է, որը ընդունված է անվանել Կամսարական: Այս պարիսպը հայտնաբերվել է 1907-1908 թթ. տեղի ունեցած պեղումների ժամանակ⁵:

Խոսնդակներ: Անիի պաշտպանական կառուցվածքների համալիրում իր հատուկ տեղն ունեն Արտաքին կամ Սմբատյան պարսպի առ-

¹ Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 190-191:

² Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 365:

³ Հակոբյան Թ., Անի մայրաքաղաք, Եր., 1988, էջ 78:

⁴ Մաթևոսյան Կ, Անին և անեցիները, Եր., 2021, էջ 88:

⁵ Մառ Ն., Անի, Եր., 2011, էջ 108:

ջևով, դրսի կողմից դրան զուգահեռ փորված խանդակը՝ փոսը, որը լցված լինելու ու շատ չնշմարվելու պատճառով, հնագիտական առումով վատ է ուսումնասիրված: Հետաքրքիր է, որ այդ խանդակի մասին առաջին անգամ հիշատակվում է ոչ թե հայկական, այլ մուսուլմանական աղբյուրներում՝ 1064 թ. Անին սելջուկյան սուլթան Ալփ-Արսլանի կողմից Անին գրավելու առնչությամբ: Քաղաքը վտանգի ենթարկված պահերին ջուրը՝ որձաքարե պատերի միջոցով, պահվում էր որոշակի մակարդակի: Իսանդակը նման էր գրեթե հավասար մեծություն ունեցող քառանկյունի ջրավազանների շղթայի: Քանի որ տեղանքն իր կենտրոնական մասում մի փոքր ավելի բարձր էր, քան ծայրերում, ուստի ջրաշինարարները միայն այդ եղանակով կարող էին խանդակի ամբողջ երկայնքով ապահովել ջրի միևնույն խորությունը: Ջուրը խանդակ էր լցվում դրա կենտրոնի ամենաբարձր մասից և աստիճանաբար լցնում դեպի Գայիձոր ու Իզաձոր իջնող բոլոր հատվածները: Իսաղաղ ժամանակ խանդակի ավելացած ջրերը օգտագործվում էին ոռոգման ու ջրաղացներ գործի դնելու նպատակներով: Իսանդակի ջրի խորությունը հավանաբար հասնում էր մի քանի մետրի, որովհետև դրա վրայով անցել են նավակներով¹:

Գաղտնուղիներ և գետնուղիներ: Ստորերկրյա Անին մայրաքաղաքի ամենավատ ուսումնասիրված տեղամասն է: Բերդաքաղաքների և Անիի նման մայրաքաղաքի համար գաղտնուղիները միանգամայն հասկանալի են, մանավանդ եթե նկատի ունենանք, որ Հայաստանի միջնադարյան բերդերի մեծ մասը ուներ այդպիսի ստորգետնյա ճանապարհներ՝ թշնամու կողմից պաշարման ժամանակ ջուր վերցնելու և այլ նպատակների համար²: Ստորերկրյա Անին, ամենայն հավանականությամբ, ստեղծվել էր Անի մայրաքաղաքի ձևավորման հետ, X-XI դդ.: Ումանք ենթադրում են, որ Ստորերկրյա Անին՝ հատկապես գետնուղին, պետք է կառուցված լինի Գագիկ II-ի օրոք: Իտսքը, հավանաբար, վերջինիս արքայական ապարանքի միջանցքից դեպի կողքի հսկայական ժայռը բացվող գաղտնադռան մասին է, որից դուրս եկող գետնուղին տանում էր

¹ Հակոբյան ԼԹ., *նշվ.աշխ.*, էջ 209-210:

² Հանախ գաղտնուղիների մասին տեղեկատվությունը սահմանափակվում է ավանդագրույցներով, որոնք երբեմն բողոքովին իրատեսական չեն:

ղեկի Ծաղկոցաձոր¹: Սակայն հազիվ թե հնարավոր լիներ Գագիկ II-ի թագավորության 2-3 տարվա ընթացքում այդպիսի գետնավոր հսկա կառուցում կատարել: Ըստ երևույթին՝ Ստորերկրյա Անիի կառուցումը հիմնականում կատարվել է Բագրատունի առաջին թագավորների օրոք:

Արդի փոփոխությունները և ուսումնասիրությունները Անի քաղաքում

Անին միջնադարյան Հայաստանի ամենալավ ուսումնասիրված քաղաքներից է: Բացի նրա մասին եղած մատենագիտական առատ աղբյուրները, որոնք վերաբերում են Անիի թե՛ քաղաքական, թե՛ մշակութային կյանքին, գրականության մեջ կարելի է հանդիպել ուղեգրությունների, նկարագրությունների և ուսումնասիրությունների, որոնք գրվել են անմարդաբնակ դարձած քաղաքի թե՛ հայազգի, թե՛ օտարերկրացի այցելուների կողմից: Այսպես դրվեց Անիի հնագիտական ուսումնասիրությունների սկիզբը²:

1892-1916 թթ. Անիում հնագիտական պեղումներ և ուսումնասիրություններ է սկսում իրականացնել Նիկողայոս Մառը: Տարիների ընթացքում աշխատանքներին մասնակցում են նաև հայ մասնագետները՝ Թորոս Թորամանյանը, Աշխարհաբեկ Քալանթարը, Նիկողայոս Ադոնցը, Արամ Վրույրը, Նիկողայոս Բունիաթյանը և ուրիշներ: 1918 թ. Անի են ներխուժում թուրքական զորքերը և ավերում տարիների աշխատանքով հավաքված Անիի պատմական թանգարանի կամ Անիի Հնադարանի նյութերը, իսկ սակավաթիվ փրկված արժեքներ իրենց տեղն են գտնում ՀՀ պատմության թանգարանում: Տևական ընդմիջումից հետո՝ 1990-ական թթ. վերջերից, Անիում, առանց հայ մասնագետների մասնակցության, թուրք մասնագետների կողմից իրականացվում են հնագիտական պեղումներ, հուշարձանների մասնակի կամ ամբողջական վերականգնման աշխատանքներ³: Փաստ է, որ այդ աշխատանքները իրականացվել և այսօր էլ շարունակվում են գիտական նորմերի խախտմամբ և յուրացման ակնհայտ միտումներով: Անիում ներկայում էլ պարբերաբար ավե-

¹ Դևրիկյան Գ., *Տրդատ նարտարապետ*, Եր., 1983, էջ 440:

² Հարությունյան Վ., *Անի քաղաքը*, Եր., 1964, էջ 13:

³ Կարապետյան Ս., *նշվ. աշխ.*, էջ 7:

լացվող ցուցանակներում ներկայացված պատմության մեջ չենք հանդիպում հայ բառին:

Թուրքիայի թանգարանները ներկայացնող կայքի Անիին նվիրված բաժնում տրվում է ինֆորմացիա, համաձայն որի Ն. Մառի սկսած աշխատանքները 1940-1943 թթ. շարունակվել են պրոֆեսոր Բըրք Բյոքթենի կողմից, ապա 1965-1966 թթ. աշխատանքները շարունակվել են պրոֆեսոր Բենալ Բալբանի, 1989-2005 թթ.՝ պրոֆեսոր Բեյհան Բարամադարալի և 2007-2010 թթ.՝ պրոֆեսոր Յաշար Չորուհյուի ղեկավարությամբ: Արդեն 2014-2018 թթ. պեղումները շարունակվել են Ֆահրիյե Բայրամի գլխավորած արշավախմբի կողմից, իսկ 2019 թ.՝ Կովկասի համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի անդամ Մուհամմեդ Արսլանի և Կարսի թանգարանի տնօրինության ղեկավարությամբ: Կայքում նաև նշվում է. «2016 թ. հուլիսի 15-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում ներառված Անին իր հնագիտական արժեքների շնորհիվ մեր երկրի կարևոր կենտրոններից է, որը բաց է գրոսաշրջության համար թե՛ մշակութային, թե՛ հոգևոր տուրիզմի առումով, և այս առանձնահատկությունները կարևորվում են այն մշակութային արժեքներով, որոնք շարունակվելու են բացահատվել թե՛ հնագիտական և թե՛ գիտական գործունեությամբ»¹:

Թուրքիայի հանրապետության Մշակույթի և տուրիզմի նախարարության և Մշակութային ժառանգության ու թանգարանների ընդհանուր վարչության 2024 թ. գլխավոր հաշվետվություն մեջ Անիի պեղումները ղեկավարող Մուհամմեդ Արսլանը առանձին հոդվածով ներկայացրել է Անիում 2019 թ. սկսված և մինչև այսօր լայն թափով շարունակվող մաքրման, պեղումների ու վերականգնման աշխատանքները²: Հոդվածում նշվում է. «Անիում Չրոսաշրջության ու մշակույթի նախարարու-

¹ <https://www.turkishmuseums.com/museum/detail/2108-kars-ani-orenyeri/2108/1>

² Մեր կողմից մինչև 2024թ. ներառյալ արված դաշտային աշխատանքների ընթացքում ակաճատես ենք եղել Անիում պարբերաբար իրականացվող հուշարձանների կոնսերվացման (ինչպես օրինակ Անի Ամենափրկիչ եկեղեցին), վերականգնման, մաքրման (այս պահին էլ իրականացվում են մաքրման աշխատանքներ, մասնավորապես՝ Անիի Աբուդամրեհեց եկեղեցին մաքրվում է ներսույթի ժամանակակից գործընկերներից՝ հատկապես թուրքերեն լեզվով արված) աշխատանքներին:

թյան և Կովկասի համալսարանի համագործակցությամբ 2019թ. սկսված պեղումների և պահպանման աշխատանքները, 2022 թ. դարձել են ավելի լայնածավալ՝ ներառելով մաքրման, պեղումների, վերականգնման, կոնսերվացման, շարժական և անշարժ գտածոների պահպանման, ուսումնասիրությունների, և որ ամենակարևորն է այս ամենը հրատարակչական աշխատանքների միջոցով հանրայնացնելու և Անի քաղաքը ավելի ճանաչելի դարձնելու աշխատանքներ»¹:

Հոդվածում առանձին անդրադարձ է կատարված Անիի շուկային, Մայր տաճարի մոտ գտնվող սելջուկյան ներկայացվող գերեզմանատանը:

Անիի շուկայի պեղումները: Ըստ թուրքական կողմի պնդման և պեղումների արդյունքների, մոտ 700 մ երկարությամբ ճանապարհը, որը սկսվում էր Առյուծի դռնից մինչև Մուհամմեդյան մզկիթ և այնտեղից էլ շարունակվում դեպի Մանուչեի մզկիթ, համարվում էր Անիի ամենաաշխույժ առևտրային կյանքով լցված հատվածը: Եվ քանի որ ճանապարհին չկա Բագրատունիներին և Վրաց թագավորությանը պատկանող և ոչ մի պատմամշակութային հուշարձան, իսկ փոխարենը՝ սելջուկյան ժամանակաշրջանի երկու կարևոր մզկիթները գտնվում են հենց այս ճանապարհի վրա, փաստում է այն, որ բազարը (Անիի շուկան) կառուցել և հարստացրել են սելջուկները: Նշվում է նաև, որ շուկան ունեցել է շարունակական զարգացում և ծաղկում է ապրել XI –XII դդ. ողջ ընթացքում, և որ անգամ հետագա դարերում կարողացել է պահպանել իր ակտիվությունը՝ ընդհուպ մինչև Անիի լքվելը²:

Ի հակադրություն այս մտքի՝ նշենք, որ այսօր էլ Անի մուտք գործելիս և նշված ճանապարհով քայլելիս կարող ենք տեսնել հայկական հուշարձաններ, ինչպիսիք են, օրինակ՝ Անիի Մայր տաճարը, Անիի Առաքելոց եկեղեցին և այլն: Նշենք նաև, որ Անիից մի քանի կմ հեռավորության վրա, ներկայիս ՀՀ տարածքում, Ջրափի գյուղում է գտնվում համանուն քարավանատունը և կամուրջը՝ առևտրային ճանապարհները

¹ Muhammet Arslan, *Ani örenyeri kazısı 2022 yılı çalışmaları, 43 Kazı sonuçları toplantısı, Çilt 2, Ankara, 2024, 275.*

² Muhammet Arslan, *նշվ. աշխ., էջ 280:*

սպասարկող ամենակարևոր կառույցները¹: Եվ, եթե Անիի ու Անիին հարակից բնակավայրերի աշխարհիկ բոլոր կառույցները դիտարկենք մեկ միասնական շրթայում՝ ուսումնասիրելով նաև վերջիններիս կառուցման ժամանակագրությունը, ապա պարզ կլինի, որ դրանք կառուցվել են նախքան Անիի՝ սելջուկների կողմից գրավումը:

Ինչպես նշվում է իրականացված պեղումների հաշվետվության մեջ, 1907 թ. Նիկողայոս Մառի իրականացրած և 1991-1994 թթ. Բեյհան Քարամադարալլիի ղեկավարած պեղումների արդյունքում Առյուծի դռան և Մուհամմեդյան մզկիթի միջև ընկած տարածքից հնարավոր է եղել բացել միայն 150մ տարածք, որն էլ ներկայացվել է, որպես սելջուկյան իջևանատուն: Այսօր, սակայն, բավարար չեն ապացույցներն այդ հաստվածը՝ որպես իջևանատուն ներկայացնելու: Շուկայի ճանապարհը, սկսվելով Մուհամմեդյան մզկիթից և շարունակվելով դեպի հարավ, ընդհատվում է մզկիթի ավերակներով: Արևմտյան թևի պեղումները կրկին իրականացվել են Բեյհան Քարամադարալլիի կողմից 2000-2003 թթ, իսկ արևելյան թևի աշխատանքների մի մասն իրականացվել է 2020 թ. և վերսկսվել 2022 թ. ու շարունակվում են մինչև այսօր²:

Սելջուկյան գերեզամանատան պեղումները: Անիի Մայր տաճարից մոտ 30 մ հարավ-արևմուտք սկսվեցին պեղումների աշխատանքներ այն դիտարկմամբ, որ այս վայրը կարող է գերեզամանոց լինել: Վերը նշված հոդվածում նշվում է, որ այս տարածքում կառուցվել են սելջուկյան դամբարանների տիպաբանությունն արտացոլող դամբարանային կառույց-

¹ Չրափիի քարավանատունը կառուցվել է *Արաստանից* և *Հայաստանի հյուսիսային գավառներից դեպի Անի տանող գլխավոր ճանապարհի վրա*: Այս քարավանատունը *Ախուրյանի վրա ձգված հանրահայտ Չրափիի կամուրջի հետ միասին, որ սպասարկում էր հին առևտրական ճանապարհը, անտարակոյս միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության ամենակարևոր հուշարձաններից է*: Չրափիի կամուրջն ամենամեծն է *Ախուրյան գետի վրա կառուցված մյուս 9 կամուրջներից. որի վերաբերյալ, Թ. Թորամանյանը նշել է. «Այս կամուրջը թե ավելի լայն է, թե ավելի բարձր քան Անիի կամուրջը: Այս երկու կամուրջները քանդվել են թուրք-պարսկական կռվի ժամանակ պարսիկների ձեռքով՝ թուրքերի արշավանքը դժվարացնելու համար: Այս կամուրջների շինության ոճը եթե քննենք, պիտի տեսնենք, որ իրենց պարզությամբ, ոճի հատկություններով իրենց կամարների ձևով, պարզությամբ ու գեղեցկությամբ կապտկանին տեղական հայկական ոճին»:*

² *Muhammet Arslan, նշվ. աշխ., էջ 280-281:*

ներ: Դրանցից մեկը դասական սելջուկյան քյումբերներն են¹: Այն պետք է պատկաներ ժամանակաշրջանի կարևոր պետական գործիչներից մեկին: Հոդվածում գիսավոր շեշտն այն մտքի վրա է, որ դամբարանը և գերեզմանները գտնվում են հենց Ֆեթիիյե մզկիթի (Մայր տաճարի) կողքին, ինչը պատահական չէ, ու, որ սա կարևոր վկայություն է, որ Անատոլիայի տարածքում առաջին սելջուկյան գերեզմանատունը եղել է հենց Անիում²:

Անիի Մայր տաճարի արևելյան կողմում հիշատակվում է Կատրանիդե թագուհու դամբարանը: Նշված հատվածի պեղումները իրականացվել են վերջին տարիներին: Ցավոք, մատենագիտական աղբյուրներում դեռևս չենք հանդիպել նկարագրությունների՝ թուրքական արշավախմբի կողմից պեղված հատվածի մասին³:

Մանուչեի մզկիթի արդի փոփոխությունները: Անիի ամենաշահարկվող և տարբեր կիրառական նշանակություններով ծառայած կառույցներից մեկը Մանուչեի մզկիթն է: Մզկիթի հիմնական շինությունը ունի երկու հարկ, որոնք կառուցվել են X դ. վերջերին: Մինարեն ավելացվել է հետագայում՝ Ծաղղաղյանների կողմից: Ըստ ենթադրությունների՝ երկհարկանի շինությունը եղել է մաքսատուն, պահակատուն, եկեղեցական-պաշտամունքային շինություն՝ ժամատուն, կաթողիկոսարան, վարչական կամ նման մի շենք⁴:

Մանուչեի մզկիթը շատ մոտ էր այն ճանապարհին, որն անցնում էր կամրջով և մտնում քաղաք: Հետազոտողների մեծ մասի կարծիքով՝ այն սկզբում ծառայել է այլ նպատակների համար⁵: Ելնելով շենքի տեղադրությունից՝ Հ. Օրբելին ենթադրել է, որ այդ շենքը կարող էր լինել մաքսատուն կամ պահակակետ⁶:

¹ Նման են հայկական եկեղեցիների գմբեթներին:

² Muhammet Arslan, նշվ. աշխ., էջ 281-282:

³ Կարող ենք ենթադրել, որ գերեզմանատունը կարող էր կառուցված լինել սելջուկների կողմից Անի Մայր տաճարի մզկիթացման տարիներին՝ 1064-1072 թթ.:

⁴ Հակոբյան Թ.Խ., նշվ. աշխ., էջ 112:

⁵ Ենթադրվող տարբերակներն են կաթողիկոսարանը, մաքսատունը և դատարանը:

⁶ Հարությունյան Վ., Անի քաղաքը, էջ 79:

Եղած փաստարկները բավարար չեն հստակ նշելու, թե ո՞ր նշանակությամբ է այն հանդես եկել: Թեպետ Անիի՝ մի քանի դարերի պատմությունը բավարար է, որ այս բոլոր նշանակություններով կառույցը ծառայած լինի: Երբ փորձում ենք Մանուչեի մզկիթին վերագրել կիրառական նշանակություններից միայն մեկը, մենք կրճատում ենք կարևորությունն ու պատմական նշանակությունը, քանզի չի բացառվում, որ դրանցից մեկը շեշտելու դեպքում, կարող ենք ուշադրությունից դուրս թողնել մյուսը: Ենթադրաբար, եթե եղել է դատարան, ապա առաջին հարկը, ծառայել է որպես բանտախուց: Եթե դիտարկենք որպես մաքսատուն, ապա առաջին հարկը ծառայել է որպես գանձարան, ինչն ավելի քան տրամաբանական է՝ հաշվի առնելով շինության տեղադրությունը: Այն գտնվում է շուկայի և կամուրջի հարևանությամբ, և վերը հիշատակված Ջրափիի քարավանատնից մի քանի կմ հեռավորության վրա: Այս ամենը հնարավորություն է տալիս լավագույնս պատկերացնելու Անիի՝ առևտրական քաղաք լինելու բոլոր առանձնահատկությունները, և ապացուցելու, որ Անին եկեղեցաշատ քաղաք լինելուց զատ, նաև փայլում էր աշխարհիկ վեհաշուք շինություններով: Ավելացնենք նաև, որ Անիի արդի պեղումների ընթացքում Մանուչեի մզկիթի շենքը օգտագործվել է որպես հնադարան կամ թանգարան:

Թուրքիայի Հանրապետության Հանրային կապերի վարչության կայքում 2020թ. տեղադրվեց հրապարակում այն մասին, որ մզկիթում վերականգնման աշխատանքներ են իրականացվելու, որը նախատեսվում է ավարտել 2021 թ. օգոստոսի 26-ին՝ Մանազկերտի ճակատամարտի 950 ամյակին: Հայտարարվեց նաև, որ դարեր անց այն կվերաբացվի որպես մզկիթ¹:

Քանի որ Անիում դեռևս շարունակվում են մաքրման, ամրացման, տեսախցիկների տեղադրման աշխատանքները, այդ թվում՝ Մանուչեի

¹[https://www.iletisim.gov.tr/turkce/yerel_basin/detay/anadoludaki-ilk-turk-camisi-ebul-menucehr-restore-edilerek-ibadeteacilacak#:~:text=Restorasyon %20%C3%A7al%C4%B1%C5%9Fmalar%C4%B1%20Malazgirt%20Zaferi'nin,tamamlanacak %20ve%20cami%20ibadete%20a%C3%A7%C4%B1lacak.&text=Kars'a%2042%20kilometre%20uzakl%C4%B1kta,K%C3%BCt%C3%BCrel%20Miras%20Listesi'ne%20girdi](https://www.iletisim.gov.tr/turkce/yerel_basin/detay/anadoludaki-ilk-turk-camisi-ebul-menucehr-restore-edilerek-ibadeteacilacak#:~:text=Restorasyon%20%C3%A7al%C4%B1%C5%9Fmalar%C4%B1%20Malazgirt%20Zaferi'nin,tamamlanacak%20ve%20cami%20ibadete%20a%C3%A7%C4%B1lacak.&text=Kars'a%2042%20kilometre%20uzakl%C4%B1kta,K%C3%BCt%C3%BCrel%20Miras%20Listesi'ne%20girdi)

մզկիթի տարածքում, պաշտոնական բացումը դեռևս չի կատարվել: Անհրաժեշտ է Թուրքիայի Հանրապետության հոգևոր գործերով զբաղվող վարչության հաստատումը և դրանից հետո մզկիթում իմամի նշանակումը¹:

Մանուչեի մզկիթը Փոքր Ասիայում կառուցված առաջին մզկիթն է², իսկ մեր օրերում մզկիթին նոր շունչ տալ և այն թանգարանային Անիի տարածքում գործող մզկիթ դարձնելը Թուրքիայի իշխանությունների կողմից հետապնդում է մեկ նպատակ՝ իսլամադավան աշխարհի ուշադրության գրավումը և Անին տուրիստական առումով իսլամական աշխարհին ևս հայտնի դարձնելն ու տուրիստական ավելի մեծ հոսք ապահովելը:

Եզրահանգում. Միջնադարյան Անի քաղաքը մշտապես եղել է հայկական, ու այսօր էլ այդ մասին փաստում են դեռևս կանգուն մնացած կառույցները՝ հստակ հայկական ապացույցերով (ճարտարապետական ոճ, վիմագիր արձանագրություններ և այլն): Դարերի ընթացքում Անիում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները իրենց դրոշմն են թողել քաղաքի պատմության, մշակույթի ու քաղաքի ներկայի վրա: Այսօր արդեն Անին ներկայիս Թուրքիայի հանրապետության տարածքում ամենաշատ այցելվող տուրիստական կենտրոններից մեկն է, և թուրքական կողմը հսկայական աշխատանքներ է տանում Անիում սելջուկյան տարրը ընդգծելու և դրա արդյուքնում նաև սեփական պատմությունը ավելի հարստացնելու ուղղությամբ, ինչը բնականաբար կրերի ավելի մեծ զբոսաշրջային հոսքի՝ և՛ տեղացի թուրք զբոսաշրջիկների, և՛ իսլամադավան աշխարհի ուշադրությունը գրավելով:

¹https://arkeofili.com/anideki-caminin-ibadete-acilmasi-icin-hazirliklar-tamamlandi/?fbclid=IwY2xjawGDfZZleHRuA2FibQJxMAABHfDxYpPiW367uBYMsh2oXD XjBFYU6PY9wbVvSPPwvyL1czP2FnHiOyUwMg_aem_cLq-FOXob1_GZMYzb_JpVg

² Այս փաստը ամենաշատն է շահարկվում Թուրքիայի Հանրապետության կողմից:

References

1. Arakelyan B., *Cities and Crafts in Armenia in the IX-XIII Centuries* [K'aghak'nere yev Arhestnere Hayastanum IX-XIII dd.]. Yerevan, Armenian SSR Academy of Sciences Press, 1958. (in Armenian).
2. Devrikyan G. Kh., *Tirdat the Architect* [T'rdat Chartarapet]. Yerevan, 1983. (in Armenian).
3. Hakobyan T., *History of Ani* [Anii Patmut'yun]. Yerevan, 1980. (in Armenian).
4. Hakobyan T., *The Capital City Ani* [Ani mayra'kaghak]. Yerevan, 1988. (in Armenian).
5. Harutyunyan V., *Fundamental Issues of the Theory and History of Armenian Urban Development and Architecture* [Haykakan kaghakashut'yan yev chartarapetut'yan tesut'yan yev patmut'yan himnakhndirner]. Yerevan, 2004. (in Armenian).
6. Harutyunyan V., *History of Armenian Architecture* [Haykakan chartarapetut'yan patmut'yun]. Yerevan, 1992. (in Armenian).
7. Harutyunyan V., *The City of Ani* [Ani kaghaky]. Yerevan, 1964. (in Armenian).
8. Hovhannesian M., *The Fortresses of Armenia* [Hayastani berdery]. Venice-San Lazzaro, 1970. (in Armenian).
9. Karapetyan S., *Ani 1050* [Ani 1050]. Yerevan, RAA Foundation, 2011. (in Armenian).
10. Manandyan H., *Critical Theory of the History of the Armenian People* [K'nakan Tesut'yun Hay Jhoghovrdi Patmut'yun]. Vol. 2. Yerevan, 1960. (in Armenian).
11. Marr N., *Ani* [Ani]. Yerevan, 2011. (in Armenian).
12. Mathevossyan K., *Ani and its citizens*, [Anin ev anecinery]. Yerevan, 2021. (in Armenian).
13. Matteos Urhayetsi, *Chronicle* [Zhamanakagrut'yun]. Vagharshapat, 1898. (in Armenian).
14. Movsisyan A., *10 Pilgrimage Sites of Western Armenia* [Arevmt'yan Hayastani 10 Ukhtavayrer]. Yerevan, "Zangak-97" Press, 2011. (in Armenian).
15. Muhammet Arslan, *Excavation Work at the Ani Archaeological Site in 2022*, 43rd Excavation Results Meeting, Volume 2, Ankara, 2024, pp. 280-281. (in Turkish)
16. <https://www.turkishmuseums.com/museum/detail/2108-kars-ani-orenyeri/2108/1>
17. https://www.iletisim.gov.tr/turkce/yerel_basin/detay/anadoludaki-ilk-turk-camisi-ebul-menucehr-restore-edilerek-ibadeteacilacak#:~:text=Restorasyon%20%C3%A7a1%C4%B1%C5%9Fmalar%C4%B1%20Malazgirt%20Zaferi'nin,tamamlanacak%20ve%20cami%20ibadete%20a%C3%A7%C4%B1lacak.&text=Kars'a%2042%20kilometre%20uzakl%C4%B1kta,K%C3%BClt%20Miras%20Listesi'ne%20girdi
18. https://arkeofili.com/anideki-caminin-ibadete-acilmasi-icin-hazirlıklar-tamamlandi/?fbclid=IwY2xjawGDfZZleHRuA2F1bQIxMAABHFdxYpPiW367uBYMsh2oXDXjBFYU6PY9wbVvSPPwvyL1czP2FnHiOyUwMg_aem_cLq-FOXob1_GZMYzb_JpVg

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

**ՏԱՅՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԱՉՈՒՂԻՆԵՐՈՒՄ
Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր Ի Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Ւ**

SHIRAK CENTRE FOR ARMENOLOGICAL STUDIES
NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA

**TAYK AT THE CROSSROADS OF HISTORY
COLLECTION OF ARTICLES**

Մտորագրված է տպագրության՝ 15. 10. 2024թ.

Ծավալը՝ 286 էջ, թուղթը՝ A5, տպաքանակը՝ 110, գինը՝ պայմանագրային

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան, Գյումրի, Վազգեն Սարգսյանի-5^ա
<https://shiraksciworks.sci.am/> / <http://shirakcenter.sci.am/>.
E-mail: scient.works@shirakcenter.sci.am